

ՄԱՍԻՍ


Ա Մ Ա Ս
Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

42ԴԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 50 (2100) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒՄ 7, 2023
VOLUME 42, NO. 50 (2100) SATURDAY, JANUARY 7, 2023




Պաշտօնաթերթ
Ս. Գ. Շնչական Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



Հայաստան, Արցախ և Սփիւռք 2023

Մեկ Նպատակ - Մեկ Հանապարհ



ՄԱՍԻՍ - 2023

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տարի Մը Եւս Կը Չգեճը Մեր Ետին

2022 տարին եւս անցաւ պատմութեան իր ետին ձգելով պատերազմներ, բնական աղէտներ, քաղաքական, ընկերային, տնտեսական, առողջական տագնապներ, գաղթականութիւն, որոնք իրենց ներգործութիւնը թողեցին երկրագունդի միլիոնաւոր ժողովուրդի վրայ:

Տարին սկսաւ ու ւաւարեցաւ անիմաստ պատերազմով մը, որ կլանեց ամբողջ եւրոպական ցամաքամասը: Ռուսաստանի յարձակումը Ուքրանիոյ վրայ եւ շուտափոյթ ւաւարտի մասին պատրանքները սխալ դուրս եկան, երբ Միացեալ Նահանգներն ու ամբողջ Արեւմուտքը հասան Ուքրանիոյ օգնութեան՝ Ռուսաստանը մխրճելով ոչ միայն երկարատեւ պատերազմի մը մէջ, այլեւ մեծ հարուած հասցնելով անոր միջազգային հեղինակութեան ու հարցականի տակ դնելով անոր գերպետութիւն ըլլալու հանգամանքը:

Ուքրանիոյ պատերազմին պատճառաւ յառաջացած սղաճի ընկերային ու տնտեսական տագնապները տարածուեցան աշխարհի բոլոր երկիրներուն վրայ, ուր մարդիկ յայտնուեցան դժուարութիւններու դէմ յանդիման:

Այս բոլորի կողքին Քորոնայի ժահրը բոլորեց իր երրորդ տարին: Թէեւ նահանջի մէջ, սակայն հիւանդութիւնը կը շարունակէ ապրիլ մեզի հետ՝ ամէն օր խլելով նոր զոհեր:

Ամերիկայի Միացեալ Նահանգները բոլորեց համեմատաբար հանդարտ տարի մը, սակայն հոս եւս գիներու անմխադէպ բարձրացումը յառաջացուց շատերու դժգոհութիւնը: Բնական աղէտները՝ հսկայ հրդեհներ, երկրաշարժներ, չափազանց տաք եղանակային պայմաններ, ծիւնամորիկներ, ջրհեղեղներ եւ փոթորիկներ նիւթական եւ մարդկային մեծ վնասներ հասցուցին Ամերիկայի տարբեր մասերուն մէջ:

Տարուան գլխաւոր իրադարձութիւններէն մէկը հանդիսացաւ Նոյեմբերին կայացած կիսաշրջանի ընտրութիւնները, որոնց ւաւարտին յաղթող դուրս եկաւ Ամերիկա ժողովրդավարութիւնը:

Հայաստանի ապրեցաւ փոթորկալից տարի մը եւս: 44-օրեայ պատերազմի հետեւանքները շարունակեցին նորանոր տագնապներ յառաջացնել մեր հայրենիքէն ներս: Ատրպէյճանի թշնամական նկրտումները Հայաստանի ու Արցախի դէմ, դադար չունեցան ամբողջ տարուայ ընթացքին: Այդ բոլորը իրենց գագաթնակէտին հասան Սեպտեմբերեան պատերազմով, որ խլեց ւաւելի քան երկու հարիւր Հայ զինուորի կեանքը: Այդ սուղ գինը վճարուեցաւ կասեցնելու համար թշնամիի դէպի Նախիջեւան բռնի ուժով միջանցք բանալու ծրագիրները:

Անգամ մը եւս Հայաստանի ռազմավարական դաշնակիցը չընդառաջեց օգնութեան հասնելու խնդրանքներուն: Հայաստանի մէջ ծայրեր բարձրացան՝ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութենէն դուրս գալու կոչերով, իսկ Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւնները յայտնուեցան լուռ տագնապի մէջ:

Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գծով սկսան նոր բանակցութիւններ: Թէեւ կողմերը շեշտեցին առանց նախապայմաններու յառաջ երթալու կարելորութիւնը, շատ չանցած ի յայտ եկաւ որ, թրքական կողմը կ'ուզէ տեսնել Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններու կարգաւորումը՝ այս վերջինի պայմաններով: Բանակցութիւնները լրիւ չեն դադարած, սակայն յաջողութեան հաւանականութիւնը օրըստօրէ կը նուազի:

Դեկտեմբերին ատրպէյճանցիները փակեցին Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհը: 120 հազար Արցախահայերը նոր տարին դիմաւորեցին շրջափակման մէջ՝ մատնուած բազում զրկանքներու:

Խորհրդարանական ընդդիմութիւնը շարունակեց ներքաղաքական կեանքը ապակայունացնելու իր աշխատանքները: Փողոցային այդ շարժումները մատնուեցան ձախողութեան, երբ քաղաքացիները մերժեցին ընդառաջել ընդդիմադիրներու կոչերուն, զիտակցելով որ, անոնց միակ նպատակը կորսնցուցած իշխանութեան վերատիրանալն է:

Չորրորդ նախագահ՝ Արմէն Սարգսեան անակնկալօրէն հրաժարեցաւ, երբ կը գտնուէր արտասահման: Անկախ Հայաստանի 5-րդ նախագահ ընտրուեցաւ Վահագն Խաչատուրեան, որ ւաւելի համերաշխ գործակից հանդիսացաւ երկրի վարչապետին:

Դժուարութիւններու կողքին Հայաստան ունեցաւ նաեւ մեծ յաջողութիւններ: Տիեզերք արձակուեցաւ հայկական առաջին արբանեակը, որ նոր հնարաւորութիւններ կ'ընձեռէ երկրի պաշտպանական կարողութիւնները ուժեղացնելու: Տնտեսութիւնը արձանագրեց աննախընթաց աճ, որուն օգուտները փոխանցուեցան ժողովուրդի կարիքաւոր դասակարգին, աշխատաւորներուն, ուսուցիչներուն եւ զինուորներուն:

Բանակի վերազինման գծով նախաձեռնուեցան նոր քայլեր: Պիւտճեւտային հսկայ միջոցներ յատկացուեցան նոր ու արդիական զինատեսակներ ձեռք ձգելու նպատակով:

Տարին կը փակենք յոյս ունենալով որ, նոր տարին իր հետ կը բերէ ւաւելի լաւ պայմաններ երկրագունդի մարդկութեան համար, վերջ կը տրուի պատերազմներուն ու անոր պատճառած մարդկային զոհերուն, ցաւերուն ու տառապանքներուն, Հայաստանի ժողովուրդը կ'ապրի ու կը ստեղծագործէ խաղաղ ու բարգաւաճ պայմաններու տակ, Արցախը կը գտնէ իր անդորրը ու ձեռք կը ձգէ ազատ ինքնորոշման իր արդար իրաւունքը:

Շնորհաւոր Նոր Տարի

ՄԴՅԿ Կեդրոնական Վարչութեան Խօսքը՝ Ամանորի Առթիւ

2023 տարին կը դիմաւորենք բազում մարտահրաւերներու ընդառաջ: Տօնական այս օրերուն, փոխան ջերմ եւ ուրախ տրամադրութիւններու, Արցախը արտաքին աշխարհին հետ կապող Լաչինի միջանցքը կը շարունակէ մնալ փակ՝ ամէն անցնող օր ւաւելի մեծցնելով մարդասիրական աղէտի հաւանականութիւնը:

Բնապահպանական մտահոգութեան կեղծ պատրուակի տակ քողարկուած՝ Ատրպէյճանի իշխանութիւններուն այս անմարդկային քայլը կը միտի ընկճել եւ բարոյալքել արցախահայութիւնը, որ կը շարունակէ վճռական ու անկտորում կամքով կառչած մնալ իր հողին ու հայրենիքին: Այս առիթով մեր ամբողջական նեցուկը կը յայտնենք արցախահայ մեր քոյրերուն ու եղբայրներուն:

Դժբախտաբար նոյնն է պարագան նաեւ հայաստանեան ճակատին վրայ, երբ միայն խօսքերով խաղաղութեան ձգտող Ատրպէյճան չի դադրեցներ իր ոտնձգութիւնները Հայաստանի ինքնիշխան տարածքին նկատմամբ եւ կը շարունակէ բանտարկուած պահել հայ ռազմագերիները՝ փորձելով առաւելագոյն զիջումներ պարտադրել Հայաստանի Հանրապետութեան:

Յետպատերազմեան անցնող երկու տարիներուն ընթացքին Ատրպէյճանի տակաւ շարունակուող սադրիչ գործողութիւնները եւ անոնց նկատմամբ միջազգային ընտանիքին եւ մեր ռազմավարական դաշնակիցին հակազդեցութիւնը եկան անգամ մը եւս հաստատելու այն փաստը, որ մենք ենք մեր միակ ապաւենը ու հայրենիքին սպառնացող վտանգները յաղթահարելու միակ գրաւականը մեր միասնականութիւնն է:

Միւս կողմէ, գոհունակութեամբ կ'արձանագրենք Հայաստանի մէջ տեղի ունեցող դրական տեղաշարժերը: Տնտեսութեան բնագաւառէն ներս նկատելի աճը առիթ կու տայ կառավարութեան բարձրացնելու թոշակներն ու աշխատավարձերը՝ բարելաւելով կարիքաւոր խաւերուն ընկերային պայմանները: Հետեւողական աշխատանք կը տարուի Հայոց Բանակը արհեստավարժ դարձնելու եւ նոր ու արդիական զինատեսակներով օժտելու ուղղութեամբ: Փտածութիւնը (քորուպցիան) դադարած է համակարգային բնոյթ կրելէ, իսկ ժողովրդավարութիւնը ւաւելի ու ւաւելի խոր արմատներ կը նետէ երկրէն ներս:

Գալով Միջին Արեւելքի հայկական գաղութներուն՝ ցաւով կ'արձանագրենք, որ Սուրիոյ եւ Լիբանանի երբեմնի կենսունակ համայնքները կը շարունակեն նօսարանալ՝ իրենց ապրած երկիրներէն ներս տիրող քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններուն բերումով, սակայն ի գին ամէն զոհողութեան՝ տակաւին կը շարունակուի ազգային կեանքն ու նոր սերունդի հայեցի դաստիարակութեան սրբազան գործը:

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով մեր հայրենիքին եւ Արցախին կը մաղթենք խաղաղութիւն եւ բարեբերութիւն, իսկ մեր հայրենակիցներուն՝ առողջութիւն, երջանկութիւն և նորանոր յաջողութիւններ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA

1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Ուղերձը Ամանորի եւ Սուրբ Ծննդեան Տօներուն Առթիւ

«Սիրելի ժողովուրդ,
Սիրելի հայրենակիցներ,
Ահա անցնում է 2022

թուականը եւ ընկալելով 2023 թուականը կ'իջանք մեր դուռը՝ մեզնից իւրաքանչիւրի եւ մեր երկրի կեանքում բացելով մի նոր ժամանակ:

Սրա համար ենք մենք սիրում Նոր տարին, այն տիեզերական եւ հոգեբանական մի շնորհ է, որից անդին մենք յոյս ունենք թողնել մեր բոլոր ձախողումները, մեր բոլոր սխալներն ու կորուստները եւ տեսնել մեր երազանքները՝ իրականացում:

Ամանորի մասին այս մանկական պատկերացումը մեծ հաշուով մարդուն ուղեկցում է ողջ կեանքում, մինչեւ այն կէտը, երբ մարդը հասկանում է, որ երազանքն այլ կերպ՝ կարելի է անուանել ռազմավարութիւն, իսկ երազանքի կատարումը՝ միջոցառումների ծրագիր, մի անելիք, որ քոնն է բացառապէս, եւ այդ երազանքի իրագործման ճանապարհին պիտի յոյս դնես ինքդ քեզ վրայ, միայն ինքդ քեզ վրայ, եւ ուրեմն՝ երազանքդ ու անելիքդ պիտի լինի կոնկրէտ, չափազանց կոնկրէտ, չափելի եւ իրագործելի:

Սա է թերեւս նկատի ունեցել մեր մեծը, Եղիշէ Չարենցը՝ «երկիր Նաիրիէ վէպը գրելիս, որը քիչ կարդացուած եւ քիչ հասկացուած ուղերձ է մեզանում, եւ մենք այսօր, թերեւս կրում ենք այն քիչ կարդալու եւ առաւել եւս քիչ հասկանալու ծանր հետեւանքները: Աւելի քիչ ընկալուած է հայոց մտքի ու հոգու գազաթի՝ Յովհաննէս Թումանեանի հանրային գործունէութիւնը, ինչի մոռացումը ձեւախեղել է ազգային ու պետական շահի մեր պատկերացումը:

2023 թուականն ուզում եմ յայտարարել Չարենցի եւ Թումանեանի ռազմավարական գործերի ընթացման տարի, որպէս պետութեան կայացման առանցքային ուղերձ ու ռազմավարութիւն, որպէս ինքնուրու մեզ հետ հաշտուելու դեղատոմս, որպէս մեր երազանքները որպէս ռազմավարութիւն ձեւակերպելու եւ ռազմավարութիւնը որպէս երազանք ընկալելու միջոց: Որպէս գործիք՝ հասկանալու, թէ ինչ է տեղի ունենում մեզ հետ այս օրերում: Իսկ տեղի է ունենում հետեւեալը. մենք պայքարում ենք անկախ, ինքնիշխան, բարեկեցիկ եւ ապահով պետութիւն ունենալու համար, կոնկրէտ՝ պետութիւն: Մենք բիբլիական ելքի մէջ ենք եւ քայլում ենք անապատի միջով՝ Երկիր Նաիրիից մղուելով դէպի 29 հազար 800 քառակուսի կիլոմետր շատ կոնկրէտ ձեւ ու չափ ունեցող Հայաստանի Հանրապետութիւն: Սա ծանր եւ վտանգաւոր, բայց եւ անխուսափելի ճամփորդութիւն է՝ յանուն փրկութեան, յանուն հանրապետութեան, յանուն պետականութեան:

Ինքնիշխան, ուժեղ եւ ապահով պետութիւն ունենալու խիստ պրագմատիկ խնդրի լուծման բանաձեւը մէկն է. մենք պիտի կարողանանք փոխել մեր յարաբերութիւնները՝ որակը մեր տարածաշրջանում, նախեւառաջ՝ մեր տարածաշրջանում, չափազանց բարձր քաղաքական, պատմական եւ սոցիալ-հոգեբանական անելիք, մի միջավայրում, որտեղ մեզ շատ յաճախ սպառնում են, շատ յաճախ խոցում եւ շատ յաճախ սպանում:

Բայց այսօրուայ խօսակցութիւնը մեր սեփական եւ ոչ թէ ուրիշների անելիքի մասին է, իսկ անելիքի բանաձեւը մէկն է՝ սիրել հայրենիքն ըստ Չարենցի եւ ըստ Թումանեանի: Սա նշանակում է Հայաստանի Հանրապետութիւնը սիրել որպէս հայրենիք, եւ դա դնել բոլոր գործողութիւնների, բոլոր երազանքների, բոլոր ռազմավարութիւնների հիմքում:

Սիրելի ժողովուրդ,
Սիրելի հայրենակիցներ,

2022 թուականը ծանր մարտահրաւէրների տարի էր: Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումը ծանր վիճակի մէջ է դրել Լեռնային Ղարաբաղի մեր քոյրերին ու եղբայրներին, մեզ բոլորիս: Այս իրավիճակի քաղաքական գնահատականի եւ հնարաւոր լուծումների մասին արդէն բազմիցս խօսել եմ: Այս պահին ուզում եմ ամուր գրկել շրջափակման մէջ յայտնուած մեր քոյրերին ու եղբայրներին եւ նրանց ասել, որ տարածաշրջանում յարաբերութիւնների որակ փոխելու ասելիքի կարեւոր հասցեատէրն են իրենք, եւ սա խորհելու մի բացառիկ ժամ է բոլորիս համար:

Հայաստանի ինքնիշխան տարածքի դէմ 2021 թուականի մայիսից 2022 թուականի սեպտեմբերի 13-ի ընկած ազրեսիան կրկնակի ցաւոտ էր, որովհետեւ անվտանգութեան ոլորտում մեր դաշնակիցները մեզ թողեցին միայնակ՝ նախընտրելով մնալ պասիւ դիտորդի կարգավիճակում կամ որպէս այլընտրանք առաջարկելով ակտիւ դիտորդի կարգավիճակը:

Բայց մենք աշխարհում մենակ չմնացինք, եւ ուզում եմ



չնորհակալութիւն յայտնել այն երկրներին եւ միջազգային կազմակերպութիւններին, ովքեր անտարբեր չգտնուեցին այս իրավիճակի նկատմամբ եւ մեր երկրի առաջ չուենալով ոչ մի պարտաւորութիւն, գնացին աննախադէպ որոշումներով՝ աջակցելու համար մեր տարածաշրջանում անվտանգութեան ու կայունութեան հաստատմանը:

Եւ ամենակարեւորը՝ ես այսօր ծնկի եմ իջնում մեր բոլոր նահատակների, նրանց ծնողների եւ ընտանիքների անդամների առաջ, նրանց երեխաների առաջ, եւ իմ ուղերձն առաջին հերթին նուիրուած է նրանց, որ Հայաստանի Հանրապետութեան ապագայի ամենաուժեղ սիմուլին են, որովհետեւ նրանք գոհուել են, որ Հայաստանն ապրի, նրանք ընկել են, որ Հայաստանը յառնի:

Այս է պատճառը, հէնց այս է պատճառը, որ համաշխարհային եւ տարածաշրջանային փոթորիկներին, անվտանգային նորանոր մարտահրաւէրներին մեր պատասխանն ասիմետրիկ է: Որքան ահազանում են մարտահրաւէրները, մենք այնքան կենտրոնանում ենք ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդավարական բարեփոխումների, զարգացման օրակարգի վրայ, որովհետեւ այդ ճանապարհն է միայն, որ մեծացնելու է մեր այսօրուայ դիմակայունութիւնը եւ ապահովելու վաղուայ բարգաւաճումը:

Այս իմաստով 2022 թուականը բացառիկ ձեռքբերումների տարի էր: Հայաստանը յայտնուեց տնտեսական ազատութեան համաշխարհային վարկանիշի 11-րդ հորիզոնականում՝ ներդրումային եւ տնտեսական ազատութեան առաջատար երկրի միջազգային ճանաչում ստանալով: Սա տեղի ունեցաւ այն բանի արդիւնքում, որ ի հեճուկս բոլոր դժուարութիւնների՝ կառավարութիւնը հաւատարիմ է մնացել համակարգային բարեփոխումներ իրականացնելու գործելակերպին:

Որպէս արդիւնք մենք տարին փակում ենք տնտեսական երկնիշ աճով, որը գլոբալ ճգնաժամային տարում բացառիկ է համաշխարհային մակարդակով եւ ինչպէս 2019 թուականին՝ կը բարձրացնի Հայաստանի Հանրապետութեան միջազգային տեսանելիութիւնը:

Հայաստանում գրանցուած աշխատատեղերը հատեցին 700 հազար թիւը. կրկին մի աննախադէպ արդիւնք Երրորդ հանրապետութեան պատմութեան մէջ: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2018 թուականի ժողովրդական, թաւշեայ, ոչ բռնի յեղափոխութեան յաղթանակից ի վեր Հայաստանում ստեղծուել է շուրջ 153 հազար նոր աշխատատեղ: Կարեւոր է արձանագրել, որ նախորդ տարուայ նոյեմբերի համեմատողութեամբ, այս տարուայ նոյեմբերին մէկ աշխատողի միջին աշխատավարձն աճել է շուրջ 45 հազար դրամով կամ 20 տոկոսով, ինչը նշանակում է, որ մտավախութիւնները, թէ գլոբալ գնաճի պայմաններում Հայաստանը կը կանգնի սոցիալական ճգնաժամի առաջ, չեն իրականացել:

Ընդհակառակը՝ Հայաստանի Հանրապետութիւնում շինարարական բում է, բնակարանաշինարարութեան բում: Տասնեակ հազարաւոր ընտանիքներ նորակառույց շէնքերում բնակարան են ձեռք բերում այդ թիւում՝ կառավարութեան աջակցութեամբ: 2022 թուականին մենք բնակարան ձեռք բերող ընտանիքներին 36.5 միլիարդ դրամ ենք վերադարձրել եկամտային հարկի գծով, նախորդ տարուայ 22.7 միլիարդ դրամին ի հաւելում:

Բացի սրանից՝ հազարաւոր երիտասարդ ընտանիքներ հիպոթեկային վարկի աջակցութեան ծրագրերից են օգտուել երեխայի ծննդեան դէպքում. 2022 թուականին այս ծրագրով աջակցութեան ծաւալը հասել է 2.1 միլիարդ դրամի: Աւելի քան 10 հազար երրորդ եւ իւրաքանչիւր յաջորդ երեխայ ամսական 50 հազար դրամի աջակցութիւն է ստանում պետութիւնից, աւելի քան 10 հազար երեխայ:

Պիտի ընդգծեմ 300 դպրոց եւ 500 մանկապարտէզ կառուցելու մեր ծրագիրը, որը մեկնարկել է եւ թափ է ստանում: 2022 թուականի ընթացքում մենք արդէն շահագործման յանձնեցինք հիմնանորոգուած, վերակառուցուած կամ նորակառույց 24 դպրոց եւ 46 մանկապարտէզ: Հարիւրաւոր նոր դպրոցների եւ մանկապարտէզների կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման ծրագրերն ընթացքի մէջ են: Սա անբաժանելի մասն է երկրում տեղի ունեցող ինստիտուցիոնալ բարեփոխումների, որոնք ունեն ոչ միայն կրթական, կառավարչական, անվտանգային, այլեւ խորը պատմական եւ սոցիալ-հոգեբանական ենթատեքստ:



Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը՝ Ամանորի Առթիվ

«Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յարցախ եւ ի սփիւռս,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, սերն ու բարեմաղթանքներն ենք բերում ամէնքիդ:

Նոր տարուայ սեմին ենք մեր սպասումներով ու յոյսերով, նաեւ անհանգիստ սրտով ու մտահոգութիւններով: Անցնող տարին մեր ժողովրդի համար զերծ չեղաւ տագնապներից, ունեցանք նոր զոհեր ու կորուստներ: Հայրենիքը տակաւին կանգնած է անվտանգային մարտահրաշխանների առջեւ: Թշնամական նշանառութեան տակ են մեր սահմաններն ու խաղաղ բնակավայրերը: Արցախաբնակ Մեր զաւակները աննկուն ոգով շարունակում են պայքարել յանուն իրենց անկախ կեանքի իրաւունքի պաշտպանութեան՝ դիմագրաւելով բազում նեղութիւններ: Նաեւ Լաչինի ճանապարհի արգելափակումով պայմանաւորուած: Այսպիսի դժուարին իրավիճակում մենք չենք կարողացել մեր ազգային ներուժով լիարժէք միաբանուել հայրենիքը զօրացնելու եւ ծանր կացութիւնից դուրս բերելու համար: Այսօր աշխարհն ալեկոծող աշխարհաքաղաքական սուր դիմակայութիւնները, որ տեղիք են տուել հոգեւոր, սոցիալական եւ տնտեսական բազմազան խնդիրների, նոյնպէս իրենց անմիջական ներգործութիւնն են ունենում մեր տարածաշրջանում ծաւալուող զարգացումների վրայ:

Այդուհանդերձ, առ Աստուած ապաւինութեամբ Ամանորի այս երեկոյ մենք բարեմաղթանքներ ենք ուղղում միմեանց: Բարեմաղթանքներ՝ աշխարհի խաղաղութեան, մեր հայրենիքի՝ Հայաստանի եւ Արցախի ապահովութեան ու առաջընթաց կեանքի: Մեր հոգում առաւելաբար ակնկալիքներն են մեր կորուստների վերականգնման, յառնած խնդիրների յաղթահարման եւ ազգային մեր կեանքի նորոգութեան:

Սիրելիներ, քրիստոնեայի առաքելութիւնն է ապրել յոյսով եւ լինել լաւատես՝ համոզումով, որ, ինչպէս ասում է առաքեալը, «յոյսը երբեք չի ամաչեցնում է (Հռ. 5. 5): Պետութիւնները կործանուած են, ժողովուրդները անհետանում ոչ թէ փորձութիւնների ծանրութիւնից, այլ յոյսի սպառումից, ապագայի հանդէպ տեսլականի եւ այն կեանքի կոչելու վճռականութեան բացակայութիւնից: Մեր ժողովրդի յարագնայ

երթը եղել է ու պիտի շարունակի

մնալ Քրիստոսախարխախ հաւատքի, յոյսի ու լաւատեսութեան պատմութիւն: Այս վստահութեամբ ապրենք ու գործենք՝ ամբօրէն կառչած մեր ինքնութեանը, մեր լինելիութեան անփոխարինելի գրաւականներին՝ հայրենիքին, մեր լեզուին ու մեր հաւատքին: Հեռու վանենք մեզանից վհատութիւնը, ապագայնութիւնն ու անտարբերութիւնը եւ յուսառատութեամբ համախմբուենք ազգային ու պետական շահերի շուրջ: Գիտակցենք, որ այս է ուղին մեր վիրաւոր հայրենիքի ապաքինման, Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան, հայրենիք-սփիւռք միասնականութեամբ լուսաւոր գալիքի երաշխաւորման եւ ազգիս յարատեւութեան: Ուստի, առաքելական յորդորով «արթուն լինենք եւ սիրոյ ու հաւատի գրահները հագնենք եւ փրկութեան յոյսի սաղաւարտը դնենք (ԱՅ Թես. 5. 8-9):



Հայրապետիս աղօթքն է, որ Ամենակարողն Աստուած խաղաղութեան մէջ պահի մեր հայրենիքը եւ անփորձանք՝ հայրենեաց պաշտպան մեր գինուորներին: Տիրոջ օրհնութիւնն ու միխթարութիւնն ենք հայցում ծանր կորուստներ կրած ընտանիքներին, ապաքինութիւն՝ վիրաւորներին, շուտափոյթ վերադարձ՝ գերեզարուած ու անյայտ կորած մեր զաւակներին:

Ամանորի սեմին միասնաբար հայցենք Ամենակալից, որ նոր տարում մեր ժողովրդին ի Հայաստան, եարցախ եւ ի սփիւռս պահպանի խաղաղ ու ապահով, սիրով միասնական ու շնորհի հայրենաշեն ու ազգաշահ իրագործումներ: Թող Տէրը մեր կեանքում առատացնի յոյսը մեր հայրենիքի ու ազգի ապագայի հանդէպ: Եւ թող Աստծոյ սերն ու շնորհները այսօր եւ միշտ ուղեկից լինեն մեզ եւ ամէնքին:

Օրհնեալ, բարի նոր տարի:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Ամանորի եւ Սուրբ Ծննդեան Տօներու Առթիւ Շնորհաւորական Ուղերձը

Շարունակուած էջ 3-էն

Կարեւոր են այն լայնածաւալ բարեփոխումները, որ իրականացնում ենք ոստիկանութեան համակարգում, որի ամենատեսանելի արդիւնքը նոր չափանիշներով Պարեկային ոստիկանութեան ներդրումն է Հայաստանում:

Առանցքային նշանակութիւն ունեն այն խորը եւ համապարփակ բարեփոխումները, որոնք մեկնարկել են բանակում: Գրագէտ, հայրենասէր, ժամանակակից պահանջներին ու պայմաններին համապատասխանող պրոֆէսիոնալ գինուորի եւ սպայի վրայ հիմնուած բանակի ձեւաւորումն է մեկնարկել, որը պիտի զուգորդուի գինուորական աշխատավարձերի առնուազն կրկնապատկումով, գինուորականների եւ նրանց ընտանիքների սոցիալական երաշխիքների համակարգով, նոր սպառազինութեամբ ու տեխնիկայով: Բայց նման բանակը մեզ պատերազմի համար չէ հարկաւոր, այլ խաղաղութեան, մեր ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու համար: Մենք աչք չենք դնում ուրիշի հողի վրայ եւ ակնկալում ենք, որ ուրիշն էլ մեր հողի վրայ աչք չդնի եւ այս բանաձեւով պատրաստ ենք գնալ խաղաղութեան:

Կարեւոր եմ համարում նաեւ այն մասշտաբային միջոցառումները, որ 2022 թուականին մենք անցկացրեցինք Հայաստանում. բռնցքամարտի Եւրոպայի առաջնութիւն, Մանկական եւրատեսիլ, Ստարմուս միջազգային փառատօն, Կենսաբանութեան դպրոցականների համաշխարհային օլիմպիադայ: Սրանք միջոցառումներ են, որոնց անցկացումով մենք նորովի ենք երեւում աշխարհին, եւ աշխարհը նորովի է ճանաչում Հայաստանը:

Սիրելի ժողովուրդ, Հայաստանի Հանրապետութեան իմ հարազատ քաղաքացիներ, Այս ամէնն իրագործում ենք առաջին հերթին պետական բիւջէի հարկային եկամուտների աննախադէպ աճի շնորհիւ: 2022 թուականի պետական բիւջէի հարկային եկամուտները կազմել են 1 տրիլիոն 925 միլիարդ դրամ, որը 2018 թուականի նոյն ցուցանիշից աւելի է 670 միլիարդ դրամով, կամ 53 տոկոսով, կամ մէկուկէս միլիարդ դոլարով: Բայց այս ցուցանիշն առաջին հերթին աշխատող, բարիք ստեղծող մարդկանց շնորհիւ է, Հայաստանի Հանրապետութեան հարկ վճարող տնտեսավարողների, եւ ուզում եմ շնորհակալութիւն յայտնել նրանց, որ պետական բիւջէ վճարող հարկերը ֆինանսական կորուստ չեն համարում, այլ ներգրում իրենց պետութեան, իրենց

եւ իրենց երեխաների ապագայի մէջ:

Այդ գումարներով է, որ 2022 թուականին նորոգել ենք աւելի քան 500 կիրճերը ճանապարհ, մեկնարկել ենք ուսուցիչներին աշխատավարձերի կրկնապատկման գործընթացը, Երրորդ հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ արբանեակ ենք արձակել տիեզերք, նոր աւտոբուսներ եւ տրոլէյբուսներ ենք ձեռք բերում մայրաքաղաքի համար, բարձրացրել ենք նուազագոյն աշխատավարձը, մեր խոստման համաձայն՝ աւիաընկերութիւն ենք հիմնել, բարձրացրել ենք գիտնականների աշխատավարձերը, գիտութեան ֆինանսաւորումը 2018 թուականի համեմատ աւելացրել ենք 150 տոկոսով, 2022 թուականի սեպտեմբերից բարձրացրել ենք եւ 2023 թուականի յուլիսից նորից կը բարձրացնենք կենսաթոշակները: Ընդ որում, անկանխիկ առեւտրի դէպքում հետվճարի համակարգով այսօրուայ դրութեամբ կենսաթոշակառուներին եւ նպաստառուներին ենք վերադարձրել շուրջ 527 միլիոն դրամ, եւ ուզում եմ յատուկ շնորհակալութիւն յայտնել այն բանկերին, որոնք կառավարութեան հետ համահաւասար մասնակցում են ծրագրին:

Բիւջետային այդ յաւելեալ միջոցների հաշուին է, որ 2022 թուականին պետական պատուերով առողջապահական ծառայութեան 786 հազար դէպք ենք սպասարկել, որը 2017 թուականի համեմատ կրկնապատկից աւելին է, 437 հազար դէպքով կամ 125 տոկոսով աւելի:

Իսկ ինչու՞ ենք անում այս ամէնը: Մի պատճառով, միայն ու միայն մի պատճառով, որովհետեւ սիրում ենք ձեզ, սիրում ենք մեր երկիրը: Միւրում եմ բոլորիդ, սիրում եմ մեր երկիրը, մեր պետութիւնը, եւ որտեղ սխալում ու սայթաքում եմ, որտեղ ձախողում եմ՝ գուցէ չափազանցուած, գուցէ խելամուտութիւնը ստուերող սիրոյ պատճառով: Բայց սերը, ի վերջոյ, աւելին է ու ամենագորը, եւ փոթորկուած օւկիանոսում յայտնուած մեր նաւը՝ Հայաստանի Հանրապետութիւնը, հասցնելու ենք խաղաղ նաւահանգիստ:

Եւ ուրեմն՝

Կեցցէ ազատութիւնը,

Կեցցէ Հայաստանի Հանրապետութիւնը,

Կեցցեն մեր երեխաները, որ ապրելու են ազատ եւ երջանիկ Հայաստանում:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդէ:

Հերոսութիւն եւ Իմաստնութիւն

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Հազարամեակներու մեր պատմութիւնը լեցուն է բազմաթիւ հերոսներով եւ հերոսական արարքներով: Սակայն դժբախտաբար անոնց մեծամասնութիւնը արդիւնքը եղած են նեղ կացութիւններէ կամ տազնապալից իրավիճակներէ դուրս գալու ձգտումներու: Ինչպէս Պարոյր Սեւակ գեղեցկօրէն արտայայտած է՝ «երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար»: Ու «խենթ»երը, իմա՝ հերոսները կը տողանցեն մեր պատմութեան բոլոր հանգրուաններուն, եւ շատ անգամ անոնց կը պարտինք մեր գոյատեւումը: Հերոսները անոնք են, որոնք մեկնելով իրենց համոզումէն՝ որ կան իրենց անձերէն աւելի արժեքաւոր նպատակներ եւ կամ ծրագիրներ, կը նուիրաբերէն իրենց կեանքերը անոնց իրագործման համար: Հետեւաբար, երբ աւելի խորը կը դիտենք, կ'անդրադառնանք, որ հերոսութիւն եւ ողբերգութիւն շողկապուած են իրարու: Վկայ՝ մեր ազատագրական պայքարի ֆետայիններն ու պատերազմներու ընթացքին հերոսի կոչումը նուաճած մեր նահատակ մարտիկները: Հերոսները ընդհանրապէս եւ դժբախտաբար կ'ունենան ողբերգական վերջաւորութիւն:

Իմաստնութիւնը իմաստուն ըլլալու յատկութիւնն է, որ իր մէջ կը պարփակէ խոհեմութիւն, դատողութիւն, դատարարութիւն, գգաստութիւն, հաստատակամութիւն, եւ այլն: Երբ ակնարկ մը կը նետենք մեր պատմութեան վրայ, դժբախտաբար ակնատես կ'ըլլանք, որ հերոսութիւններու հետ բաղդատած, իմաստնութիւնը պակաս է մեզի, որպէս զի կարենանք քննական մօտեցումով արժեւորել կացութիւնները եւ ըստ այնմ լուծումներ որոնել եւ լծուիլ անոնց իրագործման:

Իմաստնութիւնը իր մէջ կը պարփակէ նաեւ մեծ պատկերը տեսնելու կարողութիւնը, պետական ու ազգային շահը հատուածականէն աւելի գերադասելու անշահախնդրութիւնը, պատմութիւնէն դասեր քաղելու ընդունակութիւնը, ինչպէս նաեւ ապագան կանխատեսելու եւ ըստ այնմ պատրաստուելու շնորհն ու կամքը: Յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են որեւէ ազգի յառաջդիմութիւնը ապահովելու համար: Յատկութիւններ, որոնցմով դժբախտաբար ազգովին աղքատ եղած ենք եւ բաւարար աշխատանք չենք տարած, կարենալ բարելաւելու համար մեր այս սկարութիւնները:

Առանց հեռուն երթալու, եթէ աչքի առաջ ունենանք անցած երեսնամեակը, պիտի համոզուինք, որ որքան բարգաւաճ կ'ըլլար մեր իրականութիւնը այսօր, եթէ իմաստնութեամբ գործած ըլլայինք: Թող մեր այս խօսքը չնկատուի ամերիկեան արտայայտութեամբ՝ «Երկուշաբթի առաւօտեան խմբապետութիւն» (Monday morning quarterbacking), երբ հեշտ կ'ըլլայ կիրակի օրուան անցած խաղին պատահած սխալներուն մասին «քարոզ» կարողալ: Անմիջապէս յստակացնենք, որ ունեցանք իմաստուն առաջնորդներ, բայց դժբախտաբար հատուածականութեան ախտէն տառապողներու ժխորը այնքան բարձր էր, որ հրաժարեցուց եւ զգեստնեց զանոնք: Դաւաճան անուանուեցան անոնք, որոնք տեսնելով մեծ պատկերը, առաջարկեցին փոխ-գիշտումներու գնով ապահովել այն, որ մեր կարողութեան սահմաններուն մէջ էր պահել: Սակայն Նախիջեւանը ազատագրելու եւ Պաքու հասնելու ամբոխավար կոչերու աղմուկը անյսելի դարձուց պատմահայր Խորենացիի «ոտքերդ վերմակիդ համեմատ երկարելու» խրատը հնչեցնողները: Նոյնիսկ Թունուզի նախագահ Պուրկիպաչի եւ Եգիպտոսի նախագահ Սատաթի փոխ-գիշտումներու գծով իսրայէլի հետ երկխօսելու օրինակին նշումը 1997-ին հրատարակուած մեր մէկ յօդուածին մէջ, մեզ ալ արժանացուց դաւաճանի պիտակին:

Ունեցանք ազգային շահը գերադասող առաջնորդներ, բայց անոնք գոհ գացին օտարի ձեռքին գործիք ծառայող պատեհապաշտներու:

Ունեցանք Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութիւնը սերտած, վարչապետ Քաջագնունիի անիրականանալի Սեւրի շրջափակ խուսափելու եւ թուրքին հետ երկխօսութեան մտնելու դասը սորված առաջնորդներ, բայց «ազգայնականները» ապագային հռչակեցին զանոնք: Եւ «ամէնը կամ ոչինչ» մտայնութիւնը դաւանողներու արարքները մեզ հասցուցին այս օրուան, որ աւելի մօտ է ոչինչին, քան՝ ամէնուն:

Այս բոլորի մասին 1991-էն ի վեր «Մասիս» շաբաթաթերթին մէջ մեր հրատարակած յօդուածներով արտայայտուած ենք, նշելով հեռու թէ մօտիկ անցեալէն օրինակներ, դուրս գալու մեր կաղապարուած մտածելակերպէն եւ ընդգրկելու միջազգային զարգացումներու հետ քայլ պահող գործելաձեւ: Բազմիցս շեշտած ենք անձնասիրութիւնէ դէպի ազգասիրութիւն, ինքնախաբէտութիւնէ դէպի ինքնաճանաչում, հատուածականէն դէպի պետական մտածողութիւն, պատրանքէն դէպի իրականութիւն ուստու կատարելու անհրաժեշտութեան մասին: Միշտ ալ մեզ տանջած է այն միտքը, որ ինչո՞ւ կը պատահին այս սխալները, երբ աչքի առջեւ են անոնցմէ խուսափելու օրինակները: Մեզ տանջած է նաեւ այն միտքը, որ կ'արժէ՞ ժամանակ յատկացնել եւ գրել, երբ փոփոխութիւն չես տեսներ: Բայց ինչպէ՞ս լուր, երբ կայ ցաւ, որմէ կարելի էր հեշտութեամբ խուսափիլ:

Դժբախտութիւնը հոն է, որ սերունդներ դաստիարակուեցան խեղաթիւրուած պատմութեամբ, տուրք տալով հատուածականութեան: Դժբախտութիւնը հոն է, որ սերունդներու դաստիարակութեան մէջ իրապաշտութիւնը գոհ գնաց զգացական գեղումներու: Պէջրութի, Փարիզի եւ կամ Լոս Անջելէսի մեր նստավայրերէն գոհացանք երգելով «Գնանք մենք Սասուն», առանց այդ ուղղութեամբ պատրաստելու մտքերն ու առնելու գործնական քայլեր: Երագով աւելի հեշտ էր ժամանակաւորապէս հրահրել զգացմունքը, քան՝ իրականութեան հետ ընդհարումով խթանել միտքը: Ու եկաւ օրը, երբ երազները բախուելով իրականութեան հետ, փշրուեցան:

Դժբախտութիւնը հոն է, որ ներկայիս ալ, ոչ մօտիկ անցեալի եւ ոչ ալ հեռու պատմութեան դասերէն օգտուելու ցանկութիւնը ակներեւ է մեր ժողովուրդին մէջ: Այդ իմաստնութիւնը, այդ մշակույթը կը պակսի մեզի: Թերթատեցէք մամուլը եւ պիտի համոզուիք, որ դժբախտաբար հոն աւելի ատելութիւն եւ մաղձ կայ, քան՝ ուսանելի հանդուրժողականութիւն: Աւելի բաժանարարութիւն կայ, քան՝ միասնականութեան ձգտում: Շատ ծանր կը կշռէ այս իրականութիւնը, մանաւանդ երբ աշխարհ կը բոլորէ անկայունութեան եւ անապահովութեան ժամանակաշրջան մը, որ պետք է ստիպէ մեզի մէկդի դնելու մեր նախասիրութիւնները եւ ազգովին բոլորուելու Հայաստանի եւ հայ ժողովուրդի ապահովութիւնն ու գայատեւումը երաշխաւորելու հակառակ առաքելութեան շուրջ:

Հերոսութիւնը պոռթկում է, մինչ իմաստնութիւնը՝ ծրագրաւորուած աշխատանք: Եթէ այդ պոռթկումը իմաստնութեան արդիւնք չէ, ապա պիտի չծառայէ իր բուն նպատակին եւ կրնայ նոյնիսկ վնասել, յուժմպէտս վատնելով մեր ունեցած պաշարը: Այս յօդուածին սկիզբը ըսինք, որ հերոսութիւն եւ ողբերգութիւն շողկապուած են իրարու եւ հերոսները ընդհանրապէս կ'ունենան ողբերգական վերջաւորութիւն: Մեր համեստ կարծիքով, այդ շողկապը կը կտրուի երբ հերոսութիւնը կը ծնի իմաստնութիւնէն: Այդ պարագային, փոխան հերոսի ողբերգական մահուան յիշատակման, մենք ցնծութեամբ պիտի գովերգենք կենդանի հերոսի սխրանքները:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՄԱՆՈՒԿ ԵՒ ԼԵՆԱ
ՄԱՆՈՒԿԵԱՆ**

2022 Տարուան Հայաստանի Գլխաւոր Իրադարձութիւնները

Կայացաւ Հայ-Թրքական Բանակցութիւններու Առաջին Հանդիպումը



Յունուար 14-ին, Մոսկուայի մէջ կայացաւ Հայ-Թրքական բանակցութիւններու առաջին հանդիպումը, որու աւարտին Ազգային ժողովի փոխնախագահ եւ երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման հարցով Հայաստանի յատուկ ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեան յայտնեց որ, Հայոց ցեղասպանութեան հարցին շուրջ խօսակցութիւն չէ եղած թուրքիոյ յատուկ ներկայացուցիչ Սերտար Քըլըչի հետ: Հայաստանը միշտ յայտարարած է, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ Ցեղասպանութեան հետ կապուած նախապայման չկայ, շեշտեց Ռուբինեան՝ ընդգծելով, որ այդպէս եղած է միշտ՝ նախկին բոլոր իշխանութիւններուն օրօք, եւ նման հարց օրակարգ բերելով, ըստ անոր, օրակարգը ուղղակի կը դադրի, եւ այդ կը հասկնայ նաեւ թրքական կողմը: «Անիմաստ է այդպէս սկսել բանակցութիւնները, որովհետեւ դրանք ոչ մի տեղ չեն տանի», ըսաւ Հայաստանի յատուկ ներկայացուցիչը:

Առաջին այս հանդիպումը միջազգային շրջանակներու եւ լրատուամիջոցներու կողմէ արժանացաւ մեծ ուշադրութեան: Այդ քայլը ողջունեց Եւրոպական Միութիւնը, պատրաստակամութիւն յայտնելով նիւթապէս աջակցելու կողմերուն՝ յարաբերութիւններու կարգաւորման իրենց քայլերուն մէջ: Նոյն ըրաւ նաեւ ՆԱԹՕ-ն, որուն անդամ է կողմերէն մէկը: Թրքական մամուլը եւս դրական արտայայտուեցաւ առանց նախապայմաններու սկիզբ առած բանակցութիւններուն նկատմամբ:

Վիեննայի մէջ կայացած երկրորդ հանդիպումին կողմերը պայմանաւորուեցան բանալ Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը՝ երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար:

Նախագահ Արմէն Սարգսեանի Անակնկալ Հրաժարականը

Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան հրաժարական ներկայացուց իր պաշտօնէն: «Ես չափ երկար եմ մտածել եւ որոշել եմ մօտ չորս տարի ակտիւ աշխատելուց յետոյ հրաժարական տալ Հանրապետութեան նախագահի պաշտօնից: Այդ որոշումը բացարձակապէս հմոցիտնալ չէ եւ բխում է որոշակի տրամաբանութիւնից», յայտարարեց Արմէն Սարգսեան: Յունուար 24-ին կայացած իր մամուլային ընթացքին, վարչապետ Նիկոլ Փաշինեան խօսելով այս մասին յայտնեց, որ հրաժարումէն հրապարակումէն ժամեր առաջ միայն իմացած է այդ մասին: «Նա հրապարակումից 3.5 ժամ առաջ զանգահարել է ինձ, ու մենք



խօսել ենք այդ մասին: Ես հանրապետութեան նախագահին հարցրել եմ, թէ ինքն ինձ հետ քննարկում է հարցը, թէ ինքն ինձ տեղեկացնում է, որ կայացրել է որոշում: Որից յետոյ ինքն ասել է, որ կայացրել է որոշում», ասուլիսի ժամանակ ըսաւ Նիկոլ Փաշինեան: Արմէն Սարգսեան միշտ դժգոհած էր, որ նախագահը չունի անհրաժեշտ լիազօրութիւններ՝ ազդելու ներքին եւ արտաքին քաղաքականութեան արմատական գործընթացներուն վրայ:

Եւրոպական Խորհրդարանը Հաստատեց Հայաստանի Նշանակալի Յառաջընթացը



Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵՄԽՎ) հաստատեց Հայաստանի վերաբերեալ զեկոյց, ուր արձանագրուած է երկրի ժողովրդավարութեան առումով դրական յառաջընթացն ու զարգացումը: «Հայաստանը նշանակալի յառաջընթաց ունեցած է ժողովրդավարութեան զարգացման գործին մէջ՝ 2018-էն սկսեալ: Միեւնոյն ժամանակ երկիրը բախած է շարք մը իրադարձութիւններու, որոնք լուրջ ազդեցութիւն թողած են անոր հիմնարկներու գործունէութեան վրայ», նշուած է Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի փաստաթուղթին մէջ: Ձեկոյցը կը փաստէ՝ Հայաստանը յաջողութեամբ դուրս եկաւ քաղաքական լուրջ ճգնաժամէն, որ սկիզբ առաւ Լեւոնայի Ղարաբաղի հակամարտութեան հետեւանքով: «Ճգնաժամը հանգուցալուծուեցաւ 2021-ի Յունիսին կայացած արտահերթ ընտրութիւններու միջոցով, որոնք կազմակերպուած էին ժողովրդավարական եղանակով՝ չնայած լրջօրէն բեւեռացուած միջավայրի մէջ», ըսուած էր բանաձեւի նախագիծին մէջ:

Ռուսաստանեան Ընկերութիւններ Կը Տեղափոխուին Հայաստան

Փետրուարին ծայր առած Ռուս-ուքրանական պատերազմին պատճառով բազմաթիւ ռուսաստանեան ընկերութիւններ սկսան Հայաստան տեղափոխուիլ՝ իրենց գործը այնտեղ շարունակելու համար: Տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան յայտնեց որ, մէկ տասնեակը արդէն Հայաստան է: Դիմած են բազմաթիւ ընկերութիւններ, տասնեակ եւ հարիւրաւոր ընկերութիւններ: Գործող առեւտրային արհեստը Հայաստան տեղափոխող կամ տեղափոխիլ պատրաստուող ընկերութիւններուն մեծ մասը, ըստ տնտեսութեան նախարարին, բարձր արհեստագիտական ոլորտին է: Քերոբեանի փոխանցմամբ, այստեղ եկած են կամ գալու կը պատրաստուին մասնաւորապէս արեւմտեան շուկաներու հետ աշխատող ընկերութիւնները. «Հիմնականում այն ընկերութիւններն են, որոնք ունեն ուղիղ առնչութիւն արեւմտեան շուկաների հետ, եւ այսօրուայ սահմանափակումները թույլ չեն տալիս, որպէսզի իրենք իրենց երկրից այդ աշխատանքը կատարեն»: Ռուսաստանեան ընկերութիւններու Հայաստան տեղափոխումը մեծ խթան հանդիսացաւ Հայաստանի տնտեսութեան:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏՕՔԹ. ՀԱՄԲԻԿ ԵՒ ՆԱՅԻՐԱ
ՍԱՐԱՖԵԱՆ**

2022 Տարուան Հայաստանի Գլխաւոր Իրադարձութիւնները

Վահագն Խաչատուրեան Ընտրուեցաւ Հայաստանի Հինգերորդ Նախագահ



Մարտ 3-ին, Հայաստանի Խորհրդարանի արտահերթ նիստի ընթացքին Վահագն Խաչատուրեան երկրորդ փուլով ընտրուեցաւ Հայաստանի Հինգերորդ նախագահ: 107 պատգամաւորէն նախագահի ընտրութեան երկրորդ փուլի քուէարկութեան մասնակցեցան 71-ը, որոնք բոլորն ալ կողմ քուէարկեցին:

Ընդդիմադիր երկու խմբակցութիւնները կը պոչքոթէին նախագահի ընտրութեան հարցը:

Կիրակի, Մարտ 13-ին, Ազգային Ժողովի յատուկ նիստի ընթացքին Վահագն Խաչատուրեան երթում տալով ստանձնեց հանրապետութեան նախագահը պաշտօնը:

Պրիւքսէլի Սէշ Կայացաւ Փաշինեան-Ալիեւ Հանդիպում



Ապրիլ 6-ին Եւրոպական Խորհուրդի նախագահ Շառլ Միշէլի միջնորդութեամբ Պրիւքսէլի մէջ կայացաւ Փաշինեան-Ալիեւ հանդիպում:

Հանդիպումի ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայացուց այն սկզբունքային Հարցերը, Որոնք Պէտք է դառնան Ատրպէյճանի հետ բանակցութիւններու առարկայ: Հայկական կողմը յայտնեց որ, իր համար սկզբունքային նշանակութիւն ունին Լեռնային Ղարաբաղի Ժողովուրդի անվտանգութեան երաշխիքները, անոնց իրաւունքներու եւ ազատութիւններու պաշտպանութիւնը, ինչպէս նաեւ ԼՂ վերջնական կարգավիճակին ճշգրտումը:


Այս հանդիպումին յաջորդեցին մի քանի այլ բանակցութիւններ՝ Ռուսաստանի միջնորդութեամբ: Սակայն, իւրաքանչիւր նման հանդիպումէն ետք Ատրպէյճան դիմեց նոր սադրանքներու՝ Հայաստանի եւ Արցախի դէմ:

Ամերիկայի Նախագահը Կրկին Օգտագործեց Հայոց Ցեղասպանութիւն Եզրոյթը

Ապրիլ 24-ին, ԱՄՆ Նախագահը Ճօ Պայտըն կրկին օգտագործեց Հայոց Ցեղասպանութիւն եզրոյթը: Սպիտակ Տան կողմէ հրապարակուած ապրիլ քսանչորսեան ուղերձին մէջ Ճօ Պայտըն ըսաւ. «1915 թուականի Ապրիլ 24ին օսմանեան իշխանութիւնները Կոստանդնուպոլսոյ մէջ ձերբակալեցին հայ մտաւորականները եւ համայնքին առաջնորդները: Այսպէս սկսաւ Հայոց Ցեղասպանութիւնը՝ 20-րդ դարի վատթարագոյն գանգուածային վայրագութիւններէն մէկը: Այսօր մենք կը յիշատակենք մէկուկէս միլիոն հայերը, որոնք բնաջնջման արշաւի ընթացքին տեղահանուած են եւ կամ մահուան երթի ուղարկուած են: Կը սգանք այդքան շատ կեանքերու կորուստը», ըսուած էր Նախագահի ուղերձին մէջ, որ հրապարակուեցաւ Սպիտակ Տան պաշտօնական կայքէջին վրայ: «Խորհելով Հայոց Ցեղասպանութեան մասին, մենք կը վերահաստատենք մեր խոստումը՝ զգօս մնալ ատելութեան քայքայիչ ազդեցութեան դէմ՝ իր բոլոր ձեւերով: Մենք յանձնառու կը մնանք աշխարհի վրայ տեւական սպիներ թողող վայրագութիւնները բարձրաձայնելուն եւ կանգնեցնելուն», ըսուած էր Ամերիկայի նախագահի ուղերձին մէջ:

Նոյն օրը, Հայաստանի եւ սփիւռքի տարածքին նշուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 107-ամեակը:

Ընդդիմադիրներու Կոչերը Լայն Արձագանգ Զգտան



Խորհրդարանական երկու ընդդիմադիր դաշինքներու նախաձեռնած փողոցային շարժումները դարձեալ իրենց ակնկալած արդիւնքը չտուին:

Ընդդիմութիւնը կը գուժէր, որ Արցախի հարցով կ'ընթանան կամ կը սպասուին կործանարար գործընթացներ եւ կոչ ըրին հասարակութեան՝ դուրս գալու փողոց եւ կանխելու այդ ամէնը, իսկ այդ ընելու համար պէտք է իրականացնել իշխանափոխութիւն:

Արցախի նախագահը յայտնեց, որ Արցախի կարգավիճակին վերաբերեալ այս փուլին որեւէ փաստաթուղթ չի քննարկուիր, եւ Հայաստանի վարչապետին հետ կայ յստակ պայմանաւորուածութիւն, համաձայն որուն՝ Արցախի հետագայ կարգավիճակին հետ կապուած միջազգային մակարդակով որեւէ քննարկման պարագային, հայկական կողմին դիրքորոշումը պէտք է համաձայնեցուած ըլլայ Արցախի Հանրապետութեան իշխանութիւններուն եւ Ժողովուրդի կարծիքին հետ: Նոյնաբովանդակ յայտարարութիւններ հնչեցին նաեւ Հայաստանի իշխանութիւններէն:

Ուաշինկթըն կոչ ըրաւ Ընդդիմութեան՝ գերծ մնալ բռնութիւններէն: «Մենք լիովին կ'աջակցինք ազատ կամքի արտայայտման եւ խաղաղ հաւաքներու հիմնարար իրաւունքը: Կոչ կ'ընենք մարդոց իրենց կարծիքը արտայայտելու խաղաղ ձեւով: Իշխանութիւններուն կը յորդորենք զսպուածութիւն դրսեւորել, իսկ ցուցարարներուն՝ գերծ մնալ բռնութենէ եւ յարգել օրէնքի գերակայութիւնն ու Հայաստանի Ժողովրդավարութիւնը», յայտնեց ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայսը:




**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԽԱԶԻԿ ԵՒ ԺԵՆԻԱ
ՔԷՇԻՇԵԱՆ**

2022 Տարուան Հայաստանի Գլխաւոր Իրադարձութիւնները

Տարուայ ընթացքին, ընդդիմութիւնը մի քանի այլ փորձ կատարեց՝ Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը տապալելու նպատակով, սակայն այդ բոլորը մատնուեցան ձախողութեան:

Հայաստան Տիեզերք Արձակեց Իր Առաջին Արբանեակը



Սպանական SATLANTIS ընկերութիւնը յայտարարութիւն տարածեց յայտնելով որ, առաջին հայկական արբանեակը՝ Տիեզերք ուղարկելու վերաբերեալ: «Armsat-1» անունով յայտնի արբանեակը, առաջին հայկական ռազմավարական արբանեակն էր:

SATLANTIS-ը յայտարարեց, որ հայկական կողմին հետ ունեցած համաձայնագիրը դրականօրէն պիտի ազդէ հայաստանեան էքոնոմիկային վրայ՝ աւելցնելով ոլորտային մասնագէտներու եւ ճարտարապետներու թիւը: Կը նշուի, որ յաջող մեկնարկէն յետոյ առաջին հայկական արբանեակը լաւ վիճակի մէջ է ու պատրաստ է յառաջիկայ 4 տարիներու ընթացքին կատարելու իր աշխատանքը: Մայիսին 26-ին «Armsat-1»-ը առաջին կապը հաստատեց երկրին հետ, եւ յայտնի դարձաւ որ, արբանեակին բոլոր ենթահամակարգերը անխափան վիճակի մէջ էին:

Արբանեակի առաքելութեան մանրամասնութիւններն ու առաջին արդիւնքները ներկայացուեցան Երեւանի մէջ՝ Սեպտեմբերին տեղի ունեցած «Սթարմոս» փառատօնի ծիրէն ներս:

Աւելի ուշ յայտնի դարձաւ որ, յառաջիկայ տարիներուն Հայաստան տիեզերք պիտի արձակէ երկու արբանեակ եւս: Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ արբանեակի արձակման վերաբերեալ որոշումները կ'այցուած են գաղտնիութեան պայմաններու մէջ, եւ այդ է պատճառը, որ նախնական որեւէ տեղեկատուութիւն չէ հրապարակուած:

Կը ծրագրուի մինչեւ գալիք տարուայ աւարտ Հայաստանի մէջ տեղծել արբանեակի կառավարման կեդրոն եւ ընդունիչ կայան, որուն գլխաւոր գործառույթները պիտի ըլլան արբանեակի կառավարումը եւ տիեզերալուսանկարներու ստացումը:

Մամուլի Ազատութեան Գծով Հայաստանը Տարածաշրջանի Սէջ Նկատուեցաւ Յառաջատար

Լրագրողներ Առանց Սահմաններու (Reporters Sans Frontieres) կազմակերպութիւնը հրապարակեց մամուլի ազատութեան 2022 թուականի զեկոյցը, ուր ընդգրկուած են 180 երկիրներ ու տարածքներ:

Հայաստանի մասին զեկոյցին մէջ նշուած էր, որ չնայած բազմակարծութեան, լրատուամիջոցները կը մնան բեւեռացուած: «Երկիրը կը բախի աննախադէպ մակարդակի ապատեղեկատուութեան եւ ատելութեան խօսքի, մասնաւորապէս կապուած Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ Լեռնային Ղարաբաղի տարածքային



վէճին հետ», ըսուած էր զեկոյցին մէջ:

Ռազմական Ոլորտին Սէջ Համագործակցութիւն Հայաստանի Եւ Հնդկաստանի Միջեւ

44-օրեայ պատերազմէն յետոյ նկատելիօրէն աշխուժացած են հայ-



հնդկական յարաբերութիւնները ու օրակարգի վրայ յայտնուեցաւ ռազմական համագործակցութեան հարցը:

Տարուայ ընթացքին հնդկական մամուլին կողմէ եղան բազմաթիւ հրապարակումներ այն մասին, որ Հայաստան տարբեր բնոյթի արդիական զինատեսակներ ապսպրած է հնդկական արտադրող ընկերութիւններէն:

Այս բոլոր լուրերուն կապակցութեամբ հայկական կողմը մնաց լուռ, սակայն գալիք տարուայ պիւտտինով Պաշտպանութեան Նախարարութեան 1,2 միլիարտ տոլարի աննախադէպ յատկացումը ենթադրել տուաւ որ, Երեւան-Տելիւր ռազմական գետնի վրայ համագործակցութիւնը ընթացքի մէջ է:

Այս մասին տեղեկութիւնները սկսան տարածուիլ այն բանէն ետք, երբ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ 100 միլիոնաւոր տոլարներ վճարուած են դաշնակից երկիրներու, սակայն խոստացուած զինատեսակներու մատակարարումը տեղի չէ ունեցած:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի Եւ Բրիտանիոյ Գաղտնի Սպասարկութիւններուն Դեկավարները Այցելեցին Երեւան

Յուլիսի կէսերուն, երեք օր տարբերութեամբ Երեւան այցելեցին



երկու հօր պետութիւններու՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի հետախուզական ծառայութիւններու տնօրէնները, որոնք իրենց կարճատեւ կեցութեան ընթացքին հանդիպումներ ունեցան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

Աւելի անակնկալ էր CIA-ի տնօրէն Ուիլիըմ Պըրնզի այցելութիւնը, որու մասին նախապէս չէր յայտարարուած:

Աւելի ուշ, տարածուեցաւ պաշտօնական հաղորդագրութիւն, որ վարչապետ Փաշինեան ընդունած է Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնեային, որուն հետ քննարկած է միջազգային եւ տարածաշրջանային հարցեր եւ կովկասի մէջ տիրող իրավիճակը: Իր կարճատեւ կեցութեան

▶▶▶

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

2022 Տարուան Հայաստանի Գլխաւոր Իրադարձութիւնները

ընթացքին Ուիլիըմ Պըրնզի հրապարակային յայտարարութիւնն չունեցաւ:

Ուիլիըմ Պըրնզի այցելութենէն երեք օր ետք, Երեւան ժամանեց Ռուսիոյ Արտաքին Հետախուզութեան Ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշքինը: Վարչապետի հետ հանդիպումէն ետք հրապարակուած յայտարարութիւնը ունէր գրեթէ նոյն բովանդակութիւնը: Ի տարբերութիւն Ուիլիըմ Պըրնզի, Ռուս պաշտօնեան պատասխանեց ռուսաստանեան լրատուամիջոցներու հարցերուն, յայտարարելով թէ, Մոսկուան պատրաստ է աջակցելու Հայաստանին՝ նոր ստեղծուելիք արտաքին հետախուզական ծառայութեան հարցով:

Դեկտեմբերին, առաջին անգամ ըլլալով Հայաստան այցելեց նաեւ Բրիտանիոյ Հետախուզութեան Ծառայութեան ղեկավարը:

Երեւանի «Սուրմալու» Առեւտուրի Կեդրոնին Սեջ Պայթուցի Հետեւանքով Ձոհուեցան 16 Անձիք



Օգոստոս 14-ին, Երեւանի «Սուրմալու» առեւտուրի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ հսկայ պայթում, որուն հետեւանքով զոհուեցան 16 անձիք, որոնց մէջ էին մէկ յղի կին եւ մէկ երեխայ: Կը կարծուի որ, կեդրոնէն ներս կը գտնուէին հրավառութեան իրեր, որոնք պատճառ դարձան պայթումին:

Արտակարգ իրավիճակների նախարարութիւնը համոզմունք յայտնեց որ, պայթումը ահաբեկչութեան արդիւնք չէր եւ ուղեւորներու պայթումի մասին լուրերը իրականութեան չէին համապատասխանէր:

Ատրպէյճանական Յարձակումը Խլեց Հարիւրաւոր Ձոհեր



Սեպտեմբերի 13-ին, ժամը 00:05-ի սահմաններուն, Ատրպէյճանի զինուած ուժերու ստորաբաժանումները, հրետանային միջոցներու, ակնանետերու եւ ԱԹՄ-ներու կիրառմամբ բուռն կրակ բացին հայ-ատրպէյճանական սահմանի տեղակայուած հայկական դիրքերուն

ուղղութեամբ: «Կէսգիշերին Ատրպէյճանի Ձինուած Ուժերը յարձակողական գործողութիւններ է ձեռնարկել ՀՀ 4 ուղղութիւններով, եւ Ատրպէյճանը փորձում է դա ներկայացնել որպէս ի պատասխան իբր հայկական կողմի սադրանքների: Սակայն այդ տեղեկատուութիւնը բացարձակ կեղծ է եւ չի համապատասխանում իրականութեանը», Ազգային Ժողովի հերթական նիստին յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ ներկայացնելով իրավիճակը հայ-ատրպէյճանական սահմանին: Փաշինեան յայտարարեց որ, Հայկական կողմը ունի 49 զոհ: Այս նախնական թիւը հետագային բարձրացաւ 224-ի:

Երկու օր տեւող պատերազմը կանգ առաւ հայկական բանակի դիմադրութեան եւ Միացեալ Նահանգներու կողմէ Ատրպէյճանի վրայ բանեցուցած ճնշումներուն շնորհիւ:

Այս ուղեւորական գործողութիւններուն ընթացքին Ազերի բանակը յաջողեցաւ գրաւել սահմանային որոշ դիրքեր, ուր կը մնայ մինչեւ օրս:

Նենսի Փելոսի Այցելեց Երեւան



Շաբաթ, Սեպտեմբեր 17-ին պաշտօնական այցով Երեւան ժամանց Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան խօսնակ Նենսի Փելոսին: Փելոսին կ'ընկերակցին Գոնկրէսի Հայկական Յանձնաժողովի ղեկավար Ֆրանք Փալոնը, Ներկայացուցիչներու Տան հայ անդամներ՝ Աննա Էշուն եւ Ջեքի Սփիրը: Հիւրերը «Զուարթնոց» օդանաւակայանին մէջ դիմաւորուեցան ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնեանի կողմէ:

Հիւրերը հանդիպումներ ունեցան վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ազգային Ժողովի նախագահ Ալան Սիմոնեանի, Խորհրդարանէն ներս հանդիպում ունեցան լրատուամիջոցներու, ինչպէս նաեւ Խորհրդարանի ընդդիմադիր երկու խմբակցութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Կիրակի առաւօտեան Նենսի Փելոսի ու իրեն ընկերակցող պատուիրակութեան անդամները այցելեցին Եղեռնի Յուշահամալիր ու ծաղիկներ զետեղեցին անմար կրակին մօտ:

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան խօսնակը վարչապետի յղելով իր խօսքը ըսաւ.- «Մենք այստեղ ենք՝ յարգելով Ձեր կառավարութիւնը: Անցած տարի տեղի ունեցան ընտրութիւնները, որոնք գնահատուեցան ազատ եւ արդար, եւ Ձեր հրաշալի յաղթանակը պատերազմի եւ այլ հանգամանքներու պայմաններուն մէջ»:

«Մեր այցը կարեւոր է նաեւ այն առումով, որ այստեղ ենք՝ լսելու, հասկանալու, թէ ինչ կրնանք ընել, ինչ կրնայ ակնկալուի մեզմէ: Մեր այսօրուայ հանդիպման ժամանակ խօսեցանք տնտեսական, անվտանգային հարցերու մասին», - ըսաւ Փելոսի:

Փելոսի յտակ դատապարտեց Հայաստանի դէմ Ատրպէյճանի վերջին յարձակումը: «Մենք խստօրէն Գոնկրէսի անունով կը դատապարտենք, այդ յարձակումը որ կը խոչընդոտէ այդքան անհրաժեշտ խաղաղութեան պայմանագրի հեռանկարին», ըսաւ Ներկայացուցիչներու Տան Խօսնակը:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՐԱ ԵՒ ՍՈՆԻԱ
ՊԱՊԱՅԵԱՆ**

2022 Տարուան Հայաստանի Գլխաւոր Իրադարձութիւնները

Երեւանի Մէջ Տեղի Ունեցաւ ՍԴՀԿ 22-րդ Համագումարը



Սեպտեմբեր 24-ին, Երեւանի մէջ մեկնարկեց ՍԴՀԿ-ի 22-րդ համագումարը, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետին եւ անդամներուն, կուսակցութեան զանազան շրջաններու վարիչ մարմիններու անդամներուն եւ ներկայացուցիչներու, կուսակցական ընկերներու, Հայաստանի «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեանին, «Արդար Հայաստան» կուսակցութեան նախագահ Նորայր Նորիկեանի եւ Հայաստանի Եւրոպական կուսակցութեան ատենապետ Տիգրան Խզմալեանին:

Նախքան համագումարի բացման պաշտօնական արարողութիւնը, դահլիճի մուտքին կատարուեցաւ Հնչակեան կուսակցութեան արխիւներու ցուցահանդէս:

Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան իր խօսքին մէջ ըսաւ, որ կուսակցութեան 22-րդ համագումարը կը կաշնայ հայրենիքին համար ամենաճակատագրական ժամանակահատուածին, երբ հայրենիքի ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը այսօր հարցականի տակ է, որովհետեւ Ատրպէյճան հասկցուց, թէ այն ինչ որ չի կրնար ստանալ քաղաքական ու բանակցային ճնշումներով, պիտի փորձէ ստանալ զրթիւններով: Ան արժանի յարգանքը մատուցեց հայ զինուորին, որ իր քաջարի բազուկով կրցաւ կասեցնել ատրպէյճանցի զինուած ուժերու յարձակումները:

ՍԴՀԿ-ի պատուիրակները այցելեցին Եւաքելուր, ուր ծաղիկապակ գետեղեցին Պանթէոն՝ յարգանք մատուցելով զոհուած հերոսներու յիշատակին:

Փաշինեան ՄԱԿ-ի Մէջ Քննադատեց Ատրպէյճանը Եւ Որոշ Դաշնակիցներ

Հայաստանի հանդէպ ատրպէյճանական նոր յարձակման վտանգը չէ նուազած, Սեպտեմբերին ՄԱԿ-ի ամպիոնէն զգուշացուց վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ յորդորելով միջազգային համայնքին հասցէական ու լիարժէք անվտանգութիւն տրամադրել Հայաստանին: Իր ելույթին մէջ Հայաստանի վարչապետը խօսեցաւ հիմնականին մէջ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններու մասին, պնդելով, որ Պաքուն մտադիր է Հայաստանէն նորանոր տարածքներ գրաւել: Նիկոլ Փաշինեան կրկին յայտարարեց, որ պատրաստ է ճանչնալու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, եթէ Պաքուն ալ ճանչնայ Հայաստանին՝ միջազգայնորէն ընդունուած սահմաններուն մէջ:



Ելույթ ունենալով միջազգային ամպիոնէն՝ Փաշինեան քննադատեց ոչ միայն Ատրպէյճանը, այլեւ դաշնակիցները՝ առանց անուններ հնչեցնելու:

Հայաստանն Ու Ատրպէյճանը Գնացան Միմեանց Տարածքային Ամբողջականութիւնը

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի, Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնի եւ Եւրոխորհուրդի նախագահ Շարլ Միշէլի՝ 2022 թուականի Հոկտեմբեր 6-ին կայացած հանդիպման արդիւնքով ընդունուեցաւ համատեղ յայտարարութիւն, ուր մասնաւորապէս ըսուած էր. «Հայաստանն ու Ատրպէյճանը հաստատեցին իրենց յանձնառութիւնը ՄԱԿ-ի կանոնադրութեան եւ 1991 թուականի Այմաթալի Հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն ալ կը ճանչնան միմեանց տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը»:

Հայաստանը իր համաձայնութիւնը յայտնեց՝ խրախուսելու ԵՄ քաղաքացիական առաքելութիւնը Ատրպէյճանի հետ սահմանի երկայնքով: Ատրպէյճանը համաձայնեցաւ համագործակցիլ նշեալ առաքելութեան հետ այնքանով, որ քանով որ առնչութիւն կ'ունենայ: Առաքելութիւնը իր աշխատանքները սկսաւ Հոկտեմբերին ու տեւեց երկու ամիս:

Առաջին Անգամ Ըլլաով Տեղի Ունեցաւ Հայաստանի Վարչապետի Եւ Թուրքիոյ Նախագահի Հանդիպում



Հոկտեմբերին, Փրակի մէջ կայացաւ վարչապետ Փաշինեանի եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հանդիպումը: Նիկոլ Փաշինեան եւ Էրտողան քննարկեցին Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացն ու այդ ուղղութեամբ հետագայ նարաւոր քայլերը: Շեշտուած է երկու երկիրներու յատուկ ներկայացուցիչներու քննարկումներու շնորհիւ ձեռք ձգուած պայմանաւորուածութիւններու շուտափոյթ իրականացման անհրաժեշտութիւնը: Մասնաւորապէս, խօսքը կը վերաբերի երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար ցամաքային սահմանի բացմանը, Հայաստան-Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումներու իրականացման:

Միտքեր փոխանակուած են նաեւ տարածաշրջանային գործընթացներու շուրջ: Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան Փրակի մէջ տեղի ունեցած Եւրոպական Քաղաքական Համայնքի գագաթաժողովի աւարտին մամուլի ասուլիս տալով այս մասին ըսած է: «ՀՀ վարչապետ պարոն Փաշինեանի հետ հանդիպեցանք, անկեղծօրէն կը հաւատամ, որ մեր տարածաշրջանին մէջ բարիդրացիութեան հիման վրայ հնարաւոր է հասնիլ ամբողջական կարգաւորման մեր նպատակին»:

«Ինչպէս գիտէք, մեր յատուկ ներկայացուցիչներուն միջոցով բանակցութիւնները փոխադարձաբար կը շարունակուին: Մենք ալ այսօր անոր հետ հանդիպումը անկեղծ միջոցառումներով մէջ կայացուցինք: Հանդիպման ընթացքին խօսուած է որոշ պահանջներու մասին: Էրտողան նշած է որ, նախապայմաններ չկան, միայն կը փափաքինք, որ ձեր եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնները հասունացնէք, անյապաղ խաղաղութեան վերաբերեալ պայմանագիրը կնքէք»:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՊԵՐՃ ԵՒ ՎԵՐԱ ԼԻՆ ՍԵՂՐԱԿԵԱՆ

2022 Տարուան Հայաստանի Գլխաւոր Իրադարձութիւնները

Նախագահ Մաքրոն Ռուսաստանը Սեղադրեց Հայաստանի Ու Ատրպէյճանի Միջեւ Վերջին Բախումները Սադրելու Սեջ

Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոն Ռուսաստանը մեղադրեց Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ վերջին բախումները սադրելու մէջ՝ որպէս կոմկասի մէջ իրավիճակը ապակայունացնելու ջանքերուն մաս: «Ի՞նչ տեղի կ'ունենար սահմանին վերջին երկու տարիներուն: 5000 ռուս զինուորականներ ենթադրաբար այնտեղ են սահմանը երաշխաւորելու համար, բայց ռուսերը օգտագործած են այս հակամարտութիւնը, որ դարերու պատմութիւն ունի ու Ատրպէյճանի խաղը խաղցած են թուրքիոյ հետ Հայաստանը թուլացնելու համար», ըսաւ Մաքրոն:

Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին Մաքրոնի այդ յայտարարութիւնները նկատեց անպատշաճ եւ անընդունելի:

Վաւերացուեցաւ Անկախ Հայաստանի Պատմութեան Ամենամեծ Պիտճէն

Ազգային Ժողովը վաւերացուց Հայաստանի 2023-ի պետական պիւտճէն որ կը հասնի աւելի քան 6,4 միլիարդ տոլարի:

Կառավարութիւնը յաջորդ տարուան ընթացքին կը նախատեսէ աւելի քան 6,4 միլիարդ տոլար ծախսել: Սա շուրջ մէկ միլիարդով կը գերազանցէ այս տարուան համար նախատեսուած ծախսերը: Ընդհանուր գումարի ամենամեծ մասը՝ աւելի քան 25 տոկոսը պիտի ուղղուի ընկերային ծախսերու, կենսաթոշակներու, տարբեր նպաստներու եւ այլ օժանդակութիւններու համար: Երկրորդ տեղը Ձինուած Ուժերու ֆինանսաւորումն է: Պաշտպանութեան ոլորտին կառավարութիւնը կը նախատեսէ աւելի քան մէկ միլիարդ տոլար յատկացնել: Պաշտպանական ծախսերը այս տարուան համեմատ ամենաշատը պիտի մեծնան՝ շուրջ 430 միլիոն տոլարով: Քանի որ պաշտպանական պիւտճէի քննարկումները փակ էին, պարզ էր, թէ ճիշդ ինչի վրայ պիտի ծախսուին այդ գումարները:

Երեւանի Սեջ Կայացաւ ՀԱՊԿ Խորհուրդի Նիստը



Նոյեմբեր 23-ին կայացաւ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի հերթական նիստը, որուն ընթացքին կարելի չեղաւ ընդհանուր յայտարարի գալ երկու շատ կարեւոր փաստաթուղթերու վերաբերեալ: Սակայն, չնայած այդ հանգամանքին, Փաշինեան դրական գնահատեց ՀԱՊԿ նիստի ընթացքին տեղի ունեցած քննարկումը: Վարչապետ Փաշինեան կառավարութեան նիստին նշեց, որ տեղի ունեցած է շատ բաց, անկեղծ եւ դրական քննարկում: «Այդ երկու փաստաթղթերն ուղարկուել են լրամշակման եւ ես յոյս ունեմ, որ մենք կը կարողանանք գալ ընդհանուր յայտարարի: Բայց ընդհանուր առմամբ, չնայած այն հանգամանքին, որ մենք չստորագրեցինք ՀԱՊԿ-ի հռչակագիրը: Փաշինեան, որ կը գլխաւորէր նիստ, յոյս յայտնեց, որ այն պայմանաւորուածութիւնները, որոնք արձանագրուած են, հնարաւորինս արագ կ'իրականացուին:

Դեկտեմբեր 12-ին Փակուեցաւ Լաչինի Միջանցքը



Դեկտեմբեր 12-էն սկսեալ քաղաքացիական հագուստներով խումբ մը ատրպէյճանցիներ, կրկին բնապահպանական պատճառաբանութեամբ, փակեցին Ստեփանակերտ-Գորիս մայրուղին:

Վարչապետ Փաշինեան կարեւորեց Հայաստանի եւ Լեւոնային Ղարաբաղի միջեւ անխափան կապի ապահովումն ու այդ ուղղութեամբ ռուսական խաղաղապահ առաքելութեան կողմէ հետեւողական քայլերու իրականացումը: Լաչինի Միջանցքը Յեղասպանութեան Կանխարգիւման Միջանցք է, ըսաւ ան: Ատրպէյճանի կողմէ հետեւողական գործողութիւնները աւելի ու աւելի առարկայական կը դարձնեն այն մտավախութիւնները, որ Ատրպէյճանը Լեւոնային Ղարաբաղի մէջ ցեղասպանութիւն կը կը նախապատրաստէ: «Ընդդէմ Յեղասպանութեան Յանցագործութեան» 4-րդ համաշխարհային համագումարին ժամանակ ունեցած իր ելոյթի ընթացքին այս մասին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի Անդամները Պահանջեցին Ապաշրջափակել Լաչինի Միջանցքը



Դեկտեմբեր 20-ի երեկոյեան, ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը Հայաստանի պահանջով նիստ գումարեց՝ քննելու համար Լաչինի միջանցքի փակման հարցը: ՄԱԿ-ի Նիւ Եորքի կեդրոնատեղիին մէջ կայացած նիստին Հայաստանի մշտական ներկայացուցիչ Մհեր Մարգարեան կոչ ըրաւ ՄԱԿ-ի կառույցներուն փաստահաւաք առաքելութիւն ուղարկել Լեւոնային Ղարաբաղ՝ տեղույն վրայ ստեղծուած իրավիճակին ծանօթանալու:

» » »

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

HRAG JEWELERY

2022 Տարուան Հայաստանի Գլխավոր Իրադարձութիւնները

Համար: ՄԱԿ մօտ Ատրպէյճանի դեսպան Եաշար Ալիեւ պնդեց, որ Լեռնային Ղարաբաղ անուանումով տարածաշրջան գոյութիւն չունի, իսկ Լաչինի ճանապարհը որեւէ մէկը չէ արգելափակած:

«Ելուցիկ ունեցող երկիրներու գրեթէ բոլոր ներկայացուցիչները ո՛չ միայն օգտագործեցին Լեռնային Ղարաբաղ անուանումը, այլեւ պահանջեցին անյապաղ ապահովել Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժելու իրաւունքը:

Ֆրանսացի Քաղաքական Առաջնորդները Մաքրոնին Կոչ Ըրին Երաշխաւորելու Հայերուն Անվտանգութիւնը Արցախի Եւ Հայաստանի Մէջ



Էմանուէլ Մաքրոնը պէտք է ամէն ինչ ընէ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ հայերուն անվտանգութիւնը երաշխաւորելու համար»։ Ֆրանսացի աւելի քան մէկ տասնեակ քաղաքական առաջնորդներ՝ ինչպէս ձախակողմեան, այնպէս ալ աջակողմեան ճամբարէն, համատեղ նամակ հրապարակեցին «Le Monde» ազդեցիկ օրաթերթին մէջ՝ նախագահ Մաքրոնին կոչ ընելով անյապաղ միջամտելու Հայաստանի եւ Արցախի շուրջ գործընթացներուն՝ կանխելու անուղղելիւն:

Ֆրանսացի խորհրդարանի երկու պալատներու ներկայացուցիչները համատեղ նամակի մէջ կը նկարագրեցին Ատրպէյճանի կողմէ շրջափակման մէջ յայտնուած Արցախի մէջ տիրող իրավիճակը՝ մարդասիրական մեծ աղէտի վտանգ, 120 հազար մարդ, այդ շարքին՝ 30 հազար երեխայ, գրկուած է կենսական պաշարներէն՝ ներառեալ սնունդ եւ բժշկական անհրաժեշտ միջոցներ: Նամակին հեղինակները շեշտեցին, որ ստեղծուած իրավիճակը 2020 թուականէն ի վեր հայերու, ընդ որում՝ ինչպէս Արցախի մէջ ապրող, այնպէս ալ Հայաստանի քաղաքացիներու դէմ Ատրպէյճանի յարձակումներու սրման նոր փուլի սկիզբն է, եւ Պաքուի գործողութիւնները իրենց հիմք կու տան ենթադրելու, որ Ատրպէյճանը կանգ պիտի չառնէ, որեւէ առիթ պիտի օգտագործէ՝ հալածելու հայերը ցեղային գոման նպատակով: Թուարկելով հայերու դէմ Պաքուի գործողութիւնները՝ պատերազմական յանցագործութիւնները, Հայաստանի ինքնիշխան տարածքի բռնագրաւումը, ցեղային ատելութեան քարոզը, մշակութային ժառանգութեան ոչնչացումը, խաղաղ բնակչութեան դէմ կրկնուող յանցագործութիւնները, Ֆրանսացի օրէնսդիրները կը նկատեն, որ որեւէ այլ հանգամանքներու մէջ Ֆրանսան կը միջամտէր: Քաղաքական սկզբունքային տարաձայնութիւններ ունեցող օրէնսդիրները կը շեշտեն, որ նոյնիսկ իրենք մէկ կողմ դրած են իրենց քաղաքական մրցակցութիւնը, երբ գործը Հայաստանին եւ Արցախին աջակցութիւն յայտնելուն հասած էր, բայց եւ կը խոստովանին, որ Ֆրանսան իր այդ ճիշդ հնչեցուց աւելի քան մէկ դար ուշացումով:

Ֆրանսական առաջատար քաղաքական ուժերու առաջնորդները էլիզէի պալատի ղեկավարին յուշեցին շարք մը քայլեր՝ դատապարտել Ատրպէյճանը միջազգային իրաւունքի դրոյթներու խախտման, Հայաստանի տարածքի բռնագրաւման, պատերազմական ոճրագործութիւններու համար, Արցախի մէջ նախատեսել մարդասիրական ներկայութիւն, Հայաստանին

ցուցաբերել անյապաղ տնտեսական օգնութիւն, հանդիպել Արցախի ներկայացուցիչներուն, նաեւ Եւրոմիութեան եւ Միացեալ Նահանգներու գործընկերները համոզել ձեռնարկելու նոյն քայլերը եւ միասին Ատրպէյճանի դէմ պատժամիջոցներ սահմանել:

Ֆրանսացի օրէնսդիրները նաեւ կը յորդորեցին երկրի նախագահին աշխատիլ Ստեփանակերտի օդակայանի գործարկման եւ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդին կողմէ միջազգային խաղաղապահ զօրախումբ ուղարկելու ուղղութեամբ:

Ֆրանսացի Օրէնսդիր Մարմնի ներկայացուցիչները համոզուած են, որ էմանուէլ Մաքրոնը կրնայ կանխել պատմութեան կրկնութիւնը եւ ապացուցել, որ Ֆրանսան ազատ է եւ կրնայ ձեռքազատուիլ քաղաքական կամ տնտեսական կարճատես ռազմավարութիւններէն:

Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Աճը Հասաւ 14.4 Տոկոսի




Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2022 թուականի Յունուար-Նոյեմբերին 14.4 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի նկատմամբ: Այս մասին կը վկայէ ՀՀ Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալները: Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը այս տարուան Յունուար-Նոյեմբերին նախորդ տարուան Յունուար-Նոյեմբերի համեմատ աւելցած է 8.4 տոկոսով: Շինարարութեան ծաւալը այս տարի 11 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակի համեմատ աւելցած է 13.9 տոկոսով: Առեւտուրի շրջանառութեան մէջ Յունուար-Նոյեմբերին 2021-ի նոյն ժամանակահատուածի նկատմամբ յաւելումը կազմած է 16.2 տոկոս: 2022 թուականի 11 ամսուան մէջ մատուցուած ծառայութիւններուն ծաւալը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին հետ բաղդատած:

Այս տարուան Յունուար-Նոյեմբերին սպառողական գիներու ցուցակը 2021-ի նոյն ժամանակահատուածին համեմատ աճած է 8.7 տոկոսով:

Դրամի փոխարժէքը ԱՄՆ տոլարին նկատմամբ Յունուար-Նոյեմբեր ամիսներուն կազմած է 439.40 դրամ:

www.massispost.com
daily news updates

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net




ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՌՈԶԻՆ
ՏԵՐ ԴԱՒԻԹԵԱՆ

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ
ՄԵՐ ԲՈԼՈՐ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝
ՄԱՂԹԵԼՈՎ ՀԱՄԵՐԱՇԽ
ՈՒ ՆԵՐԳԱՇՆԱԿ
ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

**ԹՈՎՄԱՍՏԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ
Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՐԵՆՑ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ
ՎԱՀԱՆ ԵՒ ԱՆԱՀԻՏ
ԹՈՎՄԱՍՏԵԱՆՆԵՐՈՒՆ**



2022-ի Յատկանշական Իրադրութիւնները

Լարուածութիւնը Կը Սեծնայ ԱՄՆ-ի Եւ Զինաստանի Միջեւ

Ընթացքի մէջ է մեծ լարուածութիւն մը ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ, նպատակ ունենալով համաշխարհային մակարդակով եւ շատ մը բնագաւառներու մէջ գերակայութիւն պարտադրել որպէս մեծ տէրութիւն: Ժօ Պայտընի վարչամեքենան մտահոգուած է Հարաւային Չինական Ծովի սպառազինումով եւ ինաստանի կողմէ Ուքրանիոյ հարցին գորակցութիւն ցոյց տրուելով: Նոյնմբերի կէսերուն G-20-ի գագաթաժողովին, Պայտըն եւ ձի ձինփինկի հասկացողութիւն ցոյց տուին լարուածութիւնը եւ ձգտեալ վիճակը մեղմացնելու համար:

Գնաճը (Inflation) Կը Վերադառնայ

1970-ական թուականներու տնտեսական իրավիճակը կարծես վերադառնալով վրայ է: Գնաճը կամ սղաճը (inflation) սկսած է գլուխ բարձրացնել եւ ազդել մարդոց դրամապանակին վրայ: Այդ թուականէն ստերին սղաճը, տասնամեակներ շարունակ շատ թեթեւօրէն ազդած էր մարդոց վրայ: Ներկայիս այդ երեւոյթը շրջանցած եւ վտանգը, տեսանելի է գիններու աճաւոր մագլցումով, որ արդիւնքն է պահեստի եւ պահանջի համադրումին: Այս բոլորէն ետք՝ մեծապէս ազդած է նաեւ քովիտ-19-ի համավարակն ու Ռուսիոյ ներխուժումը Ուքրանիոյ վրայ: Կարգ մը կեդրոնական դրամատուներ կը ջանան մեղմել այս իրավիճակը:

Կլիմայական Փոփոխութիւնը Կ'ուժեղանայ

Քառասուն տարիներ առաջ՝ գիտնականներն արդէն ազդարարած էին կլիմայի փոփոխութեան աղետին մասին: 2022-ին արդէն այդ ապագան հասած էր: Եւրոպան մրցանշային արտակարգ տաք օդի ենթակուցեալ, որով անտառներ հրկիզուեցան եւ գետեր ցամքեցան: Փաքիստան նոյնաման ջերմութիւն ունեցաւ, ապա ջրհեղեղներ, որոնց հետեւանքով երկրին մէկ երրորդը ջուրերու տակ մնաց: Այս եւ ուրիշ ապացոյցներու լոյսին տակ եզրակացնելու Ծարմ էլ ԵՖՅԻ քաղաքին մէջ գումարուած կենսոլորտի միջազգային համաժողովի ընթացքին որոշուեցաւ աղքատ երկիրներուն նիւթապէս օգնել բնութեան աւերներէն տուժած շրջաններու բարելաւման համար:

Քովիտ Կը Սեղմանայ

Ի վերջոյ քովիտի համավարակը վերջացաւ: Երեք տարուան պատմութիւնն աւարտեցաւ: Ան կը նկատուէր դարուս մեծագոյնը: Սեպտեմբերին Առողջապահութեան Միջազգային Կազմակերպութեան նախագահը պաշտօնապէս յայտարարեց Քովիտի վերջը: Ուստի այն երկիրները որոնք քովիտի պատճառով ճամբորդութեան արգելքներ դրած էին, անոնք վերացուեցան: Այս բոլորին մէջ դրական արդիւնք ունեցան պատուաստները: Այսու հանդերձ, Չինաստան վերսկսաւ հակակշիռի տակ առնել քովիտի պարագան, քանի որ վերսկսած էր տարածուիլ: Պայքարը ուժեղ ըլլալուն, շուտով առաջին առնուեցաւ եւ արգելքները մեղմացան: Դժբախտաբար, այս համավարակը տակաւին իրականութիւն է բովանդակ աշխարհի մէջ: Տարեվերջի հաշուարկումներով՝ ամէն շաբաթ 2000 ամերիկացի կը մահանայ քովիտէն:

Իրանցիներու Բողոքը

Իրանի վարչակարգը 1979-էն ի վեր զարտուղի որոշումներ կ'առնէ

երկրի բնակչութեան հանդէպ: Բողոքի շարժումն սկսաւ երբ «Բարոյականութեան Ոստիկանութիւն»ը ձերբակալեց 22 տարեկան իրանաքիւրտ Մահսա Ամինը, երբ կ'այցելէր իրանի մայրաքաղաքը, առանց պատշաճ լազակով գլուխը ծածկելու: Ան մահացաւ բանտին մէջ: Անյուհեաւ տեղի ունեցան բազմաթիւ բողոքի ցոյցեր, դատապարտելով իզական սեռին հանդէպ որդեգրուած հակաօրինական միջոցառումներն ու կաշկանդումները: Յուցարարները ամէնուրեք կը վանկարկէին. «Կանայք, Կեանք եւ Ազատութիւն»: Իրանի կառավարական շրջանակները դատապարտեցին ԱՄՆ-ը եւ Իսրայէլը: Իսկ միւս կողմէ իշխող վարչակարգը ոչ մէկ բեկորային միջոցառումի չէ դիմած:

Լատինական Ամերիկան Դեպի Զախակողմեան

Տարիներու ընթացքին մեծ տարբերութիւններ կրնան պատահիլ: 2017-ին Կեդրոնական Ամերիկայի ղեկավարներու աջակողմեան շրջանակները տիրապետողներն էին: Սակայն 2018-ին երբ Անտրէաս Մանուէլ Լօփէզ Օպրատորը Մեքսիքոյի նախագահ ընտրուեցաւ եւ միւս կողմէ 2019-ին ձախակողմեան թեկնածու Ալպերթօ Ֆերնանտեզը Արժանթինի նախագահ ընտրուեցաւ, սոցիալիստ փետրօ Թասթիլլօն փերուի նախագահ եղաւ իսկ սոցիալիստ Լուիս Արսէնը Պոլիվիոյ նախագահութիւնն ստանձնեց, Կիւսթաօ Պետրոնն ալ ընտրուեցաւ որպէս Գոլուամպիոյ առաջին սոցիալիստ նախագահը: Բոլորն ալ ունեցան իրենց բարեկարգչական խոստումները: Սակայն դժուարութեանց առջեւ գտնուեցան քովիտի համավարակին եւ համաշխարհային տնտեսական բարդ իրավիճակին պատճառով:

Մահ Ֆութպլի «Արքայ» Փէլէյի


Ֆութպոլի «արքայ» եւ առասպելական մարզիկ Փէլէյն փակեց իր աչքերը, գոհ երթալով քաղցկեղի: Փէլէյ 82 տարեկան էր: Մասնակցած է 1363 խաղի, դառնալով մրցանշային 1281 կոլի հեղինակ: Պրագիլի ազգային խումբին մէջ մասնակցած է 92 խաղի: Երեք անգամ հռչակուած է աշխարհի ախոյեան: 2000 թուականին Փէլէյն ՖիՖԱ-ի կողմէ հռչակուած է դարուս լաւագոյն ֆուտպոլիստը:

Եզնաժամային Վիճակներ Փաքիստանի Մէջ

Բազմաթիւ տագնապալի եւ ճգնաժամային վիճակներու մէջ գտնուեցաւ Փաքիստան: Ապրիլին վարչապետ Իմրան խան իր վստահութիւնը կորսնցուց եւ դարձաւ ընդդիմադիր: Օգոստոսին ծայր տուաւ տնտեսական մեծ տագնապ մը: Միայն Չինաստանին պարտական է 30 միլիարտ տոլար: Այս բոլորին դիմաց երկիրն ունեցաւ նաեւ բնական աղետներ, մեծածաւալ ողողումներ եւ սահանքներ, որոնց հետեւանքով աւելի քան մէկ միլիոն բնակարաններ կործանեցան:

Ռուսիոյ Ներխուժումը Ուքրանիա

Անգլիոյ եւ ԱՄՆ-ի տեղեկատու սպասարկութիւններու գուշակութիւնները ճիշդ ելան եւ 24 փետրուար 2022-ին Ռուսաստան ներխուժեց Ուքրանիա, իբրեւ «գինուորական գործողութիւն, ապազինելու եւ ֆաշիստականութենէն զրկելու երկիրը» ազատագրելու Տոնպասի շրջանը: Այս բոլորին իբրեւ հետեւանք պատժամիջոցներ սահմանուեցան շատ մը երկիրներու կողմէ: 2022-ի տարեվերջին գինադադրի մը հաւանականութիւնը մօտալուտ չերեւիր եւ կողմերը անդրդուելի կը մնան իրենց կեցուածքներուն մէջ:




**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՒՕ ԵՒ ԱՍՏՂԻԿ
ՃԷՐԷՃԵԱՆ**

Նորայայտ Նամակ Փարամազին(1)՝ Սապահ-Գիւլեանէն ԵՂԻԿ ԵՒՐԵՆԵԱՆ

1908 Յուլիսին, Օսմանեան Կայսրութեան մէջ տեղի կ'ունենայ պետական յեղաշրջում. 30 տարուան միահեծան իշխանութեանէն ետք կը տապալի սուլթան Ապտուլ Համիտի բռնատիրութիւնը: Իշխանութեան կու գայ երիտթրքական շարժումէն ծնունդ առած եւ վտարանդիութեան պայմաններուն մէջ ձեւաւորուած Միութիւն եւ Յառաջդիմութիւն (ՄԵՅ) կուսակցութիւնը (İttihat ve Terakki Cemiyeti): Կը վերահաստատուի սուլթան Համիտին կողմէ 1876-ին հռչակուած եւ 1878-ին առկախուած Սահմանադրութիւնը (Միթհատեան): Սահմանադրական այս յեղաշրջումը միահամուռ խանդավառութեամբ կ'ընդունուի յատկապէս հայութեան կողմէ:



Փարամազ (Սապտէոս Սարգիսեան) եւ Ստեփան Սապահ-Գիւլեան

ազգերի պատմա-անհատական գոյութեան անձեռնմխելիութիւնը եւ նրանց անկաշկանդ, ազատ զարգացման ու ինքնորոշման իրաւունքը» (5): «Հնչակ» իր հերթին կը գրէ. «Ժողովը՝ վերլուծելով այս բոլորը, կանգնած դասակարգային կռուի ուղղութեան վրայ, համաձայն Սօցիալ-Դեմոկրատական սկզբունքների, վերստին շեշտեց անյետաձգելի պէտքը ազգերի համերաշխութեան շուտափոյթ իրականացման, ճանաչելով որպէս պայման ԱԶԳԵՐԻ ՊԱՏՄԱ-ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԱՆՀՐԱՔԵՇՏՈՒԹԻՒՆԸ, Ժխտելով մի կողմից՝ ՍԵՊԱՐԱՏԻՍԱԿԱՆ-ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ գաղափարները եւ միւս կողմից՝ ՈՒՅԻՒՆ ԱԶԳԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՈՒ ԳԵՐԱԿՇՈՒԹԻՒՆԸ ՄԻՒՍԻՎՐԱՅ» (6):

Խանդավառ այդ մթնոլորտին մէջ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (ՄԴՀԿ) կեդրոնական վարչութեան ատենապետ եւ միաժամանակ անոր պաշտօնաթերթ «Հնչակ»-ի խմբագիր Ստեփան Սապահ-Գիւլեան (2) կը գրէ. ««Երիտասարդ Թուրքիայ»-ի անունից խօսող «ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ» կուսակցութեան տիրապետութեամբ՝ քաղաքական գործօն ասպարէզի եւ ղեկավարի դերի մէջ է մտնում Թուրք նացիոնալիզմը, -[որ] տիրապետող ժողովուրդներին ազատութեան այնքան պայմաններ կտայ, որ քան որ իր ընդգրկած նացիոնալիստական սկզբունքների շրջանակը կը ներէ-այսինքն բաղկացուցիչ ժողովուրդների ազգային զարգացումը պիտի մտնի այն շրջանակի մէջ ինչ որ Թուրք նացիոնալիզմը կը գծի» (3):

Այս առիթով, ՄԴՀԿ կեդր. վարչութեան թիւ 14 շրջաբերականը, որուն լեզուամտածողութենէն դատելով կասկած չունինք, որ կը պատկանի Սապահ-Գիւլեանի գրչին, կը գտնէ, թէ սահմանադրութեան վերահաստատումով, «մեր այն մի կարգ նկատումները, որոնց հիման վրայ մենք կը ձգտենք անկախութեան, անջատականութեան՝ տիրող բռնապետութենէն, այժմ այլեւս գոյութեան իրաւունք չունին: Բացարձակ միապետութիւնը տապալուած լինելով՝ մենք կը գտնուինք սեղմ սահմանադրութեամբ օժտուած Թուրքիոյ հանդէպ. հետեւաբար այսուհետեւ, մենք պիտի աշխատինք ամբողջ Թուրքիոյ համար իրականացնել ռամկավարական սահմանադրութիւն, իսկ բաղկացուցիչ ազգութիւններու համար ալ ինքնավարութիւն»: Այս նոր առաջադրանքին դիմաց, շրջաբերականը կը թելադրէ. «Մեր նպատակին հասնելու համար, մենք պիտի ձգտինք համերաշխիւ այն բոլոր ընդդիմադիր տարրերուն հետ-հայ, Թուրք, արաբ, քուրտ, բուլգար, եւ այլն- որոնք իրենց ծրագրով մօտիկ են մեզի: «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Թուրք կոմիտէն այժմ կառավարական կուսակցութիւնը կը կազմէ Թուրքիոյ մէջ եւ մեզ հակառակորդ է բացարձակապէս: Իշխան Սապահ-Գիւլեանի կուսակցութիւնը, սակայն, իր ծրագրով ու պահանջներովը, յայտնի աստիճան, մօտ է մեր հայեացքներուն: Աւելի քան երբէք, այժմ կարիքը կը զգացուի անյետաձգելիօրէն համերաշխելու բոլոր ընդդիմադիր տարրերուն հետ»(4):

Յաջորդող տարիներուն, ՄԴՀԿ կը խորացնէ իթթիհատի հանդէպ իր ընդդիմադիր կեցուածքը:

1909 Յուլիս 12-ին, Կ. Պոլսոյ մէջ բացուած ՄԴՀԿ Զ. Համագումարին հիմնական օրակարգը կ'ըլլայ ճշտել կուսակցութեան կեցուածքն ու գործելաձեւը Սահմանադրական Թուրքիոյ հանդէպ: Մեծամասնութիւն կը կազմէ օրինական կուսակցութիւն դառնալով իթթիհատական իշխանութեան դէմ պայքարը օրինական ձեւերով (քաղաքական, քարոզչական, ընտրական) շարունակելու տեսակէտը, «ցորչափ այդ օրինական իրաւունքները չեն խլուած աշխատաւոր ժողովուրդի ձեռքէն»: Այնուհետեւ համագումարը կ'եզրակացնէ. «Նկատելով որ Թուրք նացիոնալիստները եւ այդ նացիոնալիզմի քաղաքական գործիչները (Իթթիհատականները-Ե. Ճ.) գիտակցաբար ձգտում են ապագայնացնելու Թուրքիայի մէջ գտնուող ազգութիւնները եւ նրանց ձուլելու Թուրք ազգութեան մէջ ՕՍՄԱՆՅԻ, ՕՍՄԱՆԵԱՆ ԱԶԳՈՒԹԻՒՆ ընդհանուր անուան տակ, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Զ.րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը ժխտելով ժխտում է ազգայնացման այդ գաղափարը եւ վճռում է ոգի ի բռնի պայքարել այդ ուղղութեան դէմ՝ ընդունելով

Յաջորդող տարիներուն, ՄԴՀԿ-ի գործունէութեան կարեւոր բաժիններէն կ'ըլլայ իթթիհատական իշխանութեան հանդէպ ընդդիմադիր դաշնակիցներ գտնելու հարցը: Այս ուղղութեամբ տարուած փորձերը կու տան որոշակի արդիւնք: Գործակցութեան եզրեր կը նախաձեռնուին Սապահ-Գիւլեանի (7) գլխաւորած հոսանքին հետ (8), որ այդ շրջանին գրեթէ միաձույլ կը գործէր Օսմանեան Ազատական կուսակցութեան (Osmanli Ahrar Firkasi) հետ. ֆարիզէն սկսած բարեկամական կապերը կը շարունակուին Պէտիբ պէյ Պէտիբիսանի քրտական հոսանքին (9) եւ արաբ քրիստոնեայ Նեժիպ Ազուրիի Անկախ Արաբիա կազմակերպութեան հետ (10). գործակցութիւն կը ստեղծուի նորաստեղծ Օսմանեան Սոցիալիստական կուսակցութեան (11) (Osmanli Sosyalist Firkasi), ինչպէս նաեւ Մանիասիզատէ Ռէֆիկ պէյի (12) գլխաւորած բազմազգի (Թուրք, ալպան, չէրքէզ, արաբ) Օսմանեան Դեմոկրատ կուսակցութեան (Osmanli Demokrat Firkasi) հետ (13): 1889-ին Կ.Պոլսոյ բժշկական համալսարանի ուսանողներով ՄԵՅ-ը հիմնադրած ալպանացի Իպրահիմ Թեմոյի հետ «ծածուկ» ժողովներ տեղի կ'ունենան վերջինիս բնակարանին մէջ (14): Սալոնիկի Աշխատաւորական Ֆետերացիայի («Գլուպիստներ», ՍԱՖ) հետ յարաբերութիւնները կ'արդիւնաւորուին, երբ անոր ղեկավարներէն, երեսփոխան Տիմիդար Վլախովի (15) ներկայութեան, 1912 Սեպտեմբերին, ՄԴՀԿ Տաճկաստանի Բ. Պատգ. ժողովը կը վաւերացնէ ՄԴՀԿ-ՍԱՖ գործակցութեան համաձայնագիրը (16): ՄԴՀԿ նաեւ մաս կը կազմէ Օսմանեան եւ Պալքանեան Սոցիալիստ կուսակցութիւններու Համախմբումին, որ կը գլխաւորէ ռուսականացի Ռաքովսկի (17) (Պալքանեան պատերազմներէն ետք, երբ Թերակղզին կ'անջատուի Օսմ. Կայսրութենէն, հոն գործող սոցիալիստ կուսակցութիւններուն հետ գործակցութեան հարցն ալ կ'անցնի պատմութեան). «Մասնաւորապէս հնչակեաններուն համար, [ընդդիմադիր] այս շարժումները յուսոյ կայծեր էին, որ Օսմանեան Կայսրութիւնը, իր ոչ-Թուրք փոքրամասնութիւններուն հանդէպ աւելի ընդունելի ներքին քաղաքականութիւն մը որդեգրէ: ՄԴՀԿ-ը, որ իթթիհատին հանդէպ ընդդիմադիր էր տակաւին արտասահմանէն, յստակօրէն կը պայքարէր իթթիհատ վէթերաքը-ին դէմ, որպէսզի անոր ազատ չձգէ իր Թրքական ծրագիրը գործադրելու: Անոր մերձեցումը Ահրարին եւ այդ իթթիհատին, Երիտթրքական ազգայնամոլութեան դէմ պայքարէն անդին, այլ նպատակ չէր հետապնդեր» (18): Այս կուսակցութիւններն ու համախմբումները քաղաքական փոքր ուժեր էին եւ իթթիհատին համար լուրջ մրցակիցներ չէին. սակայն, Սապահ-Գիւլեանի տրամաբանութեամբ, «չիւղն անգամ մեզ համար ուժ էր, երբ նա Խոտիհատի դէմ ցցուէր» (19):

Իթթիհատին լուրջ մրցակից ուժը հրապարակ կու գայ 1911 Նոյեմբերին, երբ ծնունդ կ'առնէ Ազատութիւն եւ Համաձայնութիւն կուսակցութիւնը (Hürriyet ve İtilaf Firkasi): Իթթիհատի ոչ միայն մրցակից էր իթթիհատին, այլեւ իր նախընտրական ծրագիրով աւելի ազատական: Ան կը պաշտպանէր բաղկացուցիչ ազգութիւններուն շատ մը պահանջները եւ վարչական ապակեդրոնացումը (20): Բնականաբար, ՄԴՀԿ-ի եւ իթթիհատի միջեւ կը ծնի համագործակցութիւն, որ 1912 Փետրուար 7-



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԿԱՐԻՆԵ
ԳՕՃԱՊԱՊԵԱՆ**

Նորայայտ Նամակ Փարամագին(1)՝ Սապահ-Գիւլեանէն

ին, երեսփոխանական ընտրութեան նախօրէին, կը վերածուի ընտրական դաշինքի (21). «Տեսնելով, որ արեւմտահայութեան հանդէպ վտանգը կը սպառնար Իթթիհատին կողմէ, Հնչակեան Կուսակցութիւնը ձեռնամուխ կ'ըլլայ հետեւողականօրէն զարգացնելու Իթթիլաֆի հետ պլօքի ստեղծման գաղափարը» (22): Հայ կեանքին մէջ գործող միւս կուսակցութիւններէն, Ազգային Երեսփոխանական Ժողովի Կեդրոն, Ազատական եւ ՀՅԴ խմբակցութիւններէն եւ հայ առաքելական ու աւետարանական համայնքներէն կազմուած միացեալ ժողովը կը նախընտրէ երեսփոխանական ընտրութեան մասնակցիլ Իթթիհատի ընտրացանկերով:

1912-ի երեսփոխանական ընտրութիւնը տեղի կ'ունենայ ծայրայեղ բռնութեան եւ զեղծարարութեան պայմաններու տակ. այդ պատճառով թեան մէջ կը յիշատակուի որպէս «մահալի ընտրութիւն» (23): Իթթիհատ ձեռք կը ձգէ խորհրդարանի աւելի քան 95%-ը, ինչ որ բացարձակապէս չէր համապատասխաներ իրականութեան: Անոր հանդէպ դժգոհութեան ալիքը նոր թափ կը ստանայ: Յուլիսին, գնդապետ Սատրք պէյի (24) գլխավորութեամբ ըմբոստ սպաներու խումբ մը՝ Հալասկարանի Չապիթան Կուրուփու (Փրկարար Սպաներու Խումբ), «որ փաստօրէն Իթթիլաֆի գինուորական թեւն էր» (25), կը պահանջէ երեսփոխանական ժողովին հրաժարականը, այլապէս կը սպառնայ խիստ քայքայելու: Յուլիսի 17-ին, վարչապետ Սայիտ փաշայի (26) Իթթիհատական կառավարութիւնը, խորհրդարանի գրեթէ ամբողջական վստահութեան քուէն ստանալէն երկու օր անց, կը հրաժարի (27): Սուլթանին կողմէ նոր վարչապետ կը նշանակուի Ահմէտ Մուխթար փաշա (28), որ նոր դահլիճը կը կազմէ ընդդիմադիր նախարարներէ: Յուլիս 30-ին հակա-Իթթիհատական կառավարութիւնը կը ստանայ Իթթիհատական երեսփոխանական ժողովի վստահութեան քուէն (29): Օգոստոս 4-ին, նոր վարչապետը խորհրդարանին կը կարգայ երեսփոխանական ժողովի լուծարման սուլթանական հրամանագիրը: Իշխանութիւնը սահմանադրական ձեւերով կ'անցնի Իթթիլաֆին եւ ընդդիմադիրներուն ձեռքը:

1913 Յունուար 13-ին, լաւապէս կազմակերպուած պետական հարուածով մը, Իթթիհատ կը վերագրուէ իշխանութիւնը: Էնվէր փաշայի գլխավորութեամբ խումբ մը սպաներ մուտք կը գործեն Բ. Դուռ, կը սպաննեն պատերազմական նախարար Նազիր միշան (30) եւ զէնքի սպառնալիքի տակ կը ստիպեն վարչապետին հրաժարական ստորագրել, որ շուտով կը վաւերացուի Սուլթանին կողմէ: Վարչապետ կը նշանակուի Մահմուտ Շեւքէթ փաշա (31): Իշխանութիւնը կ'անցնի Իթթիհատի եռապետութեան ձեռքը՝ Էնվէր, Թալաթ, ձեմալ. «Կարմիր եռապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել կարմիր սուլթան Համիտին նմանողութեամբ» (32):

Վերջին իրադարձութեան ժամանակ Սապահ-Գիւլեան կը գտնուէր Փարիզ: Անոր մօտ արդէն ձեւաւորուած էին հաստատ համոզումներ, որոնք կ'արտայայտէ մամուլով. «Մի անգամ ընդմիշտ, որպէս անվիճելի ճշմարտութիւն, աչքի առաջ պիտի ունենայ հետեւեալը. - երբ ամենափոքր յարմար ըրոպէս (33) ներկայանայ եւ համոզուած լինի, որ իր արարմունքը դիւրութեամբ կարող է մարսել, թուրք Ազգայնականութիւնը, որի ձեռքն է այսօր երկրի կառավարական գործը, առանց տատանուելու, որպէս պատմական անհրաժեշտութիւն, անխնայ կերպով պիտի կոտորի Հայերին (sic!!!): Եւ այս անգամ աւելի անողոք (sic!), քան 1895-1896-ին, աւելի սաստկութեամբ՝ քան Ադանայի Եղեռնը» (34): Իսկ ե՞րբ կրնար ըլլալ այդ «յարմար պահ»։ Սապահ-Գիւլեան, համաշխարհային պատերազմ մը, իր բառերով՝ «ընդհանուր պատերազմ» կամ «համաեւրոպական պատերազմ», մտալուտ կը գտնէ, «որի մէջ յաղթողը յաղթուածից չի տարբերուիլ, որովհետեւ, վերջին հաշուով, տուժողը կը լինի ամբողջ Եւրոպան, քաղաքակրթութիւնը, մարդկութիւնը» (35): Ան նաեւ կ'սակած չ'ունենար, որ նման պարագայի մը, Իթթիհատ հանդէպ պիտի գայ իր գերմանամէտ դիրքորոշումով, իսկ Իթթիլաֆ՝ անգլիամէտ (36): Ի դէպ, ասոնց միջեւ իշխանութեան համար մղուող արիւնոտ պայքարին արտաքին ազդակը ա՛յս հակադրութիւնն էր:

Այս բոլորէն ետք Սապահ-Գիւլեան կ'եզրակացնէ. «Երեք անգամ ճանապարհորդեցի Փոքր Հայք (37): Վերջին ճանապարհորդութիւնս ինձ այն վերջնական եզրակացութեանը հասցրեց, որ կա՛մ մենք պիտի սպաննենք Իթթիհատին, կա՛մ Իթթիհատն է որ մեզի պիտի սպաննի: Բոլոր տեսածներս, կրած տպաւորութիւններս, կատարուած եղելութիւնները, արտայայտուած ձգտումներն ու միտումները կասկած չթողեցին իմ մէջ, որ Իթթիհատը, ինչ գնով էլ որ լինի, վաղ թէ ուշ, իր արմատական հայաջինջ քաղաքականութիւնը (sic!) ձեռք պիտի առնի: Ուստի, ո՛չ

միայն պէտք էր պատրաստուիլ, այլ՝ Իթթիհատին սպաննելը՝ (sic!!!) քաղաքական առաջին եւ անմիջական ձգտումը պիտի լինէր՝ ժամանակի ոգին ու պահանջը հասկացող հայ յեղափոխական գործիչի համար» (38):

Իր համոզումները գործադրութեան դնելու համար, Սապահ-Գիւլեանին կը կաշկանդեն երկու պարագաներ: Առաջին՝ արեւմտահայ ազգային-քաղաքական մտածողութիւնը տակաւին շատ հեռու էր «Իթթիհատին սպաննելու» նախաձեռնակ ըլլալու գաղափարէն (39). ան բաւարարուած էր Հայաբնակ նահանգներու բարեկարգման ծրագիրով: Երկրորդ՝ ՍԴՀԿ Զ. Համագումարի որոշումներն էին, որոնց համաձայն, ՍԴՀԿ-ը որդեգրած էր օրինական գործունէութիւն եւ ազգային ինքնութիւնները ձուլել միտող «թրքական նացիոնալիզմի ներկայացուցիչներուն» դէմ պայքարը կը շարունակէր օրինական ձեւերով, «ցորչափ այդ օրինական իրաւունքները չեն խլուած աշխատաւոր ժողովուրդի ձեռքէն» (40): Սապահ-Գիւլեանին համար պարզ էր, որ Իթթիհատի «կարմիր եռապետութեան» իշխանութեան գալով, «այդ օրինական իրաւունքները» արդէն խլուած էին ժողովուրդէն: Աւելին. օսմանիզմի դէմ գաղափարական պայքարը, որուն մէջ ամենէն շատ «կոկորդ պատուողը» եւ «մեւլան հոսեցնողը» ի՞նք եղած էր, դարձած էր ժամանակավրէպ: Հարցը հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան խնդիրն էր: Անոր համար, սպառնացող վտանգին դէմ պայքարելու միակ միջոցը կը մնայ վերադառնալ գործունէութեան յեղափոխական-անօրինական ձեւերուն: Վճռական, նոյնիսկ ճակատագրական որոշում մը՝ որուն իրաւունքը միայն Կուսակցութեան Համագումարը ունէր:

Հերթական է. համագումարին կազմակերպական, քաղաքական եւ քարոզչական հարցերով, 1913 Մայիսին, Սապահ-Գիւլեան կը մեկնի Ռուսիա ապա Պուլկարիա: Պալքանեան Բ. պատերազմին պատճառով համագումարը կը յետաձգուի. իսկ իր քաղաք-քաղաք տեղափոխութիւնը մեծապէս կը դժուարանայ (41): Այս միջոցին՝ Յունիս 11, Կ.Պոլսոյ մէջ Իթթիլաֆ կը կազմակերպէ հակադարձ պետական հարուած մը: Կը սպանուի վարչապետ Շեւքէթ փաշան: Սակայն պետական հարուածը չի յաջողիր: Իթթիհատ կը շարժի շատ արագ եւ բիրտ: Մեծ թիւով ընդդիմադիրներ կը ձերբակալուին եւ անոնցմէ 12 հոգի կախողան կը հանուի Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ: Ընդդիմադիր այլ գործիչներ, որոնց շարքին Սատրք պէյ, Շերիֆ փաշա (42), Սապահատին, Իսմայիլ Հաքքը եւ այլք կ'ապաստանին արտասահման՝ Փարիզ, Գահիրէ, Աթենք, Բանակին մէջ գործող ընդդիմադիր բջիջները կ'անցնին ընդլայտակ:

Նոյն տարին, Փարիզ վերադառնալէն ետք, Սապահ-Գիւլեան հանդիպումներ կ'ունենայ հոն ապաստանած Շերիֆ փաշային հետ եւ կը համոզուի, որ հակառակ ձախող պետական հարուածին թողած ծանր հետեւանքներուն, անոնք կառչած կը մնային Իթթիհատի իշխանութիւնը դաւադրաբար տապալելու գաղափարին: Ան նաեւ կը հասկնայ, որ արտասահման գտնուող Իթթիլաֆականներուն կազմակերպիչ միտքը Սատրքն էր, որ կը գտնուէր Գահիրէ: Կը մտադրէ անպայման հանդիպիլ անոր: Տակաւին 1895-էն Իթթիհատին ռեբերիմ թշնամի եւ անոր հանդէպ բուռն քարոզչութիւն ծաւալած Սապահ-Գիւլեան, հայ ժողովուրդի գոյութեան սպառնացող «կարմիր եռապետութեան» վտանգը վերացնելու գործնական միակ միջոցը կը տեսնէ Իթթիլաֆի դաւադրական ծրագիրին յաջողութիւնը:

1913 Սեպտեմբեր 7-ին, Ռուսիայի Կոստանցա քաղաքին մէջ բացուած ՍԴՀԿ 7-րդ Համագումարը, կը կատարէ Իթթիհատի քառամեայ իշխանութեան գնահատականը եւ կ'որոշէ. «Պարզ լինելով, որ Օսմանեան պետական ամբողջ կազմը եւ նրա պետական հասկացողութիւնը որոշապէս ուղղուած է ձուլելու, բնաջնջելու (sic!!) բաղկացուցիչ ազգութիւնները ու «տիրող ազգը» անընդունակ հանդիսացաւ մինչեւ ցարդ յուռաջ բերելու Նորագոյն Պետութիւն. Նկատելով, որ Տաճկաստանի մէջ տիրապետում է մի ՕԼԻԿԱՐԽԻԱ, որի ղեկավարիչ ոյժն է «Իթթիհատ վէթերագգը» Կուսակցութիւնը. Որոշ լինելով որ այդ Կուսակցութեան հիմնական սկզբունքներն են պահել թրքական բիւրօկրատիան, թոյլ չտալ, որ Նորագոյն Պետութիւն յառաջանայ ու նրա ակնյայտնի դիտաւորութիւնն է բաղկացուցիչ ազգութիւնները ձուլել, ոչնչացնել՝ ի հարկին եւ կոտորել (sic!!!). Անվիճելի համարելով, որ իշխանութիւնը իր ձեռքում ունեցող Տիրող Դասակարգը իր հայակործան քաղաքականութիւնը սխտէմատիկ եւ անողոք կերպով յառաջ է տանում: Տեսնելով, որ հայ ժողովուրդը գործադրող ու տիրող շարունակական ներքին քաղաքականութեան շնորհիւ քայքայման ու կործանման շէմքին վրայ է կանգնել.



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
Armenian Missionary Association
of America

Նորայայտ Նամակ Փարամագին(1)՝ Սապահ-Գիւլեանէն

Համոզուած լինելով, որ քաղաքական մի այնպիսի կուսակցութիւն, որպիսին է Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, Օսմանեան Պետութեան տուած ներկայ պայմաններով այլեւս չէ կարող իր սկզբունքների իրականացումը հետապնդելու եւ Հայ Ազգի գլխինն կախուած մահաբեր սուրբ (sic!) յետ հրելու ու թիւրքիայում տիրող դասակարգը տապալելու՝ միմիայն ՕՐԻՆԱԿԱՆ հողի վրայ կանգնելով. Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան է. -որդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը միաձայնութեամբ, բացի մէկից, որոշեց, յանուն պրօլետարական շահի, Մարդկայինեւ Ազգային անձեռնմխելի իրաւունքներին, այսուհետեւ կազմել ԻԼԼԷԳԱԼ հողի վրայ եւ այդպիսով մղել իր Կուսակցական Պայքարը՝ մինչեւ որ աւելի յարմարաւոր քաղաքական ու տնտեսական նոր պայմաններ յառաջանան» (43):

Համագումարը, որպէս քաղաքական պահանջք, կ'ընդունի «ինքնավար Հայաստան»ի սկզբունքը (44):

Համագումարի փակումէն անմիջապէս ետք, ոչ-օրինական որոշումները գործնական ծրագրի վերածելու համար տեղի կ'ունենայ գաղտնի ժողով մը, որուն կը մասնակիցին, Բ. Վարազդատ (45), Սապահ-Գիւլեան, Տոքթ. Պէննէ (46), Սարգիս Սարգիսեան (47) եւ Ս. Վահագն (48): Դռնփակ նիստին որոշումները խիստ գաղտնի կը պահուին եւ չեն հաղորդուի նոյնիսկ պատգամաւոր ընկերներուն (49): Ժողովին կը քննարկուի ԻԹԹԻՀատի եռապետութեան հանդէպ ԻԹԹԻՀաֆի դաւադրական ծրագրերը եւ անոր մաս կազմելու հարցը: Այդ ծրագրերին գործնական մասը հետապնդելու համար կը կազմուի մարմին մը, որուն մաս կը կազմեն, տոքթ. Պէննէ, Ս. Վահագն, Ռուբէն Կարապետեան (50) եւ Փարամագ, որ Համագումարին՝ հետեւաբար «գաղտնի ժողովին» չէր մասնակցեր:

Այս միջոցին ժողովատեղի կը հասնի Գահիրէի եւ Աղէքսանդրիոյ պատգամաւոր Արշալիր Սահակեան՝ ապագայի վատահամբաւ դաւաճան Արթիւր Եասեան: Ան կը ծանօթանայ առնուած որոշումներուն եւ կու տայ իր համաձայնութիւնը: Ատենագրութեան մէջ «մատուցեան» արժանի ոչինչ կար: Հոն արձանագրուած էր կուսակցութիւնը անօրինական դարձնելու որոշումը՝ որ գաղտնիք մը չէր: Այդ մասին նշուած էր Համագումարի եզրափակիչ յայտարարութեան եւ ներքին շրջաբերականին մէջ ու առանձին յօդուածով լոյս պիտի տեսնէր «Հնչակ»ի (51) մէջ: Բ. Վարազդատ կը պնդէ, որ Եասեան գաղտնի ժողովէն տեղեակ չէր (52): Սակայն ան, ատենագրութեան նիւթերէն եւ պատգամաւորներուն հետ ունեցած զրոյցներէն դատելով գուշակած էր, որ առնուած «Իլլեգալ» գործունէութեան ետին գտնուող շարժիչ ուժը Սապահ-Գիւլեանն է, որուն յաջորդ հանգրուանը պիտի ըլլար Եգիպտոսը (53): Քոստանցայէն Կ.Պոլիս երթալով, Եասեան իր գիտցածն ու կուսահարը կը փոխանցէ թրքական գաղտնի ոստիկանութեան, որ կը սկսի Սապահ-Գիւլեանը փնտռել, յատկապէս Եւրոպայէն Կ.Պոլիս ժամանող նաւերուն մէջ: Այս մասին Ռուսմանիոյ ընկերները կը զգուշացնեն զինք: Սապահ-Գիւլեան կը չամենայ Քոստանցայի մէջ. այս ընթացքին ան նամակներ կը գրէ Վան գտնուող Փարամագին «ուր նորից ամենաստիպողական բառերով շեշտել եմ իր օր առաջ մեկնելու բացարձակ անհրաժեշտութիւնը» (54):

Դեկտեմբեր 6-ին Սապահ-Գիւլեան իտալիոյ Թրիէսթէ քաղաքէն Աղէքսանդրիա կ'ուղղուի այնպիսի նաւով մը, որ Կ. Պոլիս չէր հանդիպեր: Զինք դիմաւորելու եկած ընկերներէն կ'իմանայ, որ նոյն օրը, Թուրքիոյ գաղտնի ոստիկանապետ Ազմի պէյ եկած է Աղէքսանդրիա եւ Արթիւր Եասեան հանդիպած է անոր հետ: Ամէն կողմ լեցուած է գաղտնի ոստիկաններով եւ զինք կը փնտռեն՝ հաւանաբար ուղղակի սպանելու համար: Կ'ապաստանի անվտանգ տեղ մը եւ լուր կը զրկէ իր հետ կապ ունեցող ընկերներուն եւ տիկնոջը, միաժամանակ չնամակցիլու իր հետ, մինչեւ նոր հասցէն զրկելը:

Կարճ ժամանակ անց Փարամագ կը հասնի Փարիզ: Բնականաբար ան կը գայրանայ, երբ «անընդհատ նամակներով» (55) զինք Փարիզ կանչող Սապահ-Գիւլեանը հոն չի գտներ եւ կը գրէ նամակ մը, որուն Սապահ-Գիւլեան կը պատասխանէ միայն 1914 Մարտ 3-ին՝ զոր կը ներկայացնենք ստորեւ: Նամակը աննկատ մնացած է հնչակեան արխիւին մէջ եւ առաջին անգամ է որ կը դուրսի շրջանառութեան մէջ: Մեզի հասած են նամակին առաջին 8 էջերը, ուր Սապահ-Գիւլեան կը բացատրէ Փարիզ չգտնուելուն եւ Գահիրէն վերադառնալ ուշանալուն պատճառները: Ուստի ան կը ստիպուի խօսիլ այնպիսի մանրամասնութիւններու մասին, որոնց շուրջ, այլ աւելիներով, ան արտայայտուած չէ եւ անոնք մնացած են որպէս պատմական գաղտնիքներ:

ՆԱՍԱԿԸ

Գահիրէ, 3 Մարտ 1914
«Սիրելի Փարամագ,
Ստացայ նամակդ, ինչպէս եւ երկու հեռագիրներդ: Լռութիւնս շատ եղաւ, ըստ երեւոյթին՝ դա սրտնեղութեան առիթ պիտի տար, բայց այլապէս էլ չէր լինել: Զարկաւոր էր, որ խնդիրները լուսաբանուէին եւ որոշեալ ընթացքի մէջ մտնէին, որպէսզի անելիքս եւ գրելիքս գիտնայի:
Դեռագրել էի, որ «դադարեցրէք նամակներդ, գալիս եմ», թէ ինչո՞ւ այդպէս, ասեմ համառօտակի: Թշուառական եասեանի մատուցութիւնների մասին տեղեկութիւն ունես: Երբ Ազրմի բէյը Պօլիս դարձաւ վերջերս, նա մի առանձին գործունէութիւն ցոյց տուեց: Եգիպտոս լցուեցաւ լրտեսների եւ տեռորների վոհմակներով, բոլորն էլ կազմակերպուած եւ որոշ նպատակի համար Իտալիայի կեդրոնական կոմիտէի կողմից ուղարկուած: Այդ լակոտին ձգել էի իր նախկին տան մէջ եւ իւր հոմանուհուն կաշառել էի՝ ոչ միայն հսկելու, այլեւ պէտք եղած տեղեկութիւնները ինձ բերելու, ինչ որ կատարում էր, թէեւ ո'չ ցանկացածս չափով, բայց այնուամենայնիւ որոշ տեղեկութիւններ ստանում էի: Ցաւն այն է՝ որ հայ, յոյն, արաբ ուրիշ լրտեսներ էլ, նոյն իսկ կիներ, այդ թշուառականի տրամադրութեան տակն էին. իրենց կազմակերպութեան ցանցը ամեն կողմ էին տարածել: Տեսակցութիւնները լինում էին այդ թշուառականի տանը եւ քաղաքից դուրս, թուրք commissariat-ի մէջ (56), մասնաւորների տներում: Իմացայ, որ Ազրմի բէյից կարելուր հրահանգներ-թուղթեր է ստացուել: Թշուառականի հոմանուհին՝ Արաքսի խոստովանեց, որ Արթիւրը վաղը պիտի փախչի, բոլորովին ծախուած. ինչո՞ւ, որովհետեւ կարգադրուել էր Սատրզ բէյին եւ ինձ զարկեն, ուստի կարգադրութիւնը անելուց յետոյ՝ ինքը օձիքը ազատել էր ուզում: Տեղեկացրել էին, որ Պօլսից եկած յատուկ էմիսները (57) տպեալ ցուցակ էին կազմում: Աղջկան ամէն խոստում արեցի, որ սրիկայի դէմ պատուոյ դատ բանայ, չհամաձայնեց: Մեքը Ասատուրեանը (58), Սատրզ պէյը, ես, Պիրթեւ Թէֆֆիկ բէյ, Եւայլն (59), նախ որոշեցինք, որ Սատրզ բէյի կողմից ոստիկանութեան զանգատագիր տրուի, որպէսզի կարողանանք ոչ միայն այդ սրիկայի երթը արգիլել՝ գէթ ժամանակաւորապէս մինչեւ որ իր մասին բաց թողած շրջաբերականները նկարով միասին՝ տեղ հասնեն, այլեւ տունը կոխել, խուզարկել եւ նամակները գրաւել: Վերջը՝ օրէնքի ուրիշ միջոց չգտնելով, Մեքը Ասատուրեանի կողմնակի աշխատանքի պատճառով, մեր ընկերներից 6-7 հոգի ոստիկանութեան զանգատներ կայացրին, որպէս դրամաշորթի եւ խաբէբայի, մի կերպ յաջողեցինք: Տունը կոխել տուինք: Սոսկալի կերպով ծախուած (1/2 ժամ յետոյ պիտի փախեր), անճանաչելի: 30 սրուակ թոյն, թուրքապէս ներգործողից մինչեւ 1-2 ամիս շարունակողը, թունաւոր դաշոյն, թունաւոր ասեղներ եւ գնդասեղներ, քնացնելու եւ ներարկելու զանազան գործիքներ՝ կատարեալ մի շտեմարան: Սրիկային ձեռքակալեցին: Արար-աշխարհ՝ Պօլիս-Գահիրէ իրարու եկաւ: Չէ՞ որ Ազրմի պէյը եկել էր Աղէքսանդրիա իր տեռորներով՝ նախքան Պարիզ գնալը (60): Չէ՞ որ նա այստեղ տեսակցութիւն էր ունեցել խտիվի հետ, գործի մէջ առանձին մասն ունեցել էր այստեղի թուրք բարձր commissair-ը, չէ՞ որ Սայիդ Զալիմը (61) (սատրագմ) եգիպտացի եւ խտիվի մօտիկ ազգականը (մօրեղբոր որդին) է, ուստի երկիւղ կրելով, որ սրիկան ամէն բան կարող է խոստովանիլ՝ Պօլսից եկած հեռագրերի վրան՝ բանտից բաց թողեցին եւ ոստիկանական հսկողութեան տակ առան: Ասեմ, սրիկան խոստովանեց իր պաշտօնական լրտես լինելը, ասաց, որ ինքը հսկողութեան տակ էր առել Սատրզ բէյին եւ ինչակեաններին: Չորրորդ օրը գիտցանք, որ խնդիրը փակել են ուզում: Զրատարակեցինք նոյնիսկ այն հեռագիրը, որով այստեղի թուրք բարձր commissair-ը, Արթիւրին կանչում է Աղէքսանդրիա՝ Սավօյա պանդոկ, Ազրմիի եկած օրը, ուր եւ այդ օրը եւ ժամին եղել է խտիվը եւ նրան ունկնդրութիւն շնորհել: Նախարարապետ, արդարութեան նախարար, խտիվը ուղղակի խայտառակում էր, որ անգիտակցաբար մի ծուղակի մէջ էր ընկել՝ վերջը, սրիկային հսկողութեան տակ բաց թողնելով, 4-5 օր սրանից առաջ փախաւ՝ ասում են: Բայց մասնաճիւղը սրիկայի 2 տեսակ նկարը եւ մի փոքր շրջաբերական (62) արդէն ցրուել է ամէն կողմ: Ուր որ երթայ կը ճանջցուի: Ես էլ ամէն կողմ գրել եմ: Դաշնակիցներին (Ֆրանսայի եւ Անգլիոյ ներկայացուցիչներ-



Նորայայտ Նամակ Փարամազին(1)՝ Սապահ-Գիւլեանէն

րուն- Ե. Ե.) էլ ցրուել ենք: Արդ, այդ օրերի մէջ, օսմանեան բարձր commissair-ը, պահանջ դրեց, յանուն իր կառավարութեան, որ մեր տները խուզարկեն, այն հիմունքով, որ մենք դաւադրութիւն ենք կազմում օսմանեան պետութեան եւ նրա բարձր պաշտօնատարների կեանքի դէմ: Բոլոր ընկերները պէտք եղած գզուշութիւնները ձեռք առան: Ես պակաս տեղ չթողեցի՝ մօտս մի կտոր թուղթ անգամ չթողեցի: Մեր փօստապետը անգամ կասկածելի դարձաւ: Եւ որովհետեւ նամակ գրելու եւ վարագրատին հասկացնելու ժամանակ չկար, ուստի հեռագրեցի, որ նամակները դադրեցնի եւ ես գալիս եմ: Վերջը, լօրդ Քիչիները (63) եկաւ, սա էլ թոյլ մարդ է: Սատրգ բէյը ճարտար դուրս եկաւ եւ բացեց մի մեծ գաղտնիք, այն է՝ Իտտիհատը ուզում է (համաձայն մի որոշման) ներկայ խտիվին գահընկեց անել եւ Սայիտ Չալիմին խտիվ անել եւ դրա համար ֆէտվա (64) են պատրաստում, այն հիմունքով, որ ներկայ խտիվի հայրը խտիվութիւնը կաշառքով է առել եւ ոչ թէ օրինականապէս, քանի որ ըստ մեծութեան եւ ժառանգականութեան իրաւունքի խտիվութիւնը պիտի հասներ Սայիտ Չալիմի հօրը, ուրեմն նրանք ուզում էին այն խտիվին ուզուրպատօր (65) յայտարարել ըստ դուրանական օրէնքի (66): Դրա վրայ խտիվը ֆրօնտը (67) փոխեց եւ նա, որ մէկ օր առաջ Սատրգ բէյից պահանջել էր երկրից դուրս գալ՝ պատուիրեց արխային (68) նստել: Այդ հարուածը այդպէս հեռագրեցինք:

Մէքքայի Շէրիֆի որդին այստեղ պիտի գար՝ Պուլիս երթալու որպէս պարլամենտի անդամ (69): Սատրգ բէյը յատուկէն խնդրեց, որ մնամ եւ նրա երթալու առաջը առնենք: Եկաւ մարդը, կատարելապէս համոզուեցաւ, ո՛չ միայն ինքը չի ուզում երթալ Պուլիս, այլ աշխատում է արգիլել բոլոր բուն արաբ երեսփոխանների երթալուն, որքան էլ որ ընտրեն (անոնք ընտրուած ըլլալին ?- Ե.Ե.): Սա միւսլիմանական աշխարհի մէջ ամենաազդեցիկ անձի որդին լինելով՝ համոզեց եւ իր հօրը՝ այսօր Մէկկայի Շէրիֆը ընդդիմադիրների գլուխն է անցել՝ եւ ամէն զոհաբերութեան պատրաստ է: Սա ազդեց եւ խտիվի վրան, որը հիմա ուղղակի հակաիտտիհատական գծի վրայ է կանգնել եւ պատրաստ զոհաբերութեան (70):

Պասրայից 16 հազար արաբներ գէնքի տակ նշանի են սպասում (71) եւ սրանք մի շատ լաւ յայտարարութիւն են բաց թողել, որ թարգմանաբար «Երիտասարդ Չայաստան»ին պիտի դրկեն (72): Տաճկաստանի գանազան շրջաններից խուճբերով Սատրգ բէյի մօտն են գալիս՝ խորհուրդ հարցնելու համար: Կազմուում է դժգոհների մի բանակ, ամէն կողմերից, մանաւանդ բուն թուրք, արաբ եւ սիւրիացի տարրերից (73): Սրանց բոլորի համոզումն այն է, որ Իտտիհատի ղեկավարիչ ոգին գերմանական դիւանագիտութիւնն է, իսկ գերմանական շահը Թուրքիայի կործանման մէջն է: Այդ մասի մէջ չեն մտնում, չափազանց չերկարելու համար:

Նախ որոշած էինք, որ Սատրգ բէյի հետ միասին Պարիզ գանք: Բայց այսօր իրադրութիւնը մի այլ հանգամանքի ներքոյ ներկայացաւ: Քանի որ արաբական եւ դժգոհների աշխարհը շարժուում է, դա չի կարող լինել առանց Սատրգ բէյի ներկայութեան բուն թատերաբեմին վրայ: Բրիտանական այստեղի ներկայացուցիչը (երկու օր առաջ տեսնուեցանք) Ստօրս (74) կատարեալ հաւաստիացումն տուեց, ու նրան այստեղ խոստացան ճանապարհածախսը տալ: Սատրգ բէյը Իսմայիլ բէյին հեռագրով կանչեց, եւ ասացի՝ նամակ պիտի գրեմ, եթէ նա չգայ կամ ուշանայ, դու իրեն հանդիպիր (Շէրիֆ փաշայի մօտ) եւ հարցրու թէ ինչո՞ւ չեկաւ, կամ երբ պիտի մեկնի կամ միւսին գաք: Իսկ եթէ նա արդէն ճանապարհ է ընկել, այն ժամանակ հեռագրիր ինձ, որ քեզ ճանապարհածախս փոխադրել տամ II կարգի: Իսմայիլ բէյը բաւականին ազդեցութիւն ունի թուրք շրջանների վրայ, նրա երեւումը աւելի ոգեւորութիւն առաջ կարող է բերել, մանաւանդ որ ձեռներէց ոգու տէր է: Քո գալը դարձեալ անհրաժեշտութիւն է, որովհետեւ ընդհանուր շարժում եւ գործունէութիւն պիտի գծուի, որի թատերաբեմը գլխաւորապէս Պուլիս, Իզմիր, Իզմիթ, Բուրսա, Դամասկոս եւ Արաբիա (Միջագետք, Բասրա) պիտի լինի:

Ես առաջին օրից ասած եմ, որ մենք օգնութիւն կարող ենք տալ, բայց դրան չունենք, նիւթականը իրենք պիտի ստանձնեն, ինչ որ խոստացել են: Արդ, ինչ եզրակացութեան, որ գալու լինենք, ըստ այնմ էլ մեր նիւթական պահանջ-ցուցակը կը ներկայացնենք: Գալդ բացարձակ անհրաժեշտութիւն է, մանաւանդ երբ Իսմայիլ բէյը գալու լինի:


Ես ինքս պիտի գայի, բայց գալովս խնդիրը չպիտի վճռուէր, քանի որ թէ Սատրգ բէյը թէ միւսները, մանաւանդ Շէյխի տղան եւ այլ ղեկավարիչները անկարող պիտի լինեն գալ:

Որոշ է, Չայկական Չարցը կատարեալ ֆիասկօ կրեց, սիզիֆեան աշխատանքը նորից պիտի սկսուի (75), եւ եթէ ուրիշ ոչինչ չը կարողանանք անել, [անընթեռնելի բառ] Իտտիհատի գոյութիւնը ջնջելը, նրան տապալելը, թուլացնելը ահագին դիւրութիւն պիտի տայ մեր ապագային հասնելու: Առանց Ինքնավար Չայաստանի մենք չենք կարող ապրել, վտանգը միշտ կայ: Ա՛յնքան արիւնից, ա՛յնքան աշխատանքից յետոյ Չայաստանը երկու մասի բաժանուեց (76) որ ասել է գրաւման դուռը մի քայլ առաջ եկաւ: Խնդիրը այդպէ՞ս կարող էր վերջանալ, եթէ հայ կուսակցութիւնները միջնէն ցարդ թուլացրած լինէին Իտտիհատին: Ապուշ Դաշնակցութիւնը 4-5 տարի ոյժ տուեց Իտտիհատին, նրա ձեռքին խաղալիք դարձաւ եւ վերջն էլ քրքրեց կերաւ: Յնչակեանութիւնը սկզբից ի վեր (դեռ 1894-ից) այդ վտանգը տեսաւ եւ իր սլաքները չմոռցաւ Իտտիհատին ուղղելու:

Ես էլ ուզում եմ, որ երեքս (77) նախ միասին գանք, բայց ուշացար դու, եւ գործերի ընթացքը գահավիժում են. գամ, բայց առանց դրամի, իրարու երես պիտի նայենք Փարիզի մէջ, եւ այստեղի սկսուած գործը պիտի վտանգուի: Կիլիկիայի գործը (78) ձեռք եմ առել, այնտեղ ընդվզումի լաւ ոգի է տիրում, մանաւանդ այժմս: Ի՞նչ անենք, 2-3 հոգի չեն կարող ամէն բան անել: Ընկերները, որ օգնութեան չեն հասնում, ի՞նչ անենք: Խայտառակուեցանք. մէկ հիմունք առաջ բերենք, կայունութիւն ստեղծենք եւ »Յնչակ«ը սկսենք, եւ ո՛չ թէ տարին մէկ-երկու հատ հրատարակենք եւ յետոյ ըսենք՝ դրամի պատճառով, այնինչ չի կարող պատահել:

Ի՞նչ պիտի լինի մեր դերը եւ մեր անելիքը: Իրաւ է երեքս միասին պիտի լինէինք խորհելու համար, բայց սկզբունքի եւ գործունէութեան մասին չեն կարծում, որ երեքս մէջ համամտութիւն չը լինի: Եթէ իր հալին մնալու լինի, սրանից 1-2 տարի յետոյ «Իտտիհատ»ին տապալել այլեւս շատ դժուար պիտի լինի, եթէ ոչ անհնար: «Իտտիհատ»ին տապալելը, նրան թուլացնելը, ասպարէզից վար իջեցնելը է՛ն մեծ ժառանգութիւնը պիտի լինի, որ Յնչակեանութիւնը պիտի մատուցանի թէ սոցիալիզմին եւ թէ Չայ ազգութեան՝ ապագայի տեսակետից: Այդ չափազանց վտանգաւոր՝ պանթիւրքիզմ, պանիսլամիզմ եւ նացիօնալիզմ մարմնացնող կուսակցութիւնը ապագային էն վտանգաւորը պիտի լինի մեր ապագայի տեսակետից: Եւրոպական հակամարտ շահերն էլ, կարծես, նրա գոյութիւնը, գէթ ժամանակաւորապէս, իրենց հաշուին յարմար են համարում: Չարկաւոր է հարուածը տալ՝ քանի որ դեռ նա թոյլ է: Յնչակեանութիւնը, ինչպէս առաջին օրից արաւ, առաջինը պիտի լինի այդ ցրուած օտար ոյժերը (79) միացնելու եւ մի որոշ ուղղութեան մէջ դնելու: Նրանք այդ վստահութիւնը ունեն [մեր] վրայ: Եթէ Սատրգ բէյը այստեղից անմիջապէս հեռանայ, Մէքքայի Շէրիֆ, նրա որդին, արաբ երեսփոխաններ, այստեղի այն շրջան[ալ]ը, որ նիւթական ահագին օգնութիւն պիտի տան, այդ բոլորը կարող են ո՛չ միայն տատանուիլ, այլեւ պէտք եղած կորովը եւ արագաշարժութիւնը երեւան չբերել. չէ՞ որ արեւելքի զաւակ են: Սատրգ բէյին իբրեւ դրօշակ՝ ամէնքը հաւատում եւ հետեւում են, որովհետեւ ուղղամիտ, ազնիւ եւ վերին աստիճանի անշահախնդիր մարդ է: Շէրիֆ փաշան ո՛չ գործ ստեղծող է, ո՛չ էլ նրա վրայ լիակատար վստահութիւն ունեն դժգոհ տարրերը: Ամէնքի համոզումն է, անդրդուելի, որ Թիւրքիան պիտի ընկնի եւ Իտտիհատը նրա անկումը փութացնում է եւ անխուսափելի դարձնում, իր ներքին եւ արտաքին քաղաքականութեամբ: Եթէ Թիւրքիան փրկուի, միակ յոյսը՝ դա իթիլաֆականութեան լայն ծրագրի գործադրութեամբը պիտի լինի, մի յոյս ունեն վերջապէս, եւ դա զարմանալի չէ, այլ պատմական մօմէնտի հոգեբանութիւն:

Չայկական Չարցը - «Լեռը ծնաւ մուկն չնչին» (80) այլապէս էլ լինել չէր կարող: Ի՞նչ անել.- կամ րայական պահպանողականութիւն, կամ կորովի գործունէութիւն, սրանցից առաջինի խօսքը չի կարող լինել, որքան էլ որ Սուրատների (81), Աչըզպաշեանների (82), այդ մտաւոր ներքինիների (83) իղձը եւ փափաքը այդ լինի: Բայական մտայնութեան հետ գործ չունենք, նա մեզ համար մեռել է սկզբից ի վեր, իրենց վարպետներով եւ աշակերտներով:



Նորայայտ Նամակ Փարամագին(1)՝ Սապահ-Գիւլեանէն

Արդ, ընդհանուր շարժման նախագիծ է պատրաստուում, լայն չափերի մէջ, որ շարունակական պիտի լինի, մինչեւ իտտիհատական կառավարութեան եւ կուսակցութեան արմատական տապալումը: Դրա համար ընդհանուր խորհուրդ է պէտք: Այդ խորհուրդը կամ այստեղ պիտի լինի եւ կամ Փարիզ: Փարիզ գալու համար խնդիրը չի վերջանալ միայն Սատրզ քէյի եւ իմ գալովս: Մեր բացակայութիւնը այստեղի գործը, որ ահագին դժուարութեամբ ստեղծել ենք, կարող է վտանգուել, եւ բացի դրանից, բոլորին չենք կարող առնել մեզ հետ բերել: Այսօր Սատրզ քէյը հեռագիր տուեց Պարիզ Իսմայիլ քէյին (կիւմիւլչիմացի) որ [գայ] այստեղ:

Ես ասացի, որ միայն իմ փորձառութեամբ խնդիրը չի վերջանալ, մեր կողմից էլ, բացի ինձնից, հարկաւոր է, որ իմ ընկեր Փարամագն էլ այստեղ լինի եւ ծրագրերի կազմութեանը մասնակցի: Ուրախութեամբ ընդունեցին եւ...» (84):

Դժբախտաբար նամակին մնացեալ մասը, որ նոյնպէս կրնար մեզի անծանօթ մանրամասնութիւններ պարունակել, կը մնայ անյայտ: Վերջերս մեր յայտնաբերած արխիւային նիւթերէն կը պարզուի, որ Սապահ-Գիւլեան Մարտէլի վրայով Փարիզ կը մեկնի միայն Մարտ 28-ին (85): Ան Կեդրոնի իր գործընկերներուն կը ներկայացնէ ծրագրերին մանրամասնութիւնները: Փարամագ կը ստանձնէ Կ.Պոլսոյ մէջ ՍԴՀԿ-ին ստանձնած բաժնին պատասխանատուութիւնը: Սապահ-Գիւլեան փարամագի հետ կը վերադառնայ Գահիրէ, Ապրիլի կէսերուն (Ապրիլ 19/2 Մայիսին Փարամագ կը մասնակցի եւ կը զլխաւորէ ՍԴՀԿ Գահիրէի վարչութեան ժողովը (86)): Անոնք Սատրքի հետ կը շարունակեն մշակել ծրագիրը, միաժամանակ հաւաքագրել անոր գործադրութեան ատակ փորձառու ընկերներ: Շուրջ ամիս մը ետք, Թրիքիսթէի եւ Քոսթանցայի վրայով Փարամագ կը մտնէ Կ.Պոլիս:

Յուլիս 17-ի երեկոյեան, Կ. Պոլսոյ մէջ սկսած հնչակեան գործիչներու ձերբակալութիւններու առաջիններէն կ'ըլլայ նաեւ Փարամագ:

1- Փարամագ (Մատթոն Սարգիսեան). 1863, Մեղրի-1915 Յունիս 15, կախաղան հանուած Կ. Պոլսոյ մէջ: 1878-1883 կը յաճախէ Էջմիածնայ Գէորգեան ճեմարանը: 1884-1895 ուսուցչութիւն կ'ընէ Նախիջեւանի եւ Արտապիլի (Պարսկաստան) մէջ: 1895-1896 Սալմաստի (Պարսկաստան) մէջ կը մասնակցի Արեւմտահայաստան գէնք եւ ֆետայական խումեր փոխադրելու աշխատանքին: 1897-ին, իր զլխաւորութեամբ զինատար խումը մը կը հասնի Վան: Իր առաքելութիւնն էր փոխարինել նահատակուած Մարտիրոս Սարուխանեան: Կը ձերբակալուի եւ 1898-ին Վանի դատարանին առջեւ կ'ունենայ իր հանրայայտ պաշտպանական ճառը: 1903-ին, Անդրկովկասի հայաշատ քաղաքներուն մէջ կը կազմակերպէ հայ եկեղեցապատկան գոյքերը բռնագրաւելու ցարական որոշման դէմ ժողովրդային ընդվզումները: Այս առիթով, Թիֆլիսի մէջ կը կազմակերպէ Անդրկովկասի կառավարիչ, իշխան Գուլիցիմի (այս որոշումը մտայղացողը) ահաբեկչութիւնը: 1905-06՝ Ղարաբաղի եւ Չանգեզուրի մէջ կը ղեկավարէ հայ-թաթարական բախումներուն մասնակից հնչակեան խումբերը: 1906-ին, Շուշիի մէջ, քանի մը գործակիցներով կը ձերբակալուի: 1907-ին Թիֆլիսի դատարանին կողմէ կը դատապարտուի մէկ տարուան բանտարկութեան: 1909-ին որպէս պատգամաւոր կը մասնակցի Կ.Պոլսոյ ՍԴՀԿ Զ. Զամագումարին: 1910-1913՝ հակա-իթթիհատական քարոզչութիւն կը կատարէ Տիգրանակերտի, Խարբերդի, Մալաթիոյ, Վանի եւ այլ շրջաններու մէջ: 1914-ին Փարիզի եւ Գահիրէի մէջ կը մասնակցի իթթիհատական եռապետութիւնը բռնի հեռացնելու ծրագրումին ու կը ստանձնէ Կ.Պոլսոյ մէջ ՍԴՀԿ-ին վերաբերող բաժինը: Աշխատակցած է «Հնչակ», «Մշակ», «Նոր Աշխարհ», «Արեւելք» թերթերուն: Ունի թատերգութիւններ:

2- Ս. Սապահ-Գիւլեան (Ստեփանոս Տէր Դանիէլեան). 1861, Նախիջեւանի Ջահուկ գիւղ- Նիու ճըրսի, 1928: Աւարտելէ ետք Թիֆլիսի Ներսէսեանը, ուսուցչութիւն կը կատարէ Նախիջեւանի, Երեւանի թեմական դպրոցին, Մշոյ Ս. Կարապետ վանքի ժառանգաւորացի եւ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին մէջ: 1894-ին կ'աւարտէ Փարիզի Ecole Libre Des Siences Politiques-ը: Փարիզի մէջ կը հիմնադրէ Հայ Ուսանողական Միութիւնը, որ աշխուժ գործունէութեամբ Հայկական Հարցը կը ներկայացնէ ֆրանսական հանրային կարծիքին: 1899-ին, ՍԴՀԿ Ռոստովի խորհրդածողովին կ'ընտրուի ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան անդամ: 1905-15, ՍԴՀԿ երեք համագումարներով (1905 Փարիզ, 1909 Կ.Պոլիս, 1913 Քոսթանցա) կ'ընտրուի ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան ատենապետ: 1919-ին ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան կողմէ կը նշանակուի ԱՄՆ-ի եւ Եւրոպայի

լիազօր գործիչ: Խմբագրած է «Հնչակ»ը 1901-03 (Լոնտոն) եւ 1906-12 (Փարիզ): 1908-12՝ բնակութեան հիմնական վայրը եղած է Կ.Պոլիսը: 1913-16՝ Գահիրէն: 1917-էն ետք՝ ԱՄՆ: Հիմնադրած եւ խմբագրած է «Աշխարհ» (Ռուսճուք, 1898), «Երիտասարդ Հայաստան» (Պոստոն, 1903-1905 եւ 1917-24), «Նոր Աշխարհ» (Կ.Պոլիս, 1912), «Ինքնավար Հայաստան» (Պուքրէշ, 1916) թերթերը: աշխատակցած է «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս, 1880-84), «Նոր Դար» (Թիֆլիս, 1895-96), «Արեւ» (Աղէքսանդրիա, 1915-16), «Կռան» (Շիքակօ, 1919-20) եւ այլ թերթերու: Անոր գրչին կը պատկանին գաղափարական-քաղաքական բնոյթի գիրքեր.- «Եւրոպայի Քաղաքական Դրութիւնը Բերլինի Դաշնադրութիւնից Յետոյ» (Ռուսճուք, 1898), «Սոցիալիզմ եւ Հայրենիք» Ա. պրակ, (Փարիզ, 1907), «Երիտասարդ Թիւրքիա» (Փարիզ, 1908. ք. տպագր. Երեւան, 1991), «Հերդեր եւ Իր Քաղաքական Հայեացքները» (Կ.Պոլիս, 1909), «Ինքնավար Հայաստան» (Գահիրէ, 1915. ք. տպագր. Թիֆլիս, 1915), «Սոցիալիզմ եւ Հայրենիք» Բ. պրակ (Փրովիտենս, 1916), «Պատասխանատուները» (Փրովիտենս, 1916. ք. տպագր. Պէյրութ, 1953. գ. տպագր. Պէյրութ, 1974. դ. տպագր. Երեւան, 2017), «Փոքր Հայքի Յիշատակներ» (Շիքակօ, 1917. ք. տպագր. Պէյրութ, 1956-57), «Արմենակ եւ Արահան» (Շիքակօ, 1917), «Բառերի եւ Եզրերի Բացատրութիւններ» (Պոսթոն, 1927. ք. տպագր. 1957, Պէյրութ):

3- «Հնչակ», 1908 Յունիս-Յունիս. [Սապահ-Գիւլեան], «Սահմանադրական Թուրքիա եւ Հայկական Խնդիր»: ([] ձեւի փակագիծերուն մէջ առնուած անուններուն պարագային, յօդուածը անստորագիր է, բայց մենք վստահ ենք յօդուածագիրին ինքնութեան):

4- ՀԱԱ. Զ.1456, գ.1, գ.147. «Շրջաբերական ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան թիւ 14. Փարիզ, 1908 Օգոս. 19»:

5- Նոյն:

6- «Հնչակ» 1910 Օգոս.-Սեպ. «Յայտարարութիւն ՍԴՀԿ Շարքերուն - ՍԴՀԿ Վեցերորդ Ընդհանուր Պատգամաւորական ժողով (Կ.Պոլիս, 1909 Նոյ. 26)»:

7- Prince Sabaheddin (1877-1948). Սուլթան Համիտի շրջանի քաղաքական յայտնի գործիչ Տամատ Մեհմուտ փաշայի զաւակը, որ իր եւ եղբոր՝ Լուքմուլլահի հետ, որպէս վտարանդի, 1899-ին կ'ապաստանի Փարիզ: Դրան յաջորդում է 1903), կը հիմնէ Անճակական Նախաձեռնութեան եւ Ապակեդրոնացման կուսակցութիւնը, որ Օսմ. Ընդդիմադիրներու Բ. խորհրդածողովին (1907, Փարիզ), համապետական ծրագիրով գործելու սկզբունքին շուրջ համատեղ դաշինք կը կնքէ Իթթիհատ Վե Թերաքքը-ի եւ ՀԴԴ-ի հետ: Սահմանադրութենէն ետք, Կ.Պոլսոյ մէջ կը շարունակէ պաշտպանել ազատական տեսակետներ, կը հակադրուի Իթթիհատին, սակայն կուսակցական գործունէութիւն չի ծաւալել: 1913-ի իթթիլաֆականներու ձախող պետական հարուածէն ետք, կեանքի մնացած մասը կ'անցնէ Եւրոպայի մէջ:

8- Arsen Avagyan, «Ermeniler ve Ittihat ve Terakki», Istanbul, Aras Yayincilik, 2005, s. 40. նաեւ Սապահ-Գիւլեան, «Պատասխանատուները», Պէյրութ, Տօնիկեան, 1974, էջ 287:

9- Սապահ-Գիւլեան, «Պատասխանատուները»-էջ 275:

10- 1904-ին Փարիզի մէջ հիմնադրուած «Անկախ Արաբիա» կուսակցութեան հիմնադիր Նաժիպ Ազուրիի եւ Սապահ-Գիւլեանի միջեւ ընկերական կապը կը սկստի այդ օրերէն: Ասոր արտայայտութիւններէն մէկն ալ, Ն. Ազուրիի «L'independance Arabe»-ին (1908 Փետր.-Մարտ, թիւ 11-12) մէջ, Սապահ-Գիւլեանի «Թուրք Բռնապետութիւնը եւ «Երիտասարդ Թուրքերը»» («Հնչակ», 1908 Յունուար) ծրագրային յօդուածին՝ «La Tyrannie Turque et les Jeunes-Turcs» հրատարակութիւնն էր: Յօդուածին որպէս թարգմանիչ կը նշուի Serge d'Herminy, որ Ս. Ս. Դաւիթ Բէկն է (Մարտիրոս Սարգիսեան):

11- «Երիտասարդ Հայաստան», 1918 Օգոս. 17. Էնդիժէն [Սապահ-Գիւլեան], «Թուրք ճարտարագործական Հասարակապետութեան Ներկայացուցիչները»:

12- Manyasizade Refik (1853-1909). Իրաւաբանութեան դասախօս: Եղած է օսմանեան սահմանադրութեան հեղինակ Միդիատ փաշայի գործակիցը ու անոր նման աքսորուած: Իթթիհատի անդամ, բայց յուսախափուած անորմէ: Կ.Պոլսոյ շրջանէն երեսփոխան: Կը ներկայացուի որպէս արդարադատ եւ ազատախոհ:

13- Սապահ-Գիւլեան, «Պատասխանատուները»-էջ 278 եւ 285:

14- Նոյն, էջ 285:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԱՐՄԷՆ ԵՒ ՌԻԹԱ ՊԱՐՈՆԵԱՆ

Նորայայտ Նամակ Փարամազին(1)՝ Սապահ-Գիւլեանէն

15- Dimitar Vlahov (1874-1954).- Ծնունդով մակեդոնացի քաղաքական գործիչ: Քաղաքական գործունեութեան սկսած Պուլկարիոյ մէջ, միանալով Ներքին Մակեդոնական Յեղափոխական Կազմակերպութեան. անջատուած անկէ եւ հիմնած Ազգային Դաշնակցային Կուսակցութիւնը: Ապա միացած ՍԱՖ-ին: 1909-12՝ երեսփոխան, ընտրուած Մեծ Ի ցանկով՝ ինչպէս բոլոր հայ երեսփոխանները: Խորհրդարանին մէջ կը գործակցի հայ երեսփոխաններուն հետ, յատկապէս աշխատանքական հարցերու շուրջ:

16- «Նոր Աշխարհ», 1912 Սեպտ. 13/26. «ՍԴՅԿ Տաճկաստանի Բ. Պատգ. Ժողովի Որոշումները»:

17- «Կոհակ», 1912 Սեպտ. 5/18. «ՍԴՅԿ-ը եւ Բրօլէթարիան». նաեւ Mete Tuncay, Eric Zurcher, «Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923», London, British Academic Press & International Institute of Social History, 1994. Paul Dumont, «A Jewish, Socialist and Ottoman Organization: the Worker's Federation of Salonica», p. 72-73, 183: Cristien Rakovski (1873-1941).- Ազգութեամբ ռումանացի, քաղաքացիութեամբ պուլկարացի միջազգայնական յեղափոխական: 1905-էն Ռումանիոյ ՍԴ Կուսակցութեան ղեկավարներէն: 1917-ին կը մասնակցի ռուսական յեղափոխութեան Օտեսայի եւ Փեթերզպուրկի մէջ ու կը միանայ Պոլշեիկ կուսակցութեան: Քաղաքական, պետական եւ դիւանագիտական պաշտօններ կը վարէ Խ. Միութեան եւ Կոմկուսին մէջ: Հրատարակային ելոյթներով կը քննադատէ Ստալինի քաղաքականութիւնը, այդ պատճառով երեք անգամ կը ձերբակալուի: Կը մահանայ բանտին մէջ:

18- Raymond Kevorkian, «The Armenian Genocide - A Complete History», London and N. Y., Tauris, 2013, p. 70. Պալքանեան պատերազմներէն ետք, երբ թերակղզին կ'անջատուի Օսմ. Կայսրութենէն, հոն գործող սոցիալիստ կուսակցութիւններուն հետ գործակցութեան հարցն ալ կ'անցնի պատմութեան:

19- Սապահ-Գիւլեան, «Պատասխանատուները»-էջ 288:

20- «Նոր Աշխարհ», 1912 Մարտ 7/20. Արսէն Կիտուր, «Իթքիհատը եւ Իթիլաֆը». նաեւ Dikran Kaligian, «The Armenian Revolutionary Federation Under Ottoman Constitutional Rule» (dissertation for the degree of Doctor of Philosophy in Boston College), 2003, p. 191.

21- «Ռահվիրայ», 1912 Փետր. 8/12. «ՍԴՅԿ-ի եւ Ազատականներու Միջեւ Հետեւեալ Համաձայնութիւնը Գոյացաւ»: (1912-ի սկիզբը, «Բիւզանդիոն» իշխանութեան կողմէ կը խափանուի եւ ան 15 օր լոյս կը տեսնէ «Ռահվիրայ» անունով):

22- (in Russian) Mary Kochar, «Armenian-Turkish Socio-Political Relations and the Armenian Question», Yerevan, Yerevan State. University, 1988, p. 180.

23- Erik Zurcher, «Turkey - A Modern History», London, 1994, p. 107-108.

24- Mehmed Sadik (1860-1940).- Սապայական ուսումնարանը աւարտած գնդապետ: Սահմանադրական յեղաշրջման ժամանակ կը ծառայէր Մօնասթիր նահանգին մէջ եւ կը գլխավորէր տեղի իթքիհատական մասնաճիւղը: Սահմանադրութենէն ետք, Կ.Պոլսոյ մէջ կը հիմնէ Hizb-i Cedid-ը (Նոր Կուսակցութիւն), որ 1911-ին լրիւ կազմով կը միանայ Հոլիյէթ Վէ Իթքիլաֆ ընդհանրոր կուսակցութեան: Պատերազմէն յետոյ, որպէս թշնամի ուժերու հետ գործակցաց, անոր չի թոյլատրուիր թուրքիա մտնել:

25- Feroz Ahmed, «The Young Turks (the Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914)», Oxford, 1969, p. 110.

26- Mehmed Said Pasa (1838-1914).- Երիտասարդ տարբէն, ծննդավայր Երզրումի մէջ մաս կազմած քաղաքական վերնախաւին: Սուլթան Համիտի օրով եօթ անգամ ստանձնած վարչապետի պաշտօնը: Իթքիհատ, սկզբնական շրջանին, պէտք ունենալով նման փորձառու քաղաքական գործիչի մը ծառայութեան, ներքին հասկացողութեան մը կու գայ անոր հետ:

27- Երբ Սուլթանը Սայիտ փաշային կը հարցնէ, թէ վստահութեան քուէ ստանալէն ետք ինչո՞ւ կը հրաժարի, ան կը պատասխանէ. «անոնք իմ վրաս վստահութիւն ունին, ես է որ անոնց վրայ վստահութիւն չունիմ» (Feroz Ahmed-p. 110):

28- Gazi Ahmed Muhtar Pasa (1839-1918).- Իր սապարեզին մէջ յաջողակ նկատուած զինուորական: Gazi տիտղոսին արժանանացած 1877-78 ռուս-թրքական պատերազմին: 1885-1906՝ Եգիպտոսի բարձրագոյն կառավարիչ: 1911-ին ծերակոյտի նախագահ: Ընդհանրիւրէն զայն վարչապետ բերելով կը փորձեն օգտուիլ անոր հեղինակութենէն:

29- Բացատրելու համար այս անսովոր երեւոյթը, իթքիհատական թերթերը կը գրեն, որ այդ ոչ թէ վստահութեան քուէ էր կառավարութեան, այլ երկիրը ծանր կացութեան մէջ չձգելու գիտակցութեան արտայայտութիւն («Ազատա-

մարտ», 1912 Յուլիս 19/1 Օգոս.):

30- Huseyin Nazim Pasa (1848-1913).- Սապայից դպրոցէն ետք, զինուորական բարձրագոյն կրթութիւնը ստացած Ֆրանսայի մէջ: Սահմանադրական յեղաշրջման ժամանակ, որպէս Ետիրմէի 2-րդ բանակի հրամանատար, գործակցաց երիտթուրքերուն հետ: 1910-1911 Պաղտատի նահանգապետ, ուր յարգուած արաբներէն: Զինուորական կարգապահութեան տէր եւ բարեկարգիչ նկարագրին համար՝ անհամաձայն Իթքիհատի ապօրինութիւններուն:

31- Mahmud Sevket Pasa (1874-1957).- Ծնած Պասրա: Աւարտած սապայական ուսումնարանը: Նշանակուած է Քոսովոյի նահանգապետ: Ինը տարի ապրած Գերմանիա: 1909-ի յետաշրջական շաժման ժամանակ, որպէս 3-րդ բանակի (Ազատարար Բանակ) հրամանատար, Կ.Պոլսոյ մէջ զսպած ապստամբ ուժերը: Այդ օրէն ձեռք բերած «Թուրքիոյ ամենէն զօրաւոր մարդը» ըլլալու համբաւը:

32- Անդրէյ Մանտելշթայմ [Կ.Պոլսոյ ռուսական դեսպանատան առաջին քարգման], «Երիտասարդ Թուրքերը Պատերազմէն Առաջ», Կ.Պոլիս, 1919, էջ 93-94:

33- Այս եւ բոլոր սեւագրուած ընդգծումները բնագրային են:

34- «Հնչակ», 1913 Մարտ. Սապահ-Գիւլեան, «Փաստեր եւ Իրողութիւններ»:

35- «Հնչակ», 1913 Յունուար. Սապահ-Գիւլեան, «Եւրոպա եւ Թուրքիա». նաեւ «Նոր Աշխարհ», 1912 Սեպտ. 6/19. «Պատրիարքարանի Հրահանգների Առթիւ»:

36- «Նոր Աշխարհ», 1912 Ապրիլ 11/24. Սապահ-Գիւլեան, «Անգղիա եւ Թուրքիա»:

37- Սապահ-Գիւլեան, հակա-իթքիհատական քարոզչութիւն կատարելու համար, 1911-1912-ին երեք շրջագայութիւններ կը կատարէ Սեւ ծովու ափերը եւ Փոքր Հայքի շրջանները՝ Սամսոն, Օրտու, Ամասիա, Մարզուան, Սեբաստիա, Թոքատ, Էվերէկ-Ֆէմիսէ, Կեսարիա, Թոմարգա եւ այլն:

38- Սապահ-Գիւլեան, «Փոքր Հայքի Յիշատակներ», Պէյրութ, «Արարատ», 1957, էջ 431:

39- Ալեյի ուշ, Կ.Պոլսոյ պատրիարք Զաւէն Եղիայեան, այս մասին կը կատարէ ուշագրաւ խոստովանութիւն մը. «Երբ 1914-ի կիսուն կարգ մը յեղափոխականներ ձերբակալուելու վրայ էին, հետաքրքիր եղանք իմանալու շարժառիթը: Եւ երբ վերահասու եղանք Թալաաթի անձին դէմ դաւադրական փորձին, քաղաքական կուսակցութիւններէն մինչեւ օրուան ազգային վարչութիւնը, նոյնիսկ ես, քննադատեցինք ձերբակալուած հնչակեանները, վասնզի անձնքս ալ այն համոզումը գոյացուցած էինք թէ Թալաաթ կը սիրէր հայերը եւ միշտ ժպտուն դէմքով մը կ'ընդունէր զիս եւ [ազգային] վարչութենէն իրենց ներկայացող անձերը: «Այդ ժպիտը կեղծ է, մի խաբուիք» խօսէր էին այդ Քսանները: Եւ ժամանակը փաստեց թէ անոնք որ կախուէր էին հուսկ ապա, մեր բոլորէն, ամենէն ճիշդն էին ըմբռները». («Երիտասարդ Հայաստան», 1919 Յուլիս 23. Թեոդիկ, »Քսան Հնչակեաններու Պանծացումը - Գ. Տարեկից» (արտատպուած «Ժամանակ»էն):

40- Հնչ. արխիւ. «ՍԴՅԿ Զ. Ընդհ. Պատգամաւորական Ժողովի Գլխավոր Որոշումները»:


41- Հնչ. արխիւ. «Սապահ-Գիւլեանի նամակը Վարազդատին. Սօֆիա, 28 Յունիս 1913»:

42- Serif Pasa (1865-1944).- Քրտական ծագումով օսմանեան դիւանագետ: Վարչապետ Սայիտ փաշայի որդին եւ վարչապետ Սայիտ Հալիմ փաշայի աներծագը: Եղած է Շուեթի մօտ Թուրքիոյ դեսպան: 1911-ին, Կ.Պոլսոյ մէջ, կը հրաժարի Իթքիհատէն ու կը միանայ Իթքիլաֆին: Կը հրատարակէ ընդդիմադիր «Mecheroutiet» (Սահմանադրութիւն) թերթը, զոր կը շարունակէ Փարիզի մէջ: 1913-ի ձախող պետական հարուածէն ետք կ'ապաստանի Փարիզ: Կը հիմնէ ընդդիմադիր Islahat Esasiyei Osmaniye Firkasi-ն (Օսմանեան Արմատական Կուսակցութիւն): 1914 Յունուարին, Փարիզի մէջ, Իթքիհատին կողմէ իր հանդէպ կազմակերպուած ոճրափորձ մը կը ձախողի: 1915 Սեպտեմբերին, «Journal de Geneve»-ի մէջ խստօրէն կը դատապարտէ Իթքիհատի ղեկավարութիւնը, «հայերը բնաջնջելու» ոճիրին համար: 1918-ին կը հիմնէ քրտական Khoybur կազմակերպութիւնը: 1919-ին Պողոս Նուպար փաշայի հետ համաձայնագիր կը կնքէ անկախ Հայաստանի եւ անկախ Քիւրտիստանի գաղափարները, դիւանագիտական շրջանակներու մօտ, երկուստեք միաժամանակ պաշտպանելու շուրջ:

43- Հնչ. արխիւ. «ՍԴՅԿ Է. Ընդհ. Պատգամաւորական Ժողովի Որոշումները. Քեօստէնջէ, 1913 Սեպտ. 7»:

44- Նոյն: «Ընդհանուր եւ Մասնակի Բարենորոգումներ - Ինքնավար Հայաստան» վերնագրիին տակ, Է. Համագումարը կ'որոշէ. «Ի նկատի առնե-

▶▶▶



Նորայայտ Նամակ Փարամազին(1)՝ Սապահ-Գիլեանին

լով որ թիրք կառավարութեան, ինչպէս եւ իթթիհատական կուսակցութեան համապետական ընդհանուր եւ մասնակի բարեփոխող գաղափարները լոկ դիւանագիտական հնարիմացութիւններ են ժամանակ շահելու եւ ներքին ըմբոստացումները անդամալուծելու: Պատմականապէս ճշդուած լինելով, որ թուրքիոյ Ղեկավարիչ Դասակարգը միշտ այդպիսի խաղերի մէջ է մտել, երբ բաղակացուցիչ ազգութիւններից որեւէ մէկի հսնօրը սպառնական հանգամանք է ստացել: Տեսնելով եւրոպական կապիտալիստական պետութիւնների հակամարտութիւնները եւ նրանց շահադիտական ընթացքը Արեւելեան Կարգի մէջ: Հիմունք ընդունելով Ազգերի ինքնորոշման իրաւունքը եւ թուրքիայի մարմնի մէջ ապրող ազգերի օտարասեռութիւնը՝ կուլտուրական տարբեր աստիճանաւորումներով: Որոշում է: Պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը, որպէս միակ միջոցը Հայաստանի մէջ ապրող թէ՛ հայ եւ թէ՛ միւս տարրերի հաշտ, խաղաղ, անվրդով գարգացմանը եւ յառաջադիմութեանը: Համոզուած լինելով, որ դա այն անհրաժեշտ պայմանն է որով Հայ ազգը կարող է իր ազգային անհատական գոյութիւնը ապահովել՝ ներքին եւ արտաքին ոտնձգութիւնների դէմ: Եւ որովհետեւ թիրք տիրող ազգի եւ նրա դեկավարիչ դասակարգերի պատմական անընդունակութիւնը եւ չուզողականութիւնը այլեւս անվիճելի է, ինչպէս եւ որոշ է նաեւ արտաքին ոյժերի յարաբերութիւնները ոի քաղաքական ձգտումները - պաշտպանել ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿՕՆՏՐՈՂՈՎ:

45- Բ. Վարագդատ (Յակոբ Թիրապեան). Արեւմտահայ ինչակեան գործիչ: ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան անդամ՝ 6-րդ եւ 7-րդ համագումարներով: 1913-1915 խմբագրած «Հնչակ»ը. աշխատակցած մամուլի այլ օրկաններու: Համաշխարհային Ա. պատերազմին, յարաբերութիւններ պահած եւրոպայի դիւանագիտական եւ մամուլի շրջանակներուն հետ: Ապա, կուսակցական գործունէութիւն ունցած ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի մէջ: Որպէս տպարանատէր, հրատարակած է Հայ Դատի եւ Ցեղասպանութեան հարցերուն նուիրուած գիրքեր:

46- Տոքթ. Պեննէ (Պետրոս Թորոսեան). 1887, Խարբերդի Հիւսէյնիկ գիւղ-1915 Յունիս 15, կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: Նախակրթութիւնը ստացած եփրատ գիւլէնի մէջ: Բարձրագոյն ուսումը՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, ուր անոր ջանքերով հիմնադրուած Հնչակեան Ուսանողական Միութիւն: Մեկնած ԱՄՆ եւ Գամատա, ուր տարած կուսակցական գործունէութիւն: Ազգային ժողովի երեսփոխան՝ Խարբերդէն:

47- Համագումարի նիստերուն ատենադպիր, Կոստանցայի պատգամաւոր:

48- Ս[եբաստացի] Վահագն (Գրիգոր Նալպանտեան). 1872, Սեբաստիա-1953, Երեւան. Կ.Պոլսոյ մէջ կը մասնակցի Գում Գաբուի (1890), Պապ Ալիի (1895) ցոյցերուն, ահաբեկչական ակտերու, Պանք Օթթոմանի գրաւման (1896) ուր ծանրօրէն կը վիրաւորուի: 1903-ին, Սեւ ծովու հայաշատ քաղաքներուն մէջ կը կազմակերպէ հայ եկեղեցապատկան գոյքերու գրաւման դէմ ժողովրդային բողոքի ելոյթները: 1905-ին կը մասնակցի հայ-թաթարական բախումներուն եւ իր խումբով կը պաշտպանէ Էջմիածնի վանքը: Սահմանադրութենէն ետք, Սեբաստիոյ եւ Տիգրանակերտի մէջ կը ծաւալէ հասարակական աշխուժ գործունէութիւն: Կոստանցայի համագումարէն ետք կը վերադառնայ Կ.Պոլիս, ապա Վան՝ զինման նպատակով: Իշխանութեան կողմէ կը փնտռուի եւ կը ստիպուի քալելով կտրել Պարսկաստանի ճամբան: 1915-1917, Անդրկովկասի ռազմաճակատին վրայ կը մասնակցի Վանի, Պիթիսի, Երզնկայի, Երզրունի կռիւներուն: 1918-ին կը մասնակցի Ստեփան Շահումեանի գլխաւորած Պաքուի պաշտպանութեան: 1919-ին Կ.Պոլսոյ մէջ կը մասնակցի Մեծ Եղեռնի օրերուն մատնութիւն կատարածները պատժելու գործին: 1920-ին կը գլխաւորէ ԱՄՆ-էն Կիլիկիա մեկնող ինչակեան կամաւորական գումղերը: 1921-1938, Սփիւռքի տարբեր գաղութներուն մէջ կը ծաւալէ ազգային-կուսակցական աշխուժ գործունէութիւն, ընդ որում, 1929 Ապրիլին, անոր ջանքերով, Պէյրութի մէջ կը գումարուի ՍԴՀԿ Լիբանանի շրջանի Ա. պատգամաւորական ժողովը: 1934-ին, որպէս պատգամաւոր կը մասնակցի ՍԴՀԿ Մարտի 9-րդ Համագումարին: 1947-ին կը ներգաղթէ Հայաստան:

49- «Զանգ», 1934 Փետրուար 17. [Բ. Վարագդատ], «Պատմական Անցքեր - Ինչո՞ւ Կախուեցան Քսան Հնչակեանները»:

50- Ռուբէն Կարապետեան (Յակոբ Պոյաճեան). Չմշկածագ, 1874-1915 Յունիս 15, կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: 1895-ին ԱՄՆ-էն Զէյթուն մեկնող կամաւորներու խումբով կը հասնի Լոնտոն: Կեդր. Վարչութիւնը յարմար կը գտնէ, որ ան մնայ եւ օգտակար դառնայ «Հնչակ»ի տպագրութեան: 1900-1908, կուսակցական յանձնարարութիւններ կատարած Պուլկարիա, Օտեսա, Եգիպտոս: Կ.Պոլսոյ Ազգային ժողովի երեսփոխան՝ Չմշկածագէն:

51- «Հնչակ», 1914 Մայիս. «Քաղաքացիներ ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Է. Ընդի. Պատգամաւորական ժողովի Որոշումներէն»:

52-«Զանգ», 1934 Փետրուար 17. [Բ. Վարագդատ], «Պատմական Անցքեր - Ինչո՞ւ Կախուեցան Քսան Հնչակեանները»:

53- Հնչ. արխիւ. «Արթուր Եսսեանի նամակը ՍԴՀԿ Գահիրէի վարչութեան. Քոստանցիա, 1913 Սեպտեմբեր 22»: Նամակի աւարտին, Ա. Եսսեան ունի Յ.Գ. բաժին մը, որ մեր ուշադրութիւնը գրաւեց. «Զմոռնամ ըսելու ընկերներ թէ Սապահը եկածին պէս հրապարակային ժողովներ պէտք է սարքել: Դրա համար հարկ է թատրոն եւս. ուրեմն Ձեր աւագ պարտականութիւնն է թատրոնի ներկայացման գործը յաջողցնել, եթէ կուզէք որ կուսակցութիւնը բարձր մնայ եւ շինուած հսկայ ծրագիրներ ջուրը չիյնան: Ընկերը հազիւ 20-30 օր պիտի մնայ: Անկէ վերջ պիտի մեկնի ուրջ մէկ կողմ: Քաջալերեցէք ընկերներ թատերախումբը: Ամէն զնով եւ զոհողութիւնով դրամ հաշայթեցէք. ահաւասիկ հոս է որ Ձեր յեղափոխականի ժեսթը ցոյց պիտի տաք որուն արդէն եւ վստահ են»: Ի՞նչ կապ ունէր թատերական ներկայացումը Սապահ-Գիլեանի մտահոգութիւններուն հետ. ի՞նչ կապ ունէր սիրողական ուժերով կազմուած թատերախումբի մը ելոյթը «կուսակցութեան հսկայ ծրագիրներուն» եւ ընկերներու յեղափոխական նուիրուածութեան հետ. արդէ՞ օք այդ փորձ մը չէր տուեալ օրը եւ ժամուն, տուեալ վայրին մէջ Սապահ-Գիլեանի ներկայութենէն ի սկզբանէ տեղեակ ըլլալու ...

54- Հնչ. արխիւ. «Սապահ-Գիլեանի նամակը Վարագդատին. Կոստանցա, 1913 Հոկտեմբեր 15/28»:

55- ՀԱԱ, Ֆ.1456, ց.1, գ.179, ք.41-47: «Սապահ-Գիլեանի նամակը անյայտ ընկերոջ (ենթադրաբար Սիրվարդին Եղիա Գրիգորեան). Հելիոպոլիս, 1915 Ապրիլ 6/9»:

56- Յատուկ յանձնարարութիւններու գրասենեակ:
57- Ֆրանսերէն՝ յատուկ առաքելութեան յանձնակատարներ:
58- Յակոբ Ասատուրեան (Արծուրի), փաստաբան. 1890-ականներուն Փոքր Հայքի մէջ մաս կազմած ազատագրական շարժումներուն:

59- Սապահ-Գիլեան, իր «Պատասխանատուները» աշխատութեան մէջ կը նշէ, որ Գահիրէի այս փորձանքէն դուրս գալու համար թանկագին ծառայութիւն կը մատուցէ նաեւ Նեժիպ Ազուրի:

60- Շատ հաւանաբար Ազմի պէյի Փարիզ մեկնիլը կապ ունի Շերիֆ փաշայի դէմ կազմակերպուած ոճրափորձին հետ:

61- Mehmed Said Halim Pasa (1863-1921). Եգիպտոսի իշխանական ընտանիքէն: 1888-ին Surayi Devlet-ի (Պետական Խորհուրդ) անդամ: Սահմանադրութենէն ետք՝ ծերակոյտի անդամ: 1912-ին Պետական Խորհուրդի նախագահ: 1913-ին՝ Իթթիհատի ընդի. նախագահ եւ արտգործ նախարար (հրաժարած 1917-ին): 1919-ին, Դաշնակիցներուն կողմէ արքայադատ Մալթա: Հայ վրիժառուներու կողմէ զգեստուած Հռոմի մէջ:

62- ՀԱԱ. Ֆ.1456, ց.1, գ.178, ք. 2. «ՍԴՀԿ Գահիրէի վարչութեան յայտարարութիւնը Արշալիր Սահակեանը թրքական լրտես ըլլալուն մասին, անոր լուսանկարով եւ կեղծանուններուն նշումով»:


63- Lord Kitchener - Սուտանը նուաճած անգլիացի հրամանատար. 1911-1914 Եգիպտոս-Սուտանի զինուորական կառավարիչ:

64- Արաբերէն՝ կրօնական բարձրագոյն հրովարտակ:

65- Ռուսերէն՝ զեղծարար:

66- Սապահ-Գիլեան քաջածանօթ էր Եգիպտոսի քաղաքական նորագոյն պատմութեան: Ան այս մասին լուրջ ուսումնասիրութիւն մը հրատարակած էր «Նոր Դար»ի մէջ (1896 Ապրիլ 4, 6, 10, 11. «Եգիպտոս»), ուր բացատրած «խտիկ» պաշտօնին յառաջացման պարագաները (ներառեալ այդ պաշտօնին փոխանցման ժառանգական եղանակը), հստիվ-Սուլթան յարաբերութեան օրինական ձեւը, Եգիպտոսի բնակչութեան բաղկացուցիչ խաւերը՝ ֆելլախներ, օսմ. բանակի չէրքէզներ, մեմլուքներու մնացորդացներ եւ այլն, Եգիպտոսի տնտեսական վերիվայրումները, Ֆրանսայի եւ Անգլիոյ ռազմատնտեսական շահերը եւ այլն: Ուսումնասիրութեան սկիզբը Սապահ-Գիլեան կը գրէ. «Եգիպտոսի ժամանակակից պատմութեան գլխաւոր գօթերի հետ ծանօթանալու աւելի կարեւոր է մեզ համար, -որովհետեւ այդ երկրում եւս գործող ոյժերը (facteur) (նկատի ունի Օսմ. Կայսրութիւնը, Անգլիան, Ֆրանսան- Ե. Ե.) աւելի կամ պակաս շրջուն դիրքով նոյնն են եղած ինչ որ Հայաստանում»: Ժամանակը այնպէս կը բերէ, որ Սապահ-Գիլեան ի՞նչ ըլլայ իր տուած խորհուրդէն ամենէն շատ օգտուողը:

67- Լատիներէն՝ ճակատ. փոխաբերաբար՝ կողմնորոշում:
68- Թրքերէն՝ անհոգ:
69- Մէքքայի Շերիֆը, պաշտօնապէս Հիճազ նահանգի (ներկայիս Սեւտական Արաբիա) նահանգապետ էմիր Յունէյն իպն Ալին էր. Սուլթանմէտի շառաւիղէն, արաբ ցեղախումբերուն մօտ մեծ հեղինակութիւն վայելող, որ կը գլխաւորէր արաբական ապստամբական շարժումները եւ այդ կապակցութեամբ յարաբերութեան մէջ էր անգլիացիներուն հետ: Մեծ Եղեռնի օրերուն, Շերիֆ Յունէյն երկու ուղերձներով հայ ժողովուրդը ահլ ալ զըմմէ (իսլամներու ...



Նորայայտ Նամակ Փարամագին(1)՝ Սապահ-Գիլեանին

կողմն հոգածության արժանի ժողովուրդ) կը հռչակէ: Ան անձնապէս ալ, բազմաթիւ առիթներով, իր բարիացակամութիւնը ցոյց կու տայ հայ գաղթականներուն հանդէպ: Մէքքայի Շէրիֆի աւագ որդին՝ Շէրիֆ Ֆայսալ, կարճ ժամանակ մը անց կը գլխաւորէ արաբական ապստամբ երեք բանակներէն մէկը եւ յառաջանալով դէպի հիւսիս 1918-ին կը մտնէ Ղազախստան: Պատերազմէն ետք կը հռչակուի Սուրիոյ եւ Իրաքի թագաւոր: 1914 Մարտ-Ապրիլին կ'ընտրուի յետահամանադրական Օսմ. Կայսրութեան Գ. երեսփոխանական ժողովի անդամ եւ Կ.Պոլիս կ'երթար ներկա ըլլալու ժողովի բացման նիստին՝ Մայիս 1/14-ին: Շէրիֆ Ֆայսալի հետ օսմանեան ընդդիմադիրներու նախաձեռնած այս յարաբերութիւնները նկատի առնելով, Hasan Kayali կը գրէ. «Եւրոպա հաստատուած իթթիլաֆականները եւս իրենց համախոհութիւնը կը յայտնեն Շէրիֆ Զուէլէնին» («Arabs and Young Turks - Ottomanism, Arabism, and Islamism in the Ottoman Empire, 1908-1918», London, 1997, p. 198):

70- Խտիվ Ապպաս Զիւմի II փաշան ունէր ազգայնական հակում եւ հաշտ չէր անգլիական գերիշխանութեան հետ. այս դիտանկիւնէն ան աւելի օսմանամետ էր: Երբ արաբ ազատագրական շարժման ղեկը կը կեդրոնանայ անգլիամետ եւ հակա-օսմանական Մէքքէյի Շէրիֆին ձեռքը, անոր մօտ յառաջ կու գան քաղաքական տատանումներ: Սապահ-Գիլեանի ակնարկը կը վերաբերի այս շրջանին: Ի վերջոյ խտիվը կը դիրքորոշուի ի նպաստ Օսմ. Կայսրութեան: Կը հաստատուի Կ.Պոլիս, ուր 1914 Յուլիսին կ'ենթարկուի ձախող ահաբեկչութեան: Երբ Օսմ. Կայսր.ը պաշտօնապէս կը միանայ Գերմանիա-Աւստրո-Յունգարիա դաշինքին, Անգլիա, 1914 Դեկտեմբերին, կը ջնջէ խտիվի պաշտօնը եւ Եգիպտոսի սուլթան կը հռչակէ Զուէլէն Քամիլը: Ապպաս Զիւմի 1915 Յունուար-Փետրուարին կը գլխաւորէ օսմ. բանակին յարձակումը Սուէզի ջրանցքի անգլիական դիրքերուն վրայ, որ կ'աւարտուի օսմ. բանակին պարտութեամբ: Սա նաեւ խրախուսիչ ազդեցութիւն կ'ունենայ արաբ ապստամբ ուժերուն վրայ:

71- Յետագային, 1915 Յունտեմբեր 14-ին, Եգիպտոսի մէջ ծառայած թուրք սպայ Ռիֆաթ Էֆէնտի, Զայկական Յեղասպանութեան իրականութիւնն ու պատճառները քօղարկելու նպատակով, տանեմարքական «Extrabladet» թերթին տուած հարցազրոյցին մէջ, «որ ամբողջ գերման մամուլին կողմէ կ'արտատպուի», կը խօսի թուրքոյ գոյութեան սպառնացող եւ «բովանդակ հայութիւնը իր մէջ ներփակող դաւադրութեան» մը մասին, որուն նպատակն էր Կ.Պոլիսը յանձնել Դաշնակիցներուն: Անոր համաձայն, «Թուրքոյ պատմութեան մէջ մեծագոյնը նկատուող» այս դաւադրութեան մասնակիցները, որոնց մէջ Արաբիոյ ապստամբապետ Ապտուլ Քատիբ, կը ձերբակալուի եւ անոնցմէ 21 հոգի կախաղան կը հանուի Կ.Պոլսոյ մէջ. շուրջ 100 հոգի ալ կը դատապարտուի տաճանակիր աշխատանքի (Johannes Lepsius, «Rapport Secret sur Les Massacres D'Armenie», Beirut, Hamaskaine, 1968, p. 203-204):

72- «Յայրենիքի Բարենորոգութիւն Կուսակցութեան Պարսիքի Ընդհանուր Կեդրոն»-ին կողմէ հրապարակուած թռուցիկը կը տպուի Սապահ-Գիլեանի կողմէ Պուրէշի մէջ խմբագրուած «Ինքնավար Զայաստան» եռօրեային մէջ (1916 Ապրիլ 24, Մայիս 1, 8, 15 եւ 22. «Արաբական Մի Վաւերաթուղթ»): Թռուցիկը, իսլամական սկզբունքներէ մեկնած, իթթիհատի ղեկավարութիւնը կը մեղադրէր ամեն տեսակի ապօրինութիւններուն եւ խայտառակութիւններուն մէջ: Սապահ-Գիլեանի համաձայն, թռուցիկը, 1914 Մարտին, «մեր դիտողութեան վրայ» թուրքերէնի վերածուեց եւ բուն Անատոլիի (Գօմիա, Պրուսա, Եւայլն) շրջանի թուրք ժողովուրդի մէջը տարածուեց՝ ահագին թուով, մամաւանդ գինուորականների»:

73- Օսմանեան ընդդիմադիրներուն կապը արաբ ապստամբներուն հետ, ինչպէս նաեւ անոնց յարաբերութիւնները Լօրտ Քիլըների եւ Յունաստանի վարչապետ Վենիզելոսի հետ կը լրտեսուի Շէրիֆ փաշայի Փարիզի գործակիցներէն Միդիատի կողմէ, որ թրքական գաղտնի ոստիկանութեան կը տեղեկացնէ 1913 Յուլիս-1914 Յուլիս Սատըք պէյի եւ Շէրիֆ փաշայի միջեւ փոխանակուած նամակներուն պարունակութիւնը, ուր կը պարզուի, որ «այս դաւադրական գործին մէջ մտած էր նաեւ տեղակալ Սատըքի միջոցաւ Զնչական Սապահ Գիլեանը Եգիպտոսէն» (Johannes Lepsius - p. 206):

74- Ronald Storrs, Եգիպտոսի անգլիական գաղտնի սպասարկութեան Արեւելեան Գրասենեակի քարտուղար, Արաբական Գրասենեակի պատասխանատու, որ աշխատանքները կը համադրէր արաբ ապստամբներուն հետ:

75- Յունական դիցաբանութեան չաստուածներէն Sisyphus, ստախօսութեան պատճառով, կը դատապարտուի մեծ եւ ծանր գունդ մը գլորելով հասցնել բլուրին գագաթը. ամեն անգամ, երբ ան կը մօտենայ գագաթին, գունդը ետ կը գլտորի մինչեւ ստորոտ. այս աշխատանքը ան կը կատարէ յաւիտեանս: Զայկական Զարցի հետապնդումը «սիզիֆեան աշխատանք»-ին նմանցնելով, Սապահ-Գիլեան նկատուի ունի Զայաբնակ նահանգներու բարեկարգման ծրագիրը, որմէ ետք, Զայկական Զարցի հետապնդումը պիտի վերադառնար իր ելակետին:

76- Զայաբնակ Նահանգներու Բարեկարգութեան Ծրագիրին համաձայն, հայկական 6 նահանգները կը բաժնուին վարչական երկու տարածքներու:

77- ՍԳԳԿ Կեդր. Վարչութիւնը բաղկացած էր երեք անդամներէ՝ Սապահ-Գիլեան, Փարամագ, Բ. Վարազդատ:

78- Կիլիկիոյ հայութիւնը զինելու ծրագիրը. (տես նաեւ թիւ 83 ծանօթագրութիւնը):

79- Նկատի ունի թուրք, արաբ, քիւրտ, ալպան ընդդիմադիր ուժերը:

80- Խօսքը դարձեալ կը վերաբերի հայաբնակ նահանգներու բարեկարգման ծրագիրին:

81- Մեծն Սուրատ (Զամբարձում Պոյաճեան). 1860, Զաճըն-1915 Յուլիս, Կախաղան հանուած Կեսարիոյ մէջ: 1885-ին, մինչ ան կ'ուսանէր Կ. Պոլսոյ բժշկական համալսարանին մէջ, խումբ մը ընկերներով կը իմանէ Զայ Յեղափոխական Ընկերութիւնը: 1890-ին Սուրատ եւ Ընկերութեան անդամները, լրիւ կազմով կը միանան Զնչական Կուսակցութեան: Նոյն թուին կը գլխաւորէ Գուն Գաբուլի յայտնի ցոյցը: Փախստական կ'անցնի արտասահման՝ ժընեւ, Աթենք: 1892-ին, կը վերադառնայ Սասուն: Քալէվով կը կտրէ ռուս-թրքական սահմանը եւ Թիֆլիս հասնելով կ'աշխատի զէնք հասցնել Սասուն: 1893-1894՝ կը գլխաւորէ Սասունի Ա. ապստամբութիւնը: Կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Թիֆլիսի Լիպիա (Լիպիա) Ֆիզան քաղաքի բերդարգելարանը: 1905-ին, տակաւին քսորական, ՍԳԳԿ Զ. Զամագումարին կողմէ կ'ընտրուի Կեդր. Վարչութեան անդամ: 1906-ին, առասպելական փախուստով մը կը հասնի Փարիզ, ու կը միանայ Կեդրոնի գործընկերներուն: Նոյն տարին կոչով մը կը դիմէ հայ յեղափոխական կուսակցութիւններուն՝ գումարելու խորհրդաժողով, միասնական գործունեութիւն մը ստեղծելու համար: 1907-ին կ'այցելէ Եգիպտոսի, Գանատայի եւ ԱՄՆ-ի հայաշատ քաղաքները, ամենուր արժանանալով ժողովուրդին ջերմ ընդունելութեան: 1908-12՝ օսմ. խորհրդարանի երեսփոխան՝ Կիլիկիոյ (Գօզան) շրջանէն: 1908-15՝ ազգային ժողովի երեսփոխան: 1914-ին, պատրիարքի հովանաւորութեան տակ կազմուած Զայաբնակ նահանգներու բարեկարգութեան յանձնաժողովի անդամ: 1915-ին հայ մտաւորականներու հետ կ'աքսորուի Այաշ: Աքսորականներէն կը մեկուսացուի ու կը տարուի Կեսարիոյ բանտը, ուր կ'ենթարկուի անասելի չարչարանքներու:

82- Արամ (Գրիգոր) Աչըզպաշեան. 1867, Արաբկիր-1915 Յունիս 15, Կախաղան հանուած Կ.Պոլսոյ մէջ: 1886-ին՝ ուսանող Կ. Պոլսոյ իրաւաբանական կաճառին. կը միանայ Յեղափոխական Ընկերութեան: 1890-ին Գուն Գաբուլի ցոյցի կազմակերպիչներէն: 1893-էն Փոքր Զայքի ֆետայական խումբերու կազմակերպիչ եւ համադրող: 1895-ին կը ղեկավարէ Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը: Մինչեւ 1905 կը գլխաւորէ դէպի Փոքր Զայք զէնքի փոխադրութեան ախտանքները: 1903-ի Դ. (Լոնտոն) եւ 1905-ի Ե. (Փարիզ) համագումարներուն Կեդր. Վարչութեան անդամ: 1905-ին կը տեղափոխուի Փարիզ: Սահմանադրութեանէն ետք, մերթ Փարիզ, եւ մերթ Կ.Պոլիս՝ ուր նաեւ ազգային ժողովի երեսփոխան: 1914-ին կը ձերբակալուի, որովհետեւ անոր կը վերագրուի Ա. Եասեանի ղէն ոճրափորձ մը:

83- Խորքին մէջ, հայ ժողովուրդի ճակատագրական մէկ պահուն, Զամագումարին կայացուցած «իլլեգալութեան» որոշումը խիստ պատասխանատու էր: Եւ ինչպէս նման պարագաներու, այդպէս ալ այս պարագային, բնական է որ հրապարակ գային տարբեր տեսակետներ: Միայն Սուրատը եւ Ա. Աչըզպաշեանը չէին, որ մտահոգութիւն ունէին առնուած որոշումին հանդէպ. անոնց նման, ազատագրական պայքարի «բանտ ու քսորանքի» ճամբայէն անցած, Յարութիւն ճանկիլեան, Յակոբ Արժրունի (Աւետիսեան), Սաքօ (Աղամիրգեան) եւ ուրիշներ եւս խանդավառ չէին անորմով: Մեր կարծիքով, Սապահ-Գիլեան խիստ չափազանցած եւ անիրաւ գտնուած է իր ընկերներուն այդ պիտակաւորումները տալուն մէջ:


84- Զնչ. արխիւ. «Սապահ-Գիլեանի նամակը Փարամագին. Զէլիօպոլիս, 1914 Մարտ 3»:

85- Զայաստանի Պատմութեան Թանգարան. Որ պատմութեան ֆոնդ-բաժնի մատենա 1369/17. «Արմենակ Կարապետեանի նամակը Զարեհ Գոչեանին. Աղէքսանդրիա, 1914 Մարտ 28». (Ա. Կարապետեան եւ Զ. Գոչեան՝ հնչակեան երկու երիտասարդներ, որոնք առնչուած են Միհրան Տամատեանի գլխաւորած յունական Փիլեաս նաւահանգիստէն Ալէքսանտրէք զէնքի փոխադրութեան աշխատանքին. անոնք նամակցած են իրար եւ Մ. Տամատեանին հետ: Սապահ-Գիլեանի ակնարկած «Կիլիկիան Գործ»ը կը վերաբերի այս փորձին, որ ապա կ'ունենայ այլ հանգրուաններ):

86- Զնչ. արխիւ. «Արձանագրութեան տեսոր ՍԳԳԿ Գաւիթի Վարչութեան նիստերուն. նիստ Գ., Ապրիլ 19/2 Մայիս», էջ 12:

87- Ս. Սապահ-Գիլեան, «Արմենակ եւ Արաբիա», Շիքակօ, ՍԳԳԿ ԱՄՆ-ի Գործ. Յանձն., 1917, էջ 21:

Զայկագեան Զայագիտական Զանդէս 2022 - 24/1




**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԲԱՐԵԲԱՍՏԻԿ,
ԱՌԻԹՈՎ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ ԽԱՂԱՂ,
ԲԱՐԵԲԵՐ ԵՒ ԵՐՁԱՆԻԿ ՕՐԵՐ**

**ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ
ՄԱՐԱԼ, ԿԱՐԻՆԷ, ՍԱՐԻՆ**

**Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐԵՆՑ ՀՕՐ
ԳԷՈՐԳ (ՃՈՐՃ) ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ**



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ
ԱՌԻԹՆԵՐՈՎ ՄԵՐ
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐՆ
ՈՒ**

**ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՄԵՐ ԲՈԼՈՐ
ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ
ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ**

**ՏՕՔԹ. ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Central Diagnostic Imaging**

ՄԱՍԻՍ

Բ ՄԱՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

42րդ. ՏԱՐԻ ԹԻ 50 (2100)ՇԱԲԱԹ,ՅՈՒՆՈՒԱՐ 7, 2023
VOLUME 42, NO. 50 (2100) SATURDAY, JANUARY 7, 2023



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



Happy New Year 2023

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւն



Հնչակեան Ծրագիրին Մէջ Տեղ Գտած Հայաստանի Անկախութեան Գաղափարին Ընկալումը Օսմանեան Դատարաններուն Կողմէ ԱԼԵՔՍ ԲԵՕՇԿԵՐԵԱՆ

19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկզբին, Հնչակեան գործիչները, որպէս հայ ազգային ազատագրական շարժման նուիրեալներ, յաճախ յայտնուած են օսմանյան դատարաններուն առջեւ եւ իրենց կատարած թէ չի կատարած «յանցագործութիւններուն» շարքին, որպէս ծանր յանցագործութիւն, առերեսուած են Հնչակեան Կուսակցութեան ծրագիրին մէջ տեղ գտած Անկախ Հայաստանի գաղափարին հետ:

Այդպիսի դատավարութիւններ, տարբեր տարիներուն եղած են Սեբաստիոյ, Անգարայի, Եոզղատի, Երզնկայի, Հալէպի, Վանի, Տրապիզոնի, Կ.Պոլսոյ, Ատանայի եւ այլ դատարաններու մէջ: Մենք այսօր պիտի կեդրոնանանք 1893-ի Անգարայի եւ 1915-ի Կ. Պոլսոյ դատավարութիւններուն վրայ, պարզապէս այն պատճառով, որ այս դատավարութիւններուն նիւթերը, հրապարակուած նոյնինքն թրքական աղբիւրներու կողմէ, հասանելի են մեզի: Դժբախտաբար, միւս դատավարութիւններու նիւթերը, առ նուազն ընդունելի ծաւալով մը, տակաւին հասանելի չեն: Անոնցմէ կան հատուկէստ յօդուածներ, յուշագրութիւններ, եւ այլն: Օրինակի համար, Փարամագի եւ իր ընկերներուն 1898 Յուլիսի Վանի դատավարութենէն մեզի հասած է միայն Փարամագի պաշտպանական ճառը, բայց դատարանին կողմէ անոր ներկայացուած ամբաստանագիրէն տեղեակ չենք: Ինչո՞ւ համար Փարամագ իր հանրայայտ ճառը եզրափակած է այսպէս. «Մենք յեղափոխականներս մարդկային ամենայն իրաւունքով պահանջում ենք՝ Հայաստանի ազգաբնակչութեան բաժանումը օսմանյան պետութիւնից: Սրանով մենք չենք ուզում ստանալ հայկական պետութիւն կամ թագաւորութիւն, ինչպէս այդ քարոզում ու տարածում են սապատաւոր ուղեղները, իրանց գոյութեան ոչնչանալու վրայ դողացողները: Մենք չենք առաջնորդում ազգայնական գայրոյթով: Մենք պահանջում ենք Հայաստանը իր մէջ ապրող ամբողջ ազգաբնակչութեան համար»:

1892 Դեկտեմբեր 25-ի գիշերը, Փոքր Հայքի աւելի քան 80 քաղաքներու, աւաններու եւ գիւղերու կառավարական շէնքերուն, կարեւոր կառուցանքներուն եւ մզկիթներու պատերուն վրայ կը փակցուին իսլամ բնակչութեան ուղղուած, թրքերէն լեզուով տպագիր, հակահամիտեան երկու կոչեր: Դէպքը պատմութեան մէջ յայտնի կը դառնայ «եաֆթաներու (թրք.՝ կոչ) դէպքը» անունով: Առաջին կոչը բացայայտ դիմում մըն էր օսմանցիներուն, գահէն վար առնելու սուլթան Ապտուլ Համիտը: Երկրորդ կոչը աշխարհական էր եւ կը կրէր «Հնդկական Մեծ Դարմանն Աշխարհիս Ամենալաւ Բժշկութիւնն է» վերնագիրը:


Հանրութեան վրայ կոչերուն ունենալիք ազդեցութենէն աւելի, սուլթան Համիտին կը մտահոգէ գանոնք տարածողները:

Միեւնոյն կոչերը փակցուած էին իրարմէ տասնեակ քիլօմէթրերու հեռաւարութեան վրայ գտնուող շրջաններու մէջ եւ այդ գործը կատարողներէն ոչ ոք ձերբակալուած կամ նկատուած էր: Լրտեսներով ողողուած ընդարձակ տարածքի մը վրայ նման գործ մը, իսկապէս մեծ համարձակութիւն կը պահանջէր: Յստակ կ'երեւէր, որ այդ նախաձեռնութիւնն է համարձակ, գաղտնապահ եւ գործող ցանց ունեցող կազմակերպութեան մը:

Առանց հետաքննութեան, առանց որեւէ ապացոյցի, կասկածները անմիջապէս կ'ուղղուին դէպի Հնչակեան Կուսակցութիւնը: Կը սկսի վայրագ եւ ջղագրգիռ ձերբակալութիւններու անվերջանալի շղթայ մը (1), որ կ'ընդգրկէ Փոքր Հայքի ամբողջ շրջանը՝ Մարզուանէն-Հաճիգիւղ, Չոռումէն-Չիմարա, Եօզղատէն-Նարվէտ, Սեբաստիայէն-Տեվրիկ, Երզնկայէն-Լիճք (2):

Ձերբակալութիւններու առաջին օրերին, կայանատուներ կը տարուին շուրջ 500 հոգի, որուն մեծ մասը ազատագրական շարժման հետ կապ չունեցող, անմեղ մարդիկ: Միջազգային լրատուական միջոցներուն համաձայն, 1893 Մարտ-Ապրիլի դրութեամբ, Օսմանեան Կայսրութեան հայ քաղաքական բանտարկեալներուն թիւը կը հասնի 1800 հոգիի (3). սաոնց մէջ, «եաֆթաներու» հարցով Անգարայի եւ Սվազի նահանգներուն մէջ ձերբակալուածներուն թիւը, Տրապիզոնի անգլիական հիւպատոսին գնահատմամբ, կը կազմէ 1300 հոգի (4):

Ձերբակալուածները առաջին հերթին կը հարցաքննուին իրենց գտնուած վայրերու ոստիկանատուներուն մէջ, որոնք տեղի կ'ունենան դաժան տանջաքննութիւններու տակ՝ խոստովանութիւններ կորզելու համար (5): Ծուրջ 200 հոգի կը մէկտեղուի Կեսարիոյ բանտը, որոնք ձմրան խիստ ցուրտին, անմխիթար վիճակի մէջ, առանց տաք հագուստի եւ բաւարար



անունդի, 7 կառքերու մէջ թիմուած, խիստ հսկողութեան տակ, մէկ շաբթուան ճանապարհորդութենէ ետք կը տարուին Անգարայի (էնկիւրի) դատարանը՝ արդէն կիսամեռ վիճակի մէջ (6):

Դատավարութեան 10 նիստերը տեղի կ'ունենան 1893 Մայիս-Յունիսին: Այդ ընթացքին ձերբակալութիւններն ու հարցաքննութիւնները կը շարունակուին եւ հինգ ամսուան շարժարաններէն ետք, կալանաւորներուն մեծ մասը ազատ կ'արձակուի (7): Առ նուազն մէկ հոգի՝ 23 ամեայ Արսէն Տէօբմէճեան կը մահանայ բանտին մէջ: Դատարանին առջեւ կը հանուի 59 հոգի (8):

Նախնական մեղադրագիրին մէջ կ'ըսուի թէ ամբաստանեալները մաս կազմած են յեղափոխական կազմակերպութեան մը, որ քանի մը տարուան մէջ ունեցած է իր մասնաճիւղային լայն ցանցը: Անոնք պահած են վիճեցատը եւ մարթին տեսակի հրացաններ, ատրճանակներ, վառօդով լեցուած ումբեր. օգտագործած են գաղտնանշաններ եւ փորագրուած կնիքներ: Իրենց մօտ պահած են «Հիմնական Կանոնագիր Հնչակեան Յեղափոխականաց» գրքոյկը, «որ կը պարունակէ խել մը անտոի ու վնասակար գրուած քերէր՝ Հայաստան կազմակերպելու խռովարարական գաղափարը հիմ բռնելով, հայ հասարակութեան մտքերուն մէջ այդ փափաքը ներշնչել, եւ հասարակութիւնը գրգռել յեղափոխութեան եւ ապստամբութեան» (9): Արտասահմանէն ստացած ու տարածած են «Հնչակ» եւ արգիլուած գրականութիւն: Որոշած են տարին երկու անգամ շրջաններէն եկած պատգամաւորներով ժողով գումարել, որուն առաջինը տեղի ունեցած է 1892 Սեպտեմբեր 1-ին, Մարզուանի մէջ: Պատգամաւորներ եկած են Մարզուանէն, Սեբաստիայէն, Թոգատէն, Ամասիայէն, Եօզղատէն, Կեսարիայէն, Չօրումէն, Սիւնկիւրլիէն, Հաճի Բէօյէն: Ծրագրած են, Հոկտեմբեր ամիսէն հրատարակել «Մարտ» թերթը: Ասոնք, պատերուն վրայ փակցուցած, եւ տարբեր վայրեր իրենց ընկերներուն ղրկած են «ազդն որ ստայօղ խօսքերով եւ ունայնաբանութիւններով գրուած՝ վեհափառ Սուլթանի սրբանուէր անձին եւ կայսերական իշխանութեան դէմ էր» (10):

Մեղադրական նախնական եզրակացութիւնը կ'ըլլայ.- «Այդ ընկերութեան անդամները որոնց նպատակն է Օսմանեան պետութեան ներքին անդրրութիւնը, խաղաղութիւնը խռովելու, բնակիչները խաբելով եւ գրկանքներու հանդիպեցնելով, հպատակները կառավարութեան դէմ գէնք վերցնելու եւ ապստամբելու հրաւիրելով, եւ այս Օսմանեան երկիրներէն մէկ մասը, կառավարութեան ձեռքէն հանել եւ Հայաստան անուանով անկախ պետութիւն մը հիմնել (11), իրենց այս կարգի նպատակին գործադրութեան չորս կարգի շատ մը ոճիրներ գործած են»: Ապա, մեղադրական եզրակացութիւնը կու տայ այդ «չորս կարգի ոճիրներուն» սահմանումները.- «Ա. կարգ.- Հայաստան մը կազմելու ունայն ցնորքն, որ բոլոր, ամէն տեսակ եղեռնագործութիւններու գլխաւոր եւ միակ սկզբնապատճառն է: Բ. կարգ.- Կայսրութեան եւ օսմանեան կառավարութեան դէմ հրատարակուած եւ փակցուած վերոյիշեալ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
DISABLED CHILDREN OF ARMENIA FUND

Հնչակեան Ծրագիրին Սեջ Տեղ Գտած Հայաստանի Անկախութեան Գաղափարին Ընկալուճը Օսմանեան Դատարաններուն Կողմէ

յայտարարութիւնք: Գ. կարգ.- ճամբան կտրելով, ասոր անոր ինչքը յափշտակել, մարդ սպաննել, եւ պետութեան երաշխաւորութեան ներքեւ գտնուող թղթատարներու վրայ յարձակիլ, դրամնին կողոպտել: Դ. կարգ.- Ապստամբութիւնը ընդարձակելու եւ տարածելու համար միջոցներ գտնելու նպատակով, յարաբերութիւններ ու խորհրդակցութիւններ հաստատուած ըլլալը» (12): Դատարանը, ըստ յանցանշանի, կ'ընթերցէ ամբաստանուածներուն անուանացանկը, ու կ'աւելցնէ «կան ոմանք [որ] մէկ քանի տեսակ մեծ ոճիրներ գործած են»:

Նախնական մեղադրագիրէն եւ ոճիրներու դասակարգումէն կարելի է եզրակացնել, որ «եաֆթաները» պատրուակ էին: Փաստօրէն, իր ամբողջութեան մէջ, հայ ազգային-ազատագրական շարժումն է որ կը դատուէր օսմանեան դատարանին առջեւ, պատմութեան մէջ արձանագրելով համիտեան բռնատիրութեան դէմ հայ ազգային-ազատագրական պայքարի ամենէն մեծ դատավարութիւնը: Փոքր Հայքը, որպէս շրջան, պարզապէս կը վճարէր ազատագրական պայքարի առաջնեկը ըլլալու գինը:

Դատարանին առջեւ մեղադրեալները կը ներկայանան մէկ առ մէկ ու անոնց կը կարդացուի իրենց գործած «ոճիրները», յենած հարցաքննութիւններուն եւ խուզարկութիւններու ժամանակ ձեռք բերուած իրեղէն ապացոյցներու վրայ (13): Բոլոր ամբաստանեալներն ալ կ'ուրանան իրենց նախնական խոստովանութիւնները, պնդելով, որ անոնք կատարուած են ծեծի եւ չարչարանքներու տակ: Իսկ Անտոն Ռշտունի, Կարօ Քէրտմէնեան, Մարտիրոս Ճիւղանեան, Քերովբէ Փափագեան եւ Յակոբ Պահլաւունի կ'ունենան համիտեան բռնապետութիւնը խարանոզ խիզախ ելոյթներ (14): Դատարանը կու տայ շատ ծանր պատիժներ: Մահուան կը դատապարտուին 17 հոգի (15). 15 տարուայ տաժանակիր աշխատանքի՝ 6 հոգի, 10 տարուայ բերդարգելութեան՝ 8 հոգի, 7 տարուան բերդարգելութեան՝ 10 հոգի, որոնց մէջ միակ կին դատապարտեալ՝ Սրբուհի Քէլլէկեան (16): Արտաքին ճնշումներու շնորհիւ մահապատիժներուն մէջ մասը կը բեկանուի: Մահապատիժները անփոփոխ կը մնան Զէլլօ ֆետայական խումբի հինգ անդամներուն հանդէպ:

Անգարայի դատավարութեան առիթով, բոլոր թերթերը, ներառեալ հայկական, սուլթանական հրամանագիրով կը պարտաւորուին «ձէրիտիէ Մէհաբիմ» («Դատական Լրագիր») պաշտօնաթերթին արտատպել դատական ամբողջ լրատուութիւնը (վերեւ կատարուած մեր մէջբերումները քաղուած են Կ. Պոլսոյ «Հայրենիք» (16) օրաթերթէն): Այս առիթով թերթերուն մէջ ազատօրէն կը շրջանառուին «Հայաստան», «Եղափոխութիւն» եւ ի մասնաւորի, մինչ այդ մահացու մեղք նկատուող, «Հայաստանի անկախութիւն» եզրերը: Աւելին. երբ Զէլլօ-ի հինգը Յուլիս 18-ի լուսաբացին կախաղան կը հանուին թախտա Ղալա հրապարակին վրայ, հայ լրագրողներ այդ պահուն ներկայ չեն ըլլար: Միայն «Մուրճ» (18) ամսագիրը, թրքական աղբիւրներէ քաղելով, լրատուութիւն կը կատարէ, նշելով, որ կախաղանին առջեւ անոնք հաւաքաբար կը գոչեն «եաշասուն էրմէնիստան» («կեցցէ Հայաստանը»):

Ինչ էր սուլթան Համիտի հետապնդած նպատակը, որ Պերլինի դաշնագիրէն ետք «Հայաստան» բառի գործածութեան դէմ այնքան բուռն պայքար մղելէ ետք, յանկարծ թոյլատու կ'ըլլար «Անկախ Հայաստան»ի ազատ շրջանառութեան: «Հնչակ» (19), «Դրօշակ» (20), «Մշակ» (21) թերթերը, կ'անդրադառնան այս աննախընթաց եւ տարօրինակ երեւոյթին: Անոնց տեսակէտները կը նոյնանան.- գրգռել իսլամ ծայրայեղականութիւնը եւ անոր միջոցով հայ ազգային ազատագրական զարթօնը խեղդել արիւնի մէջ: «Հնչակ»ին համաձայն, իշխանութեան ներկայացուցիչները, հայերու գանգուածային ձեռքարկութեան պատճառը ամբոխին կը բացատրեն, որպէս թէ հայերը թագաւորութիւն կ'ուզեն, թուրքերը ջարդելու համար. «Դրօշակ»ի համաձայն, «արդէն սրճարաններու մէջ իսկ սկսած են ըսել թիւրքերը. "խիանէթ էրմենիլար, բուլլար հէփսի քէմէլի" (անհաւատարիմ հայեր, ատոնց ամենքին ալ կոտորելու է)»: Փաստօրէն, Անկախ Հայաստանի գաղափարը, սուլթան Համիտին թելադրութեամբ, կը վերածուէր իսլամ ծայրայեղականութիւնը հալութեան դէմ գրգռելու միջոցի մը:

ՄԴ Հնչակեան Կուսակցութիւնը, իր ծրագիրին մէջ պաշտպանած Անկախ Հայաստանի գաղափարին հետ դէմ յանդիման կու կու գայ նաեւ 1915 Ապրիլին, երբ Կ. Պոլսոյ զինուորական դատարանը կը դատէ իր առջեւ ներկայացած 25 եւ ի բացակայութեան 3 հնչակեաններ:

Մինչ այդ, Հնչակեան ծրագիրը ենթարկուած էր ժամանակի

հոլովոյթին: 1909 Յուլիսին, Կ. Պոլսոյ 6-րդ Համագումարը, կուսակցութեան օրինական գործունէութիւն ապահովելու համար վաւերացուցած էր նոր ծրագիր, ուր անկախութեան գաղափար եւ յեղափոխական գործունէութիւն չկար: 1913 Կոստանցայի 7-րդ Համագումարին ՄԴՀԿ վերադարձած էր գործունէութեան իլլեկալ (անօրէն, ընդլայտակեայ) ձեւին, քաղաքական նպատակ հռչակելով ինքնավար Հայաստանը:

Դատարանին առջեւ կանգնած հնչակեանները ձեռքարկուած էին 1914 Յուլիս 17-էն սկսեալ, Կ. Պոլսոյ եւ գաւառներուն մէջ (Վան, Սարբերդ, Կեսարիա, Քիլիս, Ատաբազար, Իզմիթ եւ այլն), որովհետեւ բացայայտուած էր, որ անոնք մաս կը կազմեն Իթթիհատի իշխանութիւնը տապալել միտող դաւադրութեան մը, որուն նպատակն էր արգիլել Գերմանիոյ կողքին Օսմ. Կայսրութեան մասնակցութիւնը Ա. Աշխարհամարտին: Այս կէտին մէջ կը կայանար այդ ծրագիրը հովանաւորելու Անգլիոյ (ընդհանրապէս Դաշնակիցներուն) շահագրգռութիւնը:


Ծրագիրին գլխաւոր դերակատարն էր ընդդիմադիր Իթթիլաֆ վէ Հուրրիյէթ կուսակցութիւնը (23). անոր համամիտ էր արաբ ապստամբ ուժերու առաջնորդ Մէքքէի Շէրիֆը, Պասրայի արաբ ապստամբները, սուրիացի ընդդիմադիրները եւ ուրիշներ (24): Հնչակեանները համաձայնած էին մաս կազմել ծրագիրին, որովհետեւ անոնց մօտ հաստատ համոզում գոյացած էր, որ «երբ ամենափոքր յարմար ըրպէն ներկայանայ եւ համոզուած լինի, որ իր արարմունքը դիւրութեամբ կարող է մարսել, թուրք Ազգայնականութիւնը, որի ձեռքն է այսօր երկրի կառավարական գործը, առանց տատանուելու, որպէս պատմական անհրաժեշտութիւն, անխնայ կերպով պիտի կոտորի Հայերին» (25): «Հնչակ» նաեւ կը նախագուշակէր, որ յարմար ըրպէն կրնայ «ընդհանուր պատերազմ» մը, կամ «համաեւրոպական պատերազմ» մը ըլլալ, որ մօտալուտ կը թուէր (26):

Իթթիհատ տեղեակ կ'ըլլայ դաւադրական ծրագիրի բնոյթն եւ նպատակներէն: Իթթիլաֆի Փարզի գրասենեակի պատասխանատու Շէրիֆ փաշան լրտեսող Միդհատ, Իթթիհատին կը փոխանցէ 1913 Յուլիսին-1914 Յուլիս դաւադրական ծրագիրի գլխաւոր հեղինակներէն Սատրգի եւ Շէրիֆի միջեւ փոխանակուած նամակներուն բովանդակութիւնը, որոնցմէ կը պարզուի, որ «այս դաւադրական գործին մէջ մտած էր նաեւ տեղակալ Սատրգի միջոցաւ Հնչակեան Սապահիւլեանը Եգիպտոսէն» (27):

Հնչակեաններուն անակնկալ ձեռքարկութիւնը Կ. Պոլսոյ մէջ կը զարմացնէ բոլորին: Բացատրական առաջին լրատուութիւնը կը տրուի Կ. Պոլսին «Մշակ»ին յուլիս, Հէթում Հատեան անունով անձանօթ եւ խիստ կասկածելի յօդուածագիրի մը կողմէ, որ այդ ձեռքարկութիւնները կը կապէ Իթթիհատի իշխանութեան դէմ նախապատրաստուող դաւադրութեան մը հետ (28): Յաջորդող ամիսներուն, հարցին անդրադարձող մամուլի օրկանները եւս, Իթթիհատական «Tanin», գերմաներէն «L'Osmanischer Lloyd» (29), տանեմարքերէն «Extrabladet» (30), կը խօսին դաւադրական մեծ ծրագիրի մը մասին:


Այս բոլորը ենթադրել կու տան, որ դատարանը, իր առաջ դրուած հարցին բնութագիրը ճշդելու, այսինքն ամբաստանեալները դաւադրական ծրագիրի մը մասնակիցները դատելու հարցին մէջ դժուարութեան պէտք չէ հանդիպի:

Սակայն, դատավարութիւնը 5-րդ նիստէն (Մայիս 12) կը ստանայ այլ ընթացք, երբ ընդհանուր դատախազը կը կարդայ ամբաստանագիրը, ուր կ'ըսուի, թէ Հնչակեան Կուսակցութիւնը, ճիշդ է, որ Սահամարութեանէն ետք ունեցած է նոր ծրագիր, սակայն առաջնորդուած է իր հին, անշատողական ծրագիրով. ապա, իրեղէն ապացոյցներուն շարքին կը կարդայ ՄԴՀԿ կեդր. վարչութեան 1913 Յունուար 30-ի «Եւրոպայի Մեծ Պետութիւններուն եւ Ժողովուրդներուն» վերնագիրով կոչը, որ հիմք ընդունելով «եւրոպական ազգերու միջեւ սպառիչ ընդհարում»ի մը մեծ հաւանականութիւնը, եւ նկատելով, որ «Թուրք կառավարութիւններն իրանց յարատեւ քաղաքական սկզբունքն են դարձրել բնաջնջումը քրիստոնեայ ժողովուրդների մասնաւորապէս հայերի», կը գտնէ, թէ հայ ժողովուրդը ահեղ վտանգէն փրկելու միակ ուղին Հայաստանի ինքնավարութիւնն է (31): Դատարանը, այս կոչը կը մեկնաբանէ որպէս անկախ Հայաստան կերտելու յստակ պահանջ: Նոյն նիստին, գլխաւոր դատաւորը կը կարդայ ներքին գործոց նախարար Թալաթի դատարանին



Հնչակեան Ծրագիրին Մէջ Տեղ Գտած Հայաստանի Անկախութեան Գաղափարին Ընկալումը Օսմանեան Դատարաններուն Կողմէ

յղած ուղերձը (թէզքէրէ), ուր ան հնչակեաններու կազմակերպած դաւադրութիւնը կը կապէ վանի, Շապին Գարահիսարի եւ Ուրֆայի ինքնապաշտպանութիւններուն (անոր խօսքով՝ ապստամբութիւններուն) հետ, երբ անոնք ձերբակալուած էին նշուած դէպքերէն շուրջ 10 ամիս առաջ:



Մեղադրեալները կը բողոքեն եւ կը շեշտեն, թէ Սահմանադրութենէն ետք, իրենք առաջնորդուած են միայն կուսակցութեան նոր ծրագիրով, ուր անկախութեան գաղափար չկայ: Գլխաւոր դատաւորը արտենագրութեան մէջ կ'արձանագրէ, որ ՄԴՀԿ նոր ծրագիրը ընդունուած է ներքին գործոց նախարարութեան 1910 Յունուար 26-ի թիւ 90 հրամանագրով, սակայն, այդ որոշումը առնող Չ. Համագումարը, նախկին ծրագիրը չէզոքարկող որեւէ յայտարարութիւն չէ կատարած. «Ասկէ կը հետեւի որ ընկերակցութեանց օրէնքին յարուցած դժուարութիւնները բառնալու համար, արտաքուստ, օրինականացած Ծրագիր մը մէջտեղ հանող այդ ժողովը իր խորհմաստ լուծեամբ արտօնած է կուսակցութիւնը՝ շարունակել իր գործունէութիւնը ԸՍՏ ԱՌԱՋՆՈՅՑ» (32): Հնչակեանները կը մերժեն նաեւ Անկախ Հայաստանի մը ծրագիրին գոյութիւնը. անոնք կը բացատրեն, թէ «անկախ» եւ «ինքնավար» բառերը նոյնիմաստ չեն եւ ինքնավարութիւնը անջատականութիւն չի նշանակեր: Փարսմազ իր տարբեր ելոյթներուն մէջ կը յայտարարէ, «ինձ համար ՀԱՅԱՍՏԱՆԻ խնդիր մը գոյութիւն չունի», «այսօր ալ բռնի եղանակով Անկախ Հայաստանի մը ամբաստանութեան ներքեւ ճգմել կուզէք մեզ» (33): Դատարանը չի համոզուիր այս առարկութիւններուն եւ կը բաւարարուի, երբեմն, անկախութիւն բառին կցելով ինքնավարութիւն բառը: Դատապարտեալ հնչակեանները խստօրէն կը բողոքեն Թալաթ փաշայի սուտերով լեցուն ուղերձին ընթերցումէն, եւ այդ կը գտնեն քաղաքական իշխանութեան կողմից միջամտութիւնը դատաւարութեան ընթացքին. (Թալաթ փաշայի միտքերը այնքան անհեթեթ էին, որ այդ մասին կ'անդրադառնայ նաեւ Լոնտոնի «Times»-ը իր Հոկտեմբեր 8-ի թիւին մէջ) (34):

Դատաւարութեան 7-րդ նիստին կը կարդացուի դատավճիռը: Քրէական օրէնագիրքի 54-րդ յօդուածին համաձայն, կախաղանի միջոցով մահուան կը դատապարտուին 22 հնչակեաններ, որոնցմէ 2-ը ի բացակայութեան: Դատաւարութեան հինգ էջեր կազմող մեքենագրուած արձանագրութեան դատավճիռին մէջ, ոչ մէկ տեղ կը նշուի, որ մահապարտները մասնակից էին իշխանութիւնը տապալել միտող դաւադրութեան մը: Վեց անգամ կը նշուի, որ անոնք յանցաւոր մտադրութիւնը ունէին ստեղծելու անկախ Հայաստան, երկու անգամ կը նշուի՝ երիտասարդ Հայաստան (հաւանաբար նկատի ունի նոր Հայաստան) եւ մէկ անգամ ինքնավար Հայաստան: Կախաղանում տեղի կ'ունենայ 1915 Յունիս 15-ին Կ.Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ: Դատավճիռին սուլթանական, վարչապետական, պաշտպանութեան նախարարութեան, ռազմական դատարանի ամփոփ (մէկ էջ) հաստատագիրներուն ամփոփ (մէկ էջ) մէջ, մէկական անգամ կը նշուի

յանցանքը՝ ստեղծել անկախ Հայկական Պետութիւն (35):

Ինչո՞ւ գինուորական դատարանը հնչակեանները չէր դատեր իրենց գործած, առ նուազն մտալղացած յանցանքին համար, այլ շատ յստակ երեւցող դիտաւորութեամբ մը, անոնց կը հազցնէր մեղապարտի նոր տարագ մը, Անկախ Հայաստան կերտելու «մեղք»ը, որմէ տուեալ պահուն անոնք գերծ էին:

Սա, օրուան քաղաքական իշխանութեան, իթթիհատի եռապետութեան պահանջն էր: Հնչակեաններու դատաւարութեան օրերուն, Ապրիլ 24-ին, գործադրութեան կը դրուի հայկական ցեղասպանութեան ծրագիրը, որուն առաջին հանգրուանն էր հայ մտավորականութեան գլխատումը: Այս անմարդկային ծրագիրը նախ պատճառաբանելու եւ ապա քողարկելու համար, իթթիհատ պէտք ունէր լուրջ պատրուակներու: Հնչակեաններուն դատաւարութիւնը շատ լաւ կրնար ծառայել այդ նպատակին, եթէ միայն փոխուէր դաւադրական ծրագիրին նպատակը եւ այն վերածուէր Անկախ Հայաստանի նպատանին, որմէ, յամենայն դէպս, հնչակեանները շատ հեռու չէին: Այս վարքագիծը անշեղ կը մնայ թրքական իշխանութեան մտածողութեան մէջ եւ ցեղասպանութեան ընթացքին, առ նուազն մինչեւ 1916-ի աւարտը, հնչակեան մտաւորականներ եւ գործիչներ, տարբեր կալանավայրերու եւ դատարաններու մէջ բռնութիւններու կ'ենթարկուին, որպէսզի խոստովանին իրենց առնչութիւնը Անկախ Հայաստանի դաւադրական ծրագիրին հետ (36):

Կարելի է եզրակացնել, որ թրքական դատարանները, համիտեան եւ իթթիհատական իշխանութիւններուն օրով, Անկախ Հայաստանի անջատողական եւ արգիլեալ գաղափարը պաշտպանողներուն հանդէպ եղած են միայն իշխանութիւններուն կամակատարը, գործած են անոնց անմիջական եւ ուղղակի հրահանգներով եւ այդ պատճառով գտնուած են հակասական իրավիճակներու մէջ:

- 1- «Հնչակ», 1893 Մարտ 25. [խմբագրական], «Վերջին Մեծ Դէպքերը». Գաւե, Գաղատիացի, «Կեսարիոյ Մեծ Դէպքը – Տաճկերէն Գրգռիչ Յայտարարութիւնը – Մեծաթիւ Չերքակալութիւնը – Կառավարութիւնը եւ Հայոց Յեղափոխականը – Մեծ Արիւնահեղ Կռիւ Ի Կեսարիա – Շփոթութիւնը – Արիւնահեղ Կռիւ Մ'ալ Եօզղատ (Գաղատիա, 1893 Փետրուար 14)». Գաւե Խարազան, Մարգուանի Յուզումները – Գօլէճի Հրդեհի Բնութիւնը – Կառավարութիւնը եւ Այրած – Բանտարկելոց Կանայք – Սոցա Դիմումն Ամերիկեան Հիւպատոսին – Նշանաւոր Մատնիչի Սը Մահուան Պատիժ – Ներկայ Վիճակ (Մարգուան, 1893 Փետրուար 18):
- 2- «Հնչակ», 1893 Փետր. 25. Խարազան, «Նամակներ Թիւրքաց Հայաստանից (Մարգուան, 1892 Դեկտ. 30)». Գաւե, «Հնչակ», 1893 Մայիս 25. Հայկազն, Նամակներ Թիւրքաց Հայաստանից (Սեբաստիա, 1893 Ապրիլ 14):
- 3- «Արձագանք», 1893 2 (14). «Արձագանքի Հեռագիրներ Հիւսիսային Գործակալութեան». Գաւե, «The Boston Daily Globe», 1893 April 12. «Misrule In Armenia» (Rev. Vahan Ohanian, Ara Ketibian, «The Armeian Genocide – As Reported in the U.S. Press – The Boston Daily Globe», vol. I, Mekhitarist Publication, 2019, p. 10):
- 4- «Journal of the Ottoman and Turkish Studies Association», Vol. 4, No 2, Nov. 2017, p. 328. Toygun Altıntaş, «The Placard Affair and the Ankara Trial: The Hnchak Party and the Hamidian Regime in the Central Anatolia, 1892-93».
- 5- «Արմենիա», (1895 Հոկտ. 16-25, «Սեբաստիաի Բանտարկուած Հայերի Վիճակը») կու տայ տանջանքներուն երթարկուած [Թօփալ Նալպանտ]ի զարհուրելի նկարագրութիւնները. «Հրաշէկ երկաթեայ բեւեռներ կը դրուին մերք ընդ մերք տանջուողաց ձեռքի մատաց մէջտեղերն. եղունգներուն ներքեւ կը մխուրտ սրածայր փուշեր կամ եղէգն: Կախեալի ոտից ներքեւ գտնուած ածուխի փոշիներն կը խառնեն յաճախ քիւրով, որք փոշոյ ամպի մէջ կը կորսնցնեն կախեալը եւ անոր քիթն ու բերանը եւ աչքերը ածխափոշով կը լեցունեն...: Տանջուողի պարանոցն պլլուած պարանի մը երկու ծայրերը սղոցելու եղանակաւ կը քաշեն ոստիկանը շփման անտանելի տանջանաց մատնելով իրենց զոհը». Գաւե, [Կարօ Քերտմենեան], «Բնութեան Դէմ», Աթէնք, 1894, էջ 19-31:
- 6- «Փրոֆ. [Գնր] Թումայեան եւ Գայեան երբ Էնկիւրի կը հասնէին, շատ քիչ տեղ կար իրենց մարմնոյ վրայ որ ոստիկաններուն խարազանին տակ կապտած չըլլար: Իրենց ձեռքերուն եւ ոտքերուն շղթաները արդէն մինչեւ



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՏԻՐԱՆ ԵՒ ՄԱՐԳՐԻՏ
ՃԵՐԷՃԵԱՆ**

Հնչակեան Ծրագիրին Մէջ Տեղ Գտած Հայաստանի Անկախութեան Գաղափարին Ընկալումը Օսմանեան Դատարաններուն Կողմէ

ուկորներուն իջաց եւ վերքերը թունաւորման վտանգին տակ էին»։ (Արշակ Ալայոյաճեան, «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», Բ. հտ., էջ 1523):

7- «Հնչակ», 1893 Ապրիլ 25-ի թիւին մէջ (Խարազան, «Նամակներ Թրքաց Հայաստանից») կը գրէ. «Զարմանալի կատակերգութիւն. Թուրք կառավարութիւնը շատ մը անմեղ մարդիկ 3 ամիս սոսկալի տանջանաց մատնելէ յետոյ, այսօր ալ չը գործած մեղքերուն աֆը շահանէ (արքայական ներում – Ե. Ճ.) կընէ՛ աւելցնելով թէ գնացէք սուլթանի կենաց արեւշատութեան համար աղօթք ըրէք որ այսպէս շուտ աֆը ըրաւ: Տեսէք ի՞նչ վեհանձն եւ բարեսիրտ սուլթան ունի՞ք՝ անմեղներու ներող»:

8- «Հայրենիք», 1893 Յուլիս 19. «Էնկիւրիի Դատարանին Առջեւ»:

9- «Հայրենիք», 1893 Օգոս. 3. «Էնկիւրիի Դատարանին Առջեւ»:

10- «Հայրենիք», 1893 Յուլիս 22 եւ Օգոս. 3. «Էնկիւրիի Դատարանին Առջեւ»:

11- 1888-ին «Հնչակ»-ի մէջ եւ 1891-ին առանձին լոյս տեսած Հնչակեան Կուսակցութեան ծրագիրին մէջ, յստակօրէն եւ մէկէ աւելի անգամներ նշուած է Անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը. «Թիւրքահայերի ազգային անկախութիւնը մէկ իրական, մի պատմական անհրաժեշտ հարկաւորութիւն է նրա գոյութեան, նրա ազգային կազմութեան, նրա ազգային ու մարդկային առաջադիմութեան համար»:

12- «Հայրենիք», 1893 Յուլիս 23. «Էնկիւրիի Դատարանին Առջեւ»:

13- «Հայրենիք», 1893 5 եւ 6. «Էնկիւրիի Դատարանին Առջեւ»:

14- [Կարօ Քերտմէնեան]... էջ 43-93:

15- Անտոն Ռշտունի, Կարապետ Թումայեան, Յովհաննէս Գայեան, Դանիէլ վրդ. Բարսեղեան, Յակոբ Պահլաւունի, Կարօ Քերտմէնեան, Մարտիրոս Ճիւղանեան, Կարապետ Ալաճաճեան, Յակոբ Ճէպիտէլիքեան, Բարսեղ Տեօքմէճեան, Միսաք Քէչեճեան, Միսաք Եազըճեան, Թորոս Ծառուկեան, Կիւլպէնկ Յամալեան, Յովհաննէս Արզումանեան, Միրիջան Խանապախեան եւ Փանոս Եաղուպեան:

16- «Այս միտքը կինը բանտի մէջ շատ տանջանքներ կրելէ վերջ, հակառակ իր արծակած աղիողորմ ճիչերուն եւ լացին, ուր գազանաբարոյ ոստիկաններու կողմէ բաց տեղ մը կը տարուի եւ վատաբար կը լլկուի»։ («Հնչակ», 1893 Յուլիս 25. Նիհարը [Կարօ Քերտմէնեան], «Նամակներ Թիւրքահայից – Գաղատիոյ Բանտարկուածների Կրած Զարհուրելի Չարչարանքները»):

17- «Հայրենիք», 1893 Յուլիս 19-Սեպ. 3 թիւերուն մէջ, շուրջ 45 շարունակականով, ամենօրեայ դրութեամբ, «Էնկիւրիի Դատարանին Առջեւ» վերնագիրին տակ, կը հրատարակէ «Ճէրիտիէ Մէհաքիմ»-ի միւթերը: «Հայրենիք»-ի յօդուածաշարքէն ամփոփ հատուած մը ապագային լոյս կը տեսնէ «Պատմագիրք Կիւրիմի» (Պետրոս Մինասեան, Պէյրութ, 1974, էջ 352-363) գիրքին մէջ : Նիւթին շուրջ, թրքական աղբիւրներուն վրայ յենած, թրքական տեսակետները արտայայտող ուսումնասիրութիւն մը կը տպէ «Ermeni Arastirmalari» եռամսեան (Ankara, Kis 2003-Ilkbahar 2004, No 12-13. Taha Niyazi Karaca, «Yozgatta Ermeni Ayanlanmalari – Birici Yozgat Ayanlakmasi (1893 Ocak 6)»): Մեր կողմէ վերանշուած Toygun Altıntash-ի ուսումնասիրութիւնը հետաքրքրական է անով, որ ան հայկական եւ թրքական աղբիւրները համալրած է Foreign Office-ի արխիւային նիւթերով եւ անոնց համադրումով փորձած է մօտենալ ճշմարտութեան: Այսուհանդերձ, որոշակի կարեւորութիւն ներկայացնող այս նիւթը, հայ պատմագրութեան կողմէ համարժէք ուշադրութեան արժանացած չէ:

18- «Մուրճ», 1893 Յուլիս-Օգոս., թիւ 7-8. «Զանազան Լուրեր -Զոհեր»:

19- «Հնչակ», 1893 Ապրիլ 25. Արգոս, «Տեղեկագիր Ամասիոյ»:

20- «Դրօշակ», 1893 Նոյ. «Նամակ Պոլսից»:

21- «Մշակ», 1893 Նոյ. 25. Հ[ամբարձում] Առաքելեան, «Տասն Օր Կ.Պոլսում»:

22- Այս միտքը ցայտուն կերպով կը յայտնուի Կիլիկիոյ ֆրանսական բանակի գաղտնի սպասարկութեան պետին կողմէ, 1918 Դեկտեմբերին, իր վերադասներուն յղուած զեկուցագիրին մէջ. «Այս դաւադրութեան կազմակերպումը վստահուեցաւ Փարամազին: 1914-ին, Դաշնակից Տէրութիւնները Փարամազին ծրագիրը գտան հիանալի եւ ժամանակը յարմար նկատեցին զայն գործադրելու՝ արգելք ըլլալու համար Թուրքիոյ պատերազմի մէջ մտնելուն»:

23- ՍԴՀԿ-Իթիլաֆ գործակցութիւնը կը սկսի 1912 Փետր. 7-ին, երբ անոնց միջեւ կը կնքուի երեսփոխանական ընտրութեան համաձայնագիր:

24- «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 2022, 24/1. Եղիկ Ճէրէճեան, «Նորայայտ Նամակ Փարամազին՝ Սապահ-Գիւլեանէն»:

25- «Հնչակ», 1913 Մարտ. Ս. Սապահ-Գիւլեան, «Փաստեր եւ Իրողութիւններ»:

26- «Հնչակ», 1913 Յունուար [7]. «Եւրոպա եւ Թուրքիա»:

27- Johannes Lepsius, «Rapport Secret sur Les Massacres D'Armenie», Beirut, Hamaskaine, 1968, p. 206.

28- «Մշակ», 1914 Օգոստոս 2. Հեթում Հատեան, «Թիւրքահայ Նամակներ -Սոց-Դեմ. Հնչակեաններու Չերբակալութիւն»:

29- Johannes Lepsius...p. 204.

30- Johannes Lepsius...p. 203-204.

31- Հնչ. արխիւ. «ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան Կոչը Եւրոպայի Մեծ Պետութիւններուն եւ Ժողովուրդներուն. Փարիզ, 1913 Յունուար 30»:

32- Հնչակեան Արամեանց, «Անկախ Հայաստան», Կ.Պոլիս, 1919, էջ 23:

33- Նոյն, էջ 20 եւ 40:

34- «Մշակ», 1915 Հոկտեմբեր 17. (թարգ.) Ս., «Հայկական Զարդերը»:

35- «Arsiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri» c. IV, Ankara, T. C. Genelkurmay Baskanligi, 2006, p. 235-245.

36- Այս դաժան փորձութեան կ'ենթարկուին Մեծն Մուրատ (Կեսարիա), Անդրանիկ Կենճեան (Ատաբազար), Ասատուր Էլճանեան (Պալլըքսէր), Յակոբ Մատաղճեան (Թոմարգա) եւ ուրիշներ: Անկախ Հայաստան կերտողներու «որսը» կը հասնի ողբերգա-կատակերգական աստիճանի: 1915 Դեկտեմբեր 21-ին, Պօլուի մէջ կախաղան կը հանուին, տեղւոյն պատերազմական ատեանին կողմէ որպէս Անկախ Հայաստանի կերտիչներ եւ ապօրինի զէնք պահողներ ամբաստանուած, տվրիկցի 6 հայեր եւ մէկ յոյն: Յաջորդ օր, նոյն վայրին մէջ, կախաղան կը հանուին Ատաբազարի Էլմալու գիւղէն, «Անկախ Հայաստան կերտելու եւ վտանգաւար ընկերութեան անդամակցելու» յանցանքներով մեղադրուած, եւս 16 հայ եւ երկու յոյն, որոնց մէջ խորէն քին. Տէր Խորէնեան եւ իր քսանամեայ զաւակը՝ Տաճատ: Այս մասին իր յուշերուն մէջ վկայող հնչակեան գործիչ Վահան ժամկոչեան, որ քանի մը տարի ետք ինք եւս կախաղան կը հանուի Իզմիրի մէջ, կը գրէ. «Սա ինքնին ծիծաղելի էր. մանաւանդ անոր համար որ այդ 16-ին մէջ գտնուող 2-3 տղաքներէն զատ մէկը չկար որ հասկնար թէ ի՞նչ է Անկախ Հայաստանը եւ կամ վտանգաւոր ընկերութիւնը»։ («Երիտասարդ Հայաստան», 1921 Սեպտ. 7 եւ 9. Վահան ժամկոչեան, «Հերոսներու Կեանքէն»):



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ԼՈՒՍԻՆ
ՊՈՅԱՄԵԱՆ**

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման (1922-2022) ԱՐՄԵՆ ՔԻՐՔԵՏԱՆ

Ժամանակը կը ջնջէ մարմարիոն քարերուն խորափոր քանդակներն ու կ'անհետացնէ տարիներու եւ դարերու արձանագրութիւնները, նոյնպէս ալ՝ քաղաք մը հողին հաւասարեցնող հրդեհը:

Ձմիւռնույ աղէտալի հրդեհին առնչութեամբ գրութեանս պարունակութիւնները նոր բաներ չեն, այլ հոս ու հոն հրատարակուած տեղեկութիւնները ջանացի ամփոփ կերպով ի մի հաւաքել, սակայն եւ այնպէս յաւակնութիւնը չունիմ ըսելու, թէ ամէն ինչ կրցած եմ այս գրութեան մէջ ամփոփել:

Ա.Ք.



ՊՍՏՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ձմիւռնիա (այժմ՝ Իզմիր: քաղաքը կը գտնուի Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը՝ Եգէական ծովի ափին՝ Իզմիրի ծովածոցին դիմացը: Հիմնուած է Ք.ա. Բ. հազարամեակին, որպէս էոլացի (Aeolia: յոյներու գաղութ եւ կոչուած Սիմիրնա: Քիչ քաղաքներ կան, որոնք երկար դարերու ընթացքին իրենց անունը անփոփոխ պահած են: Հերոդոտոս (Ք.ա. 484-426: եւ Ստրաբոն (Ք.ա. 63-Ք.ե. 23: զայն կը յիշեն այս անունով: Հոմերոս ճոն ծնած է (Ք.ա. Ը. դար, կամ՝ է.: Անունուած է «Արեւելքի աստղը»:

Բնակավայրեր կառուցուած են Ք.ա. Ա. հազարամեակին ընթացքին՝ լիտիացիներու կողմէ: Անոնք եղած են առեւտրական մարդիկ եւ բացած վաճառքի խանութներ:

Լիտիացիները եղած են այն ժողովուրդը, որ հնարած է ու շրջագալութեան դրած ոսկի եւ արծաթ դրամը: Ժամանակի ընթացքին բնակութիւն կը հաստատեն հին յոյները:

Աղեքսանդր Մակեդոնացիէն յետոյ կը սկսի բիւզանդական դարաշրջանը, որ կը տեւէ մինչեւ ԺԴ. դար: Հելլենական շրջանին հիմնուած են Ձմիւռնիա, Բերգամոն եւ այլ քաղաքները: 1393-էն սկսեալ մաս կազմած է Օսմանեան կայսրութեան: Ա. Աշխարհամարտէն յետոյ, 1919-1922 թուականներուն, ենթարկուած է Յունաստանի թաղաբուծեան: Օսմանեան կայսրութեան շրջանին Կ.Պոլսէն ետք եղած է երկրին երկրորդ ամենամեծ քաղաքը: Այժմ Կ.Պոլսէն ետք Թուրքիոյ երկրորդ մեծագոյն նաւահանգիստն է եւ երրորդ մեծագոյն քաղաքը:

1260-ական թուականներէն կը սկսին հայոց Ձմիւռնիոյ մէջ ներկայութիւնը մատնանշող տուեալներ: Կայ 13 Մարտ 1261 թուակիր առեւտրական համաձայնութիւն մը Նիկիոյ (1259-1261: եւ Բիւզանդիոնի (1261-1282) կայսր Միքայէլ Թ.-ի (Michael IX Paleologus: եւ ձենովա քաղաքին հետ՝ ի նպաստ հայ վաճառականներու¹:

1375-ին, Կիլիկիոյ հայկական թագաւորութեան՝ Ռուբինեան հարստութեան անկման հետեւանքով, մօտաւորապէս 30 հազար հայ, փախչելով մամլուքներու նուաճումներէն, բնակութիւն կը հաստատեն Կիպրոս եւ Հռոտոս կղզիներուն մէջ, մաս մըն ալ կու գայ Ձմիւռնիա:

Պարսկաստանի Շահ Աբբաս Ա.-ի 1603-1604 թուականներուն կազմակերպած բռնագաղթէն յետոյ՝ 1605-ին, աւելի քան հազար հայ ընտանիքներ Երեւանէն, Ղարաբաղէն եւ Նախիջեւանէն կը գաղթեն Ձմիւռնիա: ԺԸ. դարավերջին, Աղա Մեհմետ Խանի արշաւանքէն յետոյ, Աշտարակէն, Օշականէն եւ յարակից շրջաններէն աւելի քան երեք հարիւր հայ ընտանիքներ կու գան եւ կը հաստատուին Ձմիւռնիա:

Ըստ Ֆրանսացի գոհարավաճառ եւ ճանապարհորդ Jean-Baptiste Tavernier-ի (1605- 1689:՝ 1631-ին Ձմիւռնիոյ բնակչութեան թիւը 90 հազար էր, որուն 8 հազարը՝ հայ: 1898-ի պաշտօնական վիճակագրութեան

համաձայն ալ թիւը 11-13 հազար էր: 1922-ին բնակչութեան թիւը կը հասնի 400 հազարի, իսկ հայութեանը՝ 30 հազարի: Թէեւ բազմաթիւ ընդհանուր թիւին հայոց թիւը, որ շնորհիւ Կիլիկիայէն գաղթողներուն հասած է այդ բնակչութեան, շատ փոքր է, սակայն հայեր միշտ ունեցած են առաջնակարգ դիրք ընկերային, առեւտրական, գիտական բոլոր մարզերու մէջ: Ֆրանսացի գոհարավաճառ եւ ճանապարհորդ Chevalier Chardin-ն ալ, որ 1664-ին սկսած է իր ճամբորդութիւններուն, Voyages du Chevalier Chardin, en Perse, et autres lieux de l'Orient խորագրեալ իր գիրքին մէջ կը գրէ, թէ 1672-ին Ձմիւռնիոյ մէջ հոլանտական վաճառականութիւնը հայերուն ձեռքն էր: Հայերուն ձեռքը եղած է նաեւ աֆիոնի, ծխախոտի, կաշիի, բուրդի, գորգի եւ չոր մրգերու վաճառականութիւնը: Անոնք ունէին առեւտրական տուններ Եւրոպայի, Ռուսիոյ, Հնդկաստանի ու Եգիպտոսի մէջ:

Tavernier-ի եւ Chardin-ի վկայութիւնները բաւարար ապացոյցներ են, թէ հայեր երկար ատենէ ի վեր հաստատուած էին Ձմիւռնիա եւ վաճառականական հրապարակին վրայ կարեւոր դեր ունէին:

Հայ առեւտրականները ուղտերու կարաւաններով Պարսկաստանէն եկած մետաքսը կ'արտածէին Միջերկրականի նաւահանգիստ քաղաքներ: Ժամանակի ընթացքին Ձմիւռնիան կ'անուանուի Եւրոպայի եւ Մայրագոյն ու Մերձաւոր Արեւելքի «առեւտրի շտեմարան»-ը :

Մեծն Պետրոս, Ռուսիոյ ցարը (1682-1725:, հրամանագրով մը զմիւռնիացի Պետրոս Ապրոյին եւ թրքահայոց իր երկիրը մտնելու արտօնութիւն կու տայ: Հրամանագրի ստորագրումէն տարի մը վերջ, 1718-ին, հայեր Ռուսիոյ Աժտերխան քաղաքին մէջ մետաքսագործարան մը կը հիմնեն եւ ռուսերուն ուստայանկութիւն կը ստրվեցնեն:


Ձմիւռնիոյ հայ վաճառականները ուղղակի յարաբերութիւններ մշակած են վենետիկի, Մարսիլիոյ, Աւստրիոյ, Հոլանտայի, Լոնտոնի եւ Մանչեսթրի առեւտրականներուն հետ:

Անգլիական բամբակի ճարտարարուեստին զլխաւոր մասը իրենց առեւտուրին մաս կազմած է: Այդ շրջանին, անգլիացի եւ յոյն վաճառականներ մրցել էին չկարենալով հայերու հետ՝ դադրեցուցած են իրենց գործերը:

Հնդկաստանէն, Չինաստանէն եւ Պարսկաստանի ներքին մասերէն վաճառականներ կու գան Կովկասի կեդրոն մէկ վայրը՝ ապրանքներ փոխանակելու համար Ձմիւռնիայէն եկած եւրոպական արտադրութիւններու հետ:

Երկրաշարժերու եւ հրդեհներու պատճառով քանի-քանի անգամներ աւերուած ու վերակառուցուած Հայնոցին մէջ 1830-ին համաճարակներ կը պատահին ու բազմաթիւ երախաներ կը մեռնին:

Ձմիւռնիա, որպէս նաւահանգիստ քաղաք, եղած է ներածման ու արտածման կեդրոն: Այս իսկ պատճառով, յատկապէս ԺԹ. դարէն սկսեալ,



Ձմիւռնիոյ բնակչութեան իւրաքանչիւր համայնքի թաղամասերուն քարտէսը

Վաճառականներ կու գան Կովկասի կեդրոն մէկ վայրը՝ ապրանքներ փոխանակելու համար Ձմիւռնիայէն եկած եւրոպական արտադրութիւններու հետ:

Երկրաշարժերու եւ հրդեհներու պատճառով քանի-քանի անգամներ աւերուած ու վերակառուցուած Հայնոցին մէջ 1830-ին համաճարակներ կը պատահին ու բազմաթիւ երախաներ կը մեռնին:

Ձմիւռնիա, որպէս նաւահանգիստ քաղաք, եղած է ներածման ու արտածման կեդրոն: Այս իսկ պատճառով, յատկապէս ԺԹ. դարէն սկսեալ,



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՌՈՒՔԷՆ ԵՒ ՇՈՂԻԿ ԵԱՂՍՁԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2023

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

Քաղաքը եղած է տարբեր ազգերու եւ կրօններու պատկանող, առաւելաբար առեւտուրով զբաղող մարդոց բնակավայրը: Այս բազմազգ եւ բազմակրօն քաղաքին բնակիչները, բաղդատմամբ Փոքր Ասիոյ միւս քաղաքներուն, իրարու հանդէպ աւելի հանդուրժող եղած են: Իւրաքանչիւր համայնք, ըստ իր մշակոյթին, կրցած է ազատօրէն ապրիլ: Թուրքերէն յետոյ ամենակարեւոր համայնքները եղած են յոյները, հրեաները, լեւանդացիները (եւրոպացիներ) եւ հայերը: Ձմիւռնիա իր բազմամշակութային եւ գարգացած քաղաքային կենցաղին համար կոչուած է «Արեւելքի Փոքր Փարիզը»:

Ինչպէս կայսրութեան բոլոր քաղաքներուն, նոյնպէս ալ Ձմիւռնիոյ մէջ իւրաքանչիւր համայնք ունեցած է իր թաղամասը: Հայկական թաղամասը, սկզբնաւորութեան, եղած է թրքական թաղամասին մօտ՝ Վերին փողոց Apano կոչուած բարձրադիր վայրը: Հոն կը կառուցուի մատուռ մը եւ շուրջը՝ գերեզմանոց: Երկու դար յետոյ, ԺԵ դարու վերջերը, նեղուելով հարեւաններու ոտնձգութիւններէն՝ հայերը ստիպուած կը փոխադրուին աւելի վար, քաղաքին կեդրոնին մօտ, յունական թաղամասին եզրը, որ կ'անուանուի «Հայնոց»՝ հայոց թաղ: Հոն կը գտնուէին 15 մշակութային կամ բարեգործական միութիւններու կեդրոնները, թատրոնի շէնքեր, ընթերցասրահ: Իրենց նախկին օրրանը՝ մատուռ եւ գերեզմանատեղի, կը ծառայէ որպէս ուխտավայր մինչեւ ԺԹ դարու սկիզբը՝ տակաւ առ տակաւ անոնց հետքերուն անհետացումը:

Վենեզուելայի Գարագաս քաղաքը ծնած եւ յեղափոխական խառնուածք ունեցող զօրավար Միրանտա (Sebastian Francisco de Miranda, 1750-1816) Միացեալ Նահանգներու մէջ տեսակցութիւններ ունենալէ յետոյ, Անգլիա ու Ռուսիա երթալու ճամբուն վրայ կը պտտի Ձմիւռնիա քաղաքը ու իր յուշերուն մէջ հայոց թաղի տուներուն մասին կը գրէ, թէ այդ տուները կանոնաւոր էին, եւ բաղդատմամբ հրեաներու տուներուն՝ աւելի մաքուր եւ խնամուած:

Ձմիւռնիոյ հայութիւնը իր կրօնական հաստատութիւններով, աղջկանց եւ տղոց դպրոցներով, առողջապահական կառուցներով, հրատարակչական տուներով, օրաթերթերով եւ պարբերականներով գոյատեւած է մինչեւ 1922-ի հրդեհը:

21 Յունիս (10 Յուլիս: 1841 թուականին ալ հրդեհ եղած է ու հրկիզուած է հայոց թաղը: Ըստ թրքական աղբիւրներու, հրդեհը սկսած է հայոց թաղամասէն: Անգլիացի, ամերիկացի ճանապարհորդներ, միսիոնարներ եւ դիւանագիտական կազմի անձեր ալ վկայած են, թէ հրդեհը սկսած է հայկական թաղէն: Այդ հրդեհը մեծ կորուստներու տեղի տուած է: Համաձայն տեղական տուեալներու՝ 12 հազար բնակարան հրոյ ճարակ եղած է եւ 20 հազար բնակիչ ալ անօթի ու անպատուար մնացած: Հայոց 900 տուներէն միայն 37-ը փրկուած են: Հրդեհին ժամանակ այրած են նաեւ համայնքի մայր եկեղեցին՝ Ս. Ստեփաննոսը, ուրիշ ազգերու եկեղեցիները, ինչպէս նաեւ 14 մեծամեծ մզկիթներ: Համաձայն թրքական եւ հրէական գուցէ ի. դարու տուեալներուն, քաղաքին առաւելաբար թրքական եւ հրէական թաղամասերն են, որ իրենց «բնական աղետ» կոչած այս հրդեհին զոհ գացած են: Ըստ 1841-ի վիճակագրական տուեալներուն, Ձմիւռնիոյ բնակչութիւնը մօտաւորապէս 200 հազար կը հաշուէր, որուն 43 առ հարիւրը թուրքեր կամ թրքախառններ էին: Աւելի քան 45 առ հարիւրը յոյները եւ հայերն էին, իսկ հրեաները՝ 10 տոկոսը:

Այդ թուականներուն հրդեհի սկսման պատճառներուն ստուգման մասին քննութիւններ չէին կատարուած, գուցէ չէր ալ փափաքուած: Յառաջիկային 1922-ի հրդեհն ալ հայերուն եւ յոյներուն վերագրուած էր: Ինչպէս կրակը լեզուին վրայ պահել կարելի չէ, նոյնպէս ալ ճշմարտութիւնը թաքցնել, յատկապէս մեծ թիւով վկայութիւններու ներկայութեան, կարելի չէ:

Ինչպէս 1909-ի Ատանայի ջարդը 1915-ի գարհուրելի ջարդին մէկ փորձն էր, 1841-ի հրդեհն ալ կը թուի ըլլալ 1922-ի հրդեհին տեղույն վրայ կատարուած փորձը:

Ըստ իսլամական կրօնին՝ «իսլամը ուրիշներէն միշտ բարձր է»: Իր արհամարհած ծառան (raya-ն)՝ իրեն նման օսմանեան հպատակ հայը, 1839-ին հռչակուած «Թանգիմաթ»-ի՝ բարենորոգութիւններու հռչակագիրով այլեւս կը նկատուի, հոգ չէ թէ թուղթի վրայ, իրեն հաւասար: Այդ իր կրօնական արժանապատուութիւնը կը վիրաւորէ, ինչ որ իրեն գայրոյթ կը պատճառէ: Սուլթանին դէմ չի կրնար ըմբոստանալ: Ան իր կրօնին խալիֆան է: Երբ իր արհամարհած այդ raya-ն նոյնպէս արհամարհած եւրոպացիին հետ առեւտրական մեծ գործեր կը կատարէ ու կը հարստանայ եւ երկիրն ալ կը հարստացնէ ու իր ամսաթոշակին վճարման ալ անուղղակիօրէն օգտակար կ'ըլլայ, իր մէջ նախանձի՝ չար

նախանձի զգացումներ ծնունդ կ'առնեն: Երբ անգլիացի ու յոյն վաճառականներ մրցիլ չկարենալով հայերուն հետ կը ստիպուին դադարեցնել իրենց գործերը, իր մէջ վրէժխնդրութեան մոլեգնութիւնը անզսպելի կը դառնայ:

Պէտք է յիշել, թէ երբ եւրոպական պետութիւններու բարեփոխութիւններու հարցով կատարած ճնշումներուն հետեւանքով Օսմանեան պետութիւնը գիշումներ կը կատարէր, Արեւմտեան Հայաստանի մէջ քիւրտերը հայերուն հանդէպ անսպասելի ու անբաղձալի անհանգստութիւններ կը պատճառէին:

1841-ի հրդեհէն վերջ, նորոգութիւնները եւ շինութիւնները կը կատարուին համաձայն 1850-ին պատրաստուած



Յայոց Ս. Ստեփաննոս եկեղեցին

նախագիծի մը: Փողոցներու խաչմերուկները կ'ըլլան ուղղանկիւն: Թաղը ելեւէջներ չ'ունենար, ոչ ալ անել ու օձապտոյտ արահետներ: Շինութիւնները կ'ըլլան ուղղանկիւն հողակտորներու վրայ: Թաղը կը ստանայ արեւմտեան ոճ: Այսպիսով, հայոց թաղը Ձմիւռնիոյ բոլոր թաղերուն մէջ առաջին տեղը կը գրաւէ: Թաղին ամենակարեւոր կառուցը՝ Ս. Ստեփաննոս եկեղեցին ալ կը նորոգուի ու իտալական ոճով զմբէթ մը կ'ունենայ: Կ.Պոլսէն հրաւիրուած ճարտարապետ Մելքոն Երամեան, բալուցի Սաչատուր Կազեբեանի նուիրատուութեամբ, 1858-ին եկեղեցույ կողքին կը կառուցէ առաջնորդարանի շէնքը, որ կ'ըլլայ նաեւ Ձմիւռնիոյ հայ հոգեւորականներուն բնակավայրը:

Ս. Ստեփաննոս եկեղեցին իր պարտէզով եւ առաջնորդարանի շէնքով Ձմիւռնիոյ մէջ կառուցուած եկեղեցիներու շարքին մէջ կը գրաւէ առաջին տեղը: Առաջնորդ Ղեւոնդ եպս. Դուրեան Ս. Ստեփաննոս եկեղեցիին մասին կը գրէ. «Ձմիւռնիոյ հայոց Ս. Ստեփաննոս տաճարը իր հսկայ եւ հոյակապ կառուցուածքով, իր միակտուր սիւներով, իր գեղակերտ զմբէթով ճարտարապետական գլուխ գործոց մըն էր: Տաճարը շրջապատուած էր եկեղեցապատկան շէնքերով եւ ամրաշէն պատերով»: Լատինները ունեցած են հինգ մեծ եկեղեցի եւ մի քանի փոքր մատուռներ: Յոյները ունեցած են վեց մեծ եկեղեցի, որոնցմէ ոչ մէկը հաւասարած էր Ս. Ստեփաննոսին: Տաղանդաւոր ճարտարապետ Մելքոն Երամեանի շինած այս եկեղեցին իր կառուցուածքով, արտաքին ու ներքին հոյակապ յօրինուածութեամբ, ճարտարապետական գանազան ոճերու հիանալի արտացոլումով հայկական արուեստի հրաշալի համադրութիւն մը կը ներկայացնէր:

Տաճարը վերանորոգուած է 1688-ին, առաջնորդ Յովսէփ վրդ.-ի օրով: Վերաշինութիւն մը եւս կը յիշուի առաջնորդ Աղեքսանդր արք.-ի օրով՝ 1743-ին: Վերջին վերաշինութիւն մը եւս կը յիշուի 1853-ին՝ առաջնորդ Պօղոս արք.-ի շրջանին:

Մինչեւ 1880, եկեղեցիին լայն շրջափակը ծառայած է իբրեւ գերեզմանատուն: Պարտէզին մէջ եկեղեցականներու շարքին կը գտնուէին պետական մարդոց, գրագէտներու եւ ահանաւոր ուսուցիչներու տապանները: Ս. Ստեփաննոս տաճարի նորոգութեան ժամանակ երեւան ելած է Նուպար փաշայի հօր՝ Մկրտիչ Աղա Նուպարեանի շիրիմին տապանաքարը: 13 Մայիս 1884-ին, գերեզմանատունը փոխադրուած է նոր վայր մը:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԿԱՐԻՆԷ
ՏԵՓՈՅԵԱՆ**

ՄԱՍԻՍ - 2023

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ



Մերոպեան ազգային վարժարան՝ տղոց
Հռիփսիմեանց վարժարան՝ աղջկանց

Ձմիւռնիւյ մէջ 1799-ին կը հիմնուի Մերոպեան ազգային վարժարանը, որու շինութեամբ նոր դարապուրէս մը կը սկսի Ձմիւռնիւյ հայութեան համար: Մինչեւ 1876, աշակերտներ ձրի կ'ուսանին: Ծախսերը կը հոգացուին մեծահարուստ ազգայիններու նուիրատուութիւններով: 1877-էն սկսեալ բարեկեցիկ ընտանիքներու զաւակները կ'ենթարկուին կրթաթոշակի: 1825 թուականին, այդ փայտաշէն դպրոցը տեղուցն վրայ կ'ընդարձակուի լաւագոյն պայմաններով, դարձեալ փայտաշէն, միայնակ: Մինչեւ «կեաւուր» Ձմիւռնիւյ կործանումը՝ 1922, վարժարանը կու տայ աւելի քան 1.500 շրջանաւարտ: Տարեկան աշակերտութեան թիւը, միջին հաշուով, եղած է 400-500: 1831-էն սկսեալ հոն կը դասաւանդուին նաեւ անգլերէն, իտալերէն, յունարէն, օսմաներէն եւ ֆրանսերէն: Վարժարանը ունեցած է իր գրադարանը 2000 գիրքով՝ անգլերէն, իտալերէն, հայերէն, յունարէն, ռուսերէն եւ օսմաներէն: Մայիս 1820-ին կը բացուի աղջկանց Հռիփսիմեանց վարժարանը, որ 1845-ին կ'այլի եւ 1849-ին կրկնաչարկ, քարաշէն հոյակապ նոր շէնք մը կը կառուցուի: Աշակերտութեան թիւին հետզհետէ աճումով, 1884-ին, ժողովրդային հանգանակութեամբ աւելի մեծ շէնք մը կը կառուցուի: Աշակերտութեան ընդհանուր միջին թիւը կ'ըլլայ 300-400: Մերոպեան եւ Հռիփսիմեանց վարժարանները եղած են բարձրագոյն կրթական (lyceum) հաստատութիւններ: 1801-ին կը հիմնուի եւ 1878-ին ալ ամբողջութեամբ կը նորոգուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ հիւանդանոցը: Եռաչարկ շէնքը կը շրջապատուի մրգատու պարտէզով եւ բանջարանոցով: Հիւանդանոցին պարտէզին մէջ կը շինուի դարմանատուն մը, 1842-ին ալ կը կառուցուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատուռը՝ անհատական նուիրատուութեամբ: 1904-ին, ռուսմանական խորհուրդին ջանքերով, վարձու շէնքի մը մէջ կը բացուի Ազգային Մանկապարտէզը: 1908-ին, անհատական նուիրատուութեամբ, Մերոպեան վարժարանին ու Ս. Ստեփաննոս եկեղեցիին մօտ նուիրատուին անունով կը բացուի Պազրճեան ազգային մանկապարտէզը:

Ձմիւռնիւյ հայ հասարակութիւնը ունեցած է նաեւ բարեսիրական հիմնարկներ: Սիւնեաց Ընկերութիւն (1841-1845, 1879-1880: եւ Արագածունեաց Ընկերութիւն (1843-1846): Ասոնք հիմնուած են Մերոպեան վարժարանի աշակերտութեան կողմէ՝ շրջակայ թեմերու մէջ դպրոցներ բանալու նպատակով: Աղքատասիրաց Ընկերութիւն (1861-1894)՝ հաստատուած տասը հարուստ անձերու կողմէ, որ յառաջիկային կը հասնի մեծ թիւի մը: Ընկերութեան գլխաւոր նպատակը եղած է չքաւոր հիւանդներուն դեղ եւ բժիշկ մատակարարել, աշակցիլ բարոյապէս եւ նիւթապէս թէ՛ տեղացի, թէ՛ ալ պանդուխտ թշուառ աշխատակորներուն, խաներու անկիւնները հեծող հազարաւոր թշուառ ընտանիքներուն: Աղքատախնամ Ընկերութիւն (1896-1922), այս ընկերութիւնը լծուած էր գաղթականներու համար գործ եւ դրամագլուխ հայթայթելու ազգասիրական գործին: Հայ Ընթերցատուն (1868-1922), այս անհատական ձեռնարկը որոշ դժուարութիւններէ վերջ Ս. Ստեփաննոսի պարտէզին մէկ անկիւնը կ'ունենայ իր շէնքը: Տէրը հոն կը փոխադրէ իր 3.000 հատորնոց գրադարանը: Սկզբնաւորութեան հոն գիշերային հաւաքումներ տեղի կ'ունենան: Աւելի վերջ, կը կազմակերպուին ատենախօսութիւններ՝ շաբաթ մէկ կամ երկու անգամ: Կրթական եւ մշակութային տեսակէտով խիստ կարեւոր դեր կատարած է այս հիմնարկը: Անձնուէր Ընկերութիւն (1873-1882), հիմնուած է պանդուխտ եւ անուս ազգայիններուն ուսում ջամբելու նպատակով: Տիկնանց Հոգատար Ընկերութիւն (1879-1893), ընկերութեան նպատակը եղած է ազգային գոյգ վարժարաններու աղքատ աշակերտութեան զգեստ եւ դասագիրք հայթայթել, սանուհիներուն ձեռագործ սորվեցնել: Հռիփսիմեանց վարժարանը օժտած է գրադարանով մը: Որբախնամ Ընկերութիւն (1891), կազմուած է Հռիփսիմեանց

վարժարանի տասը սանուհիներու կողմէ: Երեք տարի կաղնիկաղ կը գործէ, նոյնիսկ պաշտօնական մարմիններու հալածանքին կ'ենթարկուի: 1893-ի Ապրիլին Տիկնանց Հոգատարի հետ միացում կ'ըլլայ: Կը հիմնուի որբանոց, ուր կը պատասպարուին Արեւմտեան Հայաստանի զանազան քաղաքներէն եկած որբուհիներ: Նպատակ ունեցած է նախնական կրթութեամբ մը զանոնք դաստիարակել եւ անոնցմէ ընդունակները ուսուցչութեան պատրաստել: Հռիփսիմեանց Կրթասիրաց Ընկերութիւն (1881-1922), կը հիմնուի կրթութիւն եւ ուսում տարածելու նպատակով: Կը յաջողի բանալ իր մանկապարտէզը, որ կ'ունենայ իր սեփական շէնքը: Իր նպատակը եղած է 4-էն 7 տարեկան մանկանց տալ հիմնական դաստիարակութիւն եւ ազգային վարժարաններուն համար պատրաստել ընտիր աշակերտ եւ աշակերտուհի: Գաղութը ունեցած է նաեւ Արեւելեան Ակումբ (1886), Ուսումնասէր Ընկերութիւն (1887), Մերոպեան Գրասիրաց Ընկերութիւն (1891, որ բացած է կիրակնօրեայ եւ գիշերային դասաւանդութիւններ հայ անուս եւ թերուս երիտասարդներու համար: Արուեստանոց (1895), իր շէնքին մէջ հայերուն սորվեցուցած է հիւանդութիւն, թիթեղագործութիւն եւ կոշիկակարութիւն՝ գործին յարմար սենեակներու մէջ: Ներսէսեան Որբասիրաց Ընկերութիւն (1897-1907), խումբ մը երիտասարդներ կը հիմնեն որբանոց ու Արեւմտեան Հայաստանէն կը հաւաքեն որբեր ու զանոնք կը խնամեն: Պաշտօնէից Միութիւն, նպատակ՝ պաշտօնեաներու բարոյական ու նիւթական վիճակը բարելաւել:

ՏՊԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգիս Զօրավարի - Այս անունով, սկսեալ Հոլանտայի Ամսթերտամ քաղաքէն, զանազան քաղաքներ տպարաններ բացուած են: Ձմիւռնիւյ մէջ ալ, 1676-ին, այս անունով տպարան կը հիմնուի: Առաջին հատորը, որ տպուած է՝ «Գիրք Սրբոյն Մաշտոցայ Վարդապետի» կոչեցեալ գիրքն է: Տպարանը՝ Մկրտիչ, շատ հաւանաբար Ամսթերտամ՝ Ոսկան եպիսկոպոսի գրաշարներէն մին եղած է: Ձմիւռնիւյ մէջ Մկրտիչին վերջ 83 տարի հայկական տպարան գոյութիւն չէ ունեցած:

Մաստեպի Մարկոս - Հաւանաբար Ամսթերտամի տպարանի գրաշարներէն, եկած է Ձմիւռնիւս եւ առաջնորդ Աբրահամ եպս. Նախեանի (Աստարապատցի: քաջալերանքով հաստատած է իր տպարանը: 1759-ին տպած է «Մեկնութիւն Ըստ Արարողութեան Եկեղեցույ Հայաստանեայց», 1762-ին՝ «Գիրք Ընդդիմութեանց Եզնկայ Կողբացուց»:

Տպարան Մարգասիրական Ընկերութեան Ամբերկացուց - Մալթայէն Ձմիւռնիւս փոխադրուած բողոքական միախոնարներու տպարանն է այս մէկը: 1835-ին կը տպէ «Քերականութիւն Անգլերէն եւ Հայերէն», 1836-ին՝ «Հեգերէն» կամ առաջին կարգալու գիրք: Տպարանը հաստատումէն յետոյ կը վերածուի անհատական ձեռնարկի: Նախ անցած է Հոլման Հալոքի, ապա Գուլիէլմոս Կրիֆթի ձեռքը, որոնք հրապարակը կ'ողողեն հաւատասփիւռ գիրքերով՝ մեծ մասամբ աշխարհաբար: Հ. Հալոք տպած է 11 անուն գիրք՝ բոլորն ալ 1838-ին: 1839-ի Յունուարին ալ սկսած է հրատարակել «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» ամսաթերթը, գոր Կրիֆթի կը շարունակէ: Կրիֆթի մինչեւ 1852 կը հրատարակէ անհամար գիրքեր:

Ստեփանոս Պապօեանց, հարուստ կալուածատէր վաճառական մը, 1840-ին կը բանայ տպարան եւ կը սկսի հրատարակուիլ «Արշալոյս Արարատեան» թերթը՝ մինչեւ 1844: Երբ թերթին խմբագրին՝ Ղուկաս Պալթագարեանի եւ Ստեփանոս Պապօեանցի միջեւ հակառակութիւն կը ծագի, Պալթագարեան կը լքէ Պապօեանցի հովանաւորութիւնը եւ իր անուան կը փոխանցէ տպարանը, ուր 20 Մայիս 1844-էն սկսեալ առանց ընդմիջման կը սկսի հրատարակուիլ թերթը մինչեւ 1886՝ հրատարակութեան կառավարութեան կողմէ դադարեցումը:

Մերոպեան վարժարանի Տպարան - Տպարանին կազմածը նուիրած է թրիեսթէաբնակ մեծահարուստ հայ մը՝ 1840-ին: Տպարանը 1841-ին լոյս ընծայած է մեծանուն վարժապետ-քահանայ Միրզա Յովհաննէս Վանանդեցիի «Ոսկի Դար Հայաստանի» հատորը: 1842-ին հոն կը տպուի «Խորհրդածութիւնք Շնորհաց եւ Նշանաց եւ Խորհրդոց Քրիստոնէական Ս. Եկեղեցուց», 1843-ին՝ Ֆենելոնի «Արկածք Արիստովնոսի, Աղալա եւ Սենադոս», 1844-ին՝ «Տրամաբանութիւն, Հարիւր Բարոյական Առակներ» հատորները:

Թաղիկեան վիճագրատուն-տպարան - 1840-էն առաջ հիմնած է Պօղոս, որուն յաջորդած է եղբայրը՝ Պետրոս: Անոնց մահէն վերջ գործը



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

Հարունակած են իրենց երկու քեռորդիները: 1892-ին հրատարակած են «Մրագիր Ուսմանց Ձմիւռնիոյ Վիճակին», 1894-5-ին ալ «Տեղեկագիր Հայ Ընթերցատան» եւ «Մունջիւն եւ Մնջիւն» հատորները:

Տպարան Արագածունեաց - Խաչատուր Յ. Մելիքսեյումեան, Պապօ Պապի, Մհ. Գէորգ ԽՉիկեան 1 Մարտ 1843-ին կը կազմեն ընկերութիւն մը: Կը հիմնեն տպարան, ուր 28 Մայիս 1843-ին լոյս կը տեսնէ «Հայրենասէր» թերթը: Հոն կը տպուի նաեւ «Համառօտութիւն Ազգասիրական Սխրագործունեանց Տեառն Ներսիսի Նորընտիր Հայրապետին Ամենայն Հայոց» հատորը: Թերթին հրատարակութիւնը կը դադրի 1846-ին:

Տէրտէրեան Եղբարք - Յարութիւն հայոց թաղին մէջ 1851-ին կը հիմնէ իր տպարանը: Տառերը կը հայթայթէ Վենետիկէն, Վիեննայէն, Կ.Պոլսէն եւ մամուլը՝ Փրանսայէն: 1853-ին, իր խմբագրութեամբ, կը սկսի լոյս տեսնել «Արփի Արարատեան» օրաթերթը, մինչեւ 1856: Այնուհետեւ Ձմիւռնիոյ, Կ.Պոլսոյ եւ արտասահմանի գրադատական հրատարակները տարիներ ողողած է բազմաթիւ հատորներով՝ հայը մղելով վիպասիրութեան: Տպագրական այդ բեղուն գործունէութիւնը դադարած է իր մահով (1832-1868): Եղբայրները մինչեւ 1893 շարունակած են տպարանական գործը՝ լոյս ընծայելով նորագոյն հատորներ³:

Գրիգոր Մսերեան - Տէրտէրեանի տպագրական գործունէութեան շիջումին՝ 1878-ին, քանի մը համախոհներու հետ Գրիգոր տպարան մը հիմնած եւ իր իսկ խմբագրութեամբ սկսած է «Մէտէօրա» հանդէսը հրատարակել, զոր 1881-ին դադարեցուցած է: Բացի «Մէտէօրա»-էն տպագրած է «Դիցաբանութիւն», «Վարդ եւ Սոխակ», «Ընթերցարան», «Ուսումնական Ատենախօսութիւն», «Ողջախոհ Արայ» հատորները:

Մատթէոս Մամուրեան - Նշանաւոր գրագէտ, կարող հրատարակագիր, ազգային գործիչ Մամուրեան 1883-ին իր սեփական տպարանը կը հիմնէ ու կը սկսի լոյս ընծայել «Արեւելեան Մամուլ» հանդէսը՝ իբր ամսաթերթ, յետոյ՝ 1894-էն սկսեալ, որպէս կիսամսեայ: Մամուրեան «Արեւելեան Մամուլ»-ը 1871-ին սկսած էր հրատարակել Տէրտէրեան Եղբարք տպարանին մէջ: Կը հրատարակէ «Ուղեւորութիւն ի Կ.Պոլիս»՝ 1883-ին, 1888-ին՝ «Կարապի Երգը» եւ 1898-ին ալ՝ «Տասնօրեակ եւ Մահարձան» հատորները: Հոն հրատարակուած են նաեւ «Առողջապահութիւն Աղջկանց», «Իրաւաբանութիւն», «Գիտելիք եւ Պարտիք Տղոց», «Բանալի Հայ Շարագրութեան», «Հայոց Պատմութիւն», «Ընտիր Աղջիկ Մը», «Մանկական Պարտէզ», «Այբբենարան», «Ուսումն Բրիտանական», «Եռաձայն Երգեցողութիւն» հատորները:

Մ. Մամուրեան Որդի - Մատթէոսի երէց զաւակը՝ Հրանդ, թերթը կը շարունակէ անընդմէջ մինչեւ 21 Նոյեմբեր 1909՝ իբր շաբաթաթերթ, 3 ճոխ եռամսեաներով: Տպարանէն լոյս ընծայուած են «Կատակերգ Սօլիէլի»՝ 1905, «Դէպի Բեւեռ»՝ 1906, «Մագնիսական Փորձեր»՝ 1909, «Քայքայում»՝ 1910, «Լառօջ Ֆուքոյի Բարոյական Առածները»՝ 1912, «Արձագանգ» (թերթ: եւ «Դաշինք»՝ 3 Օգոստոս 1909-էն սկսեալ օրաթերթ՝ Սուրբ Պարթեւեանի խմբագրութեամբ: 1919-ի վերջերը «Արեւելեան Մամուլ»-ը կը վերսկսի հրատարակուիլ մինչեւ Ձմիւռնիոյ եղեռնը՝ Սեպտեմբեր 1922:

Բարսեղ Քէշիշեան - 1905-ին կը հաստատուի Ձմիւռնիա: Հոն կը հիմնէ տպարան մը, ուրկէ 20 Հոկտեմբեր 1907-ին կը սկսի հրատարակել «Արշալոյս» օրաթերթը, որ կը դադրի 1909-ին: 1908-ին կը սկսի հրատարակուիլ Վ. Թօշիկեանի եւ Հայկանուշ Մարքի «Արձագանգ» օրաթերթը: Ան ալ կը դադրի 1909-ին: Բարսեղ Քէշիշեան եղբրական մահով 1 Յունուար 1909-ին կը կնքէ իր մահկանացուն: Իր եղբայրը՝ Տ. Քէշիշեան՝ կը շարունակէ նոյն տպարանը: 10 Յունիս 1910-էն սկսեալ կը հրատարակէ «Միմոս» շաբաթաթերթը (1908-1909 հիմնադիր Ռ. Ղազիկեանի խմբագրութեամբ: եւ 1919-1922 ալ Յակոբ Շիրինեանի ղեկավարութեամբ, «Մունետիկ»՝ շաբաթաթերթ, 1909-էն սկսեալ, «Փետակ» եւ «Աշխատանք»՝ շաբաթաթերթեր՝ 10 Յունիս 1910-էն մինչեւ 1914: 1 Յունիս 1911-ին՝ «Հայ Գրականութիւն», «Երկու Դիւցազունք», «Կանոնագիր Հայ Որսորդաց Ակումբի», «Երգարան Հայաստան», «Մարդը Մարդուն Գայլ», «Կոյսի Մը Վիշտը», «Ֆառուսթ», «Ոչ-իսլամ Օսմանեան Զինուորներու Զինուորագրութեան Կանոնագիրը», «Հառաչանք», «Մարդկային Պարտականութիւններ», «Ուժ, Իրաւունք եւ Արդարութիւն», «Ուղեւորական Նօթեր», «Դեւը», «Մարդը»:

Տէր Վրթանէս, տպարանատէր եւ հրատարակիչ, լոյս կ'ընծայէ «Թութակ Հայկազեան» ամսագիրը: 1862-ին կը հրատարակէ «Գարուն Հայաստանի» թերթը՝ Տիգրան Գարագաշեանի եւ Գր. Պարտիզպանեանի խմբագրութեամբ, «Յաւերժահարս» հանդէսը՝ 1862-ին, Սարգիս Փափազեանի եւ Թ. Աւետիսեանի խմբագրութեամբ, «Ծաղիկ»՝ 1862-1867,

Մ. Զիլինկիրեանի խմբագրութեամբ, «Միութիւն»՝ 1861-1862, եւ «Դիմակ»՝ 1862, հանդէսները: Հրատարակած է նաեւ Սարգիս Միրզոյեանի «Իրաւունք» քաղաքական լրագիրը՝ 1867-1868:

- ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ՁՄԻՐՆԻՈՅ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ**
- Միւնեաց արքեպիսկոպոս՝ Մարտիրոս Տաթեւացի Միրզենց - 1800 Ստեփան եպս. Ենովքեան - 1825
 - Աղաւնի Ստեփան եպս.
 - Երուսաղէմի պատրիարք Գաբրիէլ արքեպս. - 1830
 - Պօղոս արքեպս. Թագթագեան - 1838-1842 եւ 1845-1872
 - Մատթէոս եպս. - 1842-1845
 - Խորէն եպս. Նարպէյ - 1873
 - Մելիքսեղեկ արքեպս. Մուրատեան - 1877-1888 եւ 1898-1903
 - Ներսէս եպս. Արսլանեան - 1891-1898
 - Եղիշէ արքեպս. Դուրեան - 1903
 - Մատթէոս եպս. Ինճէեան - 1918
 - Ղեւոնդ արքեպս. Դուրեան - 10 Նոյ. 1922 (զաղուծի փլուզումէն մազապուրծ փրկուած⁴:



Նուպարաշենի «Նոր Ձմիւռնիա» փողոցը

Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Յարութիւն Մարութեանի միջնորդութեամբ, 19 Ապրիլ 2022 թուականին, Երեւանի Նուպարաշեն վարչական շրջանի 13-րդ փողոցը անուանուած է «Նոր Ձմիւռնիա փողոց»:

ՀԲԸՄ-ի թելադրութեամբ ու նիւթական աջակցութեամբ, 1932 թուականին, Երեւան քաղաքի հարաւային կողմը Նուպարաշեն վարչական շրջանի կառուցումը կը հաստատուի:

Նուպարաշենի կառուցումը կապուած է հայ ազգային բարերար Պօղոս Նուպար փաշայի անուան եւ գործունէութեան հետ: Անոր հայրը՝ Եգիպտոսի առաջին վարչապետ Նուպար փաշան, ծնած ու իր կրթութիւնը ստացած է Ձմիւռնիոյ մէջ: Նուպարեանները սերած են ԺԸ. դարավերջին Լեւոնային Ղարաբաղէն Ձմիւռնիա գաղթած վաճառական Մկրտիչ Նուպարի ճիւղէն, որ Ձմիւռնիոյ մէջ բաւական ճանչցուած ընտանիք մը եղած է⁵:

Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկը Ձմիւռնիոյ աղէտի 90-ամեայ տարելիցին առիթով 2012-ին կազմակերպած է բացառիկ բնօրինակ լուսանկարներով ու տեսանիւթերով միջոցառում: Նոյն օրը թանգարանին մէջ տեղի ունեցած է նաեւ միօրեայ գիտական նիստ՝ նուիրուած Ձմիւռնիոյ աղէտին:

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՍՈՒՏՔԸ

9 Սեպտեմբեր 1922-ին, Շաբաթ առաւօտ, քեմալական ազգայնական շարժումի սուսերամերկ ձիաւոր զինուորներուն սազալը (մօրուսաւոր: Նուրետտին փաշայի հրամանատարութեամբ քաղաքէն ներս յաղթական մուտքը երկու ժամէն աւելի կը տեւէ: Բանակը կը յառաջանայ ամբողջ քարափին երկայնքով՝ դէպի գորանոց:

26 Օգոստոսին, Իզմիրէն մօտաւորապէս 350 քմ. արեւելք, Աֆիոն Գարահիսարի մօտ, քեմալական բանակը կը խորտակէ յունական բանակը:

▶▶▶



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնւոյ Հայ Եւ Յոյն Թաղամասերու Հրկիզման

1 Սեպտեմբերին, քեմալական զօրքերու յառաջացման դիմաց, յոյները կը լքեն իրենց դիրքերը:

Սեպտեմբերի սկիզբը յոյն զինուորներ եւ սպաներ, բարոյալքուած, անկանոն, շատեր առանց գէնքի, կը հասնին իգմիր եւ կը շտապեն դէպի իգմիրի ծոցը խարսխած յունական նաւերը: Շրջանի այլ տեղերէն փախստական քրիստոնեաներ, որոնք օրական 300 հազարի կը հասնին, սարսափահար եւ սոված՝ կը լեցուին եկեղեցիներու, վարժարաններու եւ այլ հաստատութիւններու բակերը:

Առաջնորդ Ղեկնող եպս. Դուրեան եւ յունաց առաջնորդ Խրիստոսոմոս եպս. կը դիմեն Հելլեն Բարձր Գործակատար եւ Ձմիւռնիոյ կառավարիչ պրն. Սթերիատիսին, որ գանոնք չ'ընդունիր, նախապէս ժամադրութիւն առնուած չըլլալու պատճառաբանութեամբ: Յաջորդ օր, Կիրակի, ժամադրութեամբ կը ներկայանան պրն. Սթերիատիսին, որ կացութեան ամենածանր կերպով վտանգուած ըլլալը կը յայտնէ եւ ազատ կը թողու գանոնք, որ օտար հիւպատոսներու դիմեն: Դուրեան եպս. իր տեղեկագրին մէջ կը գրէ. «Անգլիական, Ամերիկեան, Ֆրանսական եւ Իտալական միջամտութիւն մը կամ պաշտպանութիւն մը ահաւոր աղէտի մը առաջը պիտի կրնայ առնել: Այս թեզը միշտ առաջ կը տարուէր ու այդ մասին շատ կը խօսուէր: Մեր դիմումին հետեւանքով, Ամերիկեան Հիւպատոսը հաւաստիացուց թէ ինք թէ՛ Ամերիկա եւ թէ՛ Պոլիս հեռագրած էր կարեւորը, բայց տակաւին պատասխան չէր ստացած»: Ֆրանսայի հիւպատոսին եղած դիմումին մասին ալ Դուրեան կը գրէ. «Հիւպատոսը յանձնարարեց չվախնալ, եւ հաւաստիացուց թէ նոյնիսկ եթէ շփոթութիւններ ալ պատահին, ջարդ չէր կրնար ըլլալ, եւ թէ ֆրանսական զինուորներու ժամանումը օրէ օր կը սպասուէր իգմիր՝ քրիստոնեաներու պաշտպանութեան համար, ինչ որ Ֆրանսայի դարաւոր նուիրական ուղղութիւնը եղած էր: Իտալական հիւպատոսն ալ նոյն հաւաստիքներով ուզեց մեզ հանդարտեցնել եւ աւելցուց թէ 15 հազար իգմիրաբնակ իտալահպատակները պաշտպանել ստիպուած ըլլալով, ինքնին պաշտպանած պիտի ըլլար բոլոր քրիստոնեաները, քանի որ իր հպատակները գրեթէ բոլոր թաղերու մէջ բնակութիւն հաստատած էին»: Անգլիական հիւպատոսին հետ հանդիպման մասին ալ կը գրէ. «Նորին վսեմութիւնը չափազանցօրէն յուզուած արտայայտութեամբ մը, խօսքը ուղղելով Մետրոպոլիտ Խրիստոսոմոս եպս.-ին, ըսաւ. «Ինչո՞ւ կու գաք ինձմէ պաշտպանութիւն, զինուորական միջամտութիւն ինդրելու: Գացէք հրամանատար Հաճի Անէսթիի եւ անկէ խնդրեցէք պաշտպանութիւն. ինչպէ՞ս կրնայ անմիջական դիմադրութեան մը համար Անգլիական զինուորներ, բանակներ բերել, երբ հելլեն զինուորներ անկանոն կը հեռանային: Եւ ո՞ր բանակը կարող է դիմադրել թշնամիի մը, որ իր կարողութեան բոլոր թափովը կը յառաջանայ անարգել, եւ թէ հարկ ըլլար իսկ բանակ հասցնել իգմիրի պաշտպանութեան համար, անհրաժեշտ 10-15 օրերու կը կարօտէր: Հետեւաբար պէտք է դիմումներ կատարէք Հաճի Անէսթիի մօտ, որպէսզի ուժեղ միջոցներ ձեռք առնէ թշնամիին յառաջխաղացումը արգիլելու համար»: Հիւպատոսին այս շանթահարիչ գեկոյցին վրայ, հրամանատար Հաճի Անէսթիի մօտ պահինք»:

Հրամանատարը կը հաւաստիացնէ, թէ քեմալական բանակը պիտի չկրնայ իգմիր մտնել, եւ ամէն միջոց խորհուած է արգիլելու համար քեմալական բանակին երեւումը իգմիրի մէջ:

8 Սեպտեմբեր, Ուրբաթ. ամբողջ քաղաքը խուճապի կը մատնուի: Փողոցները անանցանելի կը դառնան շրջակայ այլ վայրերէն փախչող գողթականներով: Հասկնալի եղած է, թէ հելլեն բանակին քայքայումը եւ նահանջը սկսած է: Շաբաթ առաւօտ, սարսափը մեղմացընելու նպատակով գեկոյց մը կը հրատարակուի: Կ'ըսուի, թէ թուրք բանակին նահանջի գիծը կտրուած է եւ քեմալական զօրախումբեր գերի բռնուած են: Յաջորդ Ուրբաթ գիշեր, իգմիր քաղաքը կը մնայ առանց կառավարութեան: Պատերազմական նաւերը կը փոխադրեն կառավարական կազմը:

Բոլոր պահականոցները կը պարպուին, հրամանատար Հաճի Անէսթի ալ կը փախչի: Բոլոր յունական մարտանաւերը իգմիրի ծոցէն կը հեռանան: Կը մնան միայն եւրոպական եւ ամերիկեան զրահանաւերը: Թուրք ստահակներ սպառնական դիրք մը բռնած՝ քրիստոնեայ թաղերու մէջ աներկիւղ եւ համարձակ կը պտտին:


9 Սեպտեմբերին, Շաբաթ առաւօտ, քաղաքին մէջ կը տարածուի այն լուրը, թէ քեմալական բանակը իգմիրի շատ մօտեցած է: Խաժամուժ ամբոխը ոտքէն մինչեւ գլուխ զինուած՝ կ'իջնէ շուկայ: Շուկայէն անցնող կարգ մը քրիստոնեաներ կը գանակոծուին ու կը վիրաւորուին, ոմանք ալ խոշտանգումով կը սպաննուին: Քաղաքի «յոյն կառավարութիւն»-ը որեւէ միջոցի չի դիմեր գանոնք հետապնդելու՝ անոնց դաւադրական ծրագրերը խափանելու համար:

Առաւօտեան 10-էն սկսեալ, իգմիրի այլեւայլ կողմերէն քեմալական յառաջադնաց ջոկատները կը գրաւեն ռազմական նշանակութիւն ունեցող առարկաները, քարափները եւ քաղաք տանող բոլոր ճամբաները:

Ջոկատներու ներս խուժումը աւելի կը խրախուսէ թուրք խուժանը, որ կը սկսի քաղաքին մէջ թրջական դրօշներով պտտիլ: Հայոց թաղին մէջ հրացանաձգութիւններ կ'ըլլան: Հայեր Ս. Ստեփաննոս եկեղեցին կ'ապաստանին:

9 Սեպտեմբերին, Շաբաթ առտու, Աֆիոնի յունական ճակատի խորտակումէն վերջ, քեմալական բանակի սուսերամերկ ձիաւոր յառաջապահ գունդը Նուրետտին փաշայի հրամանատարութեամբ արագօրէն եւ շատ դիւրութեամբ կը հասնի իգմիրի դուռն առջեւ եւ կը կատարէ իր յաղթական մուտքը: Կ'ողջունուի քարափին վրայ խուճուած ժողովուրդին ծափերով եւ ծոցի նաւերու սուլոցներով:

Հայոց առաջնորդարանը, ի նշան Օսմանեան տիրապետութեան հաստատման, Օսմանեան դրօշը կը պարգէ:



Հայոց թաղ

Հրամանատար Նուրետտին փաշա Օսմանեան բանակին մէջ զօրավարի աստիճանին բարձրացած, 1919 Յունուարին, իգմիրի ու շրջակայքի կուսակալութեան կը նշանակուի: Այդ շրջանի ոչ-մահմետական փոքրամասնութեան հետ չափազանց անխղճութեամբ կը վարուի: Համաձայնական պետութիւններուն Օսմանեան կառավարութեան մօտ կատարուած ճնշումներուն հետեւանքով՝ 22 Մարտ 1919-ին կը պաշտօնազրկուի: 1920-ի Յունիսին կը միանայ քեմալականներուն: Կը դրկուի Սեւ Մովի շրջան՝ յոյն հրոսակները (Պոնտոսի յոյները) ընկճելու, 18-50 տարու քրիստոնեաները երկրին խորքերը աքսորելու հրահանգով: Փոխանակ հրամանի գործադրութեան՝ գանոնք կը ջարդէ: 4 Նոյեմբեր 1921-ին կեդրոն կը կանչուի: Դեկտեմբերի գարնան, Տերսիմի շրջանին մէջ սկսած քոչկիւրի ըմբոստացումը զսպելու պարտականութիւնը կը տրուի: Գործի լծուելէ առաջ, ««ծօ» ըսողները ոչնչացուցինք, հիմա կարգը «լօ» ըսողներուն եկաւ» կ'ըսէ՝ ակնարկելով հայոց ջարդին: Ըմբոստները մինչեւ 17 Յունիս 1921 կը զսպուին: Սպայակոյտի նախագահութիւնը անոր զինուորական պարտականութեան վերջ կու տայ: Ան ալ իր փեսային քովը կ'առանձնանայ: Երբ արեւմտեան ճակատի բանակը 1. եւ 2. բանակ ըլլալով երկուքի կը բաժնուի, Մուսթաֆա Քեմալ ալ Նուրետտին փաշան, - մինչեւ այդ օր պետութեան շատ մը աղտոտ գործերը յաղորդութեամբ կարգադրած այս անխիղճ զինուորականը, - կը նշանակէ 1. բանակի հրամանատար⁷:

Թուրք ամբոխը, կազմուած 5-6 հոգիներ քաղաքի խմբակներէ, զինուած պատերազմական գէնքերով՝ կը շրջի փողոցները: Խմբակներ բռնութեամբ հայոց տունները կը մտնեն, տնեցիները կը խոշտանգեն, կը կողոպտեն ու կը սպաննեն: Հայոց թաղի բոլոր անկիւնները հետզհետէ կը գրաւեն քեմալական զինուորները, որոնք փողոցէն անցնող թաղեցիներու երբ պատահաբար կը հանդիպին, ազգութիւնը ստուգելէ ետք՝ հրեաները ազատ կ'արձակեն, իսկ քրիստոնեաները, մանաւանդ հայերը կը կողոպտեն եւ ահռելի չարչարանքներով կը մեռցնեն:

Շաբաթ գիշեր, ընդհանրապէս քաղաքին ծայրերը գտնուող յոյն թաղերը, իսկ մասնաւորաբար հայ թաղերը նշաւակ կը դառնան թրջական վայրագութիւններու: Կը սկսին քեմալական անլուր եւ աննախընթաց խժողժութիւնները: Տունները կը թալանուին: Թուրք կիներ եւ տղաք թալանը թուրքի տուններ կը տանին: Խուժանին զխաւորներն ալ կը զբաղին հայեր փնտռելով եւ գանոնք տեղն ու տեղը կամ տուններէն հեռացնելով՝ սպաննելու գործով: Այդ թաղերուն մէջ բնակող օրիորդներ եւ կիներ կ'առեւանգուին եւ առարկայ կ'ըլլան թուրք խուժանի եւ



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԼՈՒՍԵ ԵՒ ԼԵՆԱ
ՏԵՐՏԵՐԵԱՆ**

ՄԱՍԻՍ - 2023

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնւոյ Հայ Եւ Յոյն Թաղամասերու Հրկիզման

զինուորներու վայրագ վերաբերումին:

Կիրակի, 10 Սեպտեմբերի կէսօրէ վերջը, մեծ թափով յառաջ կը տարուին ջարդը, թալանը եւ առեւանգումները: Ժամը 3-ին հրդեհ կը ծագի հայանոցին էն ծայրը եւ տաճկանոցին էն մօտ եղող տունէ մը: Հրշէջ խումբը, անզլիացի նաւագներու ալ ընկերակցութեամբ, հրդեհը անմիջապէս կը մարէ: Կիրակի գիշեր, մինչեւ առտու կը շարունակուին խժոժութիւններն ու վայրագութիւնները:

11 Սեպտեմբերին, Երկուշաբթի, հայերու կահ-կարասիները օր ցերեկով սայլերու մէջ դրուած կը տարուին: Այդ գիշեր ժամը 2-ին կրկին հրդեհ կը ծագի նոյն տան մէջ: Հրշէջ խումբը կրակը կը մարէ:

Քեմալական բանակին քաղաք մուտքէն սկսեալ, անոնցմէ փախչող գաւառացիներ եւ իրենց տունները լքող հայեր եւ յոյներ կ'ապաստանին Ս. Ստեփաննոս տաճարը, որ շրջապատուած էր ընդարձակ պարտէզով եւ ամրաշէն պատերով: Փողոցի դռներն ալ էին երկաթեայ, ամրակուռ ու ամրափակ: Հոն ապաստանողներուն թիւը կը հասնէր 8-9,000-ի, որոնցմէ շուրջ 2,000-ը մանուկներ էին: Տաճարը, քեմալական բանակի քաղաք մտած ժամէն սկսեալ, կ'ենթարկուի թուրքերու յարձակումին:

Առաջնորդարանի պատուհանէն կը տեսնուի, որ 400 զինուորներ դիմացի խանին մէջ քանդիչ գործիքներով կը պատրաստուին եկեղեցւոյ վրայ յարձակիլ: Սոյն յարձակումները կը կրկնուին՝ ամէն անգամ աւելի խիստ եւ աւելի զօրաւոր հրաձգութիւններով, եկեղեցւոյ պարտէզը նետուած ռումբերով: Թուրքերը որեւէ կերպով չեն կրնար մուտք գործել, որովհետեւ ապաստանեալներուն մէջ կային մօտ 50 զինեալ երիտասարդներ,

յոյն վաճառատուները, որոնց մէջ կային մեծ դրամագլուխով հաստատութիւններ: Վաճառականներու ապրանքները սայլերով կը տարուին թուրքերու եւ հրեաներու թաղերը: Գրեթէ ամբողջ շուկային քրիստոնեաներու պատկանող մեծ ու պզտիկ խանութները եւ մթերանոցները կը դատարկուին:

13 Սեպտեմբերին, Չորեքշաբթի, հայոց թաղին մէջ թուրք մուսուլմաններ հոն կողոպուտը շարունակող թուրքերուն կ'ազդարարեն կարելի փութով Հայնոցէն հեռանալ: Խուժանին թաղէն հեռանալէն քիչ յետոյ, ժամը 2-ին, հայ տունէ մը հրդեհի մը սկզբնաւորութիւնը կը նշմարուի: Հրշէջ խումբը կը հասնի առանց անզլիացի նաւագներու ընկերակցութեան, որովհետեւ անզլիացի ծովակալը իր բոլոր նաւագները քաշած էր ցամաքէն: Հրշէջ խումբին ջանքերը կը չէզոքացուին թուրքերու կողմէ ջրհանկիրներուն վրայ բացուած կրակով: Թուրք կառավարութիւնը կ'ուզէ հայոց վերագրել այդ հրացանաձգութիւնը, որ կը կատարուէր հայոց եկեղեցիէն: Ասիկա խեղաթիւրում մըն էր, քանի որ օր մը առաջ թուրքերը եկեղեցին գրաւած էին: Հրդեհի սկզբնաւորութեան հազիւ երկու ժամ անցած, արդէն հրոյ ճարակ եղած էին 30-40 տուն, 10 խանութ, 1 փուռ, 1 պանդոկ եւ 1 ոգելից ըմպելիներու գործարան պարունակող քառակուսի տարածութիւն մը: Դէմ-դիմաց գտնուող Հռիփսիմեանց վարժարանին եւ ամերիկեան աղջկանց վարժարանին մէջ հազարաւոր յոյներ եւ հայեր ապաստանած էին:

Վարժարանները իրենց դռները կը բանան ու ժողովուրդը քարափ կ'առաջնորդեն: Ամերիկեան վարժարանին մէջ, ամերիկեան նաւագներու կողքին, հաստատութիւնը պաշտպանելու պաշտօնով 10 հատ ալ թուրք զինուոր կը գտնուի: Երբ ժողովուրդը կը սկսի շէնքէն դուրս վազել, այդ զինուորները կը սկսին անոնց վրայ կրակել եւ «կեպուղներ, ինչո՞ւ կը փախչիք» պոռալ: Հրձիգներ չեն բաւականանար շուկայի, Հայնոցի եւ Թապախանէի հրդեհներով եւ ամէն միջոցի կը դիմեն հրդեհը ճիւղաւորելու եւ հասցնելու հեռաւոր թաղեր, ուր օտար հաստատութիւնները մէջ պահուած կային մեծ թիւով հայեր եւ յոյներ: Կրակը սաստկացնելու համար թուրքերը քարիւղով կը թրջեն հազարաւոր շէնքեր: Մինչեւ առտու մոխրակոյտի կը վերածուի 30 հազարի չափ շէնքեր, որոնց մէջ կը գտնուէին 21 եկեղեցի, 32 վարժարան, 5 հիւպատոսարան, 7 ակումբ, 5 դրամատուն, 5 հիւանդանոց եւ այլ կարեւոր շէնքեր: Թուրքերը կը ջանան հրդեհէն փրկել յոյն ազգային նորակառոյց դրամատունը, Քրետի Լիոնէ դրամատունը, Կիֆրէի գրասենեակները, իտալական հոյակապ վարժարան մը՝ նախապէս անոնց շրջակայ շէնքերը ռումբերով կործանելով:


ՅՈՒՆԱՅ ԱՈՍՁՆՈՐԴ ԽՐԻՍՏՈՍԹՈՍՈՍ (CHRYSOSTOMOS KALAFATIS):

ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՆԱՀՏԱԿՈՒՄԸ

9 Սեպտեմբերին, Շաբաթ, յունաց առաջնորդը քեմալականներու յաղթական մուտքին առթիւ, իր հետ ունենալով երկու յոյն երեւելիներ, ժամը 4-ին կը ներկայանայ ընդհանուր հրամանատար Նուրետտին փաշային եւ անոր բարի գալուստ կը մաղթէ: Փաշան անոր կը յանձնարարէ խրատել յոյն ժողովուրդը, որպէսզի 1: գէնքեր ունեցողներ զանոնք կառավարութեան յանձնեն, 2: փախստական զինուորներ յանձնուին զօրանոց, 3: բնաւ երկիւղ չունենայ ժողովուրդը եւ իր գործերով զբաղի ըստ առաջնոյն: Սրբազանը հաւաստիքներ ընծայելով եւ շնորհակալութիւն յայտնելով կը մեկնի եւ առաջին առթիւ իսկ կը ձեռնարկէ հրահանգներուն գործադրութեան: Վերադարձին երկու ժամ վերջ, քանի մը զինուորներ եւ ոստիկաններ կու գան ու սրբազանը կը հրաւիրեն Նուրետտին փաշային ներկայանալ՝ նոր հրահանգներու համար: Սրբազանը նոյն երեւելի անձերով, ժամը 6-ին, կրկին կ'երթայ կառավարական ապրանքը, ուր թուրք խուժանը խոնուած կը գտնէ: Փաշան անկէ բացատրութիւն կ'ուզէ յոյն տիրապետութեան շրջանին իբր թէ թուրքերուն կարգ մը չարիքներ հասցուցած ըլլալուն կապակցութեամբ: Սրբազանը կապեալ բանալ կը դրկուի՝ մինչեւ հարցաքննութեան աւարտը: Զինուորներու պաշտպանութեան տակ հազիւ շէնքէն դուրս ելած, խուժանը կը յարձակի սրբազանին եւ երկու երեւելի անձերուն վրայ ու զանոնք դժոխային այլազան չարչարանքներով, խոշտանգումով, գիշատիչ գազաններու նման կը բզկտէ:

ԶԱՐՅՈՒՐԵԼԻ ԳԻՇԵՐԸ

Ահաւոր հրդեհին արշաւանքին առջեւ ինկող բոլոր տունները եւ օտար հաստատութիւնները կը պարպուին: Ժողովուրդը ստիպուած կը դիմէ



Նեղ քարափին վրայ խճողուած հայեր եւ յոյներ ու հրկիզուած շէնքեր

որոնց արձակած փամփուշտները կը սանձէին թշնամիին յանդգնութիւնը:

Այդ օր, ինքնաշարժով հոնկէ կ'անցնի Տոն Սքալիարինի՝ Քաթարալի քահանայական դասէն, որ խօսք կու տայ հրամանատարութիւն երթալ՝ վթութիւնը հայցելու նպատակով կարգադրութեան մը համար: Ան իր վերադարձին կ'աւետէ, թէ յաջորդ օր խառն յանձնախումբ մը պիտի գայ՝ եկեղեցիին մէջ գտնուողները ապահով դուրս հանելու պաշտօնով: Այդ գիշեր յարձակումները կը դադրին: Յաջորդ օր, 12 Սեպտեմբերին, լատին կղերականներու հսկողութեամբ ժողովուրդը օտար թաղեր կը փոխադրուի, սակայն ճամբու ընթացքին զինուորներ փոխադրուողները կը ծեծեն ու կը կողոպտեն: Թուրքեր կը տիրապետեն Ս. Ստեփաննոսին ու կը թալանեն եկեղեցիին ոսկի սկիհները, խաչերը, արծաթեայ ջահերն ու աշտանակները, մետաքսեայ գորգերն ու 10,000-ի չափ գիրքերը: Դուրեան սրբազան իր ցասումը հետեւեալ բառերով կ'արտայայտէ. «Այսպիսի փառահեղ եւ հարուստ տաճար մը ոճրագործներու պիղծ ձեռքը կ'անցնէր»:

Երեքշաբթի, 12 Սեպտեմբերին, հայոց թաղի բոլոր տունները թալանուած են ու դատարկուած: Այդ տուններու մեծ մասին իւրաքանչիւրին մէջ 1-4 դիակներ կային: Դժոխային այդ վիճակին կ'ենթարկուին նաեւ Քարաթաշի եւ Քորտալիոյի հայոց տունները, ինչպէս նաեւ ծայրամասերու յոյներու տունները:

Շուկային կողոպուտը նոյն թափով յառաջ կը տարուի խուժանին եւ քեմալական զինուորներուն կողմէ: Թալանը նախ կը սկսի հայ վաճառատուներէն, ուր կային 100-150,000 անզլիական ոսկի արժէքով կերպասեղէն պարունակող վաճառատուներ: Թալանի կ'ենթարկուին նաեւ

ԾՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹ ԵՒ ՄԱՅՏԱ ԵԱՂԱՉԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2023

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

դէպի քարափ, որ այդ գիշեր կը ներկայացանէ դժոխային տեսարան մը: Երբ հրդեհը քարափին կը մօտենայ, սարսափահար ժողովուրդը առաջ չի կրնար երթալ, որովհետեւ արեւոտ ծով մը կայ, ետ ալ չի կրնար դառնալ, որովհետեւ ահալուր հրդեհ կայ, իսկ երկու կողմերը՝ խուժանին եւ գինուորին սուխները: Կողոպուտ, խոշտանգում, լուտանք եւ քանակութիւն անպակաս են: Ձարհուրեալ ժողովուրդը մէկ կողմ կը նետէ իր հետ բերած մեծ ու փոքր ծրարները եւ կ'աշխատի միայն ինքզինք ազատել: Քիչ չէ թիւը այն հայերուն, որոնք նախ իրենց մանուկներն ու կիները, ապա ինքզինքնին ծով կը նետեն: Հեծեալ գինուորներ մերթ ընդ մերթ արագ Քարափի հրկիզուած շէնքերէն մի քանին, հոն խճողուած ժողովուրդը եւ ընկղմող նաւ մը: Ձիավարութիւնով կը յարձակին ժողովուրդին վրայ եւ մէկ մասը ծով կը թափեն: Յաճախակի հրաձգութիւններէն ժողովուրդը լեղապատառ կ'ըլլայ: Վարժ լուրդող երիտասարդներ կը հասնին մինչեւ մարտանաւեր, սակայն յաճախ կը մերժուին: Դժոխային այս արհաւիրքին առջեւ եւրոպացիներու անտարբերութիւնը եւ թուրքերուն անգթութիւնը իրար կը գերազանցեն: Այդ գիշեր օտար նաւագններ մեծ դժուարութիւնով նաւ կը փոխադրեն իրենց հպատակները, որոնց հետ կ'ազատին նաեւ կարգ մը յոյներ ու հայեր: Առաւօտուն, ծովու մակերեսին վրայ բազմաթիւ ուռած դիակներ եւ կիսով ընկղմած նաւակներ կը տեսնուին: Այդ նաւակներուն յատակին նախօրօք ծակեր բացեր են, որպէսզի երբ հայեր փախչելու համար անոնց մէջ նստին՝ ընկղմին:

1922-ի Սեպտեմբերին, Toronto Daily Star թերթի խմբագրութեան յանձնարարութեամբ որպէս թղթակից Ձմիւռնիա գտնուած է ամերիկացի գրող, լրագրող Էրնեստ Հեմինգուէյ (Ernest Hemingway, 1899-1961) Հայերու եւ յոյներու տառապանքները իր վրայ շատ ծանր ազդեցութիւն ունեցած են: Կեանքին մէջ առաջին անգամ գիշերները մղձաւանջներ ունեցած է: «Ամենասարսափելի վիճակը մահացած երախաներ ծնող կանայքն էին: Անոնք որեւէ բանով մը կը ծածկէին ու այդպէս կը թողէին» կը գրէ: Իր կարծ պատմութիւնները «Մեր ժամանակը» խորագրեալ գիրքով մը 1925-ին հրատարակած է: Նոյն այդ գիրքին 1930-ի հրատարակութեան մէջ կ'աւելցնէ «Ձմիւռնիոյ նաւահանգիստին մէջ» խորագրեալ գրութիւններ - In Our Time On the Quai at Smyrna:

ՉԵՐԲԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳԵՐԵՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբեր 14-ին, Հինգշաբթի առտու, Իզմիրի ծովանոցը կը պարզէ նաւաբեկութեան մը յաջորդող վիճակը: Բազմաթիւ դիակներ կը ծփծփան ալիքներուն վրայ: Շատ մը անդեկ ու անթի նաւակներ կ'երեւին մարտանաւերու եւ փոխադրանաւերու շուրջը: Այդ նաւակներուն մէջ լեցուած անօթի ժողովուրդը կէս գիշերէն ի վեր ալիքներուն խաղալիքը եղած է: Քարափին երկու ծայրերը գտնուող մաս մը շէնքերէ գատ, անոր ամբողջ երկայնքին վրայ գտնուող շէնքերը իրենց վերջին ճարձատու մին մէջն են: Քարափին հրդեհէ գերծ վերջաւորութիւններուն վրայ սփռուած է գիշերուան տառապանքներէն յոգնած ժողովուրդը: Քեմալական բարբարոս գինուորները, որոնք հագած էին թաւոտնեայ տաբատներ, կապած էին խաչաձեւ փամփշտակալներ եւ կը կրէին դաշոյններ, կը նմանէին աւազակախումբերու: Այս գինուորները եւ նախկին ոստիկանները, բոլորն ալ դժոխային երեւոյթով եւ դաժան դէմքերով, կը թափանցեն ժողովուրդին մէջ եւ կը ձեռքաւարակեն այրերը: Ձեռքաւարակներէն հայեր ճամբան կ'ենթարկուին խուժանին յարձակումներուն՝ կողոպուտ, լուտանք, ծեծ, որոնք կը շարունակուին գորանոցին մէջն ալ: 14-70 տարու այրերով կը լեցուին գորանոցները: Չորանոց կը տարուին նաեւ աղջիկներ եւ կիներ, որպէսզի վայրագ գինուորներ, ազատ համարձակ, չազուրդ տան իրենց կիրքերուն: 3-5 հազար հոգի կը յանձնուի գինուորներուն, առանց համրուելու եւ անուննին արձանագրելու, որպէսզի տարուին Փընար Պաշը: Ճամբան գինուորները կը ստիպեն գերիները վազել իրենց ձիերուն գնացքով՝ զանոնք շարունակ հարուածելով: Սեպտ. 16-ին, երբ ձիերու հարիւրապետին բիրը կը կոտրի, ճերմակ մօրուքով հրեայ մը, 55-60 տարեկան, իր հաստ գաւազանը անոր կու տայ, որպէսզի գերիները ատով ծեծէ: Մարդներ եւ ինկողներ կը սուխնահարուին: Մինչեւ Փընար Պաշը, երկու քուկէս ժամուան ճամբայ, կարաւանին մէկ քառորդը արդէն կը պակսի: Հոն երեք օր շարունակ գերի կը փոխադրուի: Փընար Պաշը տարուողներէն շատեր կը յանձնուին գիւղացի թուրքերուն՝ գոհացում տալու համար անոնց ոճրագործութեան ծարաւին: Որեւէ թուրք անասանան իրաւունք ունէր ընելու ինչ որ ուզէր որեւէ քրիստոնեայի, նոյնիսկ կարաւանէն դուրս քաշելով սպաննելու: Քեմալականներուն ձեռքը ինկած գերիներուն թիւը կը հասնի 70-80 հազարի:

Հրդեհին յաջորդող առաջին օրերուն, այն ընտանիքները, որոնց

տունը-տեղը հրդեհին եւ այր մարդիկն ալ քեմալական գինուորներուն գոհ դարձած էին, գերեվարուեցան: Քաղաքին ծայրամասերը տարուող անպաշտպան կիները կ'ենթարկուին ամէն տեսակ խժոժութիւններու: Հոն բոլոր աղջիկները կը գրկուին իրենց կուսութենէն: Ձիւնուորները անյազօրէն կորզած են այդ խեղճերուն վրայ գտնուած յետին լուծան, ոսկեպատ ակոսներ քակելու համար դանակի ծայրեր գործածուած, հանելը անկարելի մատանիներու համար ալ մատեր կտրուած են:

ՍԵՊՏԵՄԵՐ 16-Ի ՕՐԵՆՔԸ

Քեմալական կառավարութիւնը Սեպտ. 16-ին կը հրատարակէ հետեւեալ օրէնքը.

1.- Հելլենահպատակ կամ ոչ, 18-45 տարեկան յոյներ պիտի ձերբակալուին ու պատերազմական գերի պիտի նկատուին: Այս օրէնքը կը վերաբերի նաեւ հայերուն, քանի որ յոյն գինուորին հետ կուսեցան թուրքին դէմ, իսկ հրեաներէն միայն հելլենահպատակները ենթակայ են այս օրէնքին:

2.- Միւս բոլոր յոյներն ու հայերը ազատ պիտի ըլլան արտասահման մեկնելու մինչեւ Սեպտ. 30: Այս պայմանաժամէն յետոյ Իզմիր մնացող քրիստոնեաները երկիրն խորքերը պիտի դրկուին:

Այս օրէնքին առաջին մասին համաձայն, Փընար Պաշը քշուած առաջին կարաւանէն ծերեր եւ պատանիներ զատուելով՝ Իզմիրի գորանոցը կը վերադարձուին: Օրէնքին յայտարարուելէն յետոյ ձերբակալուածներուն մէջէն ծերերու եւ պատանիներու ընտրութիւնը կը կատարուի գորանոցներու մէջ: Այսպէս, Սեպտ. 22-ին, առաջին անգամ, իբր 700 ծեր եւ պատանի գորանոցէն ազատ կ'արձակուին: Անոնց ձեռքը որեւէ փաստաթուղթ չի տրուիր, որով շարունակ նոր ձերբակալութեանց կ'ենթարկուին եւ կրկին ու կրկին գորանոց կը տարուին:


18-45 տարեկան գերեվարուածներէն եւ որեւէ կերպով արտասահման փախչիլ յաջողածներէն գատ քաղաքին մէջ մնացած ծերեր, պատանիներ, կիներ եւ մանուկներ բազմիցս կեղեքումի եւ խժոժութիւններու ենթարկուած՝ մուրացկաններու վիճակ ու կերպարանք ստացած էին: Այս թշուառ ու չքաւոր ժողովուրդն էր, որ պիտի օգտուէր վերոգրեալ օրէնքին վերջին տրամադրութենէն՝ թողելով հայրենի երկիրը եւ գաղթելով օտար հողեր:

ՍԵՐՉԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍՏԱՍԱՍՈՅՅԻՆ ՂԵՐԸ

Ոչ մէկ քրիստոնեայ ցանկութիւն ցոյց կու տար մնալու Իզմիր: Բոլորն ալ կը նախընտրէին անօթի մեռնիլ օտարութեան մէջ, քան մնալ Քեմալի բարբարոս կառավարութեան տիրապետութեան տակ: Սակայն մարդիկ կարեւորութիւնը չունէին նաևով արտասահման տեղափոխուելու: Այդ գործը ստանձնեց Ամերիկեան Նպաստամատոցը (Near East Relief) եւ հիանալի կերպով գլուխ հանեց աշխոյժ պաշտօնեաներու ձեռքով: Սեպտեմբեր 22-30, ութ օրէն, օրական երկու-երեք, ապա տասը-տասներկու շոգենաւերով հարիւր հազարէ աւելի թշուառներ փոխադրուեցան Յունաստանի հիւրընկալ կղզիները եւ մայր ցամաքի տարբեր վայրերը: Գաղթականներէն շատ աննշան թիւով մարդիկ կը ցանց իրենց հետ Իզմիրէն դուրս հանել փոքր գումարներ: Գրեթէ ամբողջ ժողովուրդը առանց դրամի եւ զգեստի հասած է գաղթավայրերը՝ տրուած ըլլալով, որ Քեմալի ընչաքաղց գինուորները կրկին ու կրկին խուզարկութեան կ'ենթարկէին ճամբորդները ու կը կորզէին անոնց վերջին բնիոնն ալ:

ՂՈՒՐԵԱՆ ՍՐԲԱՋԱՆԻ ԱՋԱՏԱՆ ՊԱՐԱՎԱՆԵՐԸ

Սրբազանը իր տեղեկագրին մէջ կը գրէ. «Քեմալական բանակին Իզմիր յաղթական մուտք գործելէն սկսեալ մինչեւ յաջորդ օրը՝ կիրակի, Ս. Ստեփաննոսի եւ մանաւանդ իմ բնակարանիս՝ առաջնորդարանին վրայ թուրք խուժանին եւ անկանոն գինուորներու կողմէ եղած կատաղի շարձակումները եւ հրացանաձգութիւնները խորհիլ տուին ինձի, թէ առաջնորդարանը թողելով ուրիշ տեղ մը ապաստանիլս եւ անկէ ալ որեւէ միջոց գտնելով Նուրեատտին փաշային ներկայանալս եւ ժողովուրդիս վրայ անոր գթութիւնը եւ բարեացակամութիւնը հայցելս աւելի ճիշդ պիտի ըլլար»: Կիրակի առաւօտ, ժամը 8:30-ին, երբ ստահակ թուրքեր առաջնորդարանի դիմացի խանութներու թաւալներով կը զբաղին, սրբազանը առանց տեսնուելու առաջնորդարանէն դուրս կ'ելլէ: Ճամբան հայ կաթոլիկ հասարակութեան ազգապետին կը հանդիպի: Ան կ'երթայ առժամեայ գինուորական քաղաքապետ կարգուած Իզգեստտին փաշային հետ կը տեսակցի: Փաշան անոր հասցնէ առնելէ վերջ կ'ըսէ, թէ յարմար



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

պահուն լուր կը դրկէ: Սրբազանը կը գրէ. «Երկուշաբթի եւ Երեքշաբթի մնացինք սպասողական դիրքի մէջ: Այդ օրերուն, ըլլալ Հայնոցէն հասած ահաւոր ջարդի լուրերը եւ ըլլալ Խրիստոսթոմոս սրբազանի մահուն գոյժը գիս մատնեց սոսկալի մտատանջութեան: 13 Սեպտ., Չորեքշաբթի, շատ աւելի վրդոված վիճակ մը ունէի, քանի որ մէկ կողմէն խուժանը եւ զինուորները մեր գտնուած կողմերը եւս մխրճուել սկսած էին, իսկ միւս կողմէն Հայնոցէն ու շուկայէն ծագած հրդեհները մեզի եւս կը սպառնային»:

Սրբազանը կը շարունակէ. «Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, պրն. Սիւլեան՝ հայ կաթողիկոսներու ազգապետը, ամենամեծ գոհողութեամբ եւ արիւթեամբ գիս առաջնորդեց Լազարիստներու Սաքրէ Քէօր (Sacre Coeur) վարժարանը, ուր նոյն միաբանութեան վերատեսուչը եւ բոլոր հայրերը ցոյց տուին ինձ հանդէպ մեծ յարգանք եւ ընդունելութիւն, եւ տեսնելով իմ յուզումնային վիճակս, ամէն ջանք ի գործ դրին հանդարտեցնելու համար գիս, հաւաստելով թէ մինչեւ վերջ պիտի չթողէին գիս եւ պիտի պաշտպանէին անձս ամէն վտանգի դէմ: Համայնակուլ հրդեհը սկսաւ սպառնալ Սաքրէ Քէօր վարժարանին եւս եւ Լազարիստ հայրեր ստիպուեցան թողուլ գայն, ու գիս եւս իրենց հետ առած ամենամեծ դժուարութեանց ընդդիմակայելէ եւ խուժանի յարձակումներէն գիս փրկելէ յետոյ գիշերուայ 3-ին հագիւ կրցանք ինքզինքնիս փոխադրել էտկաու Քինէ (Edgar Quinet) ֆրանսական մարտանաւը, ուր մնացինք երեք օր եւ վայելեցինք բարեացակամութիւնը ֆրանսական քօսիւլ պր. Կրէյլէի, ինչպէս եւ Մօնէնիօր վալլէկայի եւ Լազարիստ միաբանութեան վերատեսչին եւ նաեւ միաբանութեան հայրերուն, որոնց բոլորին կը պարտիմ իմ կեանքը եւ զոր նուիրած եմ ծառայելու ազգիս եւ Եկեղեցւոյս»: 13 Հոկտ. 1922, Աթէնք¹⁰:

Թէեւ Դուրեան սրբազան թրքական խոշտանգումէն ազատած է, սակայն 11 տարի յետոյ, 24 Դեկտ. 1933-ին, Կիրակի օր, որպէս Հիւսիսային Ամերիկայի թեմի առաջնորդ, Նիւ Եորք, Ուաշինկթըն Հայթցի (Washington Heights, Manhattan, New York City), Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ երբ առաւօտեան ժամը 10:30-ին պատարագ մատուցելու համար խորան պիտի բարձրանայ, «դաշնակցական»-է մը դաշունահարուած՝ հողին կ'աւանդէ: Երեկոյեան, լուրերու հաղորդումը ոճիրը կը ներկայացնէ որպէս «Ամերիկեան պատմութեան մէջ անլուր ոճիր մը»: Եկեղեցւոյ մէջ խուժմբ մը մարդիկ Դուրեան արքեպիսկոպոսը կը շրջապատեն ու անոնցմէ երկուքը սարկաւազները մէկդի կը հրեն ու երրորդ մըն ալ սրբազանը կողքէն երեք հարուածով կը դաշունահարէ: Ոճրագործը դաշոյնը թերթի մը մէջ կը փաթթէ ու կը նետէ խորանին առջեւ: «Հայ»-երէն երկուքը ցկեանս բանտարկութեան կը դատապարտուին:

ՁՄԻՈՆԻԱՆ (ԿԵԱՒՈՒՐ ԻԶՄԻՐԸ) 100 ՏԱՐԻ ԱՌԱՋ Ո՛Վ ՅՐԿԻԶԵՑ

Այդ թուականներուն, քաղաքին բնակչութեան մօտաւորապէս կէսը յոյներէ, հայերէ եւ եւրոպացիներէ՝ քրիստոնեաներէ կը բաղկանար, որով թուրքերը Ձմիւռնիան կեաւոր (անհաւատ: Իզմիր կը կոչէին: Հակառակ այն իրողութեան, որ քաղաքին գրաւումէն եւ հրկիզումէն հարիւն տարի (1922-2022) անցած է, այդ ասութիւնը տակաւին կը գործածուի:

Ըստ ականատեսներու, դիւանագէտներու եւ հրշէջ խումբի վկայութիւններուն, հրդեհը սկսած է Հայնոցի տունէ մը: Գործածելով այս իրողութիւնը որպէս յենակէտ՝ գրի առնուած է թրքական պաշտօնական պատմագրութիւնը. «Հրդեհը սկսեցուցած են թրքական ռազմական համազգեստ հագած 22 հայ, որոնք խոստովանած են, որ Ձմիւռնիան հրդեհած են, որպէսզի իրենց ունեցուածքը թուրքերուն չթողուին»:

Նկատի ունենալով քաղաք մասնող քեմալական բանակի հրամանատար Նուրետտին փաշայի անցեալի գործունէութիւնները եւ Օսմանեան բանակին մէջ առանց վերէն եկած հրահանգի գործողութեան մը չձեռնարկուելը, ինչպէս նաեւ մինչեւ հրդեհ իր զինուորներուն կատարած թալանն ու սպանութիւնները, մտածումները կը կեդրոնանան Նուրետտին փաշային վրայ:

Թուրք մամուլը, ըստ իր հակահայ կեցուածքին, Իզմիրի հրդեհը ամէն առիթով կը ջանայ հայոց վերագրել: Այդ շրջանին Կ.Պոլիս հրատարակուող «Ճակատամարտ» օրաթերթի 5 Հոկտեմբեր 1922-ի թիւին «Մեր Խօսքը» սիւնակին մէջ խմբագրապետին ցատումը յայտնող մեծ-մեծ տառերով գրուած է.

«ԿԸ ԲԱԻԷ՛, ԷՅՖԷՆՏԻՆԵՐ, ԿԸ ԲԱԻԷ՛», ու կը շարունակուի. «Կը թուի թէ թուրք մամուլը ուխտեր է անխափան շարունակել իր հակահայ գործունէութիւնը, հակառակ լրջութեան բոլոր հրաւերներուն: Իզմիրի սարսափներէն ի վեր, օր շանցնիր որ, թուրք թերթի մը մէջ, ծանօթ կամ

անծանօթ ստորագրութեան տակ, գնդասեղի հարուածներ չտեղան հայերու կուրծքին: Տակաւին առջի օր, «Իլէրի»-ի խմբագրապետը կը պնդէր, թէ կառավարական քննութեամբ հաստատուած է որ «Իզմիրի հրդեհին պատճառ եղած են յոյները եւ մասնաւորաբար հայերը: Ու կը պատմէր թէ Սեպտ. 13-ի եւ 14-ի գիշեր ուռմբեր կը տեղային եկեղեցիներէն, թէ քաղաքին մէջ ամէն վայրկեան հայ եւ յոյն հրձիգներ կը ձերբակալուէին: «Իլէր»-ի խմբագրապետը, եթէ հռչակաւոր ձէլալ Նուրին չէ, պէտք է պարկեշտութիւնը ունենար խոստովանելու որ, մէկ սուտ վկայութեան դէմ, հարիւր իրական, ականատեսի պատմութիւն կայ, հրդեհի ծագման պարագաներու մասին: Եւ այդ պատմութիւնները մեզմէ առաջ, օտարականներ են որ պատմեցին, հեռագրեցին եւ երզումով հաստատեցին... Յիշէ՞ք մէկ-երկուքը այդ օտար վկայութիւններուն, որոնք թարգմանուեցան Պոլսոյ թերթերուն մէջ ալ. անշուշտ բացառութիւն ըլլալով թուրք մամուլը: Մեր Սեպտ. 27-ի թիւին մէջ, արտատպեր էինք «Մօրնինկ Փօսթ»-ի թղթակցին հետեւեալ հեռագիրը. «Նախապէս չուզեցի ներկայացնել Իզմիրի ողբերգութեան պատմութիւնը, տիրող հակասական գրոյցներու պատճառով: Այժմ որ կրցած եմ բաղդատել անվիացի, սերպ եւ շատ մը ուրիշ զարգացած գաղթականներու մանրամասն պատմութիւնները, անհրաժեշտ է հաղորդել անոնց վկայութեանց եզրակացութիւնը, որուն համաձայն քաղաքը հրկիզուած է «պաշտպանութեան»-ներու կողմէ եւ զինուորական իշխանութիւնները յատկապէս աչք գոցած են»»: Խմբագիրը կը շարունակէ. ««Շիքակօ Թրիպլին»-ի իզմիրեան թղթակցը, որ համակրանք ունի միլլի վարիչներուն հանդէպ, Սեպտ. 15 թուակիր թղթակցութեան մէջ, կը յիշէ ամերիկեան աղջկանց քոլէճի տեսչուհի Միս Միննի Միլ-ի (Miss Minnie B. Mill) եւ ուրիշ ականատեսներու վկայութիւնները, որոնց համաձայն թուրք կանոնաւոր զինուորներն են որ կրակ ձգեցին ձեռնառումներով եւ ուրիշ միջոցներով: ... «Տէլէֆիլիքամ»-ի (Daily Telegram) մէջ, անվիացի ծանօթ առեւտրական մը, Բ. Թրէլլըր, որ ականատես եղած է բոլոր սարսափներուն, կ'ըսէ. «Սեպտ. 13-ին, կէս օրէն յետոյ ժամը 2-ին ծագեցաւ առաջին հրդեհը: Նկատելի է որ հրդեհը ծագեցաւ հայկական թաղին, ինչ որ կ'ապացուցանէ թէ հայերը չէին կրնար ըլլալ Իզմիրը հրկիզողը: Շատ ականաւոր անվիացիներու կարծիքը այն է թէ հրդեհ ձգուեցաւ, հայկական թաղին մէջ կատարուած զանգուածային սպանդին հետքերը ծածկելու համար»»: Խմբագիրը կը վերջացնէ. «Հայերը, հրձիգ: Կը բաւէ՛, էֆէնտինե՛ր, կը բաւէ ինչքան ստեցիք: Իզմիրը կը միայն տակաւին»:

Մտաւորականը, գրող կամ լրագրող, արտայայտութեան համար միջոցի մը պէտք ունի: Այդ միջոցն ալ մամուլն է: Բայց երբ այդ մամուլը՝ մտաւորականին բեմը, կը սեփականացուի անհատի մը կամ հաւաքականութեան մը շահերուն ծառայելու համար, թերթը ստիպողաբար կը հրաժարի մամուլի ինքնութեան եւ կոչման համար անհրաժեշտ ազատութենէն: Ազատ խօսքը տեղի կու տայ թուրքականութեան: Տեղ կը գրաւեն թուրքակները, որոնք «տիրող ձայնը» կը կրկնեն՝ կամայ կամ ակամայ, տգիտութեամբ, նաեւ շահախնդրութեամբ տուրք տալով մենատիրական փորձութիւններու:

Քաղաքակիրթ երկիրներու մէջ ընդունուած տեսութիւն մըն է, որ երկրի մը մամուլը կը նկատուի այն հիմնական աղբիւրներէն մին, որ ուղղակիօրէն կը փոխանցէ ժամանակաշրջանի մը պատմական իրողութիւնները: Մամուլը իր ներկայացուցած քաղաքական, գաղափարական եւ վաւերագրական բովանդակութեամբ նիւթերով կը հանդիսանայ նաեւ երկրի մը քաղաքական մշակոյթի հայելին:

Ինչպէս ըսուած է, ասիկա միայն քաղաքակիրթ երկիրներու յատուկ կացութիւն մըն է:

Միս Միննի Միլ իր լրատուութեան մէջ, ի միջի այլոց, նաեւ ըսած է. «Ճաշէն յետոյ հրդեհը սկսաւ դպրոցին մօտ տեղէ մը, որ արագօրէն կը տարածուէր: Ես անձնապէս տեսայ թուրք սպայ մը, որ տունէ մը ներս մտաւ քարիւղի կամ պէնզինի փոքր թիթեղով մը: Մի քանի վայրկեանէն տունը բոցերու մէջ էր: Մեր ուսուցչական կազմը եւ աղջիկները տեսան թուրքեր՝ կանոնաւոր զինուորականի համազգեստով, ոմանք ալ սպայի, որոնք տուններէն ներս կը տանէին ցուպեր, որոնց ծայրը կար հեղուկով լեցուն թիթեղի մէջ թաթխուած լաթ մը: Քիչ յետոյ տունը կը սկսէր այրիլ: Այդ պահուն փողոցները մարդ չկար, ի բաց առեալ խումբ մը թրքական զինուորներէ: Հայկական թաղին մէջ ամէն երրորդ կամ հինգերորդ տուն հրկիզուած էր»¹¹:

«Երկիր» օրաթերթի 18 Սեպտ. 1922 թիւի 3-րդ էջին մէջ կը կարդանք. «Իզմիրի հետ ամէն հաղորդակցութիւն՝ ըլլալ ցամաքային,



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

ըլլայ ծովէն, ամբողջովին դադրած ըլլալով, թղթակցութիւններու եւ փոխադրութիւններու կարելիութիւն չկայ: Միայն անթել հեռագիրը կը բանի: «Իլէրի» կ'ըսէ թէ Իզմիրի մէջ մթերուած ռազմանիւթերու կրակ տուած են, եւ ատոր հետեւանքով, քաղաքը մոխրակոյտի վերածուած է: Միայն թրքական թաղերը ազատուած են հրդեհէն: Լոնտոնէն կը հեռագրեն թէ Իզմիրի մէջ ողջ մնացած 70.000 հոգիին կացութիւնը յուսահատական է: Նիւթական վնասները 12 միլիոն անգլ. ոսկի կը հասնի: Հրդեհին զոհ գացած են անգլիական եւ Դաշնակից պետութեանց հպատակներ, բայց մեծագոյն մասը ազատուած է: Լոնտոնէն հեռագիր մը կ'ըսէ թէ Իզմիր աներակոյտ մը եղած է: Հրդեհի ատեն սրտածմլիկ տեսարաններ պարզուած են հրդեհէն ու մահէն խոյս տուող սարսափահար ժողովուրդին մէջ: Իզմիրէն «Օրօր»-ի հաղորդած տեղեկութիւններու համաձայն, բնականոն կեանքը վերահաստատուել է Իզմիրի մէջ: Թատրոնները եւ զբօսարանները, որոնք հրդեհէն չեն վնասուել, բազմութեամբ լեցուն են եղեր: Միլիոն սպաները կը զուարճանան հոն: Աթէնքէն 17 Սեպտ.-ին կը տեղեկացնեն, թէ ամերիկեան աղջկանց վարժարանի 300 աշակերտուհիներուն ի՞նչ եղած ըլլալը յայտնի չէ»:

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՄԻՇՏ ԳՐԱՅԱՆՎՈՒԾ ԵՆ ԲԱՐՉՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԵ

Չափազանց հետաքրքրական է ԱՄՆ-ի Չմիւռնիոյ հիւպատոս (1911-1917 եւ 1919- 1922: ճորճ Հորթընի (George Horton, 1859-1942) թուրքերու եւ Չմիւռնիոյ հրկիզման մասին գրած գիրքը՝ The Blight of Asia, հրատարակուած Indianapolis, USA, 1926-ին: Հորթըն այդ գիրքին մէջ Չմիւռնիոյ հայերու եւ յոյներու բնաջնջման քաղաքականութեան եւ քաղաքի հրկիզման մասին կարեւոր տեղեկութիւններ կու տայ: Անոր դատողութիւնները թուրքի էութիւնը ճանչցած, հիասթափ եղած մարդու եւ դիւանագետի դատողութիւններ են, որ կը հասկնայ, թէ ի՞նչ է յառաջդիմութիւնը եւ ինչո՞ւ թուրքը չի կրնար յառաջդիմել: Կը գրէ. «Ան, որ Մերձաւոր Արեւելք չէ ապրած, չի կրնար հասկնալ թուրքին որքանով յառաջդիմած ըլլալը: Ան որ չէ ճամբորդած թուրք գիւղերուն, կամ թրքական կայսրութեան շրջաններուն մէջ, չի կրնար հասկնալ թուրքին «յառաջդիմութեան» զարգացման մակարդակը, հակառակ այն իրողութեան, որ գրեթէ հինգ հարիւր տարիէ ի վեր ապրելով Երկրի մակերեսի ամենահարուստ մասին մէջ, երբեք չէ տեսած կարի մեքենայ, գութան, շոգեմեքենայ, բամպակգտիչ մեքենայ, գնդասեղ կամ լուցկի չէ գործածած: Ան, որ յոյս ունի, թէ թուրքը կրնայ յառաջդիմել, կ'ապրի այն յոյսով, թէ «կարմիր կովը կը փոխէ իր կաշին»»: Ան կ'ուզէ մատնանշել, որ մեծ չափերու հասած բոլոր կոտորածները թուրքերուն կատարածներն են եւ Օսմանեան կայսրութեան պատմութիւնը ընդհանուր առմամբ կոտորածներու պատմութիւն մըն է, որ միշտ հրահանգած են վերին իշխանութիւնները: Չմիւռնիոյ հարցով ալ կը գրէ. «Կոտորածները կը շարունակուին Եւրոպայի մեծ տէրութիւններուն աչքին առջեւ, անոնց զրահաւորներուն ներկայութեամբ, անոնց ակնյայտ թոյլտուութեամբ, բան մը, որ յուսամ երբեք չեմ տեսներ: Կը հաւատամ, որ երբ ճշմարտութիւնը յայտնուի, թէ Չմիւռնիոյ մէջ իսկապէս ինչ պատահեցաւ, Եւրոպայի ու ԱՄՆ-ի քաղաքակիրթ բոլոր անձերը կը զգան այն, ինչ որ ես կը զգամ. ամօթի այն զգացումը, որ ես կը պատկանէի մարդկային ցեղին»:

Հորթըն երկար տարիներու հետազոտութիւններու շնորհիւ այն եզրակացութեան կը յանգի, թէ թուրքը քրիստոնեայ բնակչութիւնը կառավարելու ունակ չէ: Քրիստոնեան կարող է ծաղկիլ եւ բարգաւաճիլ նոյնիսկ անհամար կոտորածներէ յետոյ: Երիտթուրքերու քաղաքականութեան հետեւանքով քրիստոնեաներու կեանքը անտանելի դարձած է: Թուրքին կատարած կոտորածները միշտ կատարուած են վերադաս իշխանութիւններուն հրամանով: Թուրքը խաղաղութեան նկատմամբ հետաքրքրութիւն չունի: Պատերազմել է եւ նուաճել գատ ոչինչ գիտէ: Անհնար է թուրքը պատերազմական գործողութիւններէ ետ կեցնել:

Հորթըն կը գրէ. «Առանց որեւէ բարձր դիրքի, սակայն որոշ չափով պաշտօնական, իմ այս խօսքերը հաւանաբար մեծ կշիռ չեն ունենար, սակայն համոզուած եմ, որ բոլոր այն բաները որ կը գրեմ յառաջիկային երբ կարդացուին, պիտի հասկցուի, թէ բոլորն ալ ճշմարտութիւն են եւ ապացուցուած»:

Հորթընի՝ մօտաւորապէս 100 տարի առաջ The Blight of Asia խորագրեալ գիրքին մէջ գրած տողերը ո՛չ չափազանցութիւններ են, ո՛չ զրպարտութիւններ եւ ո՛չ ալ գուշակութիւններ, այլ քաղաքացիական արիւթեամբ գրի առնուած իրողութիւնը ցոլացնող տողեր:

Անոնք, որոնք մինչեւ 8 Սեպտեմբեր յունական նահանջող զորքին հետ

չէին կրցած քաղաքէն հեռանալ, կամ եթէ նոյնիսկ յաջողած էին խուսափիլ աւագակախումբերու նմանող քեմալականներու կոտորածէն, զոհը եղած են հրդեհին եւ կամ ծովու ալիքներուն:

Թուրք բանակի սուսերամերկ, քառասմբակ, աւագակախումբերու նմանող յառաջապահ գունդին 9 Սեպտեմբերին Նուրետտին փաշայի հրամանատարութեամբ, - եւ լոկ դիտորդի դեր ստանձնած Համաձայնական պետութիւններու զրահանաւերուն ներկայութեան, - արագօրէն քաղաք ներխուժուած, քաղաքին յատկապէս հայերու եւ յոյներու թաղամասերուն պատրաստուած խումբերու կողմէ միտումնաւոր հրկիզումը, հրդեհէն փախուստ տալով նեղ քարափին վրայ խճողուած ժողովուրդին վրայ ձիաւոր զինուորներ զրկելով զանոնք սարսափեցնելն ու դէպի ծով հրմշտկելը, բռնաբարելը, ժողովուրդը ձերբակալելն ու գորանոցի ճամբուն վրայ սպաննելը, բոլորն ալ նպատակաւոր գործուած արարքներ էին. քրիստոնեայ բնակչութիւնը՝ յատկապէս հայերն եւ յոյները, ահաբեկել ու զանոնք երկրէն փախցընել, ազգային մաքրագործում մը կատարել, իրենց ալ մաս կազմած իթթիհատականներու զլխաւորներուն սկսածը շարունակել, «Թուրքիան՝ թուրքերուն» լոգունգին հաւատարիմ մնալ:

Ամէն տարի, 9 եւ 13 Սեպտ.-ին, Իզմիրի՝ թուրքերու կողմէ վերագրաւուծին՝ «ազատագրում»-ին եւ հրկիզման տարեդարձին առթիւ, «Իզմիրը ո՞վ ալիքեց»-ի պատմութիւնը կը վերարծարծուի անոնց կողմէ, որոնք պետական տեսակէտին կուրօրէն կը հետեւին, տարիներէ ի վեր կը խուսափին հրապարակը ողողած փաստաթուղթերով եւ ակնատեսի վկայութիւններով լեցուն գիրքերը կարդալէ ու անոնց մասին արտայայտուելէ: Տակաւին 100 տարուան հինցած գրիչը կը գործածեն:

Անոնց կողմէ, որոնք հրկիզումի հրամանը փոխանակ ընդհանուր հրամանատար Մուսթաֆա Քեմալին վերագրելու, յունաց առաջնորդը իր սենեակէն դուրս հրելէ յետոյ դուրսը հաւաքուած ամբոխին խոչտանգումով մեղցնել տուած Նուրետտին փաշային կը վերագրեն: Ան իր բանակով Իզմիր (Նիկոմեդիա: կը քաշուի եւ կարապետ ամիրա Պալեանին (1800-1886: շինած Kasr-i-Humayun Saray-1-ն իրեն համար բանակատեղի կը վերածէ: Կ.Պոլսէն Անգարա տարուող Կ.Պոլսոյ Փեյամ-ը Սապահ (Peyam-ı Sabah) թերթի թղթակից Ալի Քեմալը 6 Նոյեմբեր 1922-ին իր մօտ բերել կու տայ: Կարճ հարցափորձ մը ետք, Ալի Քեմալը իր սենեակէն դուրս կը նետէ եւ դուրսի ամբոխն ալ գայն կը մեղցնէ՝ զլխուն մուրճերով եւ քարերով զարնելով¹²: Ալի Քեմալ 1903-ին Լոնտոնի մէջ անգլիացի օրիորդի մը հետ՝ Miss Winifred Brun, կ'ամուսնանայ: Կ'ունենան մանչ զաւակ մը, որ շուտով կը մեռնի: Զոյգը յետոյ կ'ունենայ աղջիկ զաւակ մը՝ Սելմա, որուն կը յաջորդէ մանչ զաւակ մը՝ Օսման Ալի (Osman Ali: Օսմանի ծնունդէն յետոյ Winifred Brun կը մեռնի: Ալի Քեմալ իր զաւակները Անգլիա կը թողու եւ Թուրքիա կը վերադառնայ: 1914-ին, Սապիհա կոչեցեալ թրքուհի մը հետ կ'ամուսնանայ: Osman Ali իր անունը Wilfred Johnson-ի կը փոխէ: Երկրորդ Աշխարհամարտին կը մասնակցի որպէս բրիտանական ռազմական օդաչու: Անոր զաւակը՝ Stanley Johnson, գրող ու քաղաքական գործիչ, Պահպանողական կուսակցութեան շարքերէն կ'ընտրուի երեսփոխան, կ'ունենայ մանչ զաւակ մը՝ Boris Johnson, որ որպէս Պահպանողական կուսակցութեան առաջնորդ՝ 24 Յուլիս 2019-ին կը նշանակուի Անգլիոյ վարչապետ¹³:

ՍՈՒՍԹԱՅԱ ՔԵՍԱԼ ԻԶՄԻՐԻ ՄԵՃ

Թրքական բանակի ընդհանուր հրամանատար, էնկիւրիի (Անգարա) երեսփոխանական ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալ 10 Սեպտեմբերին Իզմիր կը հասնի եւ Kraemer կոչեցեալ պանդոկը կ'երթայ, օդի կը խմէ ու կը ճաշէ: Ծփոթութիւն մը կը ծագի, որովհետեւ ան յաջորդ օր կը սպասուէր: Թէեւ անոր համար Իզմիրի Քարչըեքա կոչեցեալ մասին մէջ ապարանք մը պատրաստուած էր, սակայն Պորնովա կոչեցեալ շրջանին մէջ ապարանք մը կը յատկացուի: Երբ 13 Սեպտեմբերին իջեւանած ապարանքին պատշգամբէն հրդեհը կը դիտէ, իր մօտ գտնուող թիկնապահին ու երիտասարդ սպաներուն կ'ըսէ. «Տղա՛ք, այս տեսարանը լաւ դիտեցէք: Այս հրդեհին բոցերը ժամանակաշրջանի մը վերջաւորութեան եւ նոր շրջանի մը սկզբնաւորութեան նշանն են: Երբ Օսմանեան կայսրութեան վերջին հարիւրամեակի բոլոր յանցանքները այս կրակով կը մաքրուին, նոր թուրք պետութեան ալ հիմնուիլը եւ թուրք ազգին բարձրացումը ամբողջ աշխարհին կը տեղեկացուի»¹⁴:

Մուսթաֆա Քեմալի զլխաւոր թիկնապահը՝ Սալիհ Պոզոք, 30 Յունուար 1939 թուակիր «Ճումհուրիեթ» թերթին մէջ կը գրէ.



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

«Ուշաքիզատեններու տան (Մուսթաֆա Քեմալի յառաջիկայի կնոջ՝ Լաթիֆէի ընտանիքը: Ծովահայեաց պատշգամը Մուսթաֆա Քեմալ եւ Լաթիֆէ առանձին մնացած էին: Լաթիֆէ մօրը եւ հօրը գործերուն մասին տեղեկութիւններ կու տար: Մենք՝ երկու թիկնապահներս, խօսակցութիւնները կ'իմանայինք: Մուսթաֆա Քեմալ ալ անոր ճակատամարտի մասին տեղեկութիւններ կու տար: Հրդեհը իր ամբողջ սաստկութեամբ կը շարունակուէր: Քարափը եւ այսօր տօնավաճառին գտնուած տեղը բոցերու մէջ էր: Մուսթաֆա Քեմալ Լաթիֆէին հարցուց. «Դուք այս այրող մասին մէջ կալուածներ ունի՞ք»: Լաթիֆէ. «Մեր կալուածներուն կարեւոր մէկ մասը հոն կը գտնուի, - ըսաւ ու յուզումով շարունակեց. - Փաշայմ, թող բոլորը այրին: Բաւ է, որ դուք ողջ էք: Այս ուրախալի օրերը տեսնողներուս համար կալուածը ի՞նչ արժէք ունի: Երկիրը փրկուեցաւ: Ցառաշիկային անոնց տեղը աւելի լաւերը շինել կու տանք»: Մուսթաֆա Քեմալ այս պատասխանին շատ գոհ մնաց: «Այո՛, թող այրի եւ թող կործանի: Բոլորին ալ վերականգնումը կարելի է», ըսաւ»: Սալիհ Պոզոք կը շարունակէ իր պատմութեամբ. «Երբ «Կեաւուր Իզմիր» մոխրակոյտի կը վերածուէր, Ուշաքիզատեններուն կէօզթեփէի ապարանքին մէջ հացկերոյթ կար: Մուսթաֆա Քեմալ պատշգամը պատրաստուած սեղանին շուրջ Ֆեւզի եւ Իսմէթ փաշաներէն գատ գիս, Մուզաֆֆերը եւ Լաթիֆէն հաւաքեց: Ֆեւզի փաշայն (սպաշակոյտի նախագահ: գատ, որ խմիչք չէր խմեր, ամէն մարդ իր գաւաթը հաճոյքով կը լեցնէր: Աղանդերները բազմատեսակ էին եւ համեղ: Ի վերջոյ ամէն մարդ հացկերոյթէն եւ ընթացող գիշերէն վերջին աստիճան գոհ էր»¹⁵:

Մուսթաֆա Քեմալ, 16 Սեպտեմբերին, Անգարայի կառավարութեան Կ.Պոլսոյ մէջ գտնուող իր վստահելի անձին՝ Համիտ պէյին, հեռագիր մը կը դրկէ, ուր գրուած է, թէ հայերը եւ յոյները Իզմիր քաղաքը կործանելու նպատակով, նախապէս պատրաստուած ծրագրի մը համաձայն, հրկիզած են: Այս տեղեկութիւններուն ճշգրտութիւնը բազմաթիւ վաւերագիրերով եւ ակնատեսներու վկայութեամբ ստուգուած է¹⁶:

Մուսթաֆա Քեմալ 17 Սեպտեմբերին ալ նման հեռագիր մը Անգարայի քեմալական կառավարութեան արտաքին գործոց նախարար Եուսուֆ Քեմալին կը դրկէ՝ աւելցնելով, որ այսպիսի բանի մը համար պաշտօնական հարցաքննութիւն մը խնդրոյ առարկայ չի կրնար ըլլալ¹⁷:

Այսպիսի բովանդակութեամբ հեռագիր մը դրկող Մուսթաֆա Քեմալ, 15-20 Սեպտ. 1927-ին, Անգարայի մէջ գումարուած «Ճումհուրիէթ Հալք Ֆրգասը» կուսակցութեան երկրորդ համաժողովին որպէս կուսակցապետ խօսած 36,5 ժամուան ճառին մէջ հրդեհին մասին ակնարկութիւն մը իսկ չ'ընէր, մինչդեռ Նուրետտին փաշայն հասցէին բաւական վարկաբեկիչ արտայայտութիւններ կ'ունենայ:

«Հայաստանի Ձայն» թերթի 16 Սեպտեմբեր 1922 թիւի 7-րդ էջին մէջ կը կարդանք. «Սեպտ. 14-ին Իզմիրի հայկական եւ յունական թաղերը հրկիզուած են թուրքերու կողմէ: Այդ երկու թաղերը եւ Եւրոպական թաղին մաս մը ոչնչացած է: 180 հազարի չափ հայեր եւ յոյներ մնացած են բաց երկնքի տակ»: Ռեյտերի թղթակիցը կը հեռագրէ Մալթայն. «Երբ ես մեկնեցայ Իզմիրէն, թուրքերը կը շարունակէին թալանն ու կոտորածը: Հարիւրաւոր գիւղերը թափուած էին Իզմիրի եւ շրջակայքի գիւղերու փողոցներուն մէջ: Բրիտանական ծովակալը յայտարարած է Մուսթաֆա Քեմալին, որ եթէ Իզմիրի կոտորածը չզրպարի, ինք պիտի հրամայէ ուժեղացնել Իզմիրի թրքական թաղը: Իզմիրի գրաւման առաջին օրերը եղած են թալան եւ սպանութիւններ: Սպանուած են հարիւրէ աւելի քրիստոնեաներ: Պապը կարգադրած է անմիջապէս ուղարկել գաղթականներու համար ուտելիք»:

Փրոֆ. Hervé Alain-Renn Georgelin իր «La fin de Smyrne: du cosmopolitisme aux nationalismes (Paris: CNRS Editions, 2005)» խորագրեալ գիրքին մէջ կ'ըսէ, թէ սկսեալ 13 Սեպտեմբերէն, քաղաքը հողին հաւասարեցնող հրդեհին յաղթական բանակին կողմէ սկսուած ըլլալուն ամէն մարդ համաձայն է: Ի բաց առեալ մի քանի հատին միւսներէն փոքր տարբերութիւնը, ամէն մարդ նոյն ձեւով արտայայտուած է: Georgelin կը գրէ, թէ ֆրանսական դեսպանատան գլխաւոր պատասխանատուն՝ Graillet, Փարիզ դրկած տեղեկատուութեան մէջ թուրքերը պատասխանատու ներկայացուցած է:

Ըստ Georgelin-ի, քաղաքը հրկիզողները յոյն զինուորները չէին կրնար ըլլալ, որովհետեւ անոնք 9 Սեպտեմբերէն առաջ արդէն մեկնած էին, իսկ Ձմիւռնիոյ հայերը եւ յոյները թուրք բանակին սարսափազդու մուտքէն ամբարձ՝ տուներէն դուրս չէին ելլեր: Թուրք զինուորներ՝ կանոնաւորները եւ անկանոնները, փողոցները կը պատէին, ինքնութիւն ստուգելէ ետք հայերը եւ յոյները կը սպաննէին, հրեաները ազատ կ'արձակէին, որով անոնց քարիւղի թիթեղներով փողոց ելլելը եւ տուները

հրկիզելը անտրամաբանական էր: Անոնք տակաւին իրենց տուներուն մէջ կը բնակէին: Հրկիզումը թուրքերը կազմակերպած էին՝ հայերէն եւ յոյներէն ձերբագատուելու նպատակով, որովհետեւ հակառակ դարերէ ի վեր եղած ճնշումներուն եւ չարչարանքներուն՝ չէին կրցած զանոնք թրքացնել:

Կայ անպատասխան մնացած հարցում մը: Եթէ հայերը եւ յոյները, նախապէս կազմակերպուած խումբերով, Ձմիւռնիոյ հայկական եւ յունական թաղամասերը հրկիզեցին, արդեօք ինչո՞ւ թրքական եւ հրէական թաղամասերն ալ չ'հրկիզեցին:

Դուրեան սրբազանի «Սիրոն» պարբերաթերթի Յունիս-Օգոստոս 1982 թիւի հրատարակուած տեղեկատուութեան մէջ կը կարդանք. «Սեպտեմբեր 13, Չորեքշաբթի կէսօրէն առաջ, Հայոց թաղին մէջ երեւցած թուրք մուսուլմաններ բարձրաձայն կ'աղաղակէին հայ տուներուն մէջ սլքտացող թուրքերուն որ փութով դուրս ելլեն տուներէն եւ հեռանան Հայոց թաղէն: Այս ազդարարութեան նշանակութիւնը հասկցուեցաւ կէսօրին, երբ թուրքերու հեռանալէն ետք հրդեհի սկզբնաւորութիւնը երեւցաւ Հայոց թաղին մէջ»: Սրբազանին մատնանշումը չափազանց յստակ է:

Մուսթաֆա Քեմալի գինակից Քազըմ Էօզալի փաշայի գաւակ փրոֆ. դոկտ. Թեոման Էօզալի (1925-2017: իր հօրը կողմէ իրեն տրուած «Իլթեր - İter» անունը փոքր տարիքին Մուսթաֆա Քեմալ Թեոմանի (Teoman: փոխած է: Ան իր յուշերուն մէջ հրդեհին կապակցութեամբ իսմէթ Ինէօնիլի (İsmet İnönü: ըսածը հետեւեալ ձեւով կ'արձանագրէ. «Հրդեհը ուրկէ՞ սկսաւ, ո՞վ սկսեցուց, չեմ գիտեր: ...Մեր Իզմիր մտած օրերէն իմ մօտ մնացած ամենադառն յիշատակը հրդեհն է: Այսպիսի հրդեհներուն պատճառները մեծ պատմական դէպքերուն մէջ չ'պատճառներն են: Փոքրաւորները կ'ըսեն, թէ հրաման ստացած են, մեծերն ալ կ'ըսեն, թէ կարգապահութիւն չ'էր մնացած» (Kazım Özalp-Teoman Özalp, Atatürk'ten Anılar, Türkiye İş Bankası Kültür Yayınları, Ankara, 1992, էջ 86): (Իսմէթ Ինէօնիլի Աթաթիւրքի օրով թուրքիոյ առաջին վարչապետը եղած է, Աթաթիւրքին վերջ ալ՝ հանրապետութեան երկրորդ նախագահը::


Ֆալիհ Ռեֆքը Աթայ (1894-1971:, լրագրող, գիրքերու հեղինակ, 1923-1950 քեմալական երեսփոխան, Մուսթաֆա Քեմալի մտերիմ մէկ բարեկամը, «Չանքայա» խորագրեալ գիրքին մէջ կը գրէ. «Իզմիրը ինչո՞ւ կ'այրէինք: Քորտոնի (քարափ: պանդոկները, ապարանքները եւ զբօսավայրերը եթէ մնային, միթէ պիտի վախնայինք, թէ փոքրամասնութիւններէն ձերբագատած պիտի չ'ըլլայինք: Առաջին Աշխարհամարտին երբ հայերը տարագրեցինք, Անատոլիի քաղաքներուն եւ գիւղաքաղաքներուն մէջ բնակելի որ քան թաղամաս կար՝ այս վախով այրած էինք: Ասիկա պարզապէս քանդիչութեան զգացումն էր: Ասոր մէջ ստորադասութեան զգացումի մը ազդեցութիւնն ալ կար: Եւրոպան յիշեցնող ամէն ինչ կարձեռն թէ քրիստոնեայ եւ օտար ըլլալու՝ անպայման մեզմէ չ'ըլլալու ճակատագրին ենթարկուած էր: Նուրեթթին փաշան եթէ չ'ըլլար, գոր ճանչցած եմ որպէս չափազանց մոլեռանդ, շուրջիները բարկացնող, ամբոխավար անձ, չէի կարծեր, թէ այս աղէտը այսքան կը տեսէր: Նուրեթթին փաշան Աֆիոնէն ի վեր յունական բանակին այրած գիւղաքաղաքներուն փլատակ վիճակը, լացող, տառապող ժողովուրդը տեսած սպաններուն եւ զինուորներուն ռիսակալութեան ու վրէժխնդրութեան զգացումներէն ալ ուժ կ'առնէր» (էջ 324-325:¹⁸

Վերելի տեղեկութիւնները գիրքին 1958-ին հրատարակուած երկու փոքրածաւալ հատորներուն մէջ կարելի է գտնել: Յաջորդ հրատարակութիւնները՝ միայն մէկ հատորով, զբառնութեան ենթարկուած օրինակներն են¹⁹:

Ֆալիհ Ռեֆքը Աթայ, թունդ քեմալական մը, շատ բացայայտօրէն կը գրէ, թէ հրդեհը Նուրետտին փաշային միջոցով թուրք բանակին գործադրել տրուած էր:

Նեղ քարափին վրայ խճողուած հայեր եւ յոյներ ու հրկիզուած շէնքեր:

Թուրքերը քրիստոնեայ կղերականներուն վրայ ռիսակալութեամբ կը յարձակէին: Կը կարծուէր, թէ անոնք քաղաքականութեամբ կը զբաղէին: Ստեփաննոս եկեղեցուց կղերականները քարափ չ'զգացած, առ ի զգուշութիւն, իրենց մօրուքը անհրաժեշտ էին: 10 Սեպտեմբերէն սկսեալ, թուրքերը յոյն եւ հայ համայնքներու գլխաւոր անձերը կը սկսին փնտնել: Ձմիւռնիոյ «Արեւելեան Մամուլ»-ի խմբագիր Հրանդ Մամուրեան ըսած է, թէ «մէջտեղէն վերցուելիք» յոյն եւ հայ ազդեցիկ անձերու սեւ ցանկ մը գոյութիւն ունեցած է: Մամուլի աշխատակիցները գլխաւոր թիրախներն



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

էին: «Հորիզոն» թերթի պատասխանատու Ջարեհ Գաֆէսեան Ս. Ստեփաննոս եկեղեցու մօտ կը սպաննուի: Nikolaos Tsourouktsoglou, (Nikolaki 1861-1922) յոյն փաստաբան, Ձմիւռնիոյ քաղաքապետական ժողովի անդամ, ֆրանսերէն «La Reforme» եւ յունարէն «Imerisia» թերթերուն հիմնադիրն ու խմբագիրը, ոտքերէն կառքի մը կապուած՝ մինչեւ մահանալը փողոցները քաշկուտուած է:

Եթէ հայ եւ յոյն ազդեցիկ անձերը «չէզոքացնելու» համար ցանկեր պատրաստուած էին, շատ բնական է, որ հայերու եւ յոյներու թաղամասը հրկիզելու համար ալ Մուսթաֆա Քեմալի իզմիր գալէն առաջ ալ պատրաստութիւն տեսնուած էր:

Ձմիւռնիոյ աղէտին մասին Աթէնքի Christian Science Monitor լրատու գործակալութիւնը 20 Սեպտեմբեր 1922-ին կը յայտնէ, որ Մուսթաֆա Քեմալ իզմիրը հրդեհելէ առաջ թալանել տուած է քաղաքին պահեստները, խանութները եւ տուները: Այս աւարը, որ 200.000.000 անգլիական ոսկի կ'արժէ, Անգարա փոխադրել տուած է:

Stanford համալսարանի պատմաբան Norman Naimark համակարծիք է ամերիկացի ծովային սպայ Merrill-ի այն տեսութեան, թէ թուրքերու համար նպաստաւոր էր յոյները հրդեհելի միջոցով վախցնելով՝ իզմիրէն հեռացնել:

Ըստ 1939-ի ծնունդ անգլիացի պատմաբան Richard Clogg-ի, թուրքերը քաղաքը գրաւելէ յետոյ զայն հրկիզած էին:

1966-ի ծնունդ անգլիացի գրող Giles Milton իր Paradise Lost: Smyrna 1922 խորագրեալ գիրքին մէջ Ձմիւռնիոյ գլխաւորաբար անգլիացիներէ բաղկացած եւրոպացիներու բաժնի անձերու հետ եղած հարցազրոյցները, անտիպ նամակները եւ օրագրութիւնները ուսումնասիրելէ վերջ այն եզրակացութեան կը յանգի, որ հրդեհը թուրք սպաները եւ զինուորները կազմակարգած էին, շատ հաւանաբար, ըստ վերէն տրուած հրահանգի:

Թուրքերը իրենց մոլեգնութիւնը առաջին հերթին թափած են հայկական թաղին վրայ: Daily Telegraph եւ Chicago Tribune թերթերու թղթակիցները կը վկայեն, որ հայկական տուները եւ խանութները թալանուէլէն յետոյ թաղը հրկիզուած է:

Ըստ The London Times-ի 16 Սեպտեմբեր 1922-ի թիւին, քեմալական կանոնաւոր բանակը տակաւին իզմիր չմտած՝ ըմբոստ, ստահակ խուճերք քաղաքը հրկիզած են:

Ըստ Ֆրանսական Le Figaro թերթին, թուրքերը այրած են քաղաքը, ըստ Les Temps-ի՝ յոյները, ըստ Le Matin-ի՝ հայերը, New York Times-ի համաձայն ալ՝ թուրքերը: The Portsmouth Daily Times-ի տեսակէտը այն է, թէ կատարուած ոճիրները եւ թալանը թաքցնելու համար թուրքերը այրած են: Քեմալական շարժումը եւ Մուսթաֆա Քեմալը ամերիկացիներուն ծանօթացնող Daily Mail-ի թղթակից Ward Price հրդեհին մասին բնաւ տեղեկութիւն չի տար:

Ծովակալ Mark Lambert ֆBristol, (1868-1939), 1919-ին իզմիրը դրկուած ԱՄՆ-ի նաւատորմին հրամանատարը, ինչպէս նաեւ Թուրքիոյ մէջ լիազօր դեսպանը, կը խորհի, թէ քեմալականներու հետ առեւտուր կատարելը ԱՄՆ-ի համար նպաստաւոր պիտի ըլլայ, որով անոնց կատարած վայրագութիւններուն կարեւորութիւն չի տար: Թղթակիցներու գրութիւնները գրաքննութեան կ'ենթարկէ եւ կը սահմանափակէ անոնց ձայնը: Անատոլիոյ մէջ: Երկու թղթակիցներու կը պատուիրէ իրեն համար տեղեկագիր պատրաստել, չգրել ամէն ինչ, միշտ նկատի ունենալ ԱՄՆ-ի շահերը: Թղթակիցներէն միոյն՝ John Clayton-ի՝ Daily Telegraph-ի մէջ հրատարակուած թղթակցութեան մէջ քաղաք մտնող քեմալական բանակին մասին գովասանք կը կարդացուի. «Թրքական բանակին կարգապահութիւնը եւ կանոնաւորութիւնը գերազանց էր»: John Clayton ծովակալ Bristol-ին իր վրայ կատարած ճնշումներէն նեղուած՝ կ'որոշէ իրողութիւնը տեղեկացնել. «Անոնք, որոնք իրենց կեանքը կորսնցուցած են՝ անկարելի է հաշուել: Փողոցները դիակներով լեցուն են: Ձմիւռնիա այլեւս գոյութիւն չունի, ի բաց առեալ կեղտոտ թրքական թաղը: Փոքրամասնութիւններու հարցը վերջնականապէս լուծուած է: Հրդեհին ծագումին մասին կասկած չկայ... կրակը սկսեցուցած են թուրք կանոնաւոր զինուորները»:

Արդիւնաբերական ճարտարագէտ Mark Prentiss, երբ տակաւին New York Times թերթին մէջ կ'աշխատէր որպէս թղթակից, թերթին 18 Սեպտ. 1922-ի թիւին մէջ Eyewitness Story of Smyrna's Horror: 200,000 Victims of Turks and Flames խորագրեալ յօդուածին մէջ գրած է, թէ իզմիր թուրքերուն ձեռքը անցնելէն վերջ, թուրք բանակայիններ հազարաւոր մարդիկ սպանած եւ քաղաքը թալանած են: Ապա կը ներկայացնէ իր ականատես եղած թալաններն ու սպանութիւնները: «Մեզմէ շատեր մեր

աչքերով տեսանք, թէ թուրք զինուորներ իրենց ձեռքի քարիւղաթաթախ առարկաները իրենց մեծաւորներուն հրահանգին համաձայն տուներուն վրայ կը նետէին, կամ փողոցները կը թափէին: Մենք ասոնք հաստատելու պատրաստ ենք»: Կը գրէ նաեւ, թէ ծովային պահակ մը կը վկայէ, որ ամերիկեան դպրոցին շուրջ սկսած հրդեհը թուրքերու կողմէ սկսեցուած էր: Յառաջիկային ծովակալ Bristol-ի ճնշումներուն պատճառով գրած է, թէ հրդեհը հայերը սկսեցուցած են: New York Times իր 14 Նոյեմբերի թիւով մասամբ իւրացած է այդ տեղեկատուութիւնը²⁰:

ԱՄՆ-ի հիւպատոսի տեղակալ Barends կը տեսնէ, որ թուրք զինուոր մը մաքսատան շէնքը եւ անցազրերու գրասենեակը (Passport Bureau: կը հրկիզէ, մինչ այդ նուազագոյնը 50 թուրք զինուորներ եղածը կը դիտեն: C. Clafun Davis, Կարմիր Խաչի ներկայացուցիչը, տուներուն վրայ թուրք զինուորներուն քարիւղ թափելը տեսած է²¹:

Ծովակալ Bristol ոչ թէ ԱՄՆ-ի շահերը պաշտպանելու համար այդպիսի դիրք մը որդեգրած էր, այլ ցեղապաշտ մըն էր: Երբ 1922-ին Պարսկաստանի մէջ Կ.Պոլսոյ նախկին դեսպանը New York Times-ի հետ հարցազրոյց մը կ'ունենայ, թղթակիցին կ'ըսէ այն, ինչ որ Bristol իրեն ըսած էր. «Ես յոյները կ'ատեմ, ես հայերը կ'ատեմ, ես հրեաները կ'ատեմ: Թուրքերը լաւ մարդիկ են»²²:

Փրոֆ. Hervé Alain-René Georgelin-ի թրքերէնի թարգմանուած գիրքին 272-273-րդ էջերուն մէջ կը կարդանք. «Հրէշ խուճերք շատ լաւ կազմակերպուած էր: Արդիական կազմածներ ունէր: Անոնց աշխատանքին թուրք զինուորներ արգելք եղան: Չուրի խողովակները ծակեցին: Չմուղ մեքենաներով շէնքերուն վրայ քարիւղ սրսկեցին: Որպէսզի հրչէջները իրենց գործը չկարենան կատարել, անոնց վրայ կրակեցին: Անգլիական ծովակալը իր զինուորները նաւ հաւաքած էր, որով անոնցմէ օգնութիւն չկար»:

1860-ին, Ֆրանսայի մէջ հիմնուած քաղաքական կազմակերպութեան մը՝ Alliance Israélite Universelle-ի դպրոցներու տնօրէն Israil Benaroya իր 18 Սեպտեմբեր թուակիր նամակին մէջ կը գրէ, որ հայոց թաղին կից հրէական թաղամասը թուրքերուն ջանքերուն շնորհիւ հրդեհէն ազատած էր:

Ըստ հրչէջ խուճերի հրամանատար Paul Grescovich-ի տուած տեղեկութեան, քաղաքին թուրք կառավարիչը յոյն հրչէջները գործէ արձակած էր եւ փոխան 100 հրչէջի այժմ ունէր միայն 37 անձ, որով 10-էն մինչեւ 13 Սեպտեմբեր ծագած հրդեհներուն թուրքերը պատասխանատու կը գտնէր:

Georgelin կը գրէ, թէ բռնկած տուներուն մէջի քրիստոնեաներուն կարգ մը փողոցներ երթալու թուրքեր արգելք եղած են: Եկեղեցիներուն մէջ ապաստանածներուն չեն թոյլատրած, որ դուրս ելլեն: Անոնք ողջ-ողջ այրած են: Անոր տեղեկութիւն հաւաքած աղբիւրները կը պնդէին, թէ հրդեհին նպատակը կարելի եղածին չափ շատ քրիստոնեայ մեռցնելն էր: Թուրք զինուորներ քարափը հաւաքուած գաղթականներուն վրայ կը կրակէին: Քաղաքին բոլոր անկիւններու գետիները այրած դիակներ կային: Հրդեհը մինչեւ 17 Սեպտեմբեր, Կիրակի տեւեց: Քաղաքին երեք քառորդը այրած էր:

Թէեւ հայերուն եւ յոյներուն պատկանող կայուած չէ մնացած, սակայն 3 Հոկտեմբեր 1922 թուակիր Կ.Պոլսոյ թրքական «Իլերի» պարբերաթերթին մէջ գրուած է, թէ 3,5 միլիոն ոսկի արժէքով փոխադրելի ապրանք մնացած է: Թերթը նաեւ կը տեղեկացնէ, թէ որոշուած է իզմիրէն մեկնող հայերէն եւ յոյներէն մնացած ապրանքները ցուցակագրել եւ փոխանցել բանակին: Ըստ իզմիրի մաքսատան մէջ կատարուած քննութեան, հոն 500.000 ոսկի արժէքով անտէր ապրանք գտնուած է:

Թրքական «Վաթան» թերթի 1923-ի Յուլիս ամսուան թիւերուն մէջ գրուած է, որ մեծ հարստութեան տիրանալու յոյսով թուրքեր իզմիր կ'երթեան: Հոն դատարկապորտներուն թիւը օրէ-օր կ'աւելնայ: Անոնք մինչեւ երեկոյ սրճարաններուն մէջ մտիկ կ'ընեն առանց աշխատելու հարստացած անհատներու պատմութիւնները: Պաղպաղիներ, որոնք հայերուն եւ յոյներուն կը պատկանէին, այժմ թուրքերուն ձեռքը անմշակ մնացած են: Երկրագործութեան նախարարութիւնը հրատարակած է սպառնական գրութիւն մը, որ չմշակուելու պարագային՝ անոնք ետ պիտի առնուին: Սկովտիացի պատմաբան, գրող եւ լրագրող, Ataturk - The Rebirth of a Nation խորագրեալ գիրքով հանրածանօթ դարձած Lord Kinross (John Patrick Douglas Balfour, 1904-1976) կը գրէ, թէ հրդեհին ծագման մասին վստահութիւն ներշնչող փաստեր երբեք մէջտեղ չեն ելած: Մուսթաֆա Քեմալ ֆրանսացի ծովակալ Dumesnil-ի ըսած է, որ հրդեհը հայերը



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

KRADJIAN IMPORTING CO

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

կազմակերպած են եւ թուրք բանակը քաղաք չմտած՝ եկեղեցիներու մէջ «քաղաքը հրկիզելը սուրբ պարտականութիւն մըն է» բնաբանով քարոզներ տրուած են: Հրկիզման համար գործածուած քարիւղը հայոց տուններուն մէջ գտնուած է եւ բաւականաչափ թիւով մարդ հրդեհը սկսեցնելու յանցանքով ձերբակալուած է: Kinross կը գրէ նաեւ, թէ տարբեր աղբիւրներ թուրքերը, մանաւանդ մոլեռանդութեամբ եւ անգթութեամբ համբաւաւոր Նուրետտին փաշան կը մեղադրեն: Հրդեհին ծագման առնչութեամբ Kinross-ի անձնական կարծիքը այն է, թէ թուրքերը իրենց զինաթափած հայերը բնաջնջելու համար զանոնք շէնքի մը մէջ բանտարկած են ու շէնքը հրկիզած: Տունը հրկիզելէ առաջ ալ հայկական թաղէն ներս մուտքն ու ելքը արգիլած են:

Ձմիւռնիոյ հրդեհին յոյն եւ հայ բնակչութեան ողբերգութեան առնչութեամբ գրուած գիրքերուն մէջ ակադեմիական կշիռը ունեցող հատոր մըն է անգլիական գրականութեան դասախօս, ամերիկահայ փրոֆ. Մարճըրի Անայիս Յոփսէփեան-Տոփքինի (Marjorie Anans Housepian Dobkin, 1922-2013) Smyrna 1922: The Destruction of a City խորագրեալ գիրքը, հրատարակուած 1971-ին՝ Նիւ Եորք, եւ 1972-ին ալ՝ Լոնտոն, Անգլիա: Գիրքը ունի նաեւ մի քանի հրատարակութիւններ եւս, վերջինը՝ 1988-ին: Գիրքը հաւաստի պատմական ուսումնասիրութիւն մըն է գրուած դէպքերու ականատես ու մասնակից հայերու, ամերիկացի դիւանագէտներու եւ միտինարներու յուշերուն, նամակներուն եւ վկայութիւններուն հիման վրայ: Յոփսէփեան իր գիրքով Մուսթաֆա Քեմալի կատարած «ազգային մաքրագործում»-ի քաղաքականութիւնը մերկացուցած է: Գիրքը թարգմանուած է ի միջի այլոց յունարէնի:

Մօտաւորապէս 2,6 միլիոն քառակուսի քմ.-նոց տարածք մը, 25 հազար տուն, գործատեղի, եկեղեցի, հիւանդանոց, գործարան, մթերանոց, պանդոկ եւ ճաշարան ոչնչացած էին: Դէպի Ձմիւռնիա յառաջացող թուրք բանակին իր առջեւէն քշած հայերուն եւ յոյներուն թիւը, Ձմիւռնիոյ մէջ ապրող հայերուն եւ յոյներուն հետ միասին, մօտաւորապէս 500 հազարի կը հասնէր: Ասոնցմէ հազիւ 320 հազարին նաւերով փոխադրուելը եթէ նկատի առնուի, ի յայտ կու գայ, որ 180 հազար հայեր եւ յոյներ իրենց կեանքը կորսնցուցած էին: Փոքր Ասիոյ մէջ գտնուող վերջին քրիստոնէայ զանգուածն ալ սպանութեամբ եւ աքսորով կ'ոչնչացուէր:

Ձմիւռնիոյ աղէտը երկրէն փախած իթթիհատականներուն սկսած գործին երկրին մէջ մնացած իթթիհատականներու կողմէ շարունակութիւնը եւ յառաջիկային գործադրելի անմարդկային արարքներուն սկիզբն էր: Թուրքիան թուրքերուն կը պատկանէր: Ուրիշ ոչ ոք հոն ապրելու իրաւունք ունէր: Սկսած էր Մուսթաֆա Քեմալի քրիստոնէայ փոքրամասնութիւնը թուրքիայէն արտաքսելու, թուրքիան ցեղայնօրէն ու «պատմականօրէն» թրքացնելու քաղաքականութեան կիրարկումը:

ԱՄՆ-ի հիւպատոս George Horton, ականատես կատարուած ոճրագործութիւններուն, կը վկայէ, թէ թուրքերու ամբողջ արիւնտ պատմութեան ընթացքին կատարուած ոչ մէկ գործողութիւն աւելի վայրագ չէր եղած, որքան էր 1922-ի Ձմիւռնիոյ կործանումը: Անպաշտպան եւ անզէն մարդոց վրայ կատարուածը տառապանքի վատագոյն ձեւն էր: Վերապրած քրիստոնէաները հարկադրաբար կը հեռանային Ձմիւռնիայէն դէպի Յունաստան՝ ապաւինելով յոյներու մարդասիրութեան:

Հենրի Մորկընթաու (Henry Morgenthau, 1856-1946) ԱՄՆ-ի դեսպանը Օսմանեան կայսրութեան մէջ (1913-1916., Ազգերու Դաշնակցութեան (League of Nations) կողմէ ատենապետ (1923-1928: նշանակուած է Յոյն Գաղթականներու Տեղաւորման Յանձնաժողովին (The Greek Refugee Settlement Commission: Մորկընթաու 1929-ին հրատարակուած «Աթէնք զրկուած էի - I was sent to Athens» խորագրեալ 330 էջնոց գիրքին մէջ կը գրէ. «Մուսթաֆա Քեմալի աչքին առջեւ թրքական բանակը կատարեց Ձմիւռնիոյ յունական թաղամասի յոյն տղամարդոց, կիներու եւ երախաներու կանոնաւոր սպանութիւնը, տուններու եւ եկեղեցիներու կազմակերպուած կողոպուտը, առանց խտրութեան կիներու եւ երիտասարդ աղջիկներու ազատօրէն բռնաբարումը, 16-50 տարեկան աշխատելու կարող տղամարդոց իրենց խումբերէն հեռացումը եւ երկրին խորքերը աքսորուելը: Հարկադիր ծանր աշխատանքի հետեւանքով, գրեթէ բոլորը հոն կը մեռնէին: ...Այս բոլոր բռնութիւնները թուրքերուն՝ յոյները ամբողջութեամբ Փոքր Ասիայէն վտարելու նպատակին բացառապէս երեւոյթներն էին: Քեմալի հսկողութեամբ, թուրք ազգայնականներու հետապնդած ծրագիրով Փոքր Ասիան ամբողջութեամբ «թրքացուեցաւ»» (էջ 47:)

1876-ին Պարտիզակ ծնած, զինադադարէն յետոյ՝ 1918-ին, Ձմիւռնիա

հաստատուած եւ 1952-ին Պուենոս Այրես իր մահկանացուն կնքած տղթ. կարապետ Խաչերեան Ձմիւռնիոյ աղէտի օրերուն գրի առած է օրագրութիւն մը՝ կարեւոր փաստաթուղթ մը, որ ցոյց կու տայ, թէ հայ ժողովուրդի եղեռնը՝ Հայոց Յեղասպանութիւնը, 1915-ին վերջ չէր գտած: Ինչպէս հօր երկրաշարժերէն յետոյ տեղի կ'ունենան լրացուցիչ ցնցումներ, այնպէս ալ ի. դարու առաջին ցեղասպանութեան կը յաջորդեն բաղադատաբար ծաւալով աւելի փոքր, բայց ոչ-նուազ կործանարար աղէտներ: Ձմիւռնիոյ աղէտը այս աղէտներուն սկիզբն է: Քանիցս նկատուած է, որ թրքական պատմագրութիւնը գազանութիւններու շարադրութիւն մըն է: Յաջորդական իշխանութիւններ, որպէսզի կարենան իրենց նախորդներուն արժանի նկատուել, ժամանակ առ ժամանակ կազմակերպած են նոր աղէտներ:

Լորտ ձեյմս Պրայս (Lord James Bryce, 1838-1922., օրէնսգէտ, պատմաբան, 1916-ին հրատարակուած անգլիական Blue Book-ին հեղինակներէն մին, ըսած է. «Մենք չէինք կըրնար երեւակայել, որ Ապտուլ-Համիտի աննկարագրելի դաժանութիւնները կարելի էր գերազանցել: Երիտթուրքերու կառավարութիւնը մոռացութեան մատնեց Ապտուլ-Համիտը»:

Հոս կը տեղադրենք Խաչերեանի օրագրութեան մէջըբերում մը: (Խաչերեան փողոցը ձերբակալուած եւ գորանոց զրկուած է: «21 Սեպտ. Եշ.- Արշալոյսը ծագած է. գորանոցի հրապարակին մէջ խիտ առ խիտ դիզուած բոլոր բանտարկեալները ոտքի վրայ կամ աւելի ճիշդ աղտեղութիւններու վրայ կեցած են: Բացառապէս է որ այսօր անպայման վերջնական կարգադրութիւն մը տեղի պիտի ունենայ, կամ տարիքոտները դուրս պիտի հանուին կամ երիտասարդները: Ժամը ութին սպայ մը կու գայ եւ կը հրամայէ որ տարիքոտները մէջտեղ ելլեն: Կ'երթանք ու չորս չորս կը նստինք մեր գլուխները բաց, ըստ հրամանի: Սպան 45-էն վար ենթադրածները շարքերէն դուրս կը հանէ մտրակի հարուածներով: Մեր քովէն ալ կ'անցնի. տարիքոտ ըլլալնիս վաւերացուած է: Այս քննութեանէն յետոյ կարգը կու գայ տեղացի երիտասարդ թուրքերու վկայութեան: Ասոնք մէկիկ մէկիկ մեզ աչքէ կ'անցնեն, որոշելու թէ նախապէս թուրք պետութեան եւ կամ իսլամ բնակչութեան հանդէպ հակառակ ընթացք ունեցողներ կա՞ն մեր մէջ: Արդէն ամէն օր բոլոր քրիստոնէաները քննութեան կ'ենթարկուէին եւ կասկածելիները կը գատուէին հրացանի բուռի հարուածներով: Այդ քննութեանէն ալ անպարտ ելանք: ...Մէկ ժամի չափ ալ կը սպասենք կիզիչ արեւին տակ: Զօրանոցի ներքին դուռէն դուրս ելած ենք: Դուրսը գտնուող զինուորներն ալ կ'ուզեն մեզմէ օգտուել իբր հրաժեշտի նուիրատուութիւն: Կը սկսին խուզարկութեան ու կողոպուտի: ...Դուրսը քրիստոնէայի մը հետքն իսկ չենք տեսներ, «կեպուր իզմիրը» «իսլամ իզմիրը» եղած է: Ետ մնացողները իրենց գլուխին կը ստանան մտրակի հարուածներ: ...Մովեզերքը խռնուած են թուրք պաշտպաններ ամենէն արիւնքաբոլ ու ստորին դասակարգէն: ...Պահալ զինուորներ մեզի կը հրամայեն գոչել «Եաշասըն Մուսթաֆա Քեմալ փաշա: Եաշասըն»: Շատեր ակամայ հրամանը կը գործադրեն ու կը կրկնեն. «Զօք Եաշա Մուսթաֆա Քեմալ փաշա...»: Այո՛ շատ ապրի Մ. Քեմալ փաշան, յաւիտ երախտապարտ պիտի մնանք անոր որ հազարաւոր քրիստոնէաներու արիւնը խմելէ, այս հարուստ քաղաքը կողոպտելէ ու գայն մոխրակոյտի վերածելէ յետոյ, հարիւր հազարաւոր ժողովուրդներ թշուառութեան մատնեց, այո՛, շատ ապրի՛ կ'ըսենք ու կը քայլենք միշտ յառաջ: Ուշադրութեամբ մեր շուշը կը նայինք ու կը հասկնանք որ պահակ զինուորներն աներեւոյթ եղած են: ...Փանք Աստուծոյ, հազար փառք» (էջ 45-48:»:

Դանիացի միսիոնարուհի Ենսին Օրց (Jensine Oerts Peters), որ աքսորուած, չարչարուած հայերուն, սկսած 1904-էն 47 տարի օգնած է, իր հրատարակած Tests and Triumphs of Armenians in Turkey and Macedonia խորագրեալ գիրքին մէջ կը գրէ. «Պատմութեան ընթացքին քրիստոնէաներուն եղած հալածանքներուն մէջ գուցէ Ձմիւռնիա կատարուածներուն հաւասար մը կը գտնուի: Աղօտ գաղափար մը կազմելու համար, թէ ի՞նչ պատահեցաւ, բաւական է ըսել, որ քաղաքը հրկիզուեցաւ: Ժողովուրդին միակ ապաւէնը նաւահանգիստն էր, այն ալ դիակներով ծածկուած էր եւ ծովն ալ արիւնախառն: Մեր պատշգամէն կը տեսնէինք հազարաւոր մարդիկ, շուրջ 80 հազար, որոնք օրն ու գիշերը կ'անցընէին բաց երկինքի տակ՝ սպասելով նաւերու: Անոնք մեր օգնութեան կը կարօտէին, բայց մենք բան մը չկրցանք ընել: Մահէ ազատած այդ հայերը եւ յոյները տեղափոխելու համար բոլոր նաւակները օգտագործուեցան: Այս խառնաշփոթութեան մէջ անմոռանալի դէպքերու ալ ականատես եղանք: Շատեր ծով կը նետուէին հաւանաբար իրենց



100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

տառապանքին վերջ տալու նպատակով»:



Ճափոնական նաւը Ձմիւռնույ քարափին

ՃԱՓՈՆԱԿԱՆ ՆԱԸ ԶՍԻՒՆՆԻՈՅ ՔԱՐԱՓԻՆ

Թէեւ անցեալին՝ Ձմիւռնույ Յրկիզման շրջանին, Ճափոնական թերթերու մէջ Ճափոնական նաւու մը յոյն եւ հայ գաղթականներ Յունաստան տեղափոխելուն մասին գրուած թիւերը հրատարակուած են, սակայն այդ ուղղութեամբ որեւէ լուրջ ուսումնասիրութիւն մը չէր կատարուած:

Ճափոնական նաւու մը Իզմիրի քարափը գտնուելը ոմանց, նոյնիսկ Ճափոնացի պատմաբաններու համար անկարելի թուած է: Սակայն Ճափոնական նաւու մը այդ օրերուն՝ 14 Սեպտեմբերին, հոն գտնուելուն մասին ստույգ վկայութիւններ կան:

ԱՄՆ-ի Ձմիւռնույ վերջին հիւպատոսը՝ George Horton, 18 Սեպտեմբերին Յունաստանէն արտաքին գործոց նախարարութեան տեղեկացուցած է, թէ Ճափոնական նաւ մը իր բեռներուն մէկ մասը ծով թափած է, որպէսզի կարենայ գաղթականներ տեղափոխել: Ծամբորդները գովասանքով արտաշայտուած են նաւապետին մասին:

Իր մեծ հայրը Ձմիւռնույ հրդեհին ժամանակ թուրք զինուորի մը կողմէ սպանուած փրոֆ. Մարտիրոս Անադրի Անադրի Յովսէփեան-Տոփքին իր Smyrna 1922: The Destruction of a City խորագրեալ գիրքին մէջ Ճափոնական նաւուն մասին կարծ տեղեկութիւն մը ունի: «Հինգշաբթի առաւօտուն «Սիմփսոն - Simpson» կոչեցեալ ամերիկեան նաւուն յայտնուելը յուզմունքի մեծ ալիք կը բարձրացնէ, սակայն սկզբնական ուրախութիւնը վշտի կը փոխուի, երբ լուր կը տարածուի, որ ան միայն ամերիկացի քաղաքացիները պիտի տանի: Նոյն օրը՝ 14 Սեպտեմբերին, Ճափոնական նաւ մը կու գայ: Ուղեւորները կը հիանան նաւապետին եւ անձնակազմին բացառիկ բարութեանը: Անոնք նաւուն բեռը նետած էին՝ գաղթականներուն յարմար պայմաններ ստեղծելու համար»:

Աննա Հարլօ-Պիրճ (Anna Harlowe-Birge, Ձմիւռնույ միջազգային վարժարանի ամերիկացի դասախօս փրոֆ. Dr. Birge-ի կողակիցը կը վկայէ. «Այդ ժամանակ նաւամատուցը կեցած էր նաեւ Ճափոնական բեռնատար նաւ մը, որ տակաւին նոր ժամանած էր: Ան բեռնուած էր շատ արժէքաւոր մետաքսով, ժանեակով եւ յախճապակիով, որոնք հազարաւոր տոլարներ կ'արժէին: Երբ նաւապետը կը տեսնէ իրավիճակը, առանց վարանելու նաւուն բեռը ծով կը թափէ, փոխարէն նաւ կը նստեցնէ քանի մը հարիւր գաղթական, որոնք ապահով կ'իջեցնէ Աթէնքի նաւահանգիստը՝ Փիրէ (Piraeas)»²⁴:

New York Times-ի 18 Սեպտեմբեր 1922-ի թիւին մէջ կը յիշուի Ճափոնական նաւու մը ներկայութիւնը. «...Հինգշաբթի օր՝ 18 Սեպտեմբերին, Ձմիւռնույ մէջ կար 6 շոգենաւ՝ մէկ ամերիկեան, մէկ Ճափոնական, երկու ֆրանսական եւ երկու հատ ալ իտալական: Ամերիկեան եւ Ճափոնական շոգենաւերը կ'ընդունէին բոլոր եկողները՝ առանց անոնց թուղթերը ստուգելու, մինչդեռ միւսները՝ իրենց երկրացիները՝ անցազրերու ստուգումով»²⁵:

The Atlanta Constitution-ի եւ The Boston Globe-ի մէջ ալ նման տեղեկութիւններ լոյս կը տեսնեն:

Յունական «Էմփրոս» (Empros: Թերթը իր 17 Սեպտեմբեր 1922-ի թիւին մէջ անդրադարձած է նաւապետին խիզախ արարքին. «...Ան յաջողեցաւ փրկել 825 յոյն գաղթականներ՝ անտեսելով թուրքերու սպառնալիքները: Սարսափազդու կոտորածներուն տպաւորութիւնները

եւ գաղթականներու խնդրանքները ճափոնացի նաւապետը ստիպեցին, որ ան նաւուն փոխադրած բեռը ծով թափէ ու հնարաւորութեան չափ շատ գաղթական տեղաւորէ: Քեմալական ռազմական ուժերու սպաները կը շրջապատեն նաւը ու կը սպառնան խորտակել զայն: Նաւապետը կ'ազդարարէ սպաները. «Եթէ նոյնիսկ գաղթականներուն մազին դպչիք, այդ արարքը պիտի նկատուի որպէս անարգանք ճափոնի դրօշակին եւ սպանալիք ճափոնի կառավարութեան», եւ քեմալական կառավարութեան կը պահանջէ անյապաղ ներողութիւն: Քեմալական սպաները կացութիւնը կը տեղեկացնեն իրենց վերադասին եւ կը հրահանգուին չանհանգստացնել ճափոնական նաւուն գաղթականները»²⁶:

Թէեւ թղթակցութեան մէջ հայեր չեն յիշուած, սակայն յառաջիկային այդ ճամբորդութեան մասնակից հայերու, կամ անոնց զաւակներուն արտաշայտութիւնները կ'ապացուցեն, թէ խուճբին մէջ հայեր ալ գտնուած էին:

Բիւզանդ Ճամպագեան Ատանայի կոտորածներու ժամանակ, 1909-ին, հագիւ վեց տարու, եկած է Ձմիւռնուի եւ իր պատանեկութեան օրերուն ակնատես եղած է քաղաքին հրկիզման: Ինքն ալ ճափոնական նաւով հասած է Յունաստան:

Աշխարհահռչակ երգահոնահար Պերճ Ժամկոչեան (1930-2004: Հայաստան այցելութիւններուն ժամանակ պատմած է, թէ իր հայրը՝ Նազարէթ Ժամկոչեան, Իզմիրէն փրկուած է ճափոնական նաւով մը: Երբ ան կը հրաւիրուի ճափոնի Քիոթօ (Kyoto: քաղաքի Միհօ (Miho) թանգարանին մէջ նոր գետեղուած գերհզօր երգահոնը առաջին անգամ նուագելու, երաժշտական կատարումէն առաջ իր հօր եւ այդ նաւով փրկուած հայերու անունով ներկայ ճափոնցիներուն կը յայտնէ իր երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը:

1887-ին հաստատուած Թոքիոյի Թոյօ (Toyo) համալսարանի դասախօս, արդի յունական պատմութեան մասնագէտ, անգլերէնի ու յունարէնի քաջատեղեակ փրոֆ. Dr. Nanako Murata Sawayanagi 1990-ի երկրորդ կիսուն Յունաստան կեցութեան շրջանին ինքն ալ կ'իմանայ այս ճափոնական նաւուն մասին, սակայն կարեւորութիւն չ'ընծայէր: Կը քննէ ճափոնական գլխաւոր թերթերը՝ Tokyo Nichinichi Shinbun, Asahi, Yomiuri: Կը տեսնէ, թէ լուրերը ուղղակի հաղորդումներ չ'էին, այլ եկած էին Լոնտոնէն:

Յառաջիկային իր ուշադրութիւնը կը գրաւէ, որ The National Centre for Hellenic Studies & Research at Latrobe University in Bundoora, Victoria (Australia) աշխատող հետազօտիչ պատմաբան Stavros Stavriadis երբ 2003-ին եւ 2004-ին ԱՄՆ-ի արեւմտեան շրջանը կ'այցելէ, իր ամերիկացի յոյն ընկերներէն նոյն պատմութիւնները կ'իմանայ: (Stavros Stavriadis, Unsung Heroes of Asia Minor: The Search for the Japanese Ship at Smyrna, The National Herald, September 7, 2007):


Dr. Sawayanagi, հետաքրքրութիւնը գրգռուած, կը լուծուի հետազօտութեան: Կը կարդայ The Boston Globe-ի 3 Դեկտեմբեր 1922-ի թիւը, ուր գրուած է Anna Harlowe-Birge-ի ճափոնական նաւուն մասին վկայութիւնը: Կը կարդայ նաեւ յունական «Էմփրոս» (Empros: Թերթի 17 Սեպտեմբեր 1922-ի լրատուութիւնը: Կը քննէ այլ տուեալներ: Արխիւներու մէջէն կը գտնէ նաւուն անունը՝ Tokei Maru²⁷:

15 Փետրուար 2019-ին, The Federation of Hellenic American Societies of Southern California-ն The Huffington Center at St. Sophia Cathedral-ին մէջ, աջակցութեամբ Հայաստանի, Յունաստանի եւ Ճափոնի՝ Լոս Անճելըսի հիւպատոսներուն, կը կազմակերպէ երեկոյթ մը 1922-ին Ձմիւռնուի ճափոնացի հայեր եւ յոյներ ազատող ճափոնական նաւուն մասին: Կ'արտաշայտուին ճափոնի հիւպատոսը՝ Akira Chiba, Յունաստանի հիւպատոսը՝ Evgenia Beniatoglou եւ Հայաստանի հիւպատոսը՝ Վարազդատ Պահլաւունի: Կը բանախօսէ Dr. Nanako Murata Sawayanagi, որ Ձմիւռնույ հրդեհին ու իր կատարած պրպտումներուն մասին մանրամասն տեղեկութիւններ կու տայ: Ձեռնարկին կը մասնակցին երեք համայնքներէն մօտաւորապէս 150 անձեր²⁸:

1924-էն սկսեալ ապահովագրական ընկերութիւններու դէմ հատուցման դատեր բացուած են: Զարմանալի պարագաներու տակ թղթածրարները կ'անհետանան: Վճիռը կ'արձակուի. «Հրդեհը պատերազմական պայմաններու տակ պատահած է»: Ընկերութիւնները ոչ ոքի հատուցում կը վճարեն, ոչ ալ քեմալական կառավարութիւնը աղէտեալներուն հատուցում վճարելու պարտաւորութեան տակ կը մնայ:

1928-ին կը ձեռնարկուի Իզմիրի կառուցման: Հրոյ-ճարակ տարածքը

» » »



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՄԱՆՈՒԿ ԵՒ ՎԵՐԺԻՆ
ԿԵՏԵՐԵԱՆ**

100-Ամեակ Չքնաղ Ձմիւռնույ Յայ Եւ Յոյն Թաղամասերու Յրկիզման

Կը վերածուի բացօթեայ միջազգային տօնավաճառի դաշտի:

Իզմիրի հրկիզման կը յաջորդէ քեմալական թերթերու պոլսահայտութեան վրայ «յարձակում»-ը: Կ.Պոլսոյ քեմալական թերթերը միտումնաւոր լուրեր կը տարածեն, թէ մայրաքաղաքի քրիստոնեաները պէտք է տեղահանուին: Կ.Պոլիսը պէտք է անպայման մաքրուի քրիստոնեաներէն: Իզմիրի աղէտը եւ թրջական թերթերու այս հրապարակումները խուճապի կը մատնեն Կ.Պոլսոյ քրիստոնեայ բնակչութիւնը:

Երբ տուեալներու եւ պատմաբաններու ջանքերով մեծամասնութիւնը Ձմիւռնույ հրկիզումը քեմալական իթթիհատականներուն կը վերագրէ ու այդ իթթիհատականներն ալ այդ հրդեհէն հայերն ու յոյները պատասխանատու կը նկատէ, յստակ եզրակացութեան մը յանգելու համար պէտք է նկատողութեան առնուին իթթիհատականներու նախկին գործունէութիւնները:

Երբ Օսմանեան կայսրութիւնը այլեւս անկարող կը դառնայ գանազան երկիրներ արշաւելու եւ աւարներ ձեռք անցնելու ու կ'ըլլայ Եւրոպայի «հիւանդ մարդը», դրամ հայթայթելու համար խորհուրդները կը կեդրոնանան հայոց ձեռքը գտնուող դրամազուլուխը ազգայնացնելու, առեւտրական հրապարակը հայերէն կորզելու եւ այսպիսով երկիրը թրջացնելու գաղափարին վրայ: Որով հայոց հարստութեան տիրանալու ցանկութենէն ծնունդ կ'առնէ Մեծ Եղեռնը՝ Հայոց Յեղասպանութիւնը:

Ամբողջ ժողովուրդը մը կողոպտելու համար նախեւառաջ հարկ էր հայերու ունեցուածքը դարձնել անտէր վիճակի: Այդ նպատակով երիտթրջական իշխանութիւնը 1 Յունիս 1915-ին հրապարակեց «Տեղահանութեան օրէնք»-ը, որու գործադրութեամբ 1.500.000 հայ բռնի տեղահանուեցաւ եւ բնաջնջուեցաւ: 10 Յունիս 1915-ին հրապարակուեցաւ հայերու թողած գոյքերուն հետ վարուելու «Լքեալ գոյքերու մասին» (Enval-i Metruke) 34 յօդուածէ բաղկացած կանոնագիրը, իսկ 13 Սեպտեմբեր 1915-ին ալ ընդունուեցաւ «Լքեալ գոյքերու մասին» ժամանակաւոր օրէնքը եւ 26 Հոկտեմբերին ալ այդ օրէնքին գործադրութեան կանոնները: Այսպիսով օրինականացուեցաւ հայերու անշարժ եւ շարժական գոյքերուն, ամբողջ հարստութեան բացառապէս կողոպուտն ու իւրացումը, որ կը գործադրուէր Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքին վրայ: «Լքեալ գոյքերու մասին» այս օրէնքը ստեղծուած էր ոչ թէ հայերու իրաւունքները պաշտպանելու համար, այլ գանգուածային թալանը զսպելու եւ պետական գանձը լեցնելու նպատակով: Այս օրէնքին վրայ կազմուեցան լքեալ գոյքի յանձնաժողովներ, որոնք կազմակերպեցին հայերու ունեցուածքին կողոպուտն ու իւրացումը: Հարուստ կողոպուտի հեռանկարը համախոհներու մեծ բանակ մը եւ լայն գանգուածներ համախմբեց երիտթրջական իշխանութիւններուն շուրջ: Երիտթրջերու վարչակազմը հայերու լքեալ գոյքերը յանձնեց հայերու բնակավայրերու իշխանութիւններուն, նախարարութիւններուն տրամադրեց շէնքեր ու հողատարածքներ, որոնց փոխարէն գտաւ համախոհներու հսկայ բանակ եւ անոնցմէ ստացաւ հայերու բնաջնջումը իրականացնելու աջակցութիւնը:

«Լքեալ գոյքերու մասին» հրահանգներու 6-րդ յօդուածը կապ ունէր հայկական եկեղեցական գոյքերուն հետ: Իր հայրենիքին մէջ հայ ժողովուրդի բնաջնջման հետ միաժամանակ կողոպտուեցան եւ ոչնչացուեցան նաեւ հազարամեակներու ընթացքին ստեղծուած անոր քաղաքակրթութեան բազմաթիւ ու բազմատեսակ արժէքներն ու յուշարձանները:

Թէեւ Դաշնակից պետութիւններու ճնշման տակ 8 Յունուար 1920-ին օրուան կառավարութիւնը չեղեալ յայտարարեց «Լքեալ գոյքերու մասին» օրէնքը եւ որոշեց հայերու գոյքերը տէրերուն վերադարձնել ու փոխհատուցել անոնց կրած վնասները, սակայն քեմալականները վերապրած հայութիւնը 1922-1923-ին ենթարկեց կողոպուտի, կոտորածի եւ բռնի տեղահանութեան:


Օսմանեան իթթիհատականներուն եւ քեմալական իթթիհատականներուն գործելակերպին նմանութիւնը չտեսնել անկարելի է: Որդեգրուած ուրացման քաղաքականութիւնը պարզապէս ինքնախաբուծութիւն է եւ նենգամտութիւն²⁹:

Երբ 126 հանրածանօթ ու իրենց ակադեմիական հանգամանքը որեւէ նիւթական հատուցումէ զերակշիռ նկատող յեղասպանագէտներ New York Times-ի 9 Յունիս 2000-ի թիւի A29 էջին մէջ հրատարակուած յայտարարութեամբ հայոց 1915-ին իրենց հարազատ հայրենիքէն տեղահանումը, աքսորը, ջարդը կ'որակեն յեղասպանութիւն, երբ 36 պետութիւններ, ըստ իրենց արխիւային տուեալներուն, 1915-ի Հայոց

Ջարդը պաշտօնապէս որպէս յեղասպանութիւն կը ճանչնան, թուրքը Յեղասպանութիւնը կատարողները մահուան դատապարտող իր իսկ դատարաններուն որոշումները սոսնակօրէն կը խեղաթիւրէ պատմութիւնը եւ կ'ուրանայ Յեղասպանութիւնը, իր իսկ հրձիգած, անհերքելի եւ անվիճելի ապացոյցներով տեղեկագրուած Ձմիւռնույ հրկիզումը, շատ բնականօրէն, ուրացումը որպէս պետական քաղաքականութիւն՝ հայերուն եւ յոյներուն պիտի վերագրէ: Այսպիսով իրենց անպատիժ մնացած յանցագործութիւններուն վրայ կը բարդէ նաեւ պատմական նենգափոխումը: Հեղինակի հասցէն՝ armenhirant@gmail.com

(Footnotes)

- 1 Armenian Smyrna/Izmir - The Aegean Communities, Edited by Richard G. Hovannisian, Clifornia 2012, page 55.
- 2 Թողիկ, «Տիպ ու Տառ», Բ. հրատարակութիւն, Յալէպ 2006, Կիլիկիա գրատուն, էջ 134:
- 3 Թողիկ, էջ 134և137:
- 4 Ձմիւռնույ մէջ հրատարակուած թերթերու, շաբաթաթերթերու, ամսաթերթերու անունները եւ թեմական առաջնորդներու անուանացանկը քաղուած է Պետրոս Սիմոնեանի «Հայկական Ձմիւռնիան» խորագրեալ հատորէն, Փարիզ, 1936:
- 5 <https://www.armenpress.am/arm/news/1080972/>
- 6 Առաջնորդ Ղեւոնդ եպս. Դուրեանի տեղեկագիր՝ հրատարակուած Երուսաղէմի «Սիոն» պաշտօնաթերթի Մարտ-Ապրիլ-Մայիս 1982 թիւի 92և96 էջերուն եւ Յունիս-Յուլիս-Օգոստոս թիւի 136և139 էջերուն մէջ:
- 7 <https://eksisozluk.com/entry/25872853>
- 8 Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մանրամասնութիւնները, 26 էջոց տեղեկագիր՝ պատրաստուած Աթէնքի մէջ Յակոբ Տէրեմցի (1871-1947: կողմէ՝ Դուրեան սրբազանին եւ ազգային վարչութեան յանձնարարութեամբ:
- 9 Յակոբ Տէրեմց (Տէր-Յակոբեան, Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մանրամասնութիւնները:
- 10 Դուրեան սրբազանի տեղեկագիրը. «Սիոն» պաշտօնաթերթի Յունիս-Յուլիս-Օգոստոս 1982 թիւը, էջ 136-139:
- 11 <http://www.greek-genocide.net/index.php/overview/humanitarianism/456-minnie-mills-2>
- 12 https://en.wikipedia.org/wiki/Ali_Kemal
- 13 <https://www.dailysabah.com/feature/2020/01/08/if-ali-kemal-had-money-boris-would-have-been-a-turkish-citizen-now>
- 14 <http://www.izmirizmir.net/ayse-hur-1922de-guzelim-izmire-kimler-kiydi-y116.html>
- 15 <http://www.izmirizmir.net/ayse-hur-1922de-guzelim-izmire-kimler-kiydi-y116.html>
- 16 <http://www.taraf.com.tr/makale/1911.htm>
- 17 <https://yakindoguyazilari.com/tamer-cilingir-yazi-izmiri-yakan-mustafa-kemal-ve-askerleridir/>
- 18 <https://hyetert.org/2016/09/17/izmiri-yakan-mustafa-kemal-ve-askerleridir/>
- 19 <https://www.risalehaber.com/yaklasior-pasam-8052yy.htm>
- 20 <http://www.mlahanas.de/Greeks/Cities/Smyrna.html>
- 21 <http://www.mlahanas.de/Greeks/Cities/Smyrna.html>
- 22 <https://www.greek-genocide.net/index.php/overview/other/135-admiral-mark-bristol-and-the-greek-genocide>
- 23 Տօթ. Կարապետ Խաչերեանի օրագիրը. «Ձմիւռնիական Արկածներ 1922-ի»:
- 24 <http://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/chichukai0002301350.pdf>
- 25 <https://www.nytimes.com/1922/09/18/archives/smyrnas-ravagers-fired-on-americans-ymca-workers-were-held-up-and.html>
- 26 <http://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/chichukai0002301350.pdf>
- 27 <http://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/chichukai0002301350.pdf>
- 28 https://www.japan.go.jp/tomodachi/2018/Autumn2018/did_a_japanese_ship_rescue.html
- 29 <https://www.matenadaran.am/ftp/data/Banber19/25.A.Astoyan.pdf>



**ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ ՉԵՐ
 ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐՔ
 ԾՆՈՒՆԴԸ ՄԱՂԹԵԼՈՎ ՈՐ
 ԻՐԱԿԱՆԱՆԱՆ ՉԵՐ
 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ
 ԱԶԳԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԻՂՉԵՐԸ**

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ

SARKIS PASTRY
**Middle Eastern &
 European Cakes
 Delicious Pastry
 For All Occasions
 (Glendale, Anaheim & Pasadena)**

KOLANJIAN BROTHERS

Ո՞րն է Խաղաղութեան Գրաւականը Ռ. ԿՈՐԻՒՆ

Հայ ժողովրդի գլխից վայրագ հողմեր շատ են անցել, այս մէկն էլ եկաւ՝ քառասուն չորս օրեայ պատերազմը, թողնելով հսկայ աւերածութիւններ, մարդկային զոհեր, կորուստներ եւ տարածքների գրավում, դեռ թշնամին ներխուժած, ամրացած խրամատներում իր վոհմակների ունոցներով օր ու արեւ չի թողնում սահմանակից գիւղերին՝ ցանքսերում աշխատող գիւղացիութեան եւ բնակչութեան:

Թշնամու սանձազերծած պատերազմին յաջորդող նոր տարեմուտի 2023-ի սեմին մեր մտորումներում վերջիշում են թշնամու յիստորանքները, սպառնալիքները, սահմանային կրակոցները, ներխուժումները, գերիների անմարդկայնօրէն գնդակահարումները, խողխողումները, հանդերձների եւ խաղաղ բնակչութեան թիրախաւորումներն ու պահանջարկումները Արցախի (Լեռնային Ղարաբաղի) անտեսում եւ Զանգեզուրի միջանցքից ազատ ելք ու մուտք իր մեղսակից «եղբօր» երկիր:

Այս բոլորով հանդերձ հազարաւոր որդեկորոյս ծնողների ցաւն ու վիշտը մեր սրտերում ու հոգում, անհասանջ ու անկտորում պէտք է առաջ գնալ միասնական եւ հերոսական ոգով յաղթահարելու թշնամու կողմից առաջացած դժուարութիւններն ու գրկանքները՝ յուժ կարեւորելով Հայաստանի անկախ պետականութիւնը, քարտէսագրութեամբ տարածքը եւ Արցախի ինքնորոշումը պահելու ու պաշտպանելու հրամայականը, կարմիր գծեր Հայաստանի գոյութեան առնչելով:

Այս ճակատագրական պայմաններում համայն հայութեան ուշ ու միտքը պէտք է լարուած պահել Հայաստանի եւ Արցախի վրայ պատրաստ լինելու ամենտեսակ օգնութեան եւ խիզախութեան, հայրենիքի եւ ազգի սէրն ու պաշտպանութիւնը Հայաստանի եւ հայութեան յարատեւման առհասարակ է: Թշնամու կատարած վայրագութիւնները ա՛խր, ինչպէ՞ս կարելի է մոռացութեան տալ, նրանք խոր հետք են թողել մեր մտապատկերում եւ պատմութեան էջերում, ա՛խր, կարելի՞ է մոռանալ այսքան արհաւիրք, ջարդ, կոտորած եւ բռնագրաւումներ:

Դարերի գրկանքներն ու տառապանքներն մոռացութեան տալով այս խղճալի վիճակին ենք հասել, ե՞րբ պիտի արթնանանք, ե՞րբ պիտի ձեռքագատուենք ստրկամտութիւնից ուրիշներից ակնկալելով մեր պաշտպանութիւնը:

Օտարից օգնութիւն մի՛ սպասիր հայ մարդ, օտարը շողքորթ իր ջրաղացին է ջուր լցնում, ձեռքդ դիր քո անդաւաճան ծնկին եւ բարձրացիր, արիւնակիցներիդ օգնութեամբ ուժ ստացիր եւ քաջ ու արի առաջ շարժուիր նպատակների իրականացման ճամբին հայրենիքը հզօրացնելու եւ այդ ճամբին սխրագործութիւններով ապրելու ու արարելու: Լաւ իմացիր՝ ուժեղ մարդին են ձեռ մեկնում: Խոհեմ քաղաքականութեամբ բարեկամ երկրների վստահութիւն շահիր կազմակերպուելու եւ հզօրանալու համար:

Այդ բոլոր արհաւիրքներից յետոյ հայ ժողովուրդը գիտակցում է, որ թշնամութիւնը յաւերժական չի կարող շարունակուել, կռիւները եւ պատերազմները ժողովուրդներին իրարից հեռացնում են, թշնամական հրահրանքով երբեք չի կարելի խաղաղութեան եւ բարեյաջող արդիւնքի հասնել, ինչու է, թող նաեւ գիտակցեն մեր «լաւ» հարեւանները, որոնք Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի բնաջնջման ծածուկ ծրագրեր են մտածում:

Ոչ մի ժողովուրդ պատերազմ չի ուզում, ամեն ինչ իրաւական գետնի վրայ դիվանագիտութեան եւ բանակցութիւնների միջոցով հասնել պահանջներին, այստեղ մի բաց կայ, եթէ հարկադրանքի եւ սպառնալիքի տակ իրաւունքներ անտեսուեն, պէտք է կազմ ու պատրաստ միասնական

ուժերով դիմադրել եւ առաջ շարժուել, բացի սա եղաւ պետականութիւն ենք կորցնելու, աշխարհը ուժի եւ շահադիտական նպատակներով ուղղորդուած դար է, անշուշտ հանապազ այսպէս է եղել եւ լինելու է, ինչպէս ժամանակին Գարեգին Նժդեհն է ասել՝ «Քանի դեռ սուրն է կառավարում աշխարհը, ձիթենի ճիւղերով գինուած լինելը ծիծաղելի է եւ անմտութիւն», պէտք է առաջ շարժուել, հացից կարեւոր է երկիրը հզօրացնել, որպէսզի ապրել անվտանգ: Թոյլ ես՝ հպատակ ես, ուժեղ ես՝ խաղաղ ես հանց սիգապանծ լեռ:

Ահա փոթորկոտ հին տարին մեր ետին թողած նորն ենք սկսում, նորի լաւին սպասող, խաղաղ ու անվրդով կեանք ցանկացող, հայոց սրտերը ուրախացնող ազգային յաղթական ակնկալիքներով, այն յոյսով որ բոլորիս միասնական աշխատանքով՝ մէկ ընտանիքի գիտակցութեամբ, հայրենիք, Արցախ եւ Սփիւռք միատեղ սրտցաւութեամբ, բոլոր կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների՝ եկեղեցական ու աշխարհական դէպի մէկ նպատակ, ազգային եւ հայրենասիրական արժէքներով եւ նպատակներով առաջնորդող քաղաքականութիւն:

Սփիւռքը չի կարող Հայաստանից բաժան լինել, նրանք մէկ են հայ ժողովրդի նպատակների իրականացման ճամբին, Հայաստանը ակունքն է Սփիւռքի գոյութեան, հզօր եւ բարգաւաճ Հայաստանը Սփիւռքի հայապահպանման կուռանները կամրացնի յօգուտ Հայաստանի, մեր ի սրտէ աղօթքն ու փափագն է, որ այս եղբայրական կամուրջը երբեք ու երբեք չխափանուի, որեւէ խանգարում կը մեկնաբանուի որպէս թշնամուն ծառայող դաւաճանութիւն:

Նկատելով որ Սփիւռքը տարտղնուած տարբեր գաղթօջախներից է բաղկացած՝ այլազան երկրներում, անհրաժեշտ է, որ մէկ կենտրոնական համադրող կառույցով ներկայանայ հայրենի պետութեան մօտ, այս ծրագիրը երկար տարիներով ծեծուած է, բաց ոչ իրականացած: Այս կարեւոր հարցում իմ համեստ առաջարկն է, որ իւրաքանչիւր կուսակցութիւն իր ներկայացուցչութիւնը ունենայ մարմնի մէջ, նաեւ ճանաչուած ազգային-հասարակական անբասիր մտաւորական դէմքեր եւ գործիչներ յօգուտ մեր ժողովրդին եւ հայրենիքին:

Ահաւասիկ հին տարին գնում է եւ նորն է փոխարինում անգոյն, նորով անցեալի դասերով գինուած երկիր պաշտպանել, այս մեկը անանձնական հերոսների գործն է, հազար ու հազար անգամ ողջոյն այսպիսի հերոսներին, մեր պատմութեան ոլորտներում հերոսների աստղահամար թիւ ենք ունեցել թէ՛ մեր անցեալի պատմութեան եւ թէ՛ մեր օրերի Արցախի գոյամարտերում, թող մեր իշխանաւորները վստահ լինեն որ պահանջի դէպքում էլի կունենանք:

Նոր պարտաւորութիւններով եւ նուիրումով ընդառաջ գնանք գալիք տարուան մեր ազգ.-հասարակական կեանքում մեր մասն ու բաժին ծառայութիւնները բերելու մեր հայրենիքին եւ Արցախին, նրանք հայ ժողովրդի երկու թեւերն են, երկու իրարահզօր կուռանները յարատեւման:

Հոգեկան բարդոյթներից մաքրուած, վերանորոգուած, վերաթարմացած ու գօտեպնդուած ընդառաջ գնանք 2023-ին, տարին կենտ է, ընդհանրապէս կենտ թիւը շարքաստիկ է թալիսմանական սին հաւատալիքներով, սակայն փոյթ մի՛ դարձրէք, նա մեր խոհեմ ու գիտակից ապրելակերպով կը զուգաւորուի:

Ամանորեան եւ Ս. Ծննդեան շնորհաւորանքներ բոլորին սրտագին մաղթանքներով, յոյս առ Աստուծոյ ցանկութիւնների եւ նպատակների իրականացում:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC**

www.TAVOUKJIANLAW.com

Ամանորեան եւ Ս. Ծննդեան Շնորհաւորագիր Ուղղուած «Մասիս» շաբաթերթի մեծարգոյ խմբագրին եւ խմբագրական կազմին

Յետադարձ հաշեացք երեք տարիների 2020-2022 կտրուածքով ունեցանք սարսափելի պատերազմ, տարածքների գրաւում, հազարաւոր զոհեր, անթիւ վիրաւորներ, մեծաքանակ գերիներ, մեծածաւալ աւերածութիւններ, նիւթականի եւ գինամթերքի ահուելի կորուստներ ու Արցախին եւ Զանգեզուրին կապուող տարբեր վտանգներով յղի: Բերձորի (Լաչին)-ի փակում, 120 հազար հայերի պահել պատանդ եւ սովի մատնել: Այդ երեք տարիները ցաւի, կսկիծի եւ տրամաթաղիծ հոգեվիճակով յանձնում ենք պատմութեան եւ ահաւասիկ գտնում ենք 2023 թուականի շեմին, ինչ կարող ենք գուշակել, էլի ցաւ, վիշտ եւ յուսախափութիւն, թէ՞ ուրախութիւն ու բերկրանք, յոյսով անփորձանք տարի կը լինի, որը կապուած է իշխանաւորների դիւստանգիտական աշխատանքներից եւ ներքին կեանքի ղեկավարումից:

Փալով պաշտպանողական տեսանկիւնից վստահաբար մտածում է ունենալ հզոր բանակ եւ գինամթերք, անշուշտ վաղուց պէտք է մտածուած եւ կատարուած լինէր: Այդ բոլորին գուզընթաց անհրաժեշտ է այս ճակատագրական պայմաններում արտագաղթ թոյլ չտալ, ժողովրդի մէջ համերաշխութեան եւ վստահութեան ոգին ամրապնդել եւ առանց երկրի պաշտպանողական գաղտնիքները շեփորահարելու ծածուկ գինամթերք հայթայթել կամ արտադրել, բա ասում ենք բոլոր հայերը գիտնական, ստեղծարար ու հորինող են, դե՛հ ճակատագրական ժամանակներում ենք ապրում, թող սկսեն դիմադրողական հայկական նոր գէմքեր ստեղծել երկիրը պաշտպանելու համար:

Ամանորեան այս նոր 2023 թ. տարեմուտի առիթով սրտագինս շնորհաւորում եմ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրին եւ ողջ խմբագրական կազմին մաղթելով նորանոր յաջողութիւններ այս գալիք տարում եւ ամուր կամք ու եռանդ լծուած հայրենաշինութեան եւ հայապահպանման:

Ուրախալի է «Մասիս» շաբաթաթերթը 2022 թ. յաջողութեամբ բոլորեց, իւրաքանչիւր շաբաթ թեւածելով ընթերցասէրների օջախը, «Մասիսին» սպասում են մասիսասէրները եւ բոլոր նրանք որ ցանկանում են անսքող տեղեկատուութիւն Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մասին: «Մասիս»-ը բազմաբովանդակ է առնչուելով տարբեր հարցերի նաեւ միջազգային իրադարձութիւնների շուրջ: «Մասիս»-ը որպէս պաշտօնաթերթ աւանդական կուսակցութեան օրգան նպատակասլացօրէն լծուած է համահայկական կեանքի ձգտումներին զօրավիզ եւ պաշտպան: Հայկական «Մասիս» թերթի գոյութեամբ ուրախ մեր սրտագին մաղթանքն է անխափան հրապարակում տեղեկ պահելու հայրենեաց զոյգ երկրների եւ ի սփիւռս աշխարհի ցուրուած հայութեան հասարակական, հայապահպանման եւ մշակութային կեանքի իրադարձութիւնները:

Շնորհաւոր Ամանոր եւ Ս. Ծնունդ:
Ռ. Կորիւն
Դեկտեմբեր 2022 թ.

Հրապարակի վրայ է

Ս.Գ.Ն.Կ. 2023-ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅԸ

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ



2023

Շնորհաւոր Նոր Տարի
և
Նորը Շնունդ

Ստանալու համար դիմել «Մասիս» Շաբաթերթին
626-797-7680

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԻԿ. ԱԶԱՏՈՒՀԻ ՄՈՒԹԱՖԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԻԱՐ ԱՏԵՓԱՆ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2023

**Ամանորեան Հրավառութիւն
Ռ. ԿՈՐԻՆ**

Երկինք ու գետին լուսաթաթախ պայթիւններով թնդալի
Ի լուր աւետուում է ճիշտ 12-ին տարեմուտը բաղձալի,
Ներս են խուժում պատուհանիցս բազմերանգ ցոլցուլանքը
հրավառութեան գնդի վառվռուն բջիջները կախարդիչ:

Նոր գալիք տարուայ ուրախաբեր լուրն է փողփողուն,
Թէ՛ հէ՛յ մարդիկ նորն է գալիս շուքով ծիւնի պէս անբիծ
սառն ու անդէմ, որը կեանք ու դէմք կ' ստանայ սերով
Յանուր մարդկանց խաղաղ ու հաշտ կեանքի արարքով:

Կաղանդ պապն է հրաւիրուել, որ աւետի լուրը ամանորի,
Հագուստ-կապուստով պարուրուած ծմեռ պապի կանչովի,
Երեխաներ ուրախ ու զուարթ նրա շուրջն են օղակում
ուրախ կանչերով ու ձայներով նուէրներին սպասում:

Երանի՛ ձեզ երեխաներ՝ աղանու պէս արդար ու միամիտ,
Որ շողուն է կեանքը ձեր արեւոտ աչքերին խինդ ու ժպիտ,
Թող որ ոչ մի երեխայ չտխրի այս օրերին տօնական,
Թող որ ոչ մի մօր սիրտ չտագնապի զաւակի համար սիրեկան:


**Ամանորեան Խոհ
Ռ. ԿՈՐԻՆ**

Ահա ամանորն է գալիս,
Հնի հետ հրաժեշտ տանք,
Նորի հետ նորանանք,
Ժամանակի հետ առաջ գնանք:

Ահա ամանորն է գալիս,
Հայրենիքի հետ հայրանանք,
Ազգի հետ մէկ սիրտ դառնանք,
Պետութեան հետ հզօրանանք:

Ահա ամանորն է գալիս,
Իշխանութեան հետ ժողովրդանանք,
Մեծ պետութեանց հետ սերտանանք,
Մեր շահերի հետ ամրանանք:

Ահա ամանորն է գալիս,
Գեղեցիկի հետ գեղեցկանանք,
Արուեստի հետ արուեստանանք,
Մեր մշակոյթի հետ հպարտանանք:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ,
ԲՈԼՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
ՄԱՂԹԵԼՈՎ ԱՆՈՆՑ
ԵՐՁԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ**

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՎՐԷԺ

VREJ PASTRY

**PASADENA
626-797-2331**

**GRANADA HILLS
818-366-2526**